




844

L III.5







ԱՐԴՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ

№ 7-8 1897

ՅՈՒՆԻՍ-ՕԴԻՍՏՈՒ

1897 № 7-8

ԿԱՆԵՐՈՒՐԴ ՖԱՐԻ


երիս

1. ՓԱ.ՓԱ.ԶԵՍԱՆ, Վ.	919	Ա.ԽԱՊԸ (Փիլոսոփական զրոյց)
2. ՀԻՒԳՈՒՅՑ Յ. ՏԵՐ-ԳԵՐՈԳԵԱՆ	933	Խ/ԴԸ. (Թարերի լեզենդա»-հա):
3. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵԽՈՆ . . .	936	Խորտակւած կեանք (վեպ):
4. ԶՈՐԾԴԵԱՆ, Ա.ՐՈՒՄ	963	Աղատ լուսին քիոլ... (բանաստեղծ.):
5. " " "	964	Ամողիլը (բանաստեղծութ.):
6. ԶԵԽՈՎ.ԴԻՑ Մ.ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	965	Կին. (Ավա):
7. ԳԵՎՈՒՐՃԵԱՆ, Գ.	988	Մարգիկ լրջում ևն... (բանաստ.):
8. ՅՈՎ.ՀՈՆՆԻՒԹԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ.	989	Էւոլիւցիալի գաղափարը (Ըարուն.):
9. Ա.ԲԱ.ՅԵԱՆ, Ա.ՐՃԱԿ.	1012	Պարտղաքս (բանաստեղծութ.):
10. ՏՈՒՐԳԵՆԵՎԻՑ Զ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵ.	1013	Անսառ և զաշտաւայր:
11. ԽՈՉԱՅ-ԼԵՅՆՈԹԵԱՆՅ, ՅՈՎ.Հ. .	1021	Գիր զական ցաւեր:
12. Ա.ՐՈ.ՍԻՒԱՆԵԱՆՅ, Ա.ԲԵՏԻՐ. .	1031	Լեզւական զրոյցներ:
13. Ա.Դ.ԲԱԼԵԱՆ, Ն.	1060	Վ.ոչագիքիպարը ճայ վիպագրութ. Վ.Հ:
14. Ա. Ա.	1070	Ս. Շահազալիզի «Ամառն. նամակներ»:
15. Յ. Տ.-Մ.	1077	Քամալեանի «Երկասիրութիւններ»:
16. " " "	1080	Մ. Գաւիժեանի «Մանկ. ոտանաւորն»:
17. Ա.Վ.ԲԱԼԵԱՆ, Ն.	1082	Աննենսկրալա՝ «Դասընկերներ»:
18. ՓԱ.ՓԱ.ԶԵՍԱՆ, Վ.	1085	Ա.Խոչագ. զրոյցի ասիթով:
19. Ա. Ա.	1087	Ժամանակակից Տեսութիւններ:
20. ՄԱ.ԲԻԱՆԵՍԱՆ, Ֆ.	1092	Նախթագործների XI. ժողովը:
21. Լ.Ա.ԲԱ.ԶԵՍԱՆ, Գ.	1099	Երեանի թեմական զարոյցը:
22. ՄԱ.Բ.-ՔՈՒ.Մ.	1109	Սովորանը և պետութիւնները:
23. ԽԱ.Զ-ՊԱ.ՊԵՍԱՆ.	1117	Նամակի Բոլգարիալից:
24. ՄՈՏԱ.	1122	Ա.Հ ու ձախ (Տաճկաստանից)
25. Z..	1126	Քաղաք. Տեսութիւն. — Քրանս.ուստ. զաշնակցութիւնը: Ֆորը Խուսիալում: Զանազան լուրեր:
26. ԽՄԲ.	1136	

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. Ա-ԶԻՒԵԱՆՅ:

Տիոգրաֆիա Մ. Դ. Ռոտնանց, Գօհ. քր., ճ. № 41.



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 7-8 1897

ՅՈՒԼԻՆ—ՕԳՈՍՏՈՒ

1897 № 7-8

ԻՆԵՐՈՒԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈՐԱՆ Մ. Դ. ԱՕՏԻԵՎԵԱՅՑԻ

Տիպոգրաֆիա Մ. Դ. Ռոտնիանց, Գօլ. պր. ճ. № 41.

1897

БИБЛІОТЕКА

ДЛЯ ДІТЕЙ І МОЛОДІ

ВІД ВЛАДИМИРА

ДЛЯ ДІТЕЙ І МОЛОДІ

Дозволено цензурою. Тифлісъ, 24-го Іюля 1897 г.

Ա Ն Յ Ա Գ Ը

(Փիլոսոփայական գրոյց)

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ¹⁾)

V

Հալածւած, յուսահատ, մտային կրկնապատկւած տանշանքով, աւելի քան երբէք՝ որոնողութեան փափագով տոչորւած, թողեցիմաստունը բնակութիւնները և հեռացաւ նորից ամայութիւնների մէջ:

Գնում էր նա առանց կանգ առնելու, առանց յոգնելու: Զէր ուզում կանգնել այնոտեղ, ուր նշմարում էր մի նշոյլ խսկ սողունութեան, քառակուսի մտային պատւարների մէջ ամփոփւած զեռունների և ուր նա տեսնում էր միշտ նոյն կեղծութեան մէջ բոված ու նրանով միայն սնանւող, միմեանց լափող արարածների...

Քայլում էր միշտ առաջ և նրա մտածութիւնը մոլորւում էր միակ մեծ հարցի անհասկանալիութեան շուրջը:

Ինչու այդ բոլոր սոսկալի ստեղծագործութիւնը, այդ զգւելի եղբայրասպան, եղբայրակեր մրրիկը, այդ խաօսը. Բնչպէս էր սլարդւելու նա ապագայում, ինչի՞ն հանգելու, ինչ կերպարանքներ գոյացնելու և աւելի հեռուն—դէպի մւր գնալու:

¹⁾ Տես «Մուլճ» 1897 թ. № 6.

Այսպէս տանջւած ու մոլորւած մտացին բարձրութիւնների վրայ, կտրեց նա դաշտ ու հովիտ, անտառ ու ծովեզր, գնաց ու գնաց, սպատմութիւնը չէ յայտնում թէ որքան ժամանակ գնաց, բայց երկար քայլելուց յետոյ, հեռւից, վերջալոյսի կարմրորակ լոյսի տակ, մի բարձրութեան վրայ նկատեց մի ամրոց, շրջապատւած գեղածիծազ ծառաստանով:

—Դարձեալ սողունների բնակարան, մտածեց նա զգւանօք և ուզեց ծռել ճանապարհը. բայց ներքին մի անբացարելի ոչ մղեց նրան դէպի ամրոցը և իմաստունը, երբ մթնանում էր, իրեն գտաւ ամրոցի գոան առաջ:

Ոչ մի մարդկացին էակ չէր երեռում. ոչ էլ ծառաստանում, ուր վճիտ առւակները մի զովութիւն էին սփռում; ուր ծաղկանոցներն օդը էին լեցնում իրենց անուշահոտութեամբ և շքեղ ծառերի տակից երեռում էին երբեմն սիրուն եղնիկներ, նայում իմաստունին և անհետանում:

Մտաւ իմաստունը այնտեղ, քայլեց սաղարթախիտ բարձր ծառերով հովանաւորւած լրու և խորհրդաւոր ծառուղիների միջով և ոչինչ չլսեց՝ եթէ ոչ, միայն բազմազան թռչունների ճռւղիւն և ջրի մեղմիկ, անոյշ կարկաչ:

Ոչ մի մարդկացին էակ. միայն բնութիւնն էր իր խուլ անորոշ շշուկով, թռչուններն իրենց զողորիկ զայլացներով, ջուրն իր մեղմիկ, հանդաստացնող ու զգերը հանդարտեցնող շշուկով, ծառուղիներն իրենց խորհրդաւոր լրութեամբ և մթնաշաղախ լոյսով, օդն իր զովութեամբ, միայնութիւնը իր այդ բոլոր զարդերով, որ իջեցրեց իմաստունի վրայ մի երանաւէտ սփոփանք, ամոքիչ անդորրութիւն: Ընկաւ նա կանաչ խոտերի վրաց, աւազանի կողքին, ուռենու տակ ու երջանիկ՝ որ մի վայրկեան գոնէ կարող պիտի լինէր աղատ մնալ հոգեկան տանջանքից —լայն թռքերով ծծեց բնութեան մէջ սփռւած բուրմունքն ու թարմութիւնը...

Նւ ահա ուռւաւ նրա սիրտը. և երգեցին թռչունները, մըրմընջաց ջուրը, սոսափեցին տերեններն ու իմաստունի այսերն ի վարդորւեցին նրա անհուն տանջանքի, ահաւոր փափազի, անյատակ անդոհութեան և ըմբոստացող ոգու ու գիտակցութեան արտայացտութիւնը, ամփոփւած արցունքի խոշոր ու վճիտ կայլակների մէջ...

Որքան դառն էին այդ կաթիւները, որքան կիզիչ։ Աւանդութիւնը ասում է որ իմաստունի տենչալից որոնղութեան այդ հեղուկ արտայացառութիւնները գլորւած լինելով խոտի վրայ, վայրկենապէս ացրել-մոխիր էին դարձել նոյն իսկ հողը, գետինը։

Այդպէս մնաց նա երկար, տարածւած աւազանի եզրի վրայ, երջանիկ՝ վայրկենական թուլութեամբը, որով հանգստութիւն, անդորրութիւն էր գտնում։ Եւ երբ դադարել էին թռչունների երգերն ու զով քամին սաստկանում էր, սժափեց, մօտ գնաց ջրին ու լւաց երեսը։

Գեղեցիկ էր գիշերը. լողում էր լուսինը երկնակամարի կապտութեան մէջ, պահւառում սպիտակ ամպակոյտերի տակ, նորից առաջ սրանում և անդրադառնում էր աւագանի ջրերի խորքերում իմաստունը նայեց այդ խորքերին՝ կռացած ջրի վրայ, դիտեց երկնքի անհունութիւնը, որ աւելի խոր ու անյատակ էր թւում ջրի մէջ... և ահա նորից գոյացաւ նրանում այն բոլոր տանջանքն ու տենչանքը, որ ծնում էր անբաւական ողուց, գիտենալու անհուն փափաղից...

Այդ միջոցին էր, որ հեռու, մեծ աւազանի դիմացի ափին, նկատեց նա մի երիտասարդի՝ լնկողմանած խոտերի վրայ։ Լուսնի լոյսը թուլառում էր տեսնելու թէ որպիսի հանդարտ դառնութեամբ արտասւում էր թշւառը. աչքը երկնքին յառած, անշարժ ու մարմնացած յուսահասութեան նման։

— Ահա մի ուրիշ տանջող, մտածեց իմաստունը—արդեօք նա էլ է որոնում զիտենալ այն, ինչ որ իմ թշւառութիւնն է կազմում, ինչ որ խոր է որպէս անդունդ, անըմբոնելի՝ որպէս դոյութիւն չունեցող մի բան...։

Աւ առաջ գնաց զէպի նաև երիտասարդը լսեց իմաստունի տոնաձայնը, դարձաւ, սրբեց արտասուքը և կիտովին բարձրացաւ։

Ողջունեց նրան իմաստունը։ Երիտասարդը զարմացած՝ լնդունեց նրա սղջոյնը, հրաւիրեց նստել իր կողքին և ասաց.

— Բարի լինի գալուստդ իմ ամբոցի մէջ, ով գէրւիշ, տեսնում եմ որ մի խոր տանջանք ակօսել է քո ճակատն էլ այնպէս, որպէս ոչ մի վիշտ չէ կարող անել, տեսնում իմ որ կեանքից ու մարդկութիւնից զգւած, տժգոհ ծնած լինելուց, տժգոհ՝ բնու-

թեան գոյութիւնից, տժգոհ՝ եղած ցեխացին կեանքից, ինքնամոռուացութեան միացն ապաւինած մի իմաստուն ես, որ գնում ես այնուեղ—որտեղ ոտներդ են տանում, տեսնում ես այն՝ ինչ որ աչքերդ են ցոյց տալիս և քո մէջ կամքն ու փափազը գոյութիւն չունին, որպէս անօգուտ, աւելի տանջանք ու աւելի ցաւ պատճառող աւելորդութիւններ...»

Նստեց իմաստունը նրա կողքին, նայեց երկար այդ սիրուն և վշտալից երիտասարդին, ժամանեց ու ասաց.

—Քո հոգու դրութիւնը նկարագրեցիր, երիտասարդ, բայց ոչ իմը: Որոշ չափով վշտակից ենք, որից յետոյ դու ուրիշ ճանապարհով ես գնում, ես ուրիշ: Դու զգեւել ես կեանքից ու մարդկութիւնից, տժգոհ՝ ծնած լինելուցդ, բնութեան գոյութիւնից, եղած ցեխից և ինքնամոռացութեան ես ապաւինել. գնում ես այնտեղ, որտեղ ոտներդ են տանում և փափազն ու կամքը գոյութիւն չունին քեզ համար... Տայց ես... Ես աւելի թշւառ եմ քան դու, որովհետեւ եթէ ես զգեւել եմ կեանքից, այդ չէ նշանակում որ մահ եմ փնտուում: Եթէ զգեւել եմ մարդկութիւնից, այդ չէ նշանակում որ խուսափում եմ նրանից: Ես խուսափում եմ նրա կեղծ, ցեխացին դրութիւնից, բայց ես փնտուում եմ լաւը... Եթէ դու ինքնամոռացութեան ես տւել քեզ, ես աւելի ցաւակցութեան արժանի եմ, որովհետեւ չեմ կարող ինքզինքս տալ ինքնամոռացութեան Ընդհակառակն ես տանջուում եմ հէնց նրանով, որ իմ մէջ, քանի գնում է, գիտակցութեան փափազն ու տենչանքը, փնտողութեան ցանկութիւնը մեծանում է, խոշորանում, ամբողջ էութիւնս կլանում... Ես ուզում եմ գնացած տեղս զիտենա, ապա գնալ աւելի հեռուն և այսպէս ճանաշել անհունութիւնը, ուզում եմ գտնել այս բոլորի, այս շարժման, այս գոյութեան վերջնական նպատակը, այս բոլոր մրրկի հանգրւանը... Իմ մէջ ոչ միացն կամքն ու փափազը գոյութիւն ունին, այլ հէնց դրանք են, որ կազմում են իմ բոլոր տանջանքը. ես կամնում եմ և փափազում—և ահա թէ ինչու եմ տանջուում, ինչու տոչորւում...»

Երիտասարդի աչքերը ցամաքեցին:

—Ավ թշւառ իմաստուն, դոչեց նա—դու քո վշտով մլսիթարեցիր ինձ: Ես կարծում եի թէ չկայ աշխարհիս վրայ տանջանք

որ իմինիս հաւասարի և որ կարողանայ գերազանցել սրտի տանջանքին. բայց սիրալւած եմ եղել. կայ մոտային տանջանքը և դա, օ՛հ, սոսկալի է: Դա նմանում է հետզհետէ արծարծւող, միշտ բարբոքւող և երբէք չմարող կրակին, որ դրւած է ուղեղի վրայ և ոչ ուղեղն է սպառուում ու ոչ կրակը: Մտային տանջանքի մարմնացումը Կովկասեան լեռների վրայ կապւած հսկան է, որ գիտակցութեան կրակն է գողացել երկնքից և որ տանջւում է, որովհետեւ կամեցել է, փափագել...

—Դու հասկացար ինձ, ասաց իմաստունը—բայց անիծեալ լինիս, որովհետեւ զգում եմ որ դու մի նոր խատութիւն ես տալու իմ այս տանջանքին, որպէս կրօնապետն ու այն երիտասարդ բնագէտը տւին—մէկն իր հաւատոքով, միւսն իր յոյսով...

Ու վերկացաւ խուսափելու այնտեղից, գուշակելով որ այդ երիտասարդը մի նոր կծու սլաք է մղելու իր վերքի մէջ, մի նոր վիշտ ազդելու և կուտակւած դառնութիւնը աւելի ծխացնելու:

—Կանգ առ, կանչեց նրան երիտասարդը—կանգ առ, իմաստուն, փոքրողի մի' լինիլ. եկ և քամի'ր բաժակդ մինչև մրուրը և թող վերքդ բոլորովին խստանայ, մոտային տանջանքդ խորանայ, լայնութիւն ստանայ, պարփակի ամբողջ մարդկութիւնը և թող դառնութիւնդ լուտայ աւելի կատաղաբար, խանձէ ամէն բան: Ինչից գիտես որ այդպիսի խորացած դառնութիւնները չեն, որոնք պիտի պատաւեն գիտակցութեան վրայ պարզած քողը. ինչից գիտես որ այդպիսի զորեղացող մտային տանջանքը, ըմբոստացող ոգիները չեն, որոնք ոսսնելու անցնելու են խոչնդունները, որոնք իրենց զլուխների փշրւելու գնով, ոտնատակ տալով մարդկութիւնը փիտեցնող ճահիճը, իրենց տանջանքով չորացնելու են նրանց և գիտութեան զրոշը կանգնեցնելու ապագայ դալարադեղ, լոյսով ողողւած ասպարէզի վրայ...

Իմաստունը կանգ առաւ: Ո՞վ էր ուրեմն այդ երիտասարդը որ ազգափէս համարձակօրէն յարձակւում էր նրա փոքրողութեան վրայ, որ յորդորում էր նրան տանջւելու, որոնելու, ըմբոստանալու և հետևաբար միշտ թշւառ, միշտ ապերջանիկ մնալու...

Չկարողացաւ տեղիցը շարժւել:

—Ո՞վ ես դու, երիտասարդ, ասաց նա—արդեօք դու ինձնից

աւելի շատ ես ապրել, աւելի շատ ուսել և աւելի հասկացել. և ինչ ես արել որ հասել ես այդ բարձրութեան. տանջանքի ինչ մեծ բովից ես անցել որ համարձակ ում ես ինձ փոքրոզի անւանել: Խօսիր, ինչ ես կրել դու, որ աւելի փորձառու ես դարձել, աւելի իմաստուն՝ քան ես:

Երիտասարդը դառնութեամբ լի աչքերով նայեց իմաստունին և ասաց.

— Սիրել եմ. ահա թէ ինչ:

VI

Իմաստունը զգետնած էր:

Երբէք չէր մտածել կրքերի այդ ամենամեծի վրայ, որ տանջանքների ամենամեծ աղբիւրն է և փորձառութեան ամենամեծ բովը:

Երբէք նա չէր սիրել, երբէք չէր ճաշակել սիրոց քաղցրահամ՝ դառնութիւնը, անուշ տանջանքը: Եւ այժմ, մի վարկենում, երիտասարդի մի՛ խօսքը բաց էր անում նրա առաջ մի նոր աշխարհ:

Արդեօք դա էր ուրեմն տիեզերացին շարժման, մրրկացին ամբողջ պատուի վերջնական նպատակը. այդ, թէ գուցէ նրա գոյութեան պատճառն էր միայն, նիւթի ձեւափոխութեան, բեղմնաւորութեան, ոյժի կուտակման և արդիւնքների միակ արտադրիչը:

Արդեօք այդ խանդալից կիրքն էր որ ստեղծել էր ու ստեղծում էր, որ քանդել էր և որ քանդում է ամէն ինչ, որ շնուրմ է և աւելում, ստեղծում է և ոչնչացնում և փոխն ՚ի փոխ արարչի և կործանիչի դեր կատարում բնութեան մէջ...

Եւ երբ մտածում էր այդ բոլորը, նայեց երիտասարդին և տեսաւ նրա վշտակոծ գէմքը, նրա քայքայող հոգու գրութիւնը: Եւ իմացաւ որ սէրը իր ստեղծիչ բազուկը փոխել է կործանիչի այդ մատաղ սրտում և որ խարխլուում է նիւթը, որովհետեւ կաթառ կաթ գուրս է գնում նրա միջից նրան կապակցող ոյժը, նրան կենդանի, շարժուն պահող խանդը...

— Խօսիր, ասաց նա վշտալից—պատմի՛ր բարեկամ՝ քո պատմութիւնը և թող ինձ տեսնել թէ արդեօք սէրն է այն մեծ նպատակը, որին փնտուում է իմ անհանգիստ միտքը և որը միշտ խու-

սափում է իմ հասկացրութիւնից. արդեօք դմ է, որին ես անկարելի էի համարում գանել, թէ դա ոչ թէ նպատակն է, այլ ճանապարհ դէսի նրան գնալու... Պատմիր թէ ինչու ես մնացել մեն—մենակ այս ամրոցի մէջ, արտասւալից, վշտակոծ ու քայքայւած...

Եւ երիտասարդը սկսեց պատմել:

—Հարուստ հօր զաւակ եմ, ասաց նա—և այս ամրոցն ու ծառաստանը, այլ և շրջակաց շատ հասոցթաւոր հողեր իմն են: Ոչինչ չէ պակասում ինձ. ոչ շքեղութիւն և ոչ զւարճութիւն: Երիտասարդ եմ որպէս տեսնում ես. հիւանդ էլ չեմ և կար ժամանակ որ իմ զւարժ և ուրախ տրամադրութիւնը պարզում էր ամէն մռայլ ճակատ, գեղածիծաղ գարձնում այս ամրոցն ու պարտէզը և զւարթութիւն սփռում բոլոր ինձ շրջապատողների մէջ:

Այսպէս միշտ զւարժ ապրում էի ես այն ժամանակ իմ ամրոցում և ոչինչ չէր պակասում; երբ մի օր, որսի ժամանակ անտառի մէջ հանդիպեցի դրացի իշխանի աղջկան և մենք երկուս էլ սիրահարւեցինք միմեանց վրայ:

Երևակացել այնպէս սէր, որպիսով մենք կապւեցինք միմեանց, դու չես կարող, իմաստուն: Այդ տեսակ սէր երևակացելու համար հարկաւոր է լինել տաք կլիմացի բուռն զաւակ, երբէք սիրած չլինել. հարկաւոր է ունենալ բնութիւնն ամբողջ սրտի մէջ, էութիւնն ամբողջ իր կըքերի գերի...

Սիրել այդպէս՝ ես չեմ երազում նորից, որովհետեւ երկրորդ անգամ անհնար է. նոյն խորութիւնը, նոյն բուռն, գրէթէ իսեն թային թռիչքը չի ունենալ: Մենք սիրում էինք միմեանց—ինչ հարկ մի ածականով նւազեցնել այդ բառի սաստկութիւնը. սիրել—դա նշանակում է ապրել ու շնչել միմիայն սիրոց առարկայով, նրա ազդած տանջանքով հալւել ու հալւելովն երջանիկ լինել, աստածանալ: Սիրել—դա նշանակում է անձնապէս գոյութիւն չունենալ, այլ ՚ի մի ձուլել սիրած առարկայի հետ և յաւիտենապէս սաւասնած երազացին աշխարհի մէջ, աստեղալից և երջանիկ երկնքի խորհրդաւոր միացնութեան տակ՝ օրօրւել այնտեղ, հեռու բոլոր շշուկից, ինքն իր մէջ, ինքը նրա մէջ ամիտիւել և այդպէս շոգիանալ, ցնդել...

Ու լրեց պահ մի և հայեացքը երկնքի կապութեան մէջ մոլորւելու սլացաւ. դէմքը փայլում էր գերաշխարհային էքստազով, ողողւած, կարծես մարմնից դուրս ցայտող Փոսֆորային մի լոյսով, որ պարզ կերպով գծագրում էր նրա շքեղ զլուխը ուռենիների ձգած մութ ստերի վրայ:

Իմաստունը ապշել էր. կարծում էր թէ մի սուրբի առաջ էր գտնուում Երիտասարդի գլխի շուրջը փայլող նուրբ լոյսը մի տեսակ խորհրդաւոր երկիւղածութիւն ազդեց նրան և նա պատկառանոք մի քայլ ետ քաշւեց:

—Սիրել... շարունակեց երիտասարդը — Դա նշանակում է ամէն բան. նշանակում է նաև ոչինչ: Դա նշանակում է ապրել մեռնելով, տանջւել հաճութեամբ, թիւնաւորւել նեկտարով. դա նշանակում է և՛ բարձրանալ մինչև Աստւած, մինչև անհունութիւն և՛ իջնել մինչև ցեխի մըուրը, մինչև ապականութիւն. դա մի խառնուրդ է երկու հակասութիւնների, որ մարդուս միակ մեծութիւնն է կազմում, նրա կեանքի միակ ձգտումը, միակ նպատակը ..

—Միակ նպատակը... բացականչեց իմաստունը:

Երիտասարդը սթափւեց, ցնցեց զլուխը, նայեց իմաստունին և ասաց.

—Ահ, ներիր իմաստուն. ես մոռացայ որ այստեղ ես. երազում էի 1նձ թւում էր թէ ետ էի գնացել երկու ամսով առաջ, երբ ես ու նա, այս ուռենիների տակ, կանաչ խոտերի վրայ, միմեանց գրկում հալում էինք. երբ մենք լուռ էինք և մեր շրթունքները միմեանց հոգին էին ծծում ու մեր սրտերը լւելեացն ասում էին միմեանց ամեն բան. այնպիսի զգացումների մասին խօսելով, որ բերանը անզօր կը լինի արտայացտել: Սիրողները երբ լուռ են, նրանց սրտերը լւելեացն խօսում են միմեանց հետ. նրանք իրար հասկանում են առանց բերան բացանելու: Եւ մենք լուռ էինք, ժպտուն՝ երկնքի պէս, զւարթ՝ արեգի նման, վճիռ՝ որպէս առւակ ու կենսախնդութեամբ լի, ամեն ինչ մոռացած, ամեն ինչ մեր մէջ առած, միան մե՛ր մէջ և մե՛զ համար... Ցիշում եմ. մենք սիրում էինք միմեանց այնպէս, որպէս սիրել կարող են միմիան թիթեռները լոյսին, մի բոպէից յետոց դոյցող մահւան գիտակից և նրան արհամարհող...

Բայց... ասա ինձ ուրեմն իմաստուն. մի՞թէ ճիշտ է որ բնութեան մէջ ամեն ինչ վերջ ունի, որ ամեն ինչ փոփոխական է, որ ոչինչ յարատել չկայ: Ճիշտ է ուրեմն որ ազդքան զգեելի է բնութիւնը և մենք ի զուր նրան բանաստեղծացնում ենք, նրանով ոգեսորւում:

Իմաստունը լրւու էր. ոչ մի բառ չ'արտասանեց: Երիտասարդը մի վայրկեան նայեց նրան, յետոյ թափահարեց ձեռքը.

— Բայց ես էլ գիտեմ այդ, ասաց նա—ինչու եմ հարցնում: Այո, չկայ մի ճշմարտութիւն որ դրա պէս ճիշտ լինի, որ դրա պէս անխախտ ու յաւիտեան լինի: Ոչինչ յարատել չկայ բնութեան մէջ, ամեն ինչ փոփոխուում է, և այդ օրէնքն է միայն որ անփոփոխ է... Ամեն ինչ վերջ ունի. խորութիւնները լցւում են՝ լեռ դառնում, խենթացին թռի: քների թևերը կտրտում, կրքերը նւազում ու կոշտանում և սէրն էլ, որպէս ամեն ինչ՝ դադարում է, փոխում, ոչնչանում...

— Զեմ կարծում, խօսեց իմաստունը—ոչինչ չէ ոչնչանում աշխարհի վրայ:

— Ես այդ էլ գիտեմ... Բայց չգիտեմ թէ ինչ դարձաւ ուրեմն մեր սէրը. ինչ դարձաւ այն զգացմունքը, որ նրա մէջ աւելի քուան էր, քան իմ մէջ. աւելի կրքոտ, աւելի պահանջող և կրակոտ...

— Բուռն, կրքոտ, պահանջող ու կրակոտ լինելուն համար էր՝ որ նա դադարեց, ասաց իմաստունը—կրակը լափեց խղզը, սպառեց: Երիտասարդը ոտքի ելաւ այն ժամանակ և երկու տանջւողները սկսեցին քայլել լճափին ի վար:

—Պատմեմ քեզ ամեն ինչ, իմաստուն, ասաց սիրահարը երբ հասել էին մի մթին ծառուղու մէջ—պատմեմ քեզ այդ և գուցէ զու մեկնես ինձ այն, ինչ որ խուսափում է իմ հասկացողութիւնից... Ես գիտեմ թէ նա ինչու է դադարել ինձ սիրելուց, բայց չգիտեմ թէ ինչ հարկաւոր էր անել, որպէս զի նա չդադարէր և այնքան սիրէր ինձ, որպէս սկզբումն էր, սրանից երկու ամիս առաջ:

— Նա այսաթիզ է, հարցրեց իմաստունը:

Երիտասարդը գլուխը ցնցեց: Արքան որ նա քիչ առաջ գտղնուում էր ոգեսորւած դրութեան մէջ, այնքան այժմ լնիձւած էր, թոյլ, գունատ և այլ ևս լոյսի ոչ մի նշոյլ չէր ողողում դէմքը.

ընդհակառակն, լուսնի աղօտ մի ճառագայթ մեռեալի կերպարանք էր տւել նրան:

Կոթնած իմաստունի թևին, քայլում էր հիւանդի պէս:

—Գնաց... խօսեց նա—երբեմն միայն երեւում է այստեղ, որ պէս ացցելու մի հիւանդի, որին խղճում են, որպէս մի զոհի, դէպի որը մի անդիմագրելի խղճահարութիւն են զգում. զնաց. գուցէ էլի գայ: Օ՛, ես նրան ամեն անգամ լնդունում եմ ոգեսրւած, նորիդ կենդանացած. բայց երբ ներս մանելով առողջութիւնս է հարցնում, գթալից աչքերով ինձ նայում, երբ ձեռքս բւնած՝ խնամուտ համակրանք է ցոյց տալիս և երբ մտածում եմ որ նրան ինձ մօտ պահնելու համար սլէտք ունիմ չափաւորել զգացումներս, ծածկել տանջւող ուղեղիս զրութիւնը, երբ տեսնում եմ որ իմ վիճակը նրան աւելի է տանջում և նա խղճում է ինձ՝ զգում եմ որ նա աւելի է խուսափելու ինձնից... Ես հասկանում եմ, շատ լաւ հասկանում նրա հոգու զրութիւնը: Ինքն իրեն յանցաւոր է զգում իմ վերաբերութեամբ, զգում է որ ես իր զոհն եմ և քանի աւելի շեշտում է նրա մէջ այդ զիտակցութիւնը, այնքան մեծանում է նաև ինձնից խուսափելու պահնջը... Հարկաւոր է ուրեմն ծածկել նրանից ամեն ինչ—զրութիւնս, զգացածներս—և ահա այդ է որ չեմ կարողանում անել. այդ անլնդունակութիւնն է իմ թշւառութեան միակ պատճառը...

—Կեղծել չգիտես ուրեմն:

—Կեղծել... Միթէ կարելի է սիրոց մէջ կեղծութիւն զնել. սիրել կեղծելով. և ինչու համար ինչու այդ միակ տեղումն, այդ միակ հանդամանքում գոնէ անկեղծ չլինել, ինչու գիտակցաբար կեղծել: Որպէս զի չընդհատուի: Ինչու ուրեմն խայծեր սարքել, խաղեր սաեղծել: Ո՛չ, ես կեղծել չեմ կարող: Եթէ երջանիկ եմ— դա երևում է իմ դէմքից, իմ վարմունքից, իմ խօսքերից: Ես հոգիս բաց եմ անում իր բոլոր մութ խորշերովը և լուսաւորում նրանց իմ խօսքերով, նրա ամենաթագուն անկիւնը պարզում իմ վարմունքով. ես թագընել չեմ կարող զգացածներս նրա առաջ, որին սիրում եմ, որի համար եմ միայն շնչում.. Ես անդադար և անլնդիատ արտայացում եմ իմ սէրը, իմ զգացումները, որովհնատե հոգուս մէջ այդպէս է, որովհետեւ թագնել, ծածկել և սա-

կառ առ սակաւ տալ չեմ կարող։ Նրանով լիքն է սիրտս, գուրս է հոսում և ես մինչեւ յատակը ի ցոյց եմ՝ զնում նրա առաջ ինչ որ ունիմ, ինչ որ շնչում եմ, ինչի համար որ ապրում եմ. ես անդադար և անընդհատ ցոյց եմ տալիս նրան, որ սիրում եմ և որ առանց նրան շնչել չեմ կարող.։ Այդպէս եմ անում, այդպէս խօսում՝ որովհետև այդպէս էլ զգում եմ.։

Խմաստունը որ գլուխը կախած լսում էր, բարձրացրեց հայեցքը և մռայլ որպէս մարմնացած թախիծ՝ դարձաւ դէպի թըշւառը։

—Երիտասարդ, ասաց նա—Դու թշւառ ես, որովհետեւ անկեղծ ես եղել. զգացումներիդ անկեղծ արտայայտութիւնը, նրանց խանդոսութեան հետ միասին սառեցրել են կնոջ կեղծութեամբ մնւած զգացումները, կեղծութեան կարօտ, կեղծութեամբ միայն շարժւող սիրող։ Եթէ ուզում ես ապրել, պարտաւոր ես կեղծել, խայծի խաղ սարքել այդ կնոջ հետ, ցոյց տալ որ այլ ևս չես սիրում նրան. Քանի խուսափես կնոջից—այնքան կինը կը վազի քո ետելից. Քանի ալնդես նրա ետելից, մայնքան նա կը խուսափի.։ այսպէս եմ եղրակացնում ես այդ բոլորից և թող անիծեալ լինի սէրն էլ.։ Սէրն էլ չէ այն ճանապարհը որ կարող է տանել դէպի իմ որոնած նուատակը. դու փշրեցիր մի լար էլ իմ որտից—մի վերջին լարը. ես գիտէի. դու մի նոր ուժգնութիւն տւիր վէրքիս. անիծեալ նղիր դու էլ.։ Թող ինձ. ես գեռ ոչինչ չեմ գտնել, ոչինչ չեմ հասկացել, եթէ ոչ՝ որ ամեն ինչ կեղծ է և անտանելի։
Ու ետ քաշւեց, փաթաթւեց վերարկւով, նայեց երկնքին և ուզեց հեռանալ։

Երիտասարդը տիրութեամբ պարզեց նրան իր ձեռքերը.

—Կանգ առ, ինդրում եմ, գոչեց նա—կանգ առ, դու բոլորովին սպանում ես ինձ քո վշտովը։

—Կամենում ես, շարունակեց իմաստունը մի նոր ուժզին դառնութեամբ—կամենում ես ապրել այսպիսի ազտոտ կազմակերպութեան մէջ, երջանիկ լինել այնտեղ, երջանիկ համարւել, այդ տեսակ սիրուհու վերագտնել, այսպիսի մարդկութեան մէջ անուն հանել.։ կամենում ես. այն ժամանակ մի ճար է միայն մնում քեզ—կեղծիր.։

Ասաց արհամարհութեամբ արաբացի իմաստունը և արագ քայլերով, առանց ետ նայելու՝ դուրս գնաց ծառաստանից ու հեռացաւ ամրոցից...

VII

Քայլեց նա և քանի առաջ էր գնում, այնքան աւելի թանձրացած կերպով վերարտազրում էր նրա մոտացին տանջանքը, վիճը և անըմբոնելի ապագան. այնքան էլ աւելի ուժգնանում էր նրա դառնութիւնը:

Քայլեց նա աւելի քան երեք՝ ընկճւած, ծանտալոսի պէս պապակած շրթունքը՝ մտովին երեակալած առւակին ուղղած—առւակ որ միշտ խուսափում էր. ցանկացող ձեռքերը մտովին երազած պտուղների տարածած—պտուղներ՝ որոնք միշտ ետ էին քաշում, բարձրանում, կախ ընկած անհունութեան մէջ, փայլուն որպէս ոչ մի աստղ, ցանկալի՝ որպէս ոչ մի բան...

Եւ այդ մտացին ցանկալի երազները քանի գնում՝ հեռու, շատ հեռու էին թւում նրան:

Եւ ահա տեսաւ ու համոզւեց նա, որ ահաւոր հրէշ-կեղծութիւնը մտել է Աստծուն պաշտելու, իր նմանին նւիրւելու և սիրոյ զգացմունքների մէջ, որ նա փակում է պէպի բարձրնու վսեմը զնալու ուղին, որ նա մտել է ամե՛ն, բացարձակապէս ամե՛ն բանի մէջ. ամենաշնչին թագուն խորշերից սկսած մինչև ամենալայն տեղերը գրաւել, որ սպրուել է նա մարդկանց միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների, մտերիմ՝ ընկերների, միմեանց ջերմ սիրողների, միմեանց՝ մեռնելու չափ նւիրւածների, ինքն—իր մէջ, երկու նոր հանդիպածների, երկու ամենահին բարեկամների, հայր ու որդու, ամուսինների... ամենքի մէջ այնպէս, որ նա բնութիւն դառնալով, մեծ մասամբ աննշմարելի եղած, պահանջ է դառնում. և որ չկայ ըսցարձակ անկեղծութիւն. որ բացարձակ անկեղծ լինել կամեցողը ոչ միայն դժբաղա կը լինի, կ'ատւի, կը հալածւի, մենակ կը մնալ, քաղցած կը մեռնի, իսենթ կը նկատւի, կը քարկոծւի և կը դառնանայ, այլ որ նա շուտով կը համոզւի թէ կեղծութիւնն է մարդկացին այսպիսի փշացած ընկերութեան մէջ կապ պահող շղթան, որ կեղծութիւնն է թագնւած այդ առերևոյթ երջանկութիւնների, մարդա-

սիրութեան, բարութեան, ազնւութեան, ոգևորութեան, իդէալականութեան և բոլոր այլ «վսեմ» անւանւած յատկութիւնների, նոյն իսկ անկեղծութեան տակ...

Եւ եկաւ իմաստունը այն եզրակացութեան, որ մարդկութիւնը երջանիկ կը լինի և կը հասնի վսեմ ու բարձր ապագային այն ժամանակ միայն, երբ հիմնովին տապալւի կեղծութեան վրայ կանգնեցրած այս կազմակերպութիւնը և երբ բացարձակ անկեղծութիւնը լինի ամենասովորական, տիրող բարոյականը...

Այն ժամանակ ահա, մարդս կարող պիտի լինի հասնել այն խորհրդաւոր նպատակին, որը նա այժմ չէ տեսնում, որի մասին նա ոչինչ չգիտէ և քանի այդպէս կեղծ է—չպիտի գիտենայ, չլիտի հասնի...

Ու խոնարհեց գլուխն իմաստունը՝ աւելի քան երբեք ճնշւած սրտով, վշտացած հոգով, ու նման ծանտալոսի որ կամեցել էր անմահութեան գաղտնիքը խիլ ասուածներից և գատապարտւել էր մշտական ծարաւի, յաւիտենական քաղցի տանջանքին—նրա մոքի մէջ բացւեց նորից անյատակ փնտոռղութեան անդունդը և գոյացաւ տոշորող ծարաւ, անյագ քաղց...

Հաւատի, անձնւիրութեան և սիրոյ ազգեցութիւնը խաղուել էին նրանում. գտել էր որ դրանք չեն դէպի փայլուն ու բարձր ապագան տանող շաւիդները, որովնետեւ բոլորն էլ թանձրապէս փակւած են կեղծութեան զգւելի տիղմով—բայց և զգում էր որ այդպէս չպիտի լինէր, որ զա բուռն կերպով անբնական, բռնութեամբ ուղղութիւնը ծռած, ճանապարհները տիղմով լցրած, խայտառակ ու խոզային դրութիւն էր և որ մեծ ապագան այնտեղ հեռու, չնայելով դեռ երազային աշխարհների մէջ՝ բայց կար, բայց պիտի մօտենար և որ նրան տանող ճանապարհները մաքրող միակ զէնքը անկեղծութիւնը կարող էր լինել, բացարձակ անկեղծութիւն, ամէն բանի մէջ անկեղծութիւն, պարզութիւն և ուղամտութիւն...

...Եւ ահա յանկարծ, անապատի և ամայութեան մէջ շարժւել սկսեց ամեն ինչ. բնութիւնն ամբողջ շքեղ, վարդադոյն լոյսի ողո-

զումով համակւեց և պքսնչելի շշուկով միացած կարծես, խոնարհւեց դէպի իմաստունը:

Ու մի քնըոյց ձայն, եկած երազալին, ապագայ աշխարհներից, կանչեց նրան.

—Եկել են օրերը. քայլիր և սովորեցրու...

—Մինչև երբ... բացականչեց նա.

Եւ ապագայի ձայնը կրկնեց նրան.

—Քայլիր, դու անմահ ես...

Այն ժամանակ փաթաթւեց իմաստունը իր վերարկուով, մի նոր ուժով ոգեորւած՝ պնդեց կոչկի կապերը, մոտաւ մարդկանց մէջ ու խօսեց բարձրաձայն՝ անկեղծութեան և գիտալցութեան մասին:

Եւ մարդիկ, որոնք լսում էին նրան, աւելի խորապէս յուզեցին իմաստունի համոզման ձայնից և ապագայի վարդագոյն փայլով:

Այդպէս անմահ՝ քայլում է նա մինչեւ այժմ, միշտ պապակած, միշտ լի մեծ ապագային հասնելու բուռն ձգտումով, անփեղծ ու մաքուր գալիքի համար տենդացին սպասողութեամբ համակւած և որոնողութեան բուռն ցանկութիւններով ուղղորւած:

Քայլում է նա և հաւատում որ պիտի գան այն մեծ օրերը, երբ ոչ հաւատքն է կեղծութեան շնորհիւ իրը եղբայրասպանութեան ահուելի գէնք գործածւելու, ոչ իր նմանին նւիրւելու գործը և ոչ էլ սէրը...

Եւ երբ մարդիկ տեսան այդ, իմացան որ Կովկասեան լեռների վրայ շղթայած—երկնքից զիտակցութեան կրակ գողացող Պրօմեթէոսը, յունական Տանտալոսն ու արաբական իմաստունը սիմբոլներ են այնպիսի նահատակների, որոնք ձգտում են միենոյն բարձր նողառակին, ըմբոստանալով եղած ապականութեան գէմ. որոնք քայլում են գշերի վրայով, տանջանքների միջով, որոնք երբէք գոհ, երջանիկ չեն ներկայով, այլ ապրում են ապագայով և որոնց դիակների վրայ է, որ իրը պատւանդանի՝ կանգնելու է երջանիկ օրերի և բացարձակ անկեղծութեան թագաւորութիւնը...

ԴԱՐԵՐԻ ԼԷԳԵՆԴԱՆ

„ԽԻՂԱԾ“

ԱՀԿԱՑՈՐ ՀԻՒԳՈՒ. — ԹԱՐԱՎ. Յ. ՏԵՐ-ԳԵՆՈՂԱՆՅԻ

(V. Hugo—La légende des siècles—„La Conscience“)

Իւր զաւակների հետ, մորթիներ հազած
Հերախառն, կաւզտագէմ փոթորկի միջին
Կայէնը փախուստ տւաւ Ենովացի առաջին.
Մուայլ մարդը հասաւ երեկոյեան զիմաց
Սրձակ դաշ ոում կանդնած մի լեւան սոտրոտին.
Զաւակներն շնչասպառ և կինը յոգնած
Ասացին. «Պառկենք և քննենք դեսնի վրան—
Կայէնը արիժուն երազում էր միացն:
Նայեց և չարագոյժ երկնքի խորքում
Նա տեսաւ մի աչք մեծ ու լայն բացւած,
Որ անշարժ, խաւարում նորան էր զիտում:
«Ես շատ մօտ եմ—ասաց նա մի սարսուռով.
Զարթեցրեց խեղճ կնօջը և զաւակներին
Եւ սկսեց փախչել կորստաբեր շաւղով:
Նա քայլեց երեսուն օր, քայլեց երեսուն գիշեր,
«Իողում թեթև աղմկից, դժգոյն ու լուռ գնում էր.
Եւ առանց յետ նայելու, գաղտագողի, անդադար
Դիմեց և հասաւ ծովափի, անքուն, տանջւած չարաչար:

«Կանգնենք այստեղ, ասաց Ն.ա, ապահով է ապաստանը»
 Մնանք, արդէն անցել ենք աշխարհի սահմանը»:
 Եւ հենց ուզում էր նստել—տեսաւ թխապոտ երկնքում
 Աչքը—կանգնած նոյն տեղ, հորիզոնի խորքում:
 Նա ցնցւեց ինչպէս զոհ, տիրեց նորան սև սարտւու,
 «Թագցրէք ինձ», գոչեց նաև Բայց զաւակները լուռ
 Վայրինի ու դողդոջ նախահօրն էին նայում:
 Կայէնն ասաց Յաբէլին —այն ամենքի հօրը,
 Որոնք մազէ վրանների տակ գնում են անապատ.
 «Տարածիր և այս կողմ վրանիդ ծածկոցթը»:
 Եւ կազմեցին այսպէս մի տատանւող պատ.
 Եւ երբ այն ամրացրին ծանր պարիսպներով—
 «Զէք տեսնում էլ ոչինչ»—հարցրեց մանուկ Թիլլան,
 Իւր զաւակների գուստը, անոց ինչպէս օրօր.
 —«Աչքը տեսնում եմ դարձեալ»—կայէնն ասաց նորան։
 Շուրջը ադարակներում ապրողների հայր Յոբալն—
 —«Կը կանգնեցնեմ մի պատնէշ»—բացականչեց հեռւից։
 Շինեց պղնձէ մի պատ. կայէնը մնաց յետեռում։
 Բայց նա կանչեց վերատին—«Աչքը միշտ նայում է ինձ»։
 Ենոքն ասաց. «Եինենք աշոարակներով վանդակ
 Այնպէս ահեղ, որ ոչինչ մերձենալ չը կարինայ։
 Կառուցանենք մի ամրոց, կառուցանենք մի քաղաք,
 Ազա փակինք ամուր»։ Եւ Տուրալ կայէնն ահա—
 Դարբինների հայրը —շինեց գերմարդկային
 Մի վիթխարի քաղաք։
 Աշխատանքի ժամանակ նրա եղբայրները դաշտում
 Սեթի և Ենոքի որդոց վանդում էին
 Եւ անցորդներին կուրացնում էին.
 Իսկ գիշերով աստղերն նետահար անում։
 Կոտափ փոխարէն—գրանիտէ պատեր տեսան,
 Նրկաթէ կապերով միացրին ողջ կապերը։
 Քաղաքը սևին էր տալիս գժոխքի նման,
 Աշտարակների սուերը խաւարեցնում էր գիւղերն
 Պատերին տւին լեռների հաստութիւն

Եւ երբ պատնէշ, շրջապատ—ամեն ինչ վերջացրին,
Դռան վրայ գրեցին «Ո՞ւտքը արգելւած է Աստծուն».
Եւ մի քարէ ամրոցում նախահօրը կանգնեցրին.
Նա մնաց այնտեղ ողբալի և անագորոյն:
«Հայր իմ, աշքը հեռացաւ»—դողալով հարցրեց Թիլլան.
—«Ո՛չ, նա ացնտեղ է միշտ»—կայէնը տւեց պատասխան:
«Ես ուզում եմ ապրել գետնի տակ—նա ասաց—
Ինչպէս իւր այրի մէջ մի միայնակեաց。
Այնտեղ չեմ տեսնի ոչինչ, էլ ինձ ոչ ոք չի տեսնի».
—«Այսպէս լաւ է», ասաց նա, երբ փոսը փորեցին:
Առաջ իջաւ միայնակ
Մռայլ կամարների տակ.

Եւ երբ նստեց այնտեղ անել խաւարում
Եւ գետնայարկը ծածկեցին նրա գլխին—
Աշքը գերեզմանումն էր և կայէնին էր նայում:

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ. Ե. Պ.

ՀԵԽՈՆ ՄԱՆՈՒԻԼԵԱՆՑԻ

(Շարունակութիւն ¹⁾)

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻԱՆԹԱՓՈՒՄՆԵՐ

I

Ամսուլ վերջանալու վրաց էր:
Արտիստ Մուրագեանի մօտ նշանակուած էր դերասանների ժողով, որը պիտի զբաղւէր առաջիկաց թատրոնական սեղոնին վերաբերեալ զանազան խնդիրներով։ Հարկաւոր էր խումբ կազմակերպել ուեպերտուարի մասին մտածել, կատարել մի քանի ընտրութիւններ՝ ռեժիսորի և միւս վարիչների և, վերջապէս, ընդունել ընկերութեան մէջ երկու նոր անդամներ, որոնք ներկայացումներին մասնակցելու փափագ էին յայտնել։

Այդ նոր անդամներից մէկը Արտաշէս Ռսկերչեանն էր, իսկ միւսը՝ Զիչագեանը։
Վերջինը երկար ժամանակ ուսուցչութեամբ էր պարաւպում

¹⁾ Տես «Մուրճ» 1897թ. № 1, 2—3, 4, 5։

գաւառների խուլ անկիւններում։ Զանձրացել էր նա երեխանների վրայ զոռգոռալուց, այլ ևս չէր կամենում թմբել անշատութեան մէջ և «զղերը փչացներ»։ Նա գիտէր, որ մարդ պիտի ընարէ գործունէութեան այն ասպարէզը, որ աւելի համապատասխան է իւր ընդունակութիւններին։ Նորա սիրտը չկպաւ դպրոցին, բայց բեմը սիրում էր։ Ուրեմն ինչ է խանգարում, որ նա դերասան դառնայ? Նա հաւատացած էր, որ ինքը զուրկ չէ արտիստական ձիրքից։ Զէ որ հինգ վեց անգամ նա յաջողութեամբ կատարել է իւր գերերը գաւառական բեմի վրայ, ընկերները հաւանել են, հասարակութեանը դուր է եկել նորա խաղը, և մի անգամ՝ էլ դովել էր նորան «Փամանակ» լրագիրը մի գաւառական թղթակցութեան մէջ? Էլ երկար չմտածեց. վճռեց լինել դերասան, ձգեց իւր աղքատ ընտանիքը, խոսուաննալով միշտ փող ուղարկել քաղաքից, դարսեց խնամքով իւր հնամաշ շորերը մի խարխուլ փոքրիկ սնդուկի մէջ, կապկապեց պարանով, որովհետեւ կողպել անկարելի էր, քանի որ ոչ բանալիք կար, ոչ բանալիքի տեղ, այլ սորա փոխարէն բացւել էր մի այնպիսի խորշ, որ նորա մէջ ծիալ հեշտութեամբ կարող էր մտնել։

Եւ այսպէս ճանապարհ ընկաւ ուղիղ դէպի Թիֆլիս։
Մուրագեանի սենեկում չկար գեռ ևս ոչ մէկը դերասաններից։
Բայց Զիշագեանը զարմանալի ճշտապահութեամբ ներկայ էր այնտեղ նշանակւած ժամին։

Դիւանի կլոր սեղանից քիչ հեռու պատի մօտ նստած էր նա աթոռի վրայ անշարժ և ուղիղ։ Խորին յարգանքով, գրեթէ երկիւղածութեամբ լսում էր արտիստին, որը, իւր ժամացոցի շղթայի հետ խաղալով, հարց ու փորձ էր անում նորան։ Որտեղացի է, բնչով էր պարապում առաջ, ինչու այնքան ուշ է սկսում դերասանութիւնը, և այլն։

Սկզբում Մուրագեանը բարի և քաղաքավարի մարդու տպաւորութիւն գործեց Զիշագեանի վրայ, և սա, խրախուսւած արտիստի վարմունքից, աւելի համարձակ դարձաւ և նոյն իսկ թույլ տւեց իրան մի անգամ չհամաձայնել նորա մի կարծիքին։ Բայց երբ նա հարցրեց նորեկի ամպլուազի մասին, ցանկանալով իմանալ, թէ ինչպիսի դերեր կարող է կատարել, և ապագայ դերասանը

այլնայլ դերերի թւում յիշեց նաև Համբէտի անունը, արտիստի դէմքի արտայայտութիւնը յանկարծ փոխւեց, արհամարական ժամկան խաղաց երեսին, և նա մի ճնշող հայեացքով չափեց նորան՝ սկսած գլխից, որի երկայն մազերի մէջ սպիտակին աւող թելերը մատնում էին նորա հասակը, մինչև կօշիկները, որոնք իրանց կարկատաններով հանդերձ աւելի էին պազգում, քան թէ սերթուկի օձիքը կամ վզին փաթթած լաստիկի կտորը, այսինքն՝ փողպատը: Խեղճը զդաց իւր մարմնի վրայ այդ նայւածքի ամբողջ ծանրութիւնը, մեքենաբար ևտ տարաւ աթոռի տակ կարկատած կօշիկները, և գլուխը կորացաւ:

Տիրեց բոլէական լռութիւն, և, ով գիտէ, որքան պիտի տեէր այդ լռութիւնը, եթէ նորան չընդհատէին Մուրադեանի ընկերները, որոնք շուտով տկնեցին երեալ մէկը միւսի ետևից, աղմուկով, ուրախ ծիծաղով և բարեկամական ողջո՞ններով:

Հէնց որ մէկը ներս էր մտնում, Զիչագեանը իւր պարտքն էր համարում իսկոյն վեր կինալ տեղիցը և ացդախով իւր յարգանքը մատուցանել ապագայ արւետակցին: Մուրադեանը ծանօթացնում էր նորան իւրաքանչիւրի հետ, և նա խոնարհութեամբ ձեռք էր տալիս ծանօթացողին և էլի նստում իւր տեղը:

Հաւաքւել էին մօտ տասնեւհինգ հոգի, որոնց թւում և մի քանի դերասանուհիներ, բոլորն էլ երիտասարդներ՝ 18-ից մինչև 30 տարեկան: Մուրադեանը ծխելով կամացուկ խօսում էր ոռուերէն մի դերասանուհու հետ, որը նստած էր կողքին զիւանի վրայ և ուշիուշով դիտում էր Զիչագեանին, կարծես ցանկանում էր գուշակել նորա դէմքից, թէ ինչ է խօսանում նա, որ յաւակնութիւն աւնի Համբէտի դերը կատարելու: Զամբազեանը մի այլ դերասանուհու իրանը բռնած իւր աջ ձեռքով՝ անցուդարձ էր անում, զրոյց անկելով հետով վրացերէն, ու երկուսն էլ յանախ նայում էին Զիչագեանին և ժամանակակից կիսաարհամարական և կիսաներողամիտ ժպիտով: Դրան մօռ խմբւած էին մի քանի հոգի և վիճում էին. այն կողմից երբեմն լսում էր Ոսկերչեանի անունը: Մի ուրիշը նստած էր Զիչագեանի հանդէպ, արմունկները յենած ծնկներին, զլուխը՝ քաշ արած և մտախոհ ծխում էր: Խոկ Զիչագեանի վրացից իւր աչքը չէր հեռացնում ամենաջահէլը դերասաններից, որը՝ մէջքը

պատին տւած՝ նայում էր ապագայ արւեստակցին այնպէս, ինչպէս երեխան նայում է զարմանքով մի գաղանի վրայ, որին առաջին անգամն է տեսնում:

Սպագայ արտիստը, տեսնելով, որ ինքը ընդհանուրի ուշադրութեան առարկայ է դարձել, իրան խիստ ճնշւած էր զգում: Նա անհանգիստ էր. կամ ձեռքը տանում էր ծոցը և հայեացքը քեեռում յատակի մի կէտի վրայ կամ դողդոջ մատներով ոլորում մօրուքի ծայրերը, կամ շինծու համարձակութեամբ վեր էր կենում տեղիցը, մի երկու անվստահ քայլ անում դէպի այս կողմ, դէպի այն կողմ և կրկին վերադառնում իւր նախկին տեղը: Ողորմելի էր նա այդ ժամին!

Հատուկուր խօսակցութիւնների միջից որոշեց յանկարծ Զամբաղեանի ձայնը, որ գոչեց սենեկի մի ծայրից.

—Մուրագեան, չսկսենք? Ժամանակ է!

—Ասկերչեանին չսպասենք? Պատասխանեց Մուրագեանը:

—Ոչ, ոչ, սկսենք, նա ուշացաւ!... Լսւեցին ձայներ այս ու այն կողմից, և շուտով սեղանի շուրջը խմբւեցին ամենքը:

Կատարեցին ընտրութիւնները: Մուրագեանը ընտրեց ոեժիսոր, Զամբաղեանը՝ զանձապահ: Սցենարիուսը և յուշարարը որոշւած էին առանց ընտրութեան նշանակւեցին, բացի այդ, և երկու վերաստուգողներ և մի հաշւապահ: Մուրագեանը կամեցաւ առաջարկել խորհրդածութեան առաջին ներկայացման հարցը, որով պէտք էր բաց անել սեղանը: Բայց Զամբաղեանը մէջ մտաւ, ասելով հետևեալը.

—Մեր խմբի մէջ երկու նոր անդամներ են աւելանում, և մենք չգիտենք, թէ ինչպիսի գերեր կարող են կատարել: Ուստի լաւ կը լինի առաջ մի տեսնենք, թէ որպիսի գերեր կատարելու շնորհք ունին: Այս, օրինակ, ալ. Զիշագեանը: Նա ինչ տեսակ գերերի համար է? Ծերերի, սիրահարի, ֆատի? կամ կոմիկ է, տրագիկ է, թիւչ է?

—Ուզում էք, մի բան կարդայ տեսնենք, —ասաց Մուրագեանը: Ինչ վերաբերում է ամպլուալին, կարծում եմ, նա աւելի յաջող կը կատարէ թեթև կոմիկական գերեր...

—Ընդհակառակը, ինձ թւում է, որ ալ. Զիշագեանը աւելի

դրամատիկական դերերի համար է,—հակաճառեց Զամբազեանը՝ Վճռեցին քննել Զիչագեանին, փորձելու համար նորա ձայնը, դիկցիան, ինտոնացիան և միմիկան:

Մուրադիանը բերեց «Համլէտը», ընտրեց մենախօսութիւններից մէկը և կամեցաւ առաջարկել սկսնակին՝ արտասանելու:

—Որ մոնոլոգն է, Մուրադեան? հարցրեց Զամբազեանը, մօտենալով նորընտիր ուժիսորին և նայելով գրքոյնի բացած էջի վրայ:

Այդ լաւ չէ: Թող այս մէկը կարդայ:

Այդ ասելով, նա խլեց Մուրադեանի ձեռքից պիեսը, արագթերթեց երեսները ետ ու առաջ և, երբ գտաւ իւր ցանկացած տեղը, գոչեց, մատը դնելով այն տեղի վրայ:

—Այ, այ, այս մոնոլոգը թող կարդայ:

Եւ յանձնելով գրքոյնը ուժիսորին, նատեց իւր տեղը և սպասողական դիրք ընդունեց:

Ուժիսորը չհակաճառեց. գրքոյնը տւեց Զիչագեանին և առաջարկեց կարդալ ՇՈՒ, եթէ դուք, իմ հոգու ամուր շղթաներն յաշտնի մենախօսութիւնը:

Ամեն մէկը իւր տեղը բռնեց, իսկ Զիչագեանը մնաց կանգնած սեղանի մօտ, լամպացի առջե, և սկսեց աչքի տակով անցկացնել արտասանելիք մոնոլոգը:

Նորա սիրով թփթփում էր: Դողդողում էր թերթիկը, որ բռնած էր իւր յուցամատով և բռնթ մատով: Տառերը աչքեառջե խժւթում էին, և միջաների երամի պէս Տասներկուսից աւելի դատաւորների ներկայութեամբ նա պիտի ցոյց տար իւր բոլոր կարողութիւնը:

Նորա բախտիցը, այդ բովէին եկաւ Ռսկերչեանը, և նա միւպահ ազատ շունչ քաշեց ու միջոց ունեցաւ ոյժերը կառավարելու:

Ռսկերչեանը ծանօթ էր ոմանց հետ. ում չէր ճանաչում, ծանօթացաւ և նատեց Մուրադեանի մօտ, դիւանի վրայ: Ուժիսորը ասաց նորան, որ Զիչագեանն էլ նոր է, և փորձի համար մի բան պիտի կարդայ Համլէտից:

Զիչագեանը սկսեց. ձայնը դողում էր և գնալով բարձրանում էր crescendo: Բիբերը թռած էին վերև դէպի ճակատը, և համարեամիայն սպիտակուցն էր երեսում: Գրեթէ ամեն մի բառը աշխատում

Էր արտայացտել համապատասխան ձեւերով. օրինակ, եղկու ամիս բառերը արտասանելիս՝ երկու մատները ցցում էր վերև, ինչպէս քահանան, երբ «իւաղաղութիւն ամենեցուն» է ասում:

Ոսկերչեանը ժպտում էր ներողամիտ ժպիտով. միւսները իրար երեսի էին նայում և հազիւ պահում իրանց ծիծաղը: Մուրադեանը երկու ձեռքով ծածկել էր աչքերը, որպէս զի դէմքի ծիծաղկառ արտայացտութիւնը շերեայ: Մէկը քիթն էր հուպ տալիս, միւսը շրթունքն էր կրծում: Ամենից լուրջը Զամբաղեանն էր երեսում, ապշութիւնից բերանը բաց էր արած, աչքերը յառած Զիչագեանին և հետեւում էր շարժուն բիբերով նորա իւրաքանչիւր շարժւածքին. շատերը ծիծաղում էին նորա աչդ կոմիկական լրջութիւնը տեսնելով: Մէկն էլ իրան չկարողացաւ զապել, փլրթկացրեց, դուրս վազեց սենեկից, և դրան հուեից լաւեց նորա բարձրաձայն քրքիջը:

Ոսկերչեանին դիւր չեկաւ արւեստակիցների ացդ վիրաւորական, անխիղճ վերաբերմունքը դէպի սկսնակը. նորա դէմքը լրջացաւ, և իւր լուռ կշտամբանքով նա աշխատում էր զապել ոմանց անքաղաքավարութիւնը:

Զիչագեանը՝ իւր մենախօսութիւնը չաւարտած՝ գիրքը դրեց սեղանի վրայ, և բոլորովին կարմրած ամօթից, քրանած՝ խղճալի ձայնով մրմնջաց.

—Այժմ ես չեմ կարողանում.. ձայնս խզւած է... եթէ կ'ուզէք, մի ուրիշ անգամ...

—Բաւական է, բաւական է,—ասաց Զամբաղեանը, վեր կացաւ տեղիցը և գնաց դէպի դուռը: Նորա ետևից գնացին շատերը դերասաններից և, խմբւելով նորա շուրջը, սկսեցին քննադատել Զիչագեանին: Մէկը ասում էր, թէ ծիծաղալի է, միւսը թէ բոլորովին անընդունակ է, երրորդը՝ թէ ձայն չունի և աչլի: Զամբաղեանը ասաց, թէ Համբէտի գերը չէ կարող կատարել, բայց անխօս դերեր կամ սակաւախօս ծառաների դերեր լաւ կը կատարէ:

Այնուամենայնիւ Զիչագեանը ընդունւեց խմբի մէջ: Նա ուրախացաւ և շնորհակալութիւն յայտնեց:

Երբ խօսք բացւեց Ոսկերչեանի մասին, սա ասաց.

—Պարոններ, իհարկէ, ձեզ յայտնի է, պ. Մուրադեաննէլ ձեզ ասած կը լինի, որ ես կամենում եմ լինել ձեր խմբի մէջ:

—Մենք ձեզ ընդունում ենք գրկաբաց, —ասաց ռեժիսորը ի դիմաց խմբի: Յոյս ունիմ, որ դուք կը լինէք մեր լաւ ոյժերից մէկը:

—Մենք կարդացինք ձեր մասին լրագիրներում, —նկատեց Զամբազեանը: Նատ գովել էին:

—Իհարկէ, մենք ձեռքի տւած պիտի զործենք, —շարունակեց Ոսկերչեանը: Մենք պիտի աշխատենք բարձրացնել թատրոնը, որը, գերախառաբար, վերջին տարիները կորցրել էր իւր նախկին հրապոցը և փայլը և սկսել էր զիմել դէպի անկում...

Դերասանների մէջ փսխոց ընկաւ: Նատերի դէմքը հեղնութիւն էր արտայացում: Ումանք բարկացան Ոսկերչեանի այս խօսքերի վրայ, բայց զսպեցին իրանց զգացմունքը: Ենչպէս թատրոնը դիմում էր դէպի անկում, և մենք պիտի աշխատենք բարձրացնել» մտածում էր իւրաքանչիւրը այդ բոպէին:

—Սա իրան ինչ է երեակացում? շշնջաց մէկը ընկերոջ ականջին: Ամենից համարձակը Զամբազեանը եղաւ, որ ասաց.

—Ուրիմն մենք էինք պատճառը, որ թատրոնը դիմում էր դէպի անկում?

Ոսկերչեանը ուզեց արդարանալ, չկարողացաւ: Նորա մեծամութիւնը և անձնապատան ոճը խիստ վատ տպաւորութիւն գործեցին ամենքի վրայ: Նոյն իսկ Մուրադեանը, որ առաջ մեծ յարգանքով էր վերաբերում դէպի Ոսկերչեանը, նա էլ իւր երեսը թըթացեց և դժգոհութեամբ քորեց ծոծրակը իւր խօսքերի գործածաղղեցութիւնը դերասանների վրայ Ոսկերչեանը չէր կարող չտեսնել: Նա զղչաց իւր անդգուշութեան համար, բայց ուշ էր: Նա իւր բարի ցանկութիւնները մի կողմ դրեց և զիմեց աւելի գործնականին:

—Պարզներ, —ասաց նա, —ես ձեզանից մի դերիւտ պիտի խնդրեմ, և միայն այս պայմանով կարող եմ հաշւել ձեր ընկերութեան անդամն Զգիտեմ, կը համաձայնէք ինձ դերիւտ տալ թէ ոչ:

Մուրադեանը դէմ չէր այդ պայմանին: Զամբազեանը հակառակ էր գորան: Խնդիրը վճռւեց քւէարկութեամբ, և ձայների մեծամասնութեամբ հարցը վճռւեց յօգուտ Ոսկերչեանի:

Նատերը իրանց ձայնը տւին ոչ թէ բարի ցանկութիւնից

գրդւած, այլ նորա համար, որ սաստիկ հետաքրքրւած էին Ռակերշեանի անձով։ Նոքա ուզում էին տեսնել, թէ այս ինչ տեսակ նոր հաւ է դուրս եկել, որ երկաթէ ձւաներ պիտի ածէ։

Ռակերշեանը կամենում էր, որ սեղնը բացւէր իւր զերիւտով։ բայց այդ առաջարկութիւնը հանդիպեց զերասամների միահամուռ մերժման, թէ համաձայնեցին առաջին ներկայացումներից մեկը յատկացնել նորա զերիւտին։

Յետոյ խօսք բացւեց սեղոնի առաջին ներկայացման և ապա ընդհանրապէս ռեպերուարի մասին։ Երկրորդ ինդրի վերաբերմասք ամեն կողմից լու ում էին գանգատներ, թէ յարմար սլիեսների կատարեալ սովէ է տիրում, եղածներից հասարակութիւնը ձանձրացել է, նորերի մեծ ուահանջ կայ։ Ռակերշեանը այն կարծիքի էր, որ քանի որ մեր ինքնուրոյն դրաման աղքատ է, ուստի անհրաժեշտ է ոյժ տալ թարգմանութիւններին։ Զամբազեանը առարկեց, թէ նոյն իսկ թարգմանութեան գործը մեծամեծ դժւարութիւնների է հանդիպում, և այդ այնքան էլ հեշտ չէ, ինչպէս թւում է, որովհետև եւրուսական բազմակողմանի ռեպերուարից հարկաւոր է ընտրել մեր կեանքի համար յարմարագոյնը և յանձնել թարգմանելու ձեռնհաս անձանց։ Դժւար է ընտրութիւն անելլ, դժւար է լաւ թարգմանիչներ գտնելը և աւելի դժւար՝ թարգմանիչներին վարձատրելը։ Ռակերշեանը պատասխանաց, թէ բոլորը կախւած է նորանից՝ ինչպէս կը վերաբերի խումբը ռեպերուարի ինդրին։ Եթէ նա կամենայ այդ ինդիրը դարձնել իւր կարեւոր գործերից մէկը, գործը անշուշտ գլուխ կը գայ։ (Եւ ահա ինչպիսի հիմունքներով էր հաստատում նա իւր կարծիքը։ Նախ՝ նւրուպացի դրամատիկական դրականութիւնը շատ հարուստ է։ (Եւ նա թւեց մի շաբք հեղինակների և պիհեսների անուններ թէ կլասիկական, թէ ոռմանտիկական, թէ նորագոյն ռեպերուարից)։ Երկրորդ՝ ընտրութիւն անելլ այնքան դժւար չէ, ինչպէս թւում է։ Նոյն իսկ ինքը խումբը այդ կարող է անել։ գորա համար հարկաւոր է միայն ռեպերուարի ինդիրը մշակել խմբի կանոնաւոր նիստերի մէջ։ Երկրորդ՝ շափազանցութիւն է ասել, թէ թարգմանիչներ չկան։ (Եւ նա թւեց մի քանի անուններ, որոնք կարող էին այդ գործը կատարել)։ Գալով թարգմանիների վարձատրութեան, նա ասաց,

որ դորա համար հարկ կը լինի տարին մէկ կամ երկու ներկայացում տալ և արդիւնքը յատկացնել այդ նպատակին, առարկելով՝ որ այդպիսով ոչ թէ կը նւազի ընկերութեան տարեկան հասոյթը, այլ ընդհակառակը, կը մեծանայ, որովհետեւ ուսպերտուարի թարմութիւնը գրաւական կարող է լինել ներկայացումների մշտական յաջողութեան։ Զամբազեանը նորան պատասխանեց, թէ ինդիրը դորանով չէ վերջանում. կայ դեռ մի այնպիսի դժւարութիւն, որի առաջ խումբը անզօր է, այն է, որ ամեն մի նոյն իսկ յարմար պիեսի համար համարատասխան ոյժեր չկան խմբի մէջ. օրինակ, ինչպէս ներկայացնեն Մակրէթը, երբ ոչ Մակրէթի դերակատար, ոչ լէզի Մակրէթի դերակատար չկան խմբի մէջ? Ինչպէս ներկայացնեն Օրլէանի կոյսը, երբ ժաննա դ'Արկի դերակատար չկայ խմբի մէջ? Այդ ասելով Զամբազեանը դիմեց դերասանուհիներին և հարցրեց.

— Օրինակ, դուք կը կատարէք ժաննա դ'Արկի դերը?

— Ո՛չ, ո՛չ, այդ իմ բանը չէ! պատասխանեց նա, գլխով և ձեռքով բացասական շարժում անելով:

— Իսկ դուք, տիկին, կը կատարէք լէզի Մակրէթի դերը?

— Ներեցէք. ես այդքան անհամեստ չեմ! պատասխանեց տիկինը՝ խորհրդաւոր հայեացք ձգելով Ոսկերչեանի երեսին:

Դերասանուհիների այդ համեստ պատասխանի վրաց դերասաններից ոմանք ծիծաղեցին։ Ոսկերչեանին թւաց, որ այդ ծիծաղը վիրաւորական էր և վերաբերում էր իրան։ Նա սկսեց հասկանալու որ այդ խումբը, որին նա մօտենում է բարեկամական զգացմունքով, յոյսերով և զանազան ծրագիրներով, այնքան էլ լաւ չէ տրամադրըւած դէպի նա. երբ նա խօսում է, դերասանները իրար երեսին նացում, հեգնաբար ժապաւմ, իրար ականջի փսփսում։ Եւ ինչու՞ Զէ որ նա նոցա ընկերն է? Զէ որ նա խօսում է յանուն ընկերութեան շահերի? Եթէ նորա կարծիքները սխալ են, թող ցոյց տան ացդ սխալը! Նա անկեղծ է խմբի հետ, ինչու խումբը անկեղծ չէ նորա հետ? Միթէ մարդուն այնպէս են ընդունում զըկաբաց?

Համարեա արդէն կէս զիշեր էր, երբ նիստը փակւեց։ Դորանից յետոց դերասանները խմբով (բացի դերասանուհիներից) գնացին մի ասիական ճաշարան, նստեցին քէֆի։ Կերան, խեց՛ն

և շատ ուշ գուրս եկան այնտեղից ու ցրւեցին։ Ոսկերչեանն էլ միւսների պէս գլուխը տաքացրել էր, հաշիւ տեսնելիս թափ տւեց սկրտմոնէն ճաշարանի տիրոջ առաջ և լիքը փորով, բայց դատարկ գրպանով վերադարձաւ տուն։

Հետեւեալ օրը Ոսկերչեանը ճաշելու փող չունէր։ Հարկաւոր էր սպարտք վերցնել մէկից։ Բայց ումնից? Գնալ Զառիկեանի մօտ? Բայց չէ որ մի շաբաթ չկայ, նորանից առաւ հինգ ոռորդի։ Նորից ձեռքը մեկնել նորա առաջ? Նա ինչ կը մտածէ? Ի հարկէ, նա առաջին անգամ դժգոհութեան նշոյլ անգամ չերեցրեց։ Նա հաւատացած է, որ բարեկամը առանց դժւարութեան այս անգամ էլ ձեռքը կը տանի գրպանը և կը հանէ այնքան, որքան դուրս կը գայ գրպանից։ Բայց ամօթը նորան կաշիանդում է։

Նա վճռեց սպասել, չնայած, որ քաղցից նեղուում էր։ Սպասեց մի ժամ, երկու ժամ, երեք ժամ, բայց երեկոյեան այլ ես չկարողացաւ դիմանալ և դիմեց ուղիղ դէպի Զառիկեանի բնակարանը։

II

Նոյն այդ երեկոյ Զառիկեանների տանն էր և Սկումեանը։ Դա առաջին անգամն է, որ նա այցելութեան էր գնացել այդ ընտանիքին՝ ամարանոցից վերադառնալուց յետոց։

Դեռ ես կարդին չբարեւած, նա սկսեց ներողութիւնից, որ այնքան ուշ է եկել այցելելու իւր ամենաանկեղծ բարեկամներին։ Օր Աշխենը կամեցաւ իմանալ, թէ ինչու նա այնքան ուշ է մտաբերել իւր ամենաանկեղծ բարեկամներին։ Հիւրի տւած պատասխանից երևաց, որ նա այժմ սաստիկ ծանրաբեռնւած է պարապմունքներով։

Եւ իրաւ, նա ծանրաբեռնւած էր։ Ճիշտ է, Ազատեանի ժամանակաւոր խմբագրութեան միջոցին նա ոչ մի տող չգրեց «Ճառագայթի» մէջ, բայց փոխարէնը նա ուրիշ գործ կատարեց։ Նա յաջողեցրեց մի առևտրական տան գրասենեակում բաւականին արդիւնաւոր պաշտօն գտնել։ Եւ ահա այդ ինչպէս եղաւ։ Նա ծանօթ էր այդ առևտրական տան գլխաւոր կառավարչի հետո Ամառը աւելի մօտեցաւ հետը։ Խնքը մի քանի անգամ այցելեց նորան, մի անգամ էլ լնդունեց նորան իւր մօտ։ Կառավարիչը «Ժամանակ» լրա-

գրի ջերմ համակրողներից էր և ոխերիմ հակառակորդ «ձառագայթի»: Իսկ առևտրական տան գլուխը, որ մի հարուստ վաճառական էր, «Փամանակի» խմբագրի մօտիկ քարեկամներիցն էր: Սեռմեանին շատ պարտաւորեցրեց կառավարիչը. «Նորա միջոցով էր, որ նա ստացաւ իւր պաշտօնը, նա էր, որ ծանօթացրեց նորան «Փամանակի» խմբագրի և խմբագրութեան մի քանի ուրիշ անձանց հետ: Օրւայ սովորական խօսակցութիւններից յետով, Սեռմեանը ասաց Գարեգինին.

— Դէհ, սիրելիս, հիմա հաշիւ տուր ինձ. հեղինակութիւնդ աւարտել ես թէ ոչ?

Գարեգինը պատասխանեց թէ աւարտել է: Սեռմեանը խընդրեց, որ կարգայ: Գարեգինը ասաց, որ նա ցանկանում է մի քանի անձանց կարծիքներ ևս լսել, ուստի լսւ է սպասել, որ նա նշանակի մի երեկոյ յատկապէս երկասիրութիւնը կարգութու համար: Սեռմեանը նկատեց, որ մի ուրիշ անգամ նա կարող է միջոց չունենալ, և կրկնեց իւր խնդիրքը, ասելով:

— Եթէ իմ կարծիքը մի բան արժէ քեզ համար, և ինձ քո բարեկամն ես համարում, կատարիր խնդիրքս. բեր և կարդա:

Գարեգինը զիջում արաւ Սեռմեանի թախանձանքին, մանաւանդ, որ քոյցն էլ մէջ մտաւ իւր յորդորներով:

Նուտով երեքն էլ տեղաւորեցին դահլիճում սեղանի շուրջը՝ Գարեգինը բազմոցի վրայ, իսկ Սեռմեանը և Աշխէնը հանդիպական բազկաթոռների վրայ:

Զառիկեանը սկսեց կարդալ իւր վէպը, որի վերնազիրն էր «Աւրժապետը»: Վերնազրից երկում է, որ հերոսը մի ուսուցիչ է. նա զործում էր ժողովրդի մէջ այնպէս, ինչպէս միսիոնարը կիսավայրենի մարդկանց մէջ. ոմանք հետեւում են նորա քարոզներին, ոմանք անտարբեր են, ոմանք հալածում են: Գրւածքը պարունակում էր իւր մէջ առաջին փորձի բոլոր թերութիւնները, թէեւ մէջը պատահում էին յաջող մոքեր, յաջող նկարագրութիւններ և հոգեբանական մի քանի հասուն դիտողութիւններ: Զառիկեանը կարդալիս բաց թողեց մի քանի գլուխներ և բաւականացաւ նոցաբովանդակութիւնը պատմելով, որպէս զի պատմութեան թելը չկորւեր լսողների համար:

Երբ վերջացաւ ընթերցումը, Սկումեանը ասաց.

—Գարեգին, շնորհաւորում եմ: շատ յաջող է, և մեզ իսկական զւարձութիւն պատճառեց քո դրւածքը:

Այդ ասելով, նա սեղմեց բարեկամի ձեռքը, և երկար ժամանակ կարծես ավասարում էր բաց թողնել նորան, որովհետև այլք ձեռքն էր շարժել դիւթական գրիչը և ստեղծել հրաշալի էջերը. լուռ հիացմունքով նայում էր նա հեղինակի աչքերի խորութեանմէջ:

Աշխէնը, թէև ընթերցման միջոցին մի առանձին զւարձութիւն չստացաւ եղրօր երկասիրութիւնից, բայց Սկումեանի հիացմունքը տեսնելով, կարծեց, թէ իրաւ որ հիանալի բան էր լսածը, ուստի և ասաց.

—Եատ, շատ լաւ է, Գարեգին! Աքանչելի է! Ես բոլորովին չէի սպասում, որ այդքան յաջող կը լինի:

Փոյրը աւելացրեց, թէ այնուամենայնիւ մի քանի հակասութիւններ է նշմարել գործող անձանց բնաւորութեան մէջ և ցոյց տեսց հեղինակի սխալները, որոնցից միան մէկին համաձայնեց եղբայրը: Սկումեանն էլ իւր նկատողութիւններն արաւ: Գարեգինը խոստացաւ աչքի առաջ ունենալ յալտնած նկատողութիւնները՝ գրւածքը ուղղելու ժամանակի:

—«Ճառագայթի» մէջ պիտի տպես, այնպէս չէ, Գարեգին? հարցրեց քոյրը:

—«Ճառագայթի» մէջ? զարմանքով գոչեց Սկումեանը:

—Այո, պատասխանեց օրիորդը, աչքերը լայն բանալով: Միթէ անյարմար է այնտեղ?

—Ես կարծում եմ,—վրայ բերաւ Սկումեանը խորհրդաւ որեղանակով:

—Բայց ինչու, պարոն Սկումեան? Միթէ «Ճառագայթը» այժմ այն չէ, ինչ որ առաջ էր?

—Իհարկէ, ոչ!

Նա բացատրեց իւր միաքը, յայտնելով, որ իւր ասածը վերաբերում է «Ճառագայթի» ներկայ խմբագրութեան, և աւելացրեց.

—Ազատեանը, իմ կարծիքով, արատաւորեց այդ պատւաւոր թերթի անունը, և Ազատեանի ժամանակաւոր խմբագրութեան:

օրերը այդ լրագրի պատմութեան ամենասեւ էջերը պիտի կազմեն:

Սեռումեանի այդ խօսքերի վրայ քոյր ու եղբայր իրար երեսի նայեցին, կարծես երկու սն էլ յանկարծ մի բան յիշեցին: Ամարանոցից վերադառնալուց յետոց, Գարեգինը և Աշխենը իրանց ծանօթներից մի քանի վատ բաներ էին լսել Սեռումեանի մասին, իբր թէ նա և Ազատեանը իրար հետ ընդհարում են ունեցել, կռւել, բաժանւել են, միմեանց այլ ևս չեն բարեում. իբր թէ Սեռումեանը բարեկամացել է այնպիսի անձանց հետ, որոնց առաջ չեր արժանացնիլ իւր բարեկին. իբր թէ նա յարել է «Ժամանակ» լրագրին, ամեն տեղ բամբասում է Ազատեանին, նորա ընկերներին և մինչեւ անգամ սկսել է վատաբանել «Ճառագայթը» և ամեն տեղ գուգուալով գուշակութիւններ անել նորա մօտալուա անկման մասին: Զառիկեանը դեռ ևս չեր ուզում հաւասար իւր բոլոր լսածներին, և ամեն անգամ, երբ քոյրը մի նոր լուր էր հաղորդում Սեռումեանի վերաբերմամբ, նկատում էր նորան սկեպտիկաբար:

—Դեռ սպասիր, Աշխեն. աudiatur et altera pars—պէտք է լսել և հակառակորդին! Ազատեանն էլ մի գովելի պառաղ չէ! Երբ հարկաւոր է մի բան ստուգել, և այդ դժւար չէ, պէտք է ստուգել:

Օր. Աշխենը այժմ՝ ուրախ էր, որ Սեռումեանը ներկայ էր և նորա մասին լսածները մասամբ կարելի էր ստուգել: Եւ ահա սկսեց նա իւր. հարց ու փորձը, իսկական ըննիշի հարցուփորձ: Բայց չնայած բոլոր կանացի խորամանկութեան, որ նա աշխատում էր գործ դնել Սեռումեանի հետ խօսելիս, վերջինս շուտ հասկացաւ նորան և իսկոյն յարմար զէնք ու դիրք ընտրեց իւր ցանկացած տպաւորութիւնը գործելու համար:

—Միթէ, ճշմարիտ, Ազատեանը այդչափ վատ էր տանում իւր խմբագրական գործը, ինչպէս դուք էք ասում? Ասաց օրիորդը, ցանկանալով դիմուել խօսակցի սրտի նուրբ լարին: Ճիշտ է, առաջնորդողները թոյլ էին, բայց, ընդհանրապէս վատ չեր...

—Իսկ ես ասում եմ. անտանելի էր «Ճառագայթը» այս երեք ամսաւայ ընթացքում! Պատասխանեց Սեռումեանը համարիա բարեկացած: Սխալներով, հակասութիւններով, անհամ յօդւածներով—լիքն էր «Ճառագայթը»! Եւ զարմանալի բան էլ չէ այդ! Այդպէս էլ սպասում էի! Ապա ինչ պիտի լինէր?...

—Ես զարմանում եմ, —ասաց Աշխէնը, —որ դուք, պարոն Սեռումեան, ազգակս էք խօսում ձեր սրտակից բարեկամի մասին:

—Ազատեանը—իմ սրտակից բարեկամ? Գոչեց Սևումեանը և ակսեղ ծիծաղել, շարունակ կրկնելով. «Ազատեանը—իմ սրտակից բարեկամ!»..

Այդ անուեղի ծիծաղը վիրաւորեց օրիորդին, և նա ասաց սրտանեղութեամբ.

—Այն, այդ դուք ինքներդ էք ասել! Այժմ ուրանում էք ձեր ասածը!

—Օրիորդ, ես և Ազատեանը լնկեր ենք եղել, իրար մօտ ենք եղել, բայց որ ես ասած լինեմ, թէ նա իմ սրտակից բարեկամն է, այդ անկարելի է, այդ անհնար է!

Աշխէնը լաւ ցիշում էր, որ Սևումեանը այդ խօսքերը ասել է. և այժմ, երբ տեսաւ, որ նա աշկարա ուրանում է իւր խօսքը, մի վայրկենի մէջ կորաւ նորա այն մեծ յարգանքը, որ տածում էր առաջ զեպի այդ երիտասարդը:

—Իացց այդ կարեոր չէ, թէ ես ինչ եմ ասել նորա մասին: Զակուր այս է, որ Ազատեանը այժմ իմ թշնամին է!

Քոյր ու եղբայր նորից իրար երեսի նայիցին, բայց այս անգամ երկուսի դէմքին էլ հեղնական ժաղիտ խաղաց, կարծես այդ ժաղիտով իրար ուզեցին հասկացնել, թէ իրանց լսածները անհիմն չէին: Օրիորդի լնդհատած հարց ու փորձը շարունակեց եղբայրը, ասելով.

—Իացց ինչ պատահեց, ինչ կարող էր պատահել ձեր մէջ? Ահա ինչն է անբացարելի!

—Ինչու միամիտ էք ձեւանում, պարոններդ զոչեց Սևումեանը՝ համբերութիւնը հատած: Միթէ դուք չդիտէք բոլորը? Միթէ ոչինչ չէք լսել մեր լնդհարման մասին?

Դարեգինը լուռ էր և նայում էր դէմադէմ պատից կախած նկարին, ոսկեփայլ շրջանակի մէջ, որ մեր յայտնի նկարիչներից մէկի գործն էր և ներկայացնում էր ձորի մէջ հոսող մի գետ լուսնկաց գիշերով: Աշխէնը նոյնպէս անձախ՝ աչքերը յառած էր բամուցի կարմիր լուսամփոփի վրայ դրած հսկայական թիթեսին:

Այդ լուռութիւնը ճնշող ազդեցութիւն գործեց Սևումեանի

վրաց, և սա, կարծես սարսափած այդ լոռւթիւնից, վեր թռաւ տեղիցը, երկու ձեռքով բռնեց Զառիկեանի ուսերից և ցնցելով նորան՝ գոչեց.

—Յանուն մեր բարեկամութեան, Գարեգին, ասա՛, ինչ են խօսում իմ մասին? ու նայեց շեշտակի նորա աչքերի մէջ:

—Քո մասին? հարցրեց Զառիկեանը անվտահ եղանակով, կարծես զժւարանում էր խսկոյն պատասխանել տւած հարցին:

—Այո՞, իմ, իմ՝ մասին!

Գարեգինը պատմեց իւր լսածներից: Սկսումեանը չգոհացաւ, բայց, երբ աւելին իմանալ չյաջողւեց, նա բեմական հերոսի դիրքը լնդունեց, բռնեց բազկաթոռի թիկունքից, և պապղուն բիբերը դարձնելով մերթ դէպի Գարեգինը, մերթ դէպի նորա քոյլը, զլուխը թափահարելով սկսեց.

—Նշտմ պարզ է, որ դուք ինձ խնայում էք: Կամ գուցէ մոռացել էք, թէ ինչ են խօսում իմ մասին հասարակութեան մէջ? Թողէք ուրեմն, ես ձեզ ցիշեցնեմ: Անշուշա ձեզ ասաց կը լինեն, թէ Սկսումեանը անհաշտ բնաւորութիւն է, Սկսումեանը երկդիմի է և փոփոխամիտ, Սկսումեանը բամբասում է Ազատեանին, Սկսումեանը պախարակում է «Ճառագայլթի» խմբագրաւթիւնը, դաւէ սարքում ընկերների դէմ, Սկսումեանը, մի խօսքով, մի հրէշ է, որ կայ!... Բայց թոյլ տւէք ինձ, օրիորդ, որ ես ծանօթացնեմ ձեզ, ներեցէք խօսքիս համար, այն կեղտոս աղբիւրի հետ, որից բղխում են այդ բոլոր գարշելի և անխիղճ զրապարտութիւնները: Այդ աղբիւրի անունն է —Ազատեան!

Վերջին բառը արտասանեց Սկսումեանը խորին զգւանքով, ամուր սեղմած ատամների երկու շարքերը: Օր. Աշխենը առաջին անգամն էր սեսնում Սկսումեանին այնչափ կատաղի դրութեան մէջ:

Սկսումեանի սիրով լցւած էր և անդիմադրելի պահանջ էր զգում սիրով թափելու, ուստի և շարունակեց, սուանց հերթ տալու ուրիշին:

—Այդ աղբիւրախտը!... Ախ, դուք չգիտէք, չգիտէք! Երանի թէ բոլորը իմանայիք!... Դուք կը հաւասաք? Ես էի, որ նորան առաջին անգամ ներկայացրի «Ճառագայլթի» խմբագրութեան, ծանօթացրի խմբագրի հետ, գովեցի նորան. ես էի պատճառը, որ նա-

մի բան դարձաւ այդ լրագրի մէջ! Սկզբում նորա յօդւածները համարեա ես էի թելադրում, ես էի ուղղում... Բայց ով կը մոտածէր այն ժամանակ, որ ես էի այնքան աշխատում էի մի անարժան գրչակի համար? Մի մարդու համար, որ ոտից մինչև գլուխը մարմնացած աղերախառնութիւն է?... Այդ գեռ մի կողմէ Դուք տեսէք, թէ ինչ շողոքորթ միջոցներով, ինչ քսու ստորաքարշութեամբ նա կարողացաւ այն մարդու աչքը մտնել, որին ասպաւինած էր! Ինչ եագոյական զալարումներով, երկդիմի ակնարկներով և զարմանալի խորամանկութեամբ ճիգ էր թափում իշխցնել մեզ, իւր ընկերներին, այն բարձրութիւնից, որի վրայ կանգնած էինք մենք! Եւ ինչի համար? Որպէս զի, ուրիշներին ստորացնելով, ինքը բարձրանաց!...

Սկզբանը երկար խօսում էր այս ոգով, բայց այնուամենայնիւ նա չյայտնեց իւր անբաւականութեան իսկական պատճառը:

Բանը այն է, որ երբ երկք ամիս առաջ «Ճառագայթի» խմբագիրը պատրաստում էր մեկնել արտասահման, առողջութիւնը կազմուրելու համար, Սկզբանը և Ազատեանը, այդ լրագրի գըլխաւոր աշխատակիցները, ակնդէտ սկսածում էին, թէ իրանցից որին պիտի յանձնէ թերթի ժամանակաւոր խմբագրութիւնը Սկզբանը, իբրև աւելի հսկար և պատւասէր, վերջին օրերը աւելի ստիւ սկսեց յաճախել խմբագրատուն, որպէս զի տնօրէնը կարծիք չտանէր նորա մասին, թէ նա աչք է ածում տեղապահութեան վրայ: Ազատեանը, ընդհակառակը, գրեթէ հաւաստի լինելով, որ ինքն է նշանակելու թերթի վարիչ, իւր հովանաւորողի քթի տակից չըր հեռանում երբէք և ամեն տեսակ ծառայութիւններ էր մատուցանում նորան: Զմոռանամ այստեղ լիշել նաև այն, որ տեղապահութեան հետ կապւած էր ամսական ոռնիկ, և այդ հանգամնքը աւելի գրաւիչ էր դարձնում առժամանակեայ պաշտօնը:

Երբ Սկզբանը իմացաւ վերջապէս, որ գերապատու թիւնը արւած է իւր ախոյեանին, զայրոյթից և վիրաւորւած ինքնասիրութիւնից քթածակերը զողալով լայնացան, ծանրացաւ շնչառութիւնը, կարծես շնչափողի մէջ մի օձ կծկեց, և նա կարողացաւ արտասանել մի բառ միայն.

—Լաւ!... և ուրիշ ոչինչ:

Այդ օրից Սկզբանի սիրաը լցւած էր վրէժինդրութեան

թոյնովի հւր զժզոհութիւնը ցոյց տալու համար, նա չգնաց վակ-
զալ խմբագրին ճանապարհ դնելու, մինչդեռ Ազատեանը, մի քանի
այլ աշխատակիցներ և համակրող երիտասարդների ու օրիորդների
մի խումբ ճանապարհորդից առաջ էին հասել կայարան։ Երբ խըմ-
բազիրը հարցրեց, թէ ուր է Սեռմեանը? Միթէ այստեղ չէ՞ն
Ազատեանը խորամանկ ժայխով պատասխանեց.

— Սեռմեանը հյւանդ է։

Դորանից յետոց Սեռմեանը մի երկու շաբաթ չերևաց «Ճա-
ռազայթի» խմբագրատանը։ Ազատեանի և նորա փոխադարձ դըժ-
զոհութիւնը գեռ խուլ էր, գեռ չէր արտայացուած։ Բայց շուտով
մի դիպւած տեղի ունեցաւ, որ երեան հանեց երկուսի սրտումը
թագնւած առելութիւնը և անբաւականութիւնը։ Մի օր Սեռ-
մեանը տարաւ «Ճառազայթի» խմբագրատուն մի յօդւած և առա-
ջարկեց տպել Ազատեանը, յօդւածը կարդալուց յետոց, պատասխա-
նեց, թէ զարմանում է, որ Սեռմեանը այդպիսի մի բան առաջար-
կում է տպել «Ճառազայթի» մէջ, քանի որ այնուեղ համակրական
բառեր կան «Ճառամանակ» լրագրի հասցէին։ Սեռմեանը նկատեց,
թէ այդպիսի նեղ կուսակցութիւն նա չէ հասկանում։ Ազատեանը
ասաց, թէ նա առաջին անգամն է լսում Սեռմեանից այնպիսի
խօսքեր։ Վերջինս հարցրեց նորից. ուղղում է տպել թէ ո՞չ։ Ազա-
տեանը պատասխանեց. «Երբէք!» Սեռմեանը շտապով ծոցի գըր-
պանը դրեց յօդւածը և լուռ դուրս եկաւ Ազատեանի մօտից։ Այն
գնալն է, որ գնաց։

Այժմ շարունակենք մեր ընդհատած պատմութիւնը։

Սեռմեանի աչքերը վառւում էին ազնիւ զայրոյթով. գոնէ
այդպիսի տպաւորութիւն էին գործում նայողի վրաց նորա շըր-
թունքով կարծես խօսում էր ինքը արդարութիւնը, անիրաւաբար
վիրաւորւած արդարութիւնը։ Նորա բարկութեան սլաքները ուղ-
ղւած էին այժմ «Ճառազայթի» խմբագրի դէմ։

— Ես շատ վեր եմ դասում, — ասում էր նա, — այդ պաշտելի
մարդու տաղանդը, հոգեկան կարողութիւնը և կամքը։ Բայց ես
միանգամայն դատապարտում եմ նորան, որ նա չգիտէ մարդ ճա-
ռաչել, գնահատել մարդուն, և այդ պատճառով շատ անգամ հա-
լածում է արժանաւորին, իսկ անարժան արարածներին առաջ

քաշում, երես տալիս և դարձնում յանդուգն ու անտանելի!...

Սեռումեանի այս կրակոտ ճառը լնդհառուց նոյն այն բոպէին, երբ Ոսկերչեանը երեաց դահլիճի դրան շեմքին:

—Այժմ ինձ կարող էք շնորհաւորել, —խօսեց նա, ուրախութեամբ սեղմելով Աշխէնի և Գարեգինի ձեռքը: Ա, դուք էլ այս տեղ էք, պարոն Սեռումեան? Բարե!

—Այս լաւ արիր, որ եկար, —ասաց Զառիկեանը, —ես հէնց այսօր կամ վաղը ուզում էի քեզ տեսնել մի հարկաւոր գործի համար:

—Բայց թող վերջացնի իւր խօսքը, Գարեգին, —նկատեց քոյրը և, բռնելով Արտաշէսի ձեռքից, նստեցրեց իւր մօտ բազմոցի վրայ, և հարցրեց . «ինչի համար քեզ շնորհաւորենք?»

—Ես արդէն խմբի մէջ եմ, —պատասխանեց Ոսկերչեանը, —և շուտով կը լինի իմ գերիւտը:

—Յաջողութիւն եմ յանկանում, բարեմաղթեց Գարեգինը:

—Չիչագեանին էլ լնդունեցիք խմբի մէջ? հարցրեց Սեռումեանը:

—Այն, այն:

—Ծիծաղելի է, այնպէս չէ? լսեցի, ուզում է Համլէտի դերը կատարել: Ինձ Զամբազնանը ասաց:

—Յետոյ, խումբը լաւ է կազմւած? հարցրեց Գարեգինը:

—Յոյս ունիմ, —պատասխանեց Ոսկերչեանը, —որ այս տարւայ մեր խմբից հասարակութիւնը շատ գոհ պիտի մնաց:

—Բայց ափսոս որ Ադամեանը չի լինիլ! բացականչեց օր. Աշխէնը:

—Նա այժմ ճանապարհորդում է: Թիֆլիսը նորան չէ բաւականացնում: Եւ այդ, իհարկէ, հասկանալի է: Նա մի հանճարեղ արտիստ է: Եւ որքան մեծ է մէկի տաղանդը, այնքան առաւել մեծ է նորա փառքի ծարաւը: Կէտ ձուկը ովկիանոսի մէջ միայն իրան լաւ կը զգայ: Թող գնայ և աշխարհի չորս կողմը տարածէ իւր փառքն ու համբաւը: Իսկ մենք, փոքրիկ ձկնիկներս, կը լողանք փոքրիկ աւագանում:

—Բայց դու չես վախենում, Արտաշէս, —ասաց Գարեգինը կատակով, —որ փոքրիկ աւագանը քեզ համար էլ շատ նեղ լինի?

—Այդ կ'երեայ ասլագայում, —պատասխանեց Ոսկերչեանը կատակի ձեռվ:

— Իսկ ինչ էք ընտրել ձեր դեբիւտի համար? Հարցրեց Սևումեանը:

— Երկուսից մէկը, — պատասխանեց արտիստը, Սիւլիւան կամ Կոռուադո:

Սևումեանի դէմքին հեգնական ժպիտ երեաց, և Ոսկերչեանը այդ նկատելով, հարցրեց.

— Ինչու էք ծիծաղում?

— Ես չեմ ծիծաղում, — պատասխանեց Սևումեանը: Բայց կարծում եմ, հրաշք պէտք է համարել, եթէ զերասանը, գրեթէ առաջին անգամ բեմ դուրս գալով, կարողանայ յաջողութեամբ կատարել մի այնպիսի պատասխանատու գեր, որպիսին է Կոռուադօն կամ նոյն իսկ Սիւլիւանը:

— Իրաւունք ունիք, — ասաց Ոսկերչեանը հեգնութեամբ և իսկոցն, երեսը դարձնելով դէպի Աշխէնը, խօսեց բոլորովին կողմնակի առարկացի մասին:

Այն անտարբերութիւնը, նոյն իսկ արհամարանքը, որ ցոյց տւեց սկսնակը մի անձի վերաբերմամբ, որ տարիներով գործում էր մամուլի մէջ և իրան կարող էր զգում գրչի մի շարժումով Ոսկերչեանի նման տասին տասլալելու, զիպաւ Սևումեանի սրտի ամենանուրբ տեղից, և սա լոեց ու Գարեգինի հետ սկսեց նոյնպէս օտար առարկացի մասին խօսել:

Սևումեանը շուտով գնաց և, հրաժեշտ տալիս, Ոսկերչեանին հազիւ արժանացրեց իւր մնաս բարեկին:

Գարեգինը մի դաս առաջարկեց Արտաշէսին: Ոսկերչեանի ուրախութեանը չափ չկար, երբ նա իմացաւ, թէ այն աշակերտը, որի հետ պիտի պարապէր, օր. Վարթումեանի եղբայրն է:

— Ինչ վերաբերում է պայմաններին, աւելացրեց Զառիկեանը, այդ մասին դու պէտք է գնաս նոցա մօաւ և անձամբ խօսես մօր հետ:

— Իսկ երբ գնամ?

— Երբ կամենաս: Օրինակ, հէնց վաղը: Որքան շուտ, այնքան լաւ, որովհետեւ ու սումը արդէն սկսւած է:

Ոսկերչեանը վեր կացաւ, որ գնաց: Նորան խնդրեցին մնալ ընթրիքին նա պատասխանեց, որ չէ կարող: Մինչև մեկնելու բոլէն, նա մի քանի անգամ պատրաստեց Գարեգինից փող խնդրել,

քայց ամօթից լեզուն կապ էր ընկնում. այնպէս որ նա վճռել էր լրել այդ մասին: Սակայն, երբ նա, ցտեսութիւնից յետոյ մի երկու քայլ արաւ դէպի դուռը, կարծես մի անտեսանելի ձեռք ետ մղեց նորան, և նա, երեսը գարձնելով դէպի Գարեգինը, կամացուկ յայտնեց իւր ցանկացածը: Ուզածը ստացաւ և հեռացաւ անմիջապէս Ճանապարհին գնեց մի գրւանքայ կալբաս և հաց և շտապեց դէպի „Ռուսիա“ հիւրանոցը, որտեղ նորա բնակարանն էր:

III

Հետևեալ օրը Ոսկերչեանը գնաց Վարթումեանների մօտ: Երբ, դրան առջև կանգնած, մատով հուպ էր տալիս ելեկորական զանգի կոճակը, նորա մօտից փողոցով անցան երկու ֆաշտոն. մէկի մէջ նստած էր «Ճառագայթի» խմբագիրը իւր կնոշ և աղջկայ հետ, իսկ միւս կառքի մէջ Ազատեանը, որը մի կերպ տեղաւորւած էր ճանապարհորդների իրեղինների մէջ տեղը:

Ուրեմն, արդէն վերագարձել է «Ճառագայթի» խմբագիրը?» մտածեց Ոսկերչեանը, որի առջև իսկոյն դուռը բացւեց, և նա ներս մտաւ:

Նորան ընդունեց դահլիճում օր. Մարիամը սիրալիր կերպով և քաղցր ժպիտով: Ոսկերչեանը զարմացաւ, մի տեսակ փոփոխութիւն նշմարելով նորա դէմքի վրայ: Նա գունատել էր—այդ մէկ: Յետոյ կրկին մի ինչ որ փոփոխութիւն աչքերի արտացայտութեան մէջ. հայեցքը կարծես առաջւանից աւելի հանգարտ էր և աւելի մտախոհ: Բայց և այնպէս այժմ Ոսկերչեանին նա աւելի գրաւիչ երևաց իւր սև շրջազգեստի և վարդագոյն բլուզի մէջ, որի տակից օրոշւում էր հասուն կուրծքը՝ իւր զոյդ բլրակներով: Հազիւ մի երկու բերան կարողացան խօսել իրար հետ, եկաւ տիկին Վարթումեանը: Ոսկերչեանը յայտնեց իւր այցելութեան նպատակը և աւելացրեց, որ իրան ուղարկել է Գարեգին Զառիկեանը: Նա համաձայնեց իրան առաջարկած բոլոր պայմաններին: Երբ վարձատրութեան մասին էր խօսքը, օրիորդը շտապ հեռացաւ միւս սենեակը, որովհետեւ իրան անշարժար զգաց ներկայ լինել:

Երբ Ոսկերչեանը դուրս եկաւ Վարթումեանների մօտից, նա իրան ամենաբաղդաւորն էր զգում աշխարհիս երեսին: Ամեն օր նա

ալիտի յաճախէ Վարթումեանների բնակարանը, ամեն օր մօտիկից պիտի տեսնէ օրիորդ Մարիամի երեսը և դուցէ ամեն օր առիթուննեաց նորա հետ խօսելու!»

Դեռ վարձատրութիւնը մի կողմէ նա ուրեմն ապահով է! եթէ նոյն իսկ ներկայացումներից նա մի կոուեկ չստանաց, դարձեալ իրան կորող է ապահով համարել! Նա ուրեմն ստիպւած չի լինիլ, իւր ապրուստի համար, ամեն անդամ հազար ու մէկ տատանումներից յետոց, ամօթով իւր ձեռքը մեկնել ուրիշներին պարտքեր անելու համար!...

Եւ Ոսկերչեանի աչքի առջեւ բացւեց մի գեղեցիկ պերսպեկտիւ, որ աւելի զրաւիչ էր, քան անցած օրերի բոլոր պատրանքը, քանի որ նախակին ցնորդները, իրականութիւնից հետու, օդի մէջ էին ճախրում, մինչդեռ ներկայ յոյսերը իրական հոգի վրայ էին կանգնած:

Ոսկերչեանը տեսնում էր, որ կամաց կամաց մօտենում է իւր նպատակին: Քայց ահա մի հանգամանք էլ աւելի մեծ փայլ տւեց նորա երջանկութեանը: «Մանկական թերթիւ մէջ լոյս տեսաւ մի բանաստեղծութիւն Արտաշէս Ոսկերչեանի ստորադրութեամբ, և վերնագիրն էր «Հերան ծաղիկը»: Նիւթը վերցրել էր հեղինակը մի ժողովրդական աւանդութիւնից, որ պատմել էր նորան հայրը ծննդավայրում եղած ժամանակի: Ահաւասիկ բովանդակութիւնը: Պարսկաստանում կաչ մի բարձր սար, և այն սարի գագաթին կաց մի ծաղիկ, որ հրաշալի զօրութիւն ունի. ով կարողանաց բարձրանալ լերան ծայրը և այն ծաղիկը կտրել, նա ձեռք կը բերի անմահութիւն: Քայց այնտեղ հասնելը շատ դժւար է, ծաղիկը պահպանում են լերան չար ողիները, և գնացողը էլ ետ չէ գալիս: Մի անգամ մի քաջասիրտ պատանի, որի աչքերը աւելի գեղեցիկ էին, քան թէ չէյրանի աչքերը, և որի գեղեցկութեան առաջ ամեն մի շարութիւն վայր կը դնէր իւր զէնքը, խիզախում է ելնել սարի կատարը, ուխտելով—կամ վերադառնալ անմահութեան ծաղիկը ձեռին, կամ այլ ևս երբէք չվերադառնալ: Նա յաղթում է բոլոր արգելքներին. նա տեսնում է այն ծաղիկը, որի թերթիկները բոցի գոյն ունէին. Նա ուրախութիւնից այնպէս շփոթւում է, որ այն բոսկէին, երբ ձեռքը ծաղիկի ցողունին է հասցնում: որ կտրի, ոսք սլկում է, և պատանին գլխիվայր ընկնում է անդունդը:

Այս ոտանաւորը ընդունելութիւն գտաւ հասարակութեան մէջ։ Դարեգինը ացնքան հաւանեց, որ համբուրեց իւր ըժանկագին բարեկամին ճակատը։ Օր. Աշխէնը ամուր սեղմեց նորա ձեռքը և ասաց. «Նորհաւորում եմ։ Կեցցէ Արտաշէսը!» Յայտնի վիպասաններից մէկը ծանօթացաւ նորա հետ փողոցում և յայտնեց իւր հրճւանքը նորա բանասանզծութեան առիթով։ Մի ուրիշը ճամանակակից հեղինակներից, որը, առաջինի նման, 60-ական թւականների երիտասարդներից էր, խորհուրդ աւեց Ռոկերչեանին թողնել դերասանութիւնը և նիրւել գրականութեան։ Գրականագէտների մի որոշ շրջանում նորա մասին կարծիք կազմեց, թէ Ռոկերչեանը ապագայ է խոստանում։

Բայց ինքը Արտաշէսը ինչպէս ուրախացաւ! Անդրանիկ գործը միշտ քաղցր է լինում, և Ռոկերչեանը խելազարի էր նման։ Նա կարդում էր, և չէր կշասնում։ Թէև նա անգիր զիտէր իւր բանաստեղծութիւնը, բայց եթէ ասեմ, տասը անգամ իրար վրաց կարդաց, դեռ էլի քիչ համարեցէք։

Ռոկերչեանի համար սկսւել էր կեանքի բախտաւոր շրջանը։ Նա ոտը դրել էր արդէն բեմական և գրականական ասպարիզի վրայ, և առաջի քայլը աւելի քան յաջող էր։ Ահա ինչու նորա սիրալ լցւած է անասելի բերկութեամբ, իսկ դէմքին հոգսերի հետք, թախծութեան նշոյլ անգամ չկայ։ Նա գոհ է իւր վիճակից և առայժմ աւելի ոչինչ չէ ցանկանում։ Երբեմն նորան ացցելում է ովեռութիւն, որից աւելի վեհ և երանելի դրութիւն չկայ մարդու համար, և նա զգում էր իւր մէջ ոգու բարձրանալը։ Այդպիսի բոսկներին նա իրան կարծես առիւծ է զգում, մի կորովի և հպարտ առիւծ, որին տապալելու համար շատ զօրիղ թշնամիներ են հարկաւոր։ Եւ մեծութեան փափազը նորոգւած ոյժով լցնում է նորա հոգին։

Բազմաթիւ. ընկերների մէջ նա հեշտ որոշում էր իւր արտաքին կերպարանքով։ Քայլերը համարձակ են, լացն ճակատը միշտ բաց, դլուխը բարձր պահած։ Երբ խօսում կամ ծիծաղում է փողոցում, ծանօթներին հանդիսելիս, անցորդների ուշադրութիւնն է գրաւում նորա սրտի խորքից բղխող առողջ, մաքուր, դուրեկան բարիտոնը։

Հստ երեւութին, նա թողել է այն ամենը, ինչ որ կրում էր պատանեկան հասակի զրոշմ։ Նա այժմ կատարեալ երիտասարդ է, լուրջ և խոհուն։ Նա էլ չէ աշխատում իւր փողպատը կապել անպատճառ Բայրնի նման և ոչ ջանք է զնում իւր գլխի մագերը Բայրնի գանգուրներին նմանեցնել, թէև այդ գանգուրները, առանց արւեստական միջոցների էլ, անշափ գեղեցիկ են։ Ընկերական անխօրհուրդ քէֆեր այլ ևս չեն գրաւում։ Փողոցներում թափառելու կարիք չէր զգում նա և ո՛ էլ ժամանակ ունէր դորահամար։

Երեկոները նա զնում էր Վարթումեանների մօտ և սովորցնում օր. Մարիամի եղբօր Սերեօժայի գասերը։ Պարապում էր նորա հետ սիրով և եռանդով և աւելի ժամանակ էր գործ զնում, քան պարտաւոր էր գործ զնել լսու պայմանի։ Ժամացոցցին նացում։ Էր միայն այն ժամանակ, երբ փողոց էր գուրս գալիս։

Իբրև վերին աստիճանի պարտաճանաչ ռեպետիտոր, նա չէր կարող Վարթումեանների համակրութիւնը չգրաւել, և Գարեգինին մի քանի անգամ առիթ են ունեցել իրանց շնորհակալութիւնը յայտնելու թէ օր. Մարիամը, թէ նորա մացը՝ Զառիկեանի յանձնարած ուսուցչի համար։

Հակառակ սպասածին, Ոսկերչեանին միշտ չէր յաջողւում տեսնըւել իւր աշակերտի քրոջ հետ և երբ չէր տեսնում նորան, տխուր էր գուրս գալիս Վարթումեանների տանից։ Բայց փոխարէնը, երբ դասից առաջ կամ դասից յետոյ նա հանդիպում էր օրիորդին, որը ոչ մի անգամ առանց սիրալիր ժպիտի չէր ողջունում նորան, և մի քանի բոլէ խօսում էր հետը, այն ժամանակ Ոսկերչեանի ուրախութեանը ուրախութիւն չէր հասնիլ։

Ոսկերչեանը հաւատացած էր, որ օր. Մարիամը իրան յարգում է և համակրում։ Համակրութեան ապացոցներ նա շարունակ որոնում էր և միշտ գտնում։ Թէ անցեալի լիշողութիւնների մէջ թէ ներկայում։ Նորա ժպիտը, նայւածքը, ձեռք սեղմելու ձեւը, այն հանգամանքը, որ նա հետաքրքրում է Ոսկերչեանի անձով, հարցնում է զերիւտի մասին, գովում է նորան Զառիկեանների միջոցով — այս բոլորը համար մի գաղտնիք չէր, որ այդ երիտասարդը անտարբեր

չէ գեպի նա, և այդ նորան շոյում՝ էր։ Նա պարզ տեսնում էր, որ՝ իրան հանդիպելիս՝ Ոսկերչեանը ուրախանում էր. ձեռքը սեղմում էր ամուր. աչքերի մէջ նայում էր երկար. ցոյց էր տալիս իւր պատրաստականութիւնը՝ ծառայութիւն մատուցանելու նորան. ընթերցանութեան գրքեր էր ընծայում եղբօրը. ընկած ձեռնոցը իսկոյն վերցնում էր յատակից... Բայց օրիորդը իւր կանացի անհեռատեսութեամբ կամ, գուցէ, շնորհիւ իւր կանացի թուրութեան, փոխանակ սիրահարի անմիտ ցնորքը խորտակելու, միշտ բորբքուած գրութեան մէջ էր պահում նորա երեւակայութիւնը և թոյլ էր տալիս. նորան ապրել անիրագործելի յոյսերով։

Ոսկերչեանը, ինչպէս ասացի, սակաւ էր դուրս զալիս զբունելու։ Սռաւոտները նա իրան ենթարկում էր կամաւոր բանտարկութեան և փակւած սենեկի մէջ՝ պատրաստում էր իւր գերիւտի համար. անդիր էր անում գերը, արտասանում էր կամ ցածր, նւազած ձայնով, կամ գոռում էր այնպէս, որ հարեանները նորան խելագարի տեղ էին ընդունում. հայելու մէջ դիտում էր իւր զիմագծերի փոփոխութիւնը, հայեացքը, մօտեցնում էր շրթունքին փոքրիկ սրւակը, իրը թէ թոյն է ընդունում, յետոյ ընկնում էր յատակի վրայ և ցնցումներով մեռնում։

Ճաշից յետոյ, ժամը 4.ից մինչև 7-ը նա թատրոնումն էր բեմի մերայ և մասնակցում էր փորձերին։

Մուրադեանը, Զամբագեանը և տահասարակ Ոսկերչեանի բոլոր ընկերակիցները ուշիուշով հետևում էին նորա խաղին, ցանկանալով գոնէ մի ազօտ գաղափար կազմել նորա ընդունակութեան մասին, որը խօսակցութեան առարկայ էր դարձել դերասանների և թատրոնասէրների շրջանում։

Բայց իզնուր. Ոսկերչեանը արտասանում էր գերը հազիւ լսելի ձայնով և արագ. ոչ մի շարժում չէր գործում ձեռքերով. մի խօսքով, նա չէր կատարում գերը, այլ ասում էր միայն սոսուգելու համար, լու գիտէ թէ ոչ։ Դորանից եղրակացնում էին դերասանները, որ այդ սկսնակը այնքան մեծամիտն է, որ իրան մեծ արտիստ է երեւակայում և նկատողութիւնների կարիք չէ զգում։ Եւ այդ կատաղեցնում էր ամենքին. մանաւանդ Զամբագեանին համբերութիւնից հանում էր նորա. այդ անձնապատան

թնութիւնը։ Այդ պատճառով փորձի ժամանակ մի անգամ մի անա-
խորժ դէպք տեղի ունեցաւ։

Եւ ահա այդ ինչպէս եղաւ։

Ոսկերչեանը, ըստ իւր սովորութեան, արտասանում էր դերը
ցածր ձայնով։ Յանկարծ բեմի հեռաւոր և մթին անկիւնից դերա-
սաններից մէկը զոչեց։

— Բարձր! Ոչինչ չէ լսւում!

Ոսկերչեանը լուս բարկութեամբ ետ նայեց դէպի այն կողմը
և բոսկական ընդհատումից չետոյ՝ շարունակեց արտասանել, բացց
այժմ աւելի ևս ցածր ձայնով։

Սկսնակի այդ յանդուգն և արհամարական հայեացքը, որ նա
ձգեց իւր արւեստակից ընկերոջ վրայ, շատերի զայրոյթը զրգուեց,
և Զամբագեանը, իբրև ընդհանուր տրամադրութեան թարգման,
վրդովւած նկատեց։

— Ոսկերչեան! Պանտոմիմա հօչէք կատարում? Մի քիչ բարձր
ասացէք կլի!

Ոսկերչեանը զայրոյթով պատասխանեց։

— Պարոններ, ես չեմ կարող, ձեր հաճոյքի համար, կոկորդս
պատուել! Առանց այն էլ այնքան գոռգոռացել եմ սենեկումս, որ
ձայնս կարուել է։ Եթէ հիմա էլ սկսեմ աղաղակել, էլ ինչ ձայն
կը մնայ ներկայացման համար? Վերջապէս մենք ունինք ռեժիսոր։
թող նա նկատողութիւններ անէ, եթէ հարկաւոր է գտնում։

Զամբագեանը ձեռքերը խոթեց շալւարի զրպանների մէջ և
շտապ հեռացաւ դէպի բեմի մի կողմը, ուր դերասանները խմբւած՝
կամաց խօսում էին։ Այն խմբից շուտով մէկը բաժանւեց և գալով
բեմի առաջնակողմը, ուր սեղանի առաջ նստած էր ռեժիսորը, ասաց
վերջինի ականջին։

— Ինչու նկատողութիւններ չես անում?

Ռեժիսորը պատասխանեց, ուսերը ցնցելով.

— Ինչ կարող եմ անել, պարոններ? Մարդը կատարելագործել է
իւր արւեստը և նկատողութիւնների կարօտ չէ։

Մուրագեանն էլ գնաց միացաւ խմբի հետ։ ձեռքերի շարժում-
ներից և վեր քաշած յոնքերից երեսում էր, որ նա աշխատում էր
պաշտպանւել ընկերների յանդիմանութիւններից։

Ոսկերչեանը մնաց մենակի նորա մօտ կանգնած էր միայն Զիշագեանը և սովորում էր իւր գերը, ձեռքին բոնած մի քառածալ թերթիկի երբ Ոսկերչեանը վերջացրեց իւր մենախօսութիւնը, մօտեցաւ Զիշագեանին և զլիսի նշանով ցոյց տալով խմբի վրայ, ասաց.

— Ճեսնում էք, ինչպէս են վարւում ինձ հետ?

Այսպէս ահա, մի կողմից Ոսկերչեանի մեծամասութիւնը, որի զարգանալուն քիչ չէին նպաստում ծանօթների և ընկերների շնորհաւորութիւնները, ձեռքի սեղմումները և շոյական գովասանքները, միւս կողմից՝ այն բնական նախանձը, որ ժագել էր արւեստակիցների մէջ, մի՛ գուցէ այդ նորելուկը յաջողութիւն դանի, համակրութիւն ձեռք բերի հասարակութեան մէջ և մոռացնել տաց շատերի անունները, որոնք այժմ, առանց ականաւոր ոյժերի, էլի մի բանի տեղ են անցնում, — այդ երկու հանգամանքները, ասում եմ, միացան և սկզբից արդէն մի թշնամական պատնէշ ձգեցին Ոսկերչեանի և խմբի միջև։

Ընկերակիցների շրջանը խէթ աչքով էր նայում նոր և վտանգաւոր ախոչեանի վրայ։ Ոսկերչեանը այդ պարզ տեսնում էր և լուրջ մտածում իւր զրութեան մասին։ Բայց նա գեռ ամեն բան չգիտէր։ Նորան յայտնի չէր, որ այդ շրջանից գուրս ևս կան մարդիկ, որոնք անտարբեր չեն դէպի նորա փառքը, և հեռու կանգնած՝ սպասում են... Այդ էր պատճառը, որ նա միամստաբար բարի ցանկութիւնների տեղ էր ընդունում այն անձանց խօսքերը, որոնք կանգնեցնում էին նորան փողոցում, սեղմում ձեռքը և ասում։

— Նորհաւորում եմ, պարտն Ոսկերչեան! Ուրեմն մեր բեմի վրայ մի նոր աստղ է ծագում? Նատ ուրախ եմ; շատ ուրախ եմ! Յաջողութիւն!...

Այդպիսիներից սրտանց շնորհակալութիւն էր առնում Ոսկերչեանը և հեռանում։

Դերիւտի օրը մօտենում էր։ Ոսկերչեանը այլ ևս շատ չէր զբաղւում իւր զեզով, որովհետեւ արդէն ուսումնասիրել էր, ինչպէս ինքն էր ասում։

Նորա միակ հոգսը այժմ տոմսակներ վաճառելն էր։

Օր. Աշխէնը սիրով յանձն էր առել տոմսակներ տարածել իւր շրջանում։ Օր. Վարթումեանը նոյնպէս Բացի այդ, նորան օգնում

էին տոմսակներ ցրւելու գործում և նախկին դասընկերներից միքանիսը։ Սակաւ էր պատահում, որ առաջարկւած տոմսակը եւ ուղարկւէր։ Մերժեցին մի երկու ընտանիք հարուստ մեծատուններից, որոնք Աղամեանից յետոյ այլ ևս լայեղ չէին անում հայոց թատրոն յաճախել։

Ներկայացման հասոցթը խոստանում էր շատ յաջող լինել, և այդ սաստիկ ու բախացնում էր Ոսկերչեանին։

Ներկայացումից մի քանի օր առաջ, թատրոնի պատերին կըպցրած էին թերթիկներ, որոնք ազդարարում էին հետևեալը։ Հոկտեմբերի 6-ին, երեքշաբթի օրը, Արտաշէս Ոսկերչեանը առաջին անգամ պիտի դուրս գայ բեմ Կոռոադոի դերում։ Մանրամասնութիւնները աֆիշաներում։

Այդպիսի թերթիկներ ցրւած էին նաև մագազիններում, որոնց ահագին ապակիների առջև՝ կանգնում էին անցորդները և կարգում երիտասարդ սկսնակի այդ անհամեստ ռեկլամը։

Եռտով լուրերի բաժնում լրագիրներն էլ յայտարարեցին նորադերիւտի մասին։

Վերջապէս դուրս եկան և աֆիշաները, որոնց վրայ ահագին տառերով խրոխտանում էր Արտաշէս Ոսկերչեանի անունը։

(Ծարունակելի)

ԱԶԱՏ ԼՈՒՍԻՆ, ՔԵՇ ԳՈՂԳՈԹԱՅ ԿԸՆՏՐԵԼԻ

ԱՐԱՄ ԶԱՐԾԳՃԵԱՆԻ

Ինձ կեանք տւող զօրութիւնը թէ ուղեր
Արդար զոհով խեղճի արցունքը սրբել,
Կ'աղերսէի որ ինձ սրբած զոհ ընտրէր
Եւ իրաւունք տար երկնքում ինձ խաչւել:

Անոռուն, անտէր խեղճերին ձայն կը տալի—
Ել վերջ ցաւի, վերջ զրկանքի, արտասւաց...
Ազատ լուսին, քեզ Գողգոթայ կ'ընտրէի,
Մեղսուս երկրից քո կոյս գիրկը սաւառնած:

Կրծքիդ խաչւած, իմ արիւնը թող քամէէր
Կաթիլ-կաթիլ, ներկէր դէմքը քո պայծառ,
Եւ շողքերդ իմ արիւնը թող ցողէր
Երկրի վերայ, երկրի անգութ, անարդար:

Դիակների վերայ պալատ կառուցող
Հալածողը թող ինձ նայէր ու սոսկար.
Իսկ անարդար կեանքում ցաւով շունչ քաշող
Հալածեալը ինձ նոյելով մի՛շտ լուսար:

Եւ այն ժամփն, երբ իմ մարած հայեացքը
Խաչի ծայրից տեսնէր խեղճին աղատւած՝
Թող արիւնոտ իմ անշունչ ցուրտ դիակը
Գահավիժւէր կրկին երկիր սրբացած:

Ա Մ Պ Ի Կ Ը

Դու տեսնում ես պարզ երկնքում
Այն ամպիկը խեղճ, մռլոր,
Ոտին արձակ հողմն հալածում
Քշում կողմեր հեռաւոր —
Այն սէրն է հէզ, իմ նազելի,
Իմ սուրբ սէրը թառամած,
Ար թափառում վտարանդի,
Քո կոյս սրտից մերժւած:
Ես չը գիտեմ գուցէ երկար
Իմ մահից յետ գու կ'ասրես,
Եւ իմ սէրն ու անունն իսպառ
Սրտից, մտքից կը հանես —
Բայց երբ մեռնես՝ այդ ամպիկը՝
Զոյգ արցունքի վերածւած՝
Պիտի ցողէ շիրմիդ քարը,
Այնտեղ չորնայ քարն ազրած...

1897թ. փետր. 13, Լալացիզ:

Կ Ի Ն

Ա. ԶԵԼՈՂՎԻԻ — Թարգմ. Միք. Տէր-Մարտիրոսեանցի

I

Ես ստացայ մի այսպիսի նամակ.

• Աղորմած տէր, Պաւէլ Անդրէիչ! Ձեզանից ոչ հեռու, այսինքն
Պետրովի գիւղում, կատարւում են ցաւալի իրողութիւններ, որոնց
մասին պարտք եմ համարում հաղորդել ձեզ: Այդ զիւզի բոլոր
քնակիչները ծախեցին իրենց խրճիթներն ու իրենց ամբողջ կացքը
և գաղթեցին Տօմսկի հաճանգը. բայց դեռ չհասած, կրկին վերա-
դարձան: Ակներե է, որ նրանք այստեղ ոչինչ չունին, այժմ ամեն
ինչ նրանց համար օտար է. նրանք երեք, չորս ընտանիքով մի
խրճիթում են ապրում, այնպէս որ իւրաքանչիւր խրճիթում երկու
սեռից 15 մարդուց պակաս չեն, չհաշւած փոքր երեխաններին, և
վերջապէս ոչինչ չունին ուտելու. սովոր սովից կամ ծաղկից յառա-
ջացած տիֆի ընդհանուր վարակումն. բոլորը հիւանդ են տառացի
մոքով: Ֆելչերուհին ասում է՝ մտնում ես խրճիթ, և Բ'նչ ես
տեսնում. բոլորը հիւանդ են, բոլորը զառանցում են. որը ծիծա-
դում է, որը պատն է բարձրանում. խրճիթներում մռայլութիւն
է տիրում, ոչ ջուր կայ, ոչ ջուր տուղ, իսկ իբրև կերակուր զործ
է զրւում միմիացն ցրտատար կարտոֆէլը: Ֆելչերուհին և Սորոն
(մեր գաւառական բժիշկը) Բ'նչ կարող են անել, երբ թշւառնե-
րին, դեղից առաջ հաց է հարկաւոր, որ չունին: Գաւառական
վարչութիւնը հրաժարւում է օգնել, պատճառաբանելով, որ նրանց
անունները դուրս են ձգւած այս գաւառի ցուցակից և հաշւում

են Տոմսկի նահանգում, աւելացնելով դրան և այն, որ փող չկայ՝ Հաղորդելով այս մասին ձեզ, և ճանաչելով ձեր մարդասիրութիւնը, խնդրում եմ չզլանաք շուտափոյթ օգնութիւն հասցնել: Ձեր բարեացակամն:

Պարզ է, որ գրել է ֆելդշերուհին կամ այն գաղանի ազգանուն կրող բժիշկը: Գաւառական բժիշկներն ու ֆելդշերուհիներն երկար տարիների ընթացքում օրէցօր համոզում են, որ իրանք ոչինչ չեն կարող անել, բայց և այնպէս ոռմիկ են ստանում այն մարդկանցից, որոնք մննդւում են միմիայն ցրտահար կարտոֆելով, և միւնոյն ժամանակ չգիտեմ ինչու իրենց իրաւունք են համարում դատել—մարդասէր եմ ես, թէ ոչ:

Վրդոված անսարագիր նամակից և այն բանից, որ ամեն առաւօտ ինչ որ գիւղացիներ էին մանում խոհանոց և ծնկաչոդ աղաչում և այն բանից, որ գիշերը շտեմարանից գողացել էին քսան պարկ տարեկան նախօրօք (հատիկներ), քանդելով պատը և ընդհանրապէս իմ վատ տրամադրութիւնից, որ աւելի սաստկանում էր խօսակցութիւնների, լրագրերի և վատ եղանակի պատճառով—վրդովւած այդ բոլորից, ես գործում էի թոյլ և դանդաղ կերպով: Ես գրում էի «Երկաթուղիների պատմութիւնը». հարկաւոր էր կարդալ շատ ուսւածազդի գրքեր, բրոշիւրներ, լրագրական յօղւածներ, հարկաւոր էր հաշւել համրիչի վրա, թերթել լոգարիֆմները, մտածել և գրել, յետոյ նորից կարդալ, հաշւել և մտածել. բայց հէնց որ գիրք էի առնում ձեռքս կամ սկսում մտածել, իսկոյն մոքերս շփոթում էին, աչքերս կկոցւում և հոգոց քաշելով վեր էի կենում: սեղանից և սկսում անցուդարձ անել իմ գիւղական գատարկ տանընդարձակ սենեակներում: Երբ անցուդարձն ինձ ձանձրացնում էր, ես կանգնում էի իմ կարինետում լուսամուտի մօտ և դիտելով իմ ընդարձակ բակի, լճի, մերկ և նորատունկ թխտենիների անտառի: և արդէն նոր նստած ու հալելու պատրաստ ձիւնով ծածկւած դաշտի միջով, տեսնում էի հորիզոնում բլուրի վրա մոխրագոյն խրճիթների մի կոյտ, որից դէպի սպիտակ գաշտը ձգւում էր անկանոն ընթացքով մի ճանապարհ: Այդ Պեստրովօն էր, հէնց այն գիւղը, որի մասին գրում էր ինձ անցայտ հեղինակը: Նմէ չլինէին ագռաւները, որոնք, աղմկելով օդը՝ անցնում էին լճի և դաշտի:

վրայով, անձրեւ կամ ձիւնախառն եղանակ գուշակելով, և եթէ ատաղձագործի սրահում թխկթխկոցը չլինէր, անպատճառ այդ աշխարհը, որի մասին այժմ այդքան բղաւում են, կ'երեւար Մեռեալ ծովի պէս մի բան, —այնքան ամեն ինչ խաղաղ, անշարժ, անկենդան ու տխուր էր այնտեղ:

Անհանգստութիւնը խանգարում էր ինձ գործել և կենդրոնանալ մի բանի վոա. ես չեի իմանում, թէ այդ ինչ բան է և մոտածում էի թէ դա հիասթափումն է: Եւ իրաւ., ես թողի ձանապարհների հաղորդակցութեան նախարարութեան մէջ ունեցած պաշտօնս և եկայ այստեղ գիւղը, որպէս զի հանգիստ ապրեմ և պարապեմ հասարակական խնդիրների վերաբերեալ գրականութիւնով: Այդ իմ հին, նւիրական ցանկութիւնն էր: Խսկ այժմ պէտք է հրաժարւէի նա և հանգստութիւնից, թողնէի բոլորը և զբաղւէի միմիայն գիւղացիներով: Եւ այդ անխուսափելի էր, որովհետեւ բացի ինձանից, ինչպէս համոգւած էի ես, այդ գաւառում դրականապէս ոչ ոք չկար սովեալներին օգնող: Ինձ շրջապատել էին չկրթւած, չզարգացած, ասանասիրտ մարդիկ, մեծ մասամբ անազնիւ, կամ եթէ ազնիւ, այն էլ ասպուշ և ոչ այնպէս լուրջ, ինչպէս օրինակ իմ կինը: Ցոյս զնել այդպիսի մարդկանց վրա անկարելի էր, թողնել գիւղացիներին բազդի կաքին, նոյնպէս անկարելի էր. նշանակում է ինձ մնում էր խոնարհւել անհրաժեշտութեան առաջ և անձամբ զբաղւել գիւղացիներին կարգի բերելով:

Ես գործը սկսեցի սովեալների օգտին հինգ հազար ռուբլի նւիրելով: Այդ էլ չթեթեացրեց իմ անհանգստութիւնը, այլ միայն սաստկացրեց: Երբ ես կանգնում էի լուսամուտի մօտ կամ անցուզարձ անում սենեակներում, ինձ տանջում էր մի հարց, որ առաջ ինձանում չկար, այն է, թէ ինչպէս գործ դնեմ այդ փողերը: Պատւիրել հաց առնել, շրջել խրճիթներն և բաժանել — այդ մի մարդու ոչիից վեր էր, չխօսելով արդէն այն մասին, որ շտապելիս կարող ես ունեորին կամ վաշխառուին կրկնակի շատ տալ, քան թէ քաղցածին: Կառավարութեանը չեի հաւատում: Բոլոր գաւառապետներն ու հարկերի վերատեսուչները երիտասարդ մարդիկ էին, որոնց վերաբերմամբ ես հաւատ չունէի, ինչպէս և ներկաց նիւթապաշտ և անիդէալ ամբողջ երիտասարդութեան վերաբերմամբ: Գա-

ւառական զարշութիւնը, գիւղական կառավարութիւններն և լնդհանրապէս բոլոր գաւառական գիւանատներն ինձ չէին ներշընչում նրանց օգնութեանը զիմելու ամենաթոյլ ցանկութիւն անգամ ևս գիտէի, որ այդ հիմնարկութիւնները, որոնք խիստ կերպով կապած ծծում էին ժողովրդական և կայսերական համեղ պատառը, ամեն օր իրենց բերանը պատրաստի ունէին ծծելու նաև մի երրորդ պատառ:

Ես միտք յղացայ հրաւիրել ինձ մօտ կալւածատեր հարեւաններիս և առաջարկել նրանց կազմակերպել իմ տանը յանձնախմբի կամ կետրոնի նման մի բան, որ ամեն կողմից կուտակւէին նւիրաբերութիւնները և որաեղից նպաստներ ու կարգադրութիւններ անւէին ամբողջ գաւառում: Այդպիսի մի կազմակերպութիւն, որ թոյլ էր տալիս մասնաւոր խորհրդակցութիւններ և ազատ հակողութիւն, կատարելապէս համապատասխանում էր իմ հայեացքներին. բայց ես երևակացեցի նախաճաշիկները, ճաշերը, ընթրիքները և այն աղաղակը, տօնախմբութիւնը, խօսակցութիւնը և վատ ձայնը, որոնք անխուսափելի կերպով ներս պիտի բերէր իմ տունը այդ գաւառական գոյնզգոյն խումբը, և շոտապեցի հրաժարւել իմ մըտքերից:

Ինչ վերաբերում է իմ տանեցիններին, նրանցից օգնութիւն կամ յոյս ես ամենից քիչ կարող էի սպասել: Իմ առաջին, երբեմն մեծ և աղմկալի հայրական ընտանիքից մնում էր միայն մի դաշեակ մ-լլե Marie, կամ, ինչպէս այժմ էին նրան անւանում, Մարիա Գերասիմովնա, բոլորովին անպէտք մի անձնաւորութիւն: Այդ փոքրիկ, հաւէսով, 70 տարեկան պառաւը, որ հագած ունէր բաց-մոխրագոյն հագուստ և սպիտակ ժապաւէններով գլխարկ, նման մի յախճապակեաց տիկնիկի, միշտ նստած էր լինում հիւրասենեակում և գիրք էր կարգում: Երբ ես անցնում էի նրա մօտով, նա, որ գիտէր մտածմունքներիս պատճառը, ամեն անգամ ասում էր.

—Ի՞նչ էք ուզում, Պաշա: Ես առաջ էլ ասում էի, որ սա այսպէս կը լինի: Դուք մեր ծառայից կարող եք դատել:

—Ախ, յիմարութիւններ մի ասէք.—բզաւում էի ես միւս սեւակից:

Իմ երկրորդ ընտանիքը—այն է կինս—նատալիա Գաւրի-

լովնան, բնակւում էր ներքին յարկում, որի բոլոր սենեակները բռնել էր: Ճաշում էր, քնում; հիւրեր ընդունում ներքեւում, բուլորովին չհետաքրքրւելով այն բանով, թէ ինչպէս եմ ճաշում ես, ինչպէս քնում և ում ընդունում: Մեր յարաբերութիւնները հասարակ էին և ոչ լարւած, բայց սառը, անբովանգակ և տխուր, նման վաղուց միմեանցից հեռացած մարդկանց յարաբերութիւններին, մարդկանց, որոնց կեանքը միացած յարկերում մօտիկութեան էլ նման չէր: Այն կրքոտ, անհանգիստ, երբեմն քաղցր, երբեմն օղիի չափ դառը տէրը, որպիսին աւած զարթեցնում էր իմ մէջ նատալիա Գաւրիլովնան, այլևս չկար: Զկային այլեւս նախկին բորբոքումները, աղմկալի խօսակցութիւնները, յանդիմանութիւնները, գանգատոններն ու այն ընդհարումները, որոնք սովորաբար վերջանում էին կնոջս կողմից արտասահման կամ ծնողների մօտ հեռանալով, իսկ իմ կողմից քիչ-քիչ, բայց յաճախ խոցած լինեմ կնոջս ինքնասիրութիւնը: (Իմ գոռող, ինքնասէր կինը և նրա ծնողները ապրում են իմ հաշում, և կինս իր բոլոր ցանկութեամբ չի կարող հրաժարւել իմ փողերից—այդ ինձ բաւականութիւն էր պատճառ ունեմ և վշտիս միակ միսիթարութիւնն էր:) Այժմ երբ մենք պատահմամբ հանդիսական ենք միմեանց ներքեւում—նախասենեակում կամ բակում—ես ողջունում եմ, նա պատասխանում է ժապուալով, մենք եղանակի մասին ենք խօսում, որ ժամանակ է կրկնափեղկերը դնելը. կամ եթէ մէկը զանգակի հնչիւնների հետ անցնում է ամբարտակի վրացից, այն ժամանակ ես նրա դէմքի վրա կարգում եմ: Ես հաւատարիմ ե՛ռ ձեզ և չեմ արատաւորի ձեր մաքուր անունը, որը դուք այդպէս սիրում էք, դուք խելօք էք և ինձ մի անհանգատացրէք—մենք կւիտ ենք:

Ես ինձ հաւատացնում էի, որ սէրը վաղուց արդէն սոսել է իմ մէջ և աշխատութիւնը չափազանց խորը զբաղեցրել է ինձ, որով և ես չէի կարող լուրջ մտածել իմ դէսլի կինս ունեցած յարաբերութիւններիս մասին: Բայց այդ ցիմարութիւն է: Երբ կինս բարձր ձայնով խօսակցում էր ցածում, ես ուշադրութեամբ լսում էի նրա ձայնը, թէև անկարելի էր որոշել և ոչ մի բառ: Երբ նա նւագում էր ներքեւում դաշնամուրի վրա, ես կանգ-

նում էի և ականջ դնում: Երբ նրա համար կառք կամ ձի էին բերում նստելու համար, ես մօտենում էի լուսամուտին և սպասում, թէ տանից երբ զուրս կը գայ. յետոյ դիտում էի, թէ ինչպէս է նա նստում կառքը կամ ձին և ինչպէս չւում բագից դուրս: Ես զգում էի, որ իմ հոգու մէջ ինչ որ անհաճոյ բան է կատարւում, և վախենում էի, որ իմ հայեացքի ու դէմքի արտայալտութիւնը կարող է ինձ մատնել: Ես աչքերով հետեւում էի կնոջս և յետոյ սպասում նրա վերադարձին, որպէս զի լուսամուտից կրկին տեսնել նրա դէմքը, ուսերը, մուշտակը, գլխարկը. Ես տիրում, տրտմում, անվերջ ցաւում էի ինչ որ բանի վրա և ցանկանում էի նրա բացակազութեան միջոցին անցուղարձ անել նրա սենեակներում, և ձգուում էի աւելի շատ բնական ճանապարհով վճռւած տեսնել այն խնդիրը, որին ես և կինս չկարողացանք վճռել մեր բնաւորութիւնների անհամերաշխութեան պատճառով. այսինքն որ շուտով այդ գեղեցիկ 27 տարեկան կինը պառաւելը և շուտով իմ գլուխը սպիտակէր ու ճաղատանար:

Մի անգամ նախաճաշի ժամանակ իմ գործակատար Վլադիմիր Պրոխորիչը յայտնեց ինձ, որ Պեստրովի գիւղացիք սկսել են արդէն քանդել յարդեաց ծածկերը անսառններին կերակրելու համար: Մարիա Գերասիմովնան նայում էր ինձ երկիւղով ու տարակուսանքով:

—Ես ինչ կարող եմ անել,—ասացի պառաւեին: —Մի հատ մարդ դաշտում զինւոր չէ, իսկ ես զեռ ևս չեմ կրել այնպիսի միայնութիւն, ինչպէս այժմ: Ես ամեն ինչ կը տացի, եթէ գտնւէր ամբողջ գաւառում գէթ մի մարդ, որին ես կարողանացի հաւատալ:

—Դուք էլ իւան իւանիչին հրաւիրեցէք, —ասաց Մարիա Գերասիմովնան:

— Իսկապէս! — յիշեցի ես և ուրախացայ: — Այդ իդէա է! C'est raison, երգեցի ես, մտնելով իմ կարինետը, որպէս զի նամակ գրէի իւան իւանիչին: — C'est raison, c'est raison...

II

Ծանօթների ամբողջ մասացից, որոնք երբեմն 25—35 տարի առաջ, պարում էին այս տանը, խմում, ուտում, զուգւած տուն գալիս, սիրահարում, ամուսնանում ու ձանձրացնում էին իրենց

քնուիր շների և ձիերի մասին արած խօսակցութիւններով, կենդանի էրմացել մեն մինակ իւան իւանիչ Բրագինը։ Մի ժամանակ նա շատ գործունեայ, շատ խօսող, կչկչացող ու սիրահարուղ մարդ էր և փառաւորում էր իր ծայրահեղ ուղղութիւնով ու դէմքի մի առանձին արտայայտութեամբ, որը կախարդում էր ոչ միայն կանանց, այլ և տղամարդկանց. իսկ այժմ նա բոլորովին ծերացել, զերացել և անցրել էր իր դարը առանց ուղղութեան ու արտայացութեան։ Նա եկաւ միւս օրը երեկոյեան նամակս ստանալուց յետոյ, երբ ինքնաեռը հէնց նոր ներս էին բերել սեղանատուն և փոքրիկ Մարիա Գերասիմովնան լիմոն էր կտրատում։

— Նատ ուրախ եմ ձեզ տեսնելով, իմ բարեկամ, — ասացի ես ուրախ հանդիպելով նրան։ — Իսկ դուք շարունակ լցւում էք!

— Խօմ չեմ լցւում, ուռուցք է, — պատասխանեց նա։ — Մեղուներն են կծել։ Պարզ մարդու նման, որ իր հասողութեան վրա ծիծաղում է, նա երկու ձեռքով գրկեց մէջքս ու խխունջների պէս ճակատին սանրած մազերով փափուկ մեծ զլուխը դրեց իմ կրծքի վրա և ծիծաղեց բարակ՝ ծերունուն յատուկ ծիծաղով։

— Իսկ դուք շարունակ երիտասարդանում էք — ասաց նա ծիծաղելով։ Զգիտեմ ինչ գոյնով էք ներկում դուք ձեր գլուխն ու միքուքը։ Մի ինձ էլ տայլիք։ — Նա փնչալով ու շնչասպառ գրկեց ինձ և երեսս համբուրեց։ Մի ինձ էլ տայլիք... Կրինեց նա։ — Բայց դուք քաւասուն տարեկան կաք, բարեկամ։

— Օհօ, արդէն քառասուն վեցումն եմ, — ծիծաղեցի ես։

Իւան իւանիչից փչում էր ճարպի և խոհանոցի ծխի հոտ, իսկ այդ նրան սազում էր։ Նրա մէծ, ուռած, անդիւրաժեք մարմինը սեղմւած էր երկայն սերտուկի մէջ, որ նման էր կառապանի կապայի, կոճակների փոխարէն չափրաստներով և երկար մէջքով, և օտարոտի էլ կը լինէր, եթէ նրանից բուրեր, օրինակ, օղըկոլոնի հոտ։ Կրկնակի, վաղուց չածելած կզակով, մազարիկօն էր յիշեցնում, դուրս պրծած աչքերով, շնչարգելքներով և ամբողջապէս անձոռնի, անմաքրասէր մարմնով, ձայնով ծիծաղելով և խօսակցութիւնով դժւար էր ճանաչել այն վայելչակազմ, համակրելի ճոռոմաբանին, գէպի որը խանդով էին վերաբերում գաւառացի ամուսիններն իրենց կանանց նկատմամբ։

—Դուք ինձ շատ հարկաւոր էք, բարեկամ, ասացի ես, երբ մենք արդէն նստած էինք սեղանատանը և թէյ էինք խմումն Եանկանում՝ եմ որ և է նալաստող ընկերութիւն կազմակերպել սովետական սիրելի համար և չգիտեմ ինչուս սկսել... Դուք գուցէ այնքան սիրալիր կը լինէք, որ որևէ խորհուրդ կը տաք:

—Այո, այո, այո—ասաց Իւան Իւանիչը հոգոց հանելով: Այդպէս, այդպէս, այդպէս...

Ես ձեզ չէի անհանգստացնի, բայց, ճշմարիտ, բացի ձեզանից, սիրելիս, այսուեղ դրականապէս ոչ ոք չկայ, որին կարելի լինէր դիմել:

Դուք գիտեք, թէ ինչ մարդիկ են:

—Այդպէս, այդպէս, այդպէս... Այո:

Ես մոտածեցի. լուրջ ու գործոն խորհուրդ է պէտք, որին կարող է մասնակցել ամեն ոք անկախ՝ տեղից և անձնական յարաբերութիւններից, ուստի և չօգտուեմ առթից և չհրաւիրեմ արդեօք Նատալիա Գաւրիլովնային: Այն միտքը, որ նա կարող է գալ և նստել ինձ մօտ և ես նրան մօտեկից կը տեսնեմ, ապշեցրեց և վախեցրեց ինձ. իսկ յանկարծ նոս չգայ!

—Tres faciunt collegium!—ասացի ես ուրախութեամբ— Ի՞նչ կայ, եթէ մենք հրաւիրեինք և նատալիա Գաւրիլովնային: Ի՞նչ էք կարծում, Ֆենիա, —գիտեցի ես ազախնիս,—խնդրեցէք Նատալիա Գաւրիլովնային, որ եթէ կարելի է այս ըուպէին մեզ մօտ գայ: Ասացէք՝ շատ կարեոր գործ է: Քիչ յետոյ Նատալիա Գաւրիլովնան եկաւ: Ես վերկացայ ընդունելու և ասացի.

—Ներեցէք, Natalie, որ մենք ձեզ անհանգստացնում ենք: Մենք այսուեղ խօսում ենք մի շատ կարեոր գործի մասին և բազդաւորութիւն ունեցանք մոտածել օգտելու ձեր բարի խորհրդից, որ չէք մերժիլ: Խնդրեմ, նստեցէք:

Իւան Իւանիչը համբուրեց Նատալիա Գաւրիլովնայի ձեռքը, իսկ վերջինս նրա գլուխը. յետոյ, երբ բոլորս նստեցինք սեղանի շուրջը, Իւան Իւանիչը արտասւալից աչքերով երջանիկ մարդու պէս նրան նայելով պարզեց դէպի նա և կրկին ձեռքը համբուրեց: Նա ու էր հազնւած և խնամքով սանրւած, նրանից թարմ անուշահուսութիւն էր բուրում: Ակներեն էր, որ նա պատրաստւել էր

Հիւր գնալու կամ հիւր ընդունելու։ Մտնելով սեղանատուն, նա սպարզութեամբ և ընկերաբար մեկնեց ինձ իւր ձեռքը ու բարեելիս ժպտաց ինձ նոյնպիսի սիրալիր կերպով, ինչպէս և նւան նւանիչին։ այդ ինձ զուր եկաւ։ Բայց նա խօսելիս շարժում էր մատերը, խիստ ձգում աթոռի յենարանի վրա և խօսում արագ երգելով և ճոճտալով իտալուհու նման։ և նրա խօսակցութիւնների ու շարժումների այդ զգայնութիւնը գրգռում էր ինձ և յիշեցնում նրա հայրենիքը—Օդեսան, ուր մարդկանց ու կանանց հասարակութիւնը մի ժամանակ յոգնեցնում էր ինձ իր վատ ընթացքով։

—Ես ուզում եմ սովեալների համար մի բան անել, —սկսեցի ես։ Քիչ լոելուց յետոց շարունակեցի։ —փողն ի հարկէ մեծ բան է, բայց սահմանափակւել միայն փողի զոհողութեամբ և զրանով հանգըստանալ, նշանակում է փողով ազատւել զլիաւոր պարտաւորութիւններից։ Օգնութիւնը պէտք է լինի փողով, բայց զլիաւորապէս ճշմարիտ ու լուրջ կազմակերպութեամբ։ Եկէք մտածենք, պարոններ, և մի բան անենք։

Նատալիա Գաւրիլովնան հարցական կերպով նայեց ինձ և ուսերը շարժեց, կարծես թէ ասելիս լինէր։ Ճսկ ես ինչ գիտեմ։

—Այո, այո, սովէ է... փնթփնթաց նւան նւանիչը։ —հսկապէս... Այո...։

—Լուրջ դրութիւն է, —ասացի ես, —և օգնութիւնը հարկաւոր է աւելի շուաւ։ Ենթադրում եմ, որ մեր ձեռնարկելիք գործի համար լնդունած կանոնների առաջին պայմանը պէտք է լինի շտապ կատարում։ Զինորական արագութիւն ու շտապ գործունէութիւն։

—Այո, արագութիւն—ասաց նւան նւանիչը քնկու ու թմրած կերպով, որպէս թէ ննջելիս լինէր։ —Միայն թէ ոչինչ չես կարող անել։ Հողը չէ արդիւնաբերել, այնպէս որ այժմ ոչ մի շտապ գործունէութեամբ չես օդնիլ։ Տարերք... Աստուծոյ և ճակատագրի դէմ գնալ չես կարող...

—Այո, բայց մարդուն գլուխ է տւած, որպէս զի կուէ տարերքի դէմ։

—Նման Այո... Այդ այդպէս է, այդպէս... Այո։

նւան նւանիչը փռշտաց թաշկինակի մէջ, սթափւեց, և որպէս թէ հէնց նոր զարթած, դիտեց ինձ և կնոջը։

—Իմ հողն էլ ոչինչ չարդիւնաբերեց!—ծիծաղեց նա բարակ ձայնով և խորամանկօրէն աչքով արեց, որպէս թէ այդ շատ ծիծաղելի էր:

—Փող չկաց, հաց չկաց, իսկ բակը լի է բանուորներով, ինչպէս կոմն Շերեմետիեւի մօտ Ուզում եմ կնձներին տալով դուրս անել, բայց մի փոքր ծանր է:

Նատալիա Գաւրիլովնան ծիծաղեց և սկսեց հարց ու փորձ անել Խւան Խւանիչին նրա ընտանեկան գործերի մասին: Կնոջս ներկայութիւնն ինձ բաւականութիւն էր տալիս, որսկիսին ես վաղոց չէի զգացել, և ես վախում էի նայել նրան, որպէս զի հիացմունքով լի հայեացքս որ և է կերպով չմատնէր իմ մէջ թագնւած զգացմունքը: Մեր յարաբերութիւններն այնպէս էին, որ այդ զգացմունքը անսպասելի և ծիծաղելի կարող էր երևալ: Կինս խօսում էր Խւան Խւանիչի հետ և ծիծաղում, ամենեին չքաշւելով այն բանից, որ ինքն ինձ մօտ է և ես չեմ ծիծաղում, նրա այտը, ժըպտուն աշքը (իմ վերաբերմամբ նա կիսադէմ էր նստած) ու գլխի շարժումներն ինձ ասում էին.—«Ճեր և իմ հանգստութեան համար վճռել եմ բոլոր հանգամանքներում չնկատել ձեզ»:

—Ուրեմն, պարոններ, ինչ պէտք է անենք մենք,—հարցրի ես նրանց լոելուց ցետոյ:—Իմ կարծիքով մենք ամենից առաջ կարելիին չափ շուտ ստորագրութիւն պէտք է բաց անենք: Մենք, Natalie¹⁾, կը գրենք մայրաքաղաքի և Օդեսսայի մեր ծանօթներին և կը հրաւիրենք նւիրաբերութիւններ անել: Երբ որ մեզ մօտ քիչ փող կը ժողովւի, մենք կը զբաղւենք հաց ու անասունների համար ուտելիք գնելով, իսկ դուք, Խւան Խւանիչ, կը լինեք բարի և նըպաստների բաշխումներով կը զբաղւէք: Ամեն բանում հաւատալով ձեր տաքտին ու կարգադրութիւններին, մենք մեր կողմից թոյլ կը տանք մեզ ցանկանալ միայն, որ դուք, նախ քան նսպասուներ բաժանելը, տեղում մանրամասնաբար ծանօթանայիք գործի բոլոր հանգամանքներին և, որ շատ կտրեոր է, դիտողութիւն ունենայիք, որ հաց տրւէր միմիայն խսկապէս կարիք զգացողներին և ոչ թէ արբեցողներին, ծոյլերին ու վաշխառուներին:

¹⁾ Նատալի, Նատալիա:

—Այո, այո, այո...—Փնթինթաց իւան իւանիչը:—Այդպէս, այդպէս, այդպէս... Զգւացրին ինձ այդ սովեալները, էհ, նրանք էլ! Երանի թէ փախչէի զրանցից աշխարհիս միւս ծայրը:

«ԷՇ, այդ փթած մոքերով փլաւ չես եփիլ, —մոտածեցի ես և դրգռւեցի:

—Բոլորն էլ տրտնջում են, բոլորն էլ տրտնջում են, —շարունակեց իւան իւանիչը, ծծելով լիմոնի կճեպը:—Սովեալները տըրտընջում են կուշտերի դէմ, —իսկ հաց ունեցողները սովեալների դէմ: Այո... Հիմայ չի կարելի տրտնջալ, պէտք է զիջող լինել... Սովից մարդս ցիմարանում է, փչանում է, վայրենանում: Սովը հանաք մասիսարութիւն չէ: Պատահնում է որսից սոված ես տուն գալիս, հարազառ մօրդ ես վիրաւորում... Այո... Սովեալն և կոպիտ է խօսում և գողանում է և գուցէ ուրիշ վատ բաներ էլ է անում... Պէտք է հասկանալ:

Իւան իւանիչը թէյը գլուխը քաշեց, սկսեց հազար և ամբողջովին ցնցւել խուլու ու խեղտող ծիծաղով:

—Պօ... Պոլտաւայի մօտ էր,—ասաց նա, շարժելով երկու ձեռքերը ծիծաղից ու հազից, որոնք խանգարում էին նրան խօսել:—Պոլտաւայի մօտ էր! Ճորտերի ազատութիւնից երեք տարի յետոյ, երբ այստեղ երկու դաւառում սով էր, գալիս է ինձ մօտ հանգուցեալ Ֆեռդոր Ֆեռդորիչն և իր մօտ է հրաւիրում: Գնանք հա գնանք—պնդում էր գանակը կոկորդիս դրածի պէս: Ինչո՞ւ չէ, գնանք, ասում եմ: Ու գնացինք: Գիշեր էր, ձիւն էր գալիս: Գիշերով հասնում ենք արդէն նրա տունը, երբ յանկարծ անտառից թըրլխի! Կրկին թըրլխի! Ախ, գրողը քեզ տանի... Ես դուրս ժռաց սահնակից, նայում եմ—մթութեան մէջ մի մարդ է վազում դէպի ինձ մինչև ծնկները ձիւնի մէջ խրւելով. ես նրա ուսը բըռնեցի, այ այսպէս, և հրացանը ձեռքից խլցի. յետոյ անսպասելի կերպով մէկ ուրիշը դուրս պրծաւ. ես նրա ծոծրակին այնպէս խփեցի, որ նա ճւաց և երեսնիվեր վայր ընկաւ քիթը ձիւնի մէջ թաղելով—այն ժամանակ առողջ էի, ձեռքս ծանր. երկու սին յաղթեցի. նայեմ, Ֆեռդորը արդէն երրորդի վրան է հեծել: Մենք բանեցինք երեք քաջերին էլ, և թեքները յետեներից կապեցինք, որպէս զի մեզ և իրենց որ և է վլաս չհասցնէին, ու

յիմարներին խոհանոց բերինք։ Բարկութիւնս գալիս է։ Նայելն անգամ ամաչում եմ, ծանօթ գիւղացիներ են և լաւ մարդիկ, ցաւում եմ։ Վախից բոլորովին յիմարացան։ Մէկը լաց է լինում և թողութիւն խնդրում, միւսը գազանաբար նայելով հաջոյում է, երրորդը ծնկաշոդ Աստծուն է աղօթում։ Ես ֆեոդորին ասում եմ. մի՛ վիրաւորւիր, բաց թող այդ ստահակները! Նա կերակրեց նրանց, մի մի փութ ալիւր տւեց և բաց թողաւ. գնացե՞ք ջնանա նամի մօտ! Ահա թէ ինչպէս... Երկնացին թագաւորութիւն, հանգիստ ոսկերաց։ Հասկանում էր նա և չէր վիրաւորուում. բայց եթէ ուրիշը լինէր, կը վիրաւորւէր և որքան մարդիկ կը կորցնէր։ Այո... Մի կլուկովսկու գինետան պատճառով տասնմէկ մարդ ապաշխարողների դասը ուղարկւեցան։ Այո... Այժմ էլ տես, նոյնը կը լինի։ Հինգշաբթի ինձ մօտ գիշերեց քննիչ Անիսինը, և նա պատմում էր մի ինչ որ կալածատիրոջ մասին... Այո... Գիշերով այդ կալածատիրոջ շտեմարանի պատը քանդել են և գողացել քսան տոպրակ ցորեն։ Սռաւօտեան երր կալածատէրն իմանում է այդ բանը, իսկոյն հեռագիր նահանգապետին, յետոյ մէկ ուրիշը դատախազին, երրորդը ոստիկանին, չորրորդը քննչին... Յացտնի է, որ խառնակիչներից վախում են... Վարչութիւնն սժափում է և իրար անցնում։ Երկու գիւղ խուզարկում են։

— Ներողութիւն, Խւան Խւանիչ, — ասացի ես։ — Քսան տոպրակ տարեկանն ինձանից են գողացել և ես եմ հեռագրել նահանգապետին։ Պետերբուրգ էլ հեռագրեցի. Խայց դա բոլորովին խառնակութիւն գցելու սիրուց չէ եղել, ինչպէս դուք ասացիք, և նրա համար չէ, որ ես վիրաւորւեցի։ Ես ամենից առաջ իւրաքանչիւր գործի վրայ նայում եմ սկզբունքի տեսակէտից։ Կուշան է գողանում, թէ քաղցածը, օրէնքի համար այդ միւնցն է։

— Այո, այո... — գնթփինթաց Խւան Խւանիչը, շփոթւելով։ — Իհարկէ... Այդպէս, այո... Նատալիա Գաւրիլովնան կարմրեց։

— Կան մարդիկ... — ասաց նա և կանգ առաւ. Նա ոչ գործ դրեց, որպէս զի անտարբեր երեայ և լոի, բայց չդիմացաւ և նայեց աչքերիս այն արհամարհանքով, որը այնպէս ինձ ծանօթ էր։ — Կան մարդիկ, որոնց համար սովու ու մարդկացին վիշտը ծառա-

յում են միայն նրա համար, որպէս զի կարելի լինի գործ դնել
նրանց վրա իր վատ, փչացած բնաւորութիւնը:

Ես շփոթւեցի և ուսերս թոթւեցի:

—Ես ուզում եմ ընդհանրապէս ասել, —շարունակեց նա, —որ
կան՝ մարդիկ բոլորովին անտարեր, զուրկ կարեկցութեան ամեն մի
զգացմունքից, որոնք մարդկացին վշտի մօտովն անգամ չեն ուզում
անցնել, բայց խառնում են միայն այն երկիւղից, թէ մի գուցէ
առանց իրեն էլ գործ կատարեն: Նրանց համար փառասիրութիւ-
նից սուրբ ոչինչ չկայ:

—Կան մարդիկ, —ասացի ես քնքշութեամբ, բայց տհաճ ու
սեթևեթ ժպիտով, որպիսին ինձանում ես իսկ չէի սիրում: —Կան
մարդիկ, որոնք հրեշտակացին բնաւորութիւն ունին, բայց իրենց
վեհ մոռքերն այնպիսի ձևով են արտայացտում, որ գժւար է լինում
որոշել հրեշտակը փողոցացին մանրավաճառուհուց:

Երկու րոպէ լուսութիւն տիրեց: Կնոջս երեսից մշտական կարմ-
րութիւնը թռաւ, նորան փոխարինեցին ծիրանի բծեր: Նա ինձ
այնպէս էր նայում, որպէս թէ մեծ ոյժ է գործ դնում լւելու
համար: Նրա յանկարծակի զայրոյթը ու անտեղի պերճախօսու-
թիւնը, իմ սովեալներին օգնելու ցանկութեան առթիւ, ինձ վիրա-
ւորեցին. երբ ես նրան վեր էի հրաւիրում, բոլորովին ուրիշ վե-
րաբերմունք էի սպասում նրա կողմից գէպի ինձ և գէպի իմ դի-
տաւորութիւնները: Զեմ կարող որոշակի ասել, թէ ինչ էի սպա-
սում, բայց իմ այդ սպասողական դրութիւնը համելի կերպով ինձ
յուզում էր: Այժմ ես տեսնում էի, որ շարունակել խօսել սովեալ-
ների մասին ծանր ու անխորհուրդ բան կը լինէր:

—Այո... անտեղի ինթիւնմաց եւան եւանիչը: —Բուրով վա-
ճառականը շորս հարիւր հազար ունի, գուցէ և աւել: Նրան ասում
եմ. —«Սնւանակից, տուր սովեալներին հարիւր կամ երկու հարիւր
հազար: Միւնոյն է, պէսք է մեռնես, հետդ միւս աշխարհը տա-
նելու չեսա: Վիրաւորեց: Խսկ մեռնել խօմ հարկաւոր է: Մահը
հանաք չէ:

Կրկին լուսութիւն տիրեց:

—Այսպէս ուրեմն, նշանակում է մի բան է մնում: հաշտել
միայնութեան հետ, —հոգոց հանեցի ես: —Մէկով բան չի գառննալ:

Ե՛ն, ինչ և իցէ: Փորձեմ կռւել և մենակ: Գուցէ սովի գէմ մզա՞ կոփւն աւելի յաջող լի՞նի, քան թէ անտարբերութեան: —Ինձ ներքեում սպասում են, —ասաց Նատալիա Գաւրիլյանան. նա վերկացաւ սեղանից և դիմեց իւան Խւանիչին. —Ուրեմն դուք կը գամք մի րոպէով ինձ մօտ ներքեւ: Ես ձեզ հրաժեշտ չեմ տալիս:

Գնացր Նրա դէմքից, ձայնից ու քայլւածքից ես նկատեցի, որ նրա մէջ յառաջացել էր ատելութեան կատաղի վրդովմունք դէպէ ինձ: Այդ արդէն նախկին հանգիստ, սառն ու տաքտով Նատալիա Գաւրիլյան չէր, որին ես ոչ յաճախ վարժւել էի տեսնել վերջին երկու տարիներում, այլ հաստատամիտ, ատեցող և վատ դաստիարակւած կինը, որին ես գիտէի երկու տարի առաջ: Ի՞նչ քամի էր մտել գլուխը: Ի՞նչ էր պատճառը: Խւան Խւանիչը արդէն եօթերորդ բաժակն էր խմում չնչասպառ կերպով, չփչփացնելով և ծծելով երբեմն ընչացքը, երբեմն լիմոնի կեղեւը: Նա քնկոտ և դանդաղ փնթփնթում էր ինչ որ բանի մասին, իսկ ես չէի լսում և սպասում էի թէ նա երբ կը գնայ: Վերջապէս այնպիսի արտայայտութեամբ, որպէս թէ եկել էր ինձ մօտ միայն թէց խմելու, նա վերկացաւ և սկսեց հրաժեշտ տալ: Նրան ուղեկցելով, ասացի—

—Այդպէս ուրեմն դուք ինձ ոչ մի խորհուրդ չտւիք:

—Ա՞, ես բռի մարդ եմ, բթացել եմ, —պատասխանեց նա: —Ի՞նչ խորհուրդ: Դուք իզուր էք անհանգստանում... Զգիտեմ, ճըշմարիտ, թէ դուք ինչու էք անհանգստանում: Մի անհանգստանաք, հոգիս! Ասուած վկայ, ոչինչ չկայ... շնչաց նա սիրալիր և անկեղծօրէն, հանգստացնելով ինձ, որպէս մի երեխայի: Ասուած վկայ ոչինչ չկայ:

—Ի՞նչպէս թէ ոչինչ չկայ: Գիւղացիք պոկում են խրճիթների տանիքները, և արդէն, ասում են, մի տեղ տիֆ է տիրում...

—Է, ինչ: Եկող տարի լաւ բերք կը լինի, նոր տանիքներ կը շինեն: Իսկ եթէ տիֆից մեռնենք, մեղանից յետոյ ուրիշ մարդիկ կ'ապրեն: Միենոյն է, պիտի մեռնել, եթէ ոչ հիմայ, ուրեմն յետոյ: Ասուած վկայ ոչինչ... Մի անհանգստանաք, գեղեցիկս:

—Ես չեմ կարող չանհանգստանալ, —ասացի ես վրդովւած:

Մենք կանգնած էինք թոյլ լուսաւորւած նախասենեակում:

Խւան Խւանիչը յանկարծ բռնեց իմ արմունկն ու պատրաստելով մի բան ասել, ըստ երեզմին շատ կարևոր բան, կէս բովէաչափ լուռ նայում էր ինձ:

—Պաւէլ Անդրէիչ! —ասաց նս մեղմօրէն, և նրա գէր սառած զէմքի վրա ու մութ աչքերում յանկարծ բռնկեց այն առանձնակի արտայայտութիւնը, որով նա յախնի էր մի ժամանակ, իբրև խոկապէս կախարդիչ: —Պաւէլ Անդրէիչ, բարեկամաբար ես կ'ասեմ ձեզ փոխեցէք ձեր բնաւորութիւնը! Դժւար է ձեզ հետ գործ ունենալ: Դժւար է, հոգիս!

Նա անթարթ աչքերով երեսիս էր նայում, գեղեցիկ արտայայտութիւնը հանգաւ, հայեացքը նսեմացաւ և նս վինթ փնթաց դանդաղօրէն քթում սլացնելով:

—Այս, այս... Ներեցէք ծերուկիս... անհեթեթիս... Այս... Դժւարութեամբ իջնելով սանդուխքից, ձեռքերը բաց արած և զէպի ինձ դարձրած իր գէր ահազին մէջքն ու կարմիր ծոծրակը, նա խաչափարի կամ լոքի անհաճոյ ապաւորութիւն էր թողնում: Կը գնացիք որ և է երկիր ճանապարհորդելու, ձերդ գերազանցութիւն, —վինթփնթում էր նա:

—Պետերուրգ կամ արտասահման: Ինչու էք մնացել այսուեղ և ոսկի ժամանակը վատնում: Դուք երիտասարդ, առողջ, հարուստ մարդ էք... Էհ, լինէի աւելի երիտասարդ, նապաստակի նման կը փախչէի, այնպէս որ ականջներումս օդը սուլէր!

III

Կնոջս բորբոքումը յիշեցնում էր ինձ մեր ամռւսնական կեանքը: Առաջ, սովորաբար, ամեն մի վէճից յետոյ անգիտակցաւ ար մենք մօտինում էինք իրար, միանում և ազատ ընթացք տախիս այն ուժանակին, որպիսին ժամանակի ընթացքում բարդւում էր մեր հոգու մէջ: Եւ այժմ՝ իւան Խւանիչի գնալուց յետոյ ինձ մի բան խիստ կերպով քաշում էր դէպի կինս: Ես ու զում էի ցած իջնել և նրան ասել, որ նրա թէյի ժամանակ ունեցած վարմունքն ինձ վիրաւորել է, որ նա խիստ է, ինտելիգէնս չէ, մանրաբան է և որ իր ուամկան խելքով նա երբէք չէ բարձրացել հասկանալու այն, ինչ որ ես եմ անում և ինչ որ ես եմ գործում: Ես երկար անց ու

դարձ էի անում սենեակներում մտածելով այն ֆրազները, որ պիտի ասէի նրան, և գուշակելով այն, ինչ որ նա պիտի պատասխանէր: Յետոյ ես մտածում էի, թէ որովհետեւ կինս ինձ հիմա ատում է, ուրեմն և նրան հաճելի կը լինի տեսնել. ինձ խիստ, կոպիտ ու առեցող, և ընդհակառակը, ես խոր կերպով խոցած կը լինիմ նրան, եթէ յանկարծ այդ վէճից յետոյ կը ներկայանամ նրան ուրախ, բարի, մեծահոգի: Այսպէս կ'ասեմ նրան, մտածում էի ես. գուք երիտասարդ էք և գեղեցիկ, իսկ ես արդէն ծեր եմ... Մոռացէք ինձ, եթէ կարելի է, և բաղդաւոր եղէք!» կամ թէ կը յայտնեմ նրան, որ ես նւիրում եմ սովեալներին հինգ հազար ռուբլի: Ախ, այս բանը նրա ճաշակին ինչպէս յարմար կը լինէր!

Այն անհանգստութիւնը, որ տանջում էր ինձ վերջին ժամանակներում, իւան իւանիչի գնալուց յետոյ ինձ աւելի կատաղի էր երևում: Ես ոչ կարողանում էի նստել, ոչ կանգնել, միայն շրջում էի ու շրջում, որի համար ընտրում էի առանձնապէս լուսաւոր սենեակները մօտ այն սենեակին, ուր Մարիա Գերասիմովսան էր նստում: Այդ մի զգացմունք էր շատ նման նրան, որպիսին ես ունեցել եմ մի անգամ Գերմանական ծովում փոթորկի ժամանակ, երբ բոլորը վախենում էին, թէ մի գուցէ շոգենաւոր, որ բեռ ու նաւախիճ չունի, ծովս ընկղմի: Եւ այդ գիշեր ես հասկացայ, որ իմ անհանգստութիւնը հիասթափումն չէր, ինչպէս առաջ էի մտածում, այլ մի ուրիշ բան. բայց թէ իսկապէս ինչ, այդ ես չէի հասկանում, և այս ինձ աւելի էր զայրացնում:

— Գնամ նրա մօտ,—վճռեցի ես: — Իսկ առիթ կարելի է հնարել: Կ'ասեմ թէ իւան իւանիչն ինձ հարկաւորւեց պրծաւ գնաց:

Ես ցած իջայ և առանց շտապելու զորգերի վրայով անցայ նախասենեակն ու գոհնլիճը: Իւան իւանիչը նստած էր հիւրասենեակում գահաւորակի վրա, թէ էր իսմում դարձեալ ու փնթփընթում: Կինս կանգնած էր նրա հանդէս աթոռի յենարանը բռնած: Նրա դէմքի վրա նկատում էր այն խաղաղ, քաղցր և ունկնդիր արտայայտութիւնը, որով լսում են ճգնաւորներին ու երջանիկներին, երբ որ անպէտք խօսքերի ու փնթփնթոցի մէջ ենթադրում են մի առանձին խորհրդաւոր նշանակութիւն: Ինձ թւում էր, թէ կնոջս արտայայտութեան և դիրքի մէջ ինչ որ պսիխոպատիա-

կան կամ թէ արեղայական բան կար, և նրա ցած, աղօտ, շատ տաք սենեակներն իրենց հին կահաւորութեամբ, վանդակներում քնած թռչուններով և անուշանուութիւնով ինձ յիշեցնում էին մի վանահօր կամ որ և է մի գնդապետի ուխտաւոր պառաւ կնոջ կացարան:

Ես մտայ հիւրասենեակը: Կինս ոչ զարմացաւ և ոչ էլ ճնշւեց, ու նացում էր ինձ խիստ ու հանդիսա կերպով, ասես թէ գիտէր, որ ես պիտի գամ:

— Ներողութիւն,— ասացի ես մեղմօրէն: Շատ ուրախ եմ իւան իւանիչ, որ զեռ չէք գնացել: Մոռացայ վերեւում հարցնել ձեզ. չգիտէք արդեօք, թէ ինչպէս է գաւառական վարչութեան նախագահի անունն ու ազգանունը:

— Անդրէյ Ստանիսլաւիչ: Այո...

— Merci,— ասացի ես, դրապանիցս հանեցի ծոցատեարս ու նշանակեցի: Տիրեց մի անյարմար լւութիւն, որի ժամանակ կինս ու իւան իւանիչը, հաւանականաբար, սպասում էին, թէ ես երբ կը գնամ. կինս չէր հաւատում, թէ ինձ դաւառական վարչութեան նախագահն է հարկաւոր: Այդ ես կարդում էի նրա աչքերում: Ձեւանալով իրբ թէ ես չեմ գնում միայն նրա համար, որովհետեւ իսկոյն դառնալն անպատշաճ էր, առանց մի խօսք ասելու ես անցայ հիւրասենեակի միւս կողմը և նստեցի բուխարու մօտ:

— Ուրեմն ես գնամ, գեղեցկուհիս.— փնթվնթաց իւան իւանիչը:

— Ոչ,— շտապով ասայ նատալիա Գաւրիլովնան, դիսէելով նրա ձեռքին: Մի քառորդ ժամ՝ ես... Խնդրում եմ:

Պարզ էր, որ նա չէր ուզում մնալ ինձ հետ երես առ երես առանց վկաների:

«Ինչ կայ որ, ես էլ կը սպասեմ քառորդ ժամ», — մտածեցի ես:

— Ա, ձիւն է գալիս,— ասացի ես կանգնելով և նայելով լուսամուտին: Հիանալի ձիւն է! շարունակեցի ես մեղմօրէն, անցուժարձ անելով հիւրասենեակում: — Իւան իւանիչ, շատ ցաւում եմ; որ որսորդ չեմ: Երևակայում եմ, թէ ինչ բաւականութիւն է վաղ-վըզել նապաստակների ու գալերի յետեից!

Կինս, որ լաւ էր ճանաչում իմ ձայնի քնքութիւնը, միենոյն

տեղում կանգնած անշարժ գլխով, միայն կողքից նայելով, դիտում էր իմ շարժողութիւնները. նա այնպիսի արտայայտութիւն էր ընդունել որպէս թէ ես գրպանումն մի տուր դանակ կամ առոճանակ ունիմ թազցրած:

— Իւսն Իւսնիչ, ինձ մի կերպ որսի տարէք ձեզ հետ, — շարունակեցի ես մեղմօրէն: Ես ձեզանից շատ ու շատ շնորհակալ կը լինեմ:

Այդ ժամանակ հիւրասենեակը մի հիւր մտաւ: Դա ինձ անձանօթ քառասուն տարեկան, բարձր, լիքը, ճաղատ, մեծ ու շէկ միրուքով և փոքրիկ աչքերով մի պարոն էր: Տրուած ահազին թաշկինակի պատճառով ես նրան տիրացուի կամ ուսուցչի տեղ ընդունեցի, բայց կինս ներկայացրեց նրան ինձ բժիշկ Սոբոլ ազգանունով:

— Շատ, շատ ուրախ եմ՝ ծանօթութեանս համար! — ասաց բժիշկը ուժեղ տենորով, ամուր սեղմելով ձեռքս և միամտաբար ժպտալով: — Շատ ուրախ եմ!

Նա նստեց սեղանի մօտ, վեր առաւ մի բաժակ թէյ և բարձր ասաց.

— Բայց գուցէ ձեզ մօտ ոռմ կամ կոնեակ գտնւի: Բարի եղէք, Օլեա, — զիմեց նա աղախնին, — վնտրեցէք պահարանում, ես մըրսած եմ:

Ես կրկին նստեցի բուխարու մօտ, նայում էի, լսում և սակաւ դէպքերում որ և է բառ էի ձգում ընդհանուր խօսակցութեան մէջ: Իմ դէմքի վրա տիրում էր այն անհաճոյ ժպիտը, որ ես ինքս չէի սիրում, որովհեաւ հասկանում էի այն, — երկայն բերան, անկիւնաւոր ունքեր և կնճռուտած ու լարւած ճակատ: Կինս սիրալիր կերպով ժպտաւմ էր հիւրերին և սուր կերպով զիտում ինձ, որպէս մի գաղանի և ճնշւում իմ ներկայութիւնից: Այդ բանն իմ մէջ խանդ, նեղութիւն և նրան վիշտ պատճառելու կամակոր ցանկութիւն էր առաջ բերում: Այս կինը, այս յարմար սենեակները, վառարանի մօտ գտնւած տեղն իմն են, վաղուց իմը, բայց ինչու համար որ և է խելքից պահաս Խւան Խւանիչ կամ մի Սոբոլ նրանց վրա աւելի իրաւունքներ ունին, քան թէ ես, մտածում էի ես: Այժմ կնոջս տիսնում եմ ոչ թէ լուսամուտից, այլ ինձ մօտ, սո-

վորական տնային կանոնաւորութեան մէջ, այն տաք փայփացող մըլթ-նոլորտում, որպիսին ինձ պակասում է իմ հասակ առած տարիքում, և չնայելով նրա դէպի ինձ տածած առելութեանը, ես տիսրում եմ նրա համար, ինչպէս երբեմն մանկութեանս օրերում տիսրում էի մօրս կամ դայեակիս համար, և զգում եմ, որ այժմ, ծերութեանս շէմքին, ես սիրում եմ նրան աւելի մաքուր, աւելի վեհ կերպով, քան թէ առաջ. նրանումն է միայն իմ կեանքի պոէզիան և մաք-րութիւնը. նա իմ հպարտութիւնն է. ուստի և ես ուզում եմ մօտենալ նրան, կրոնդով աւելի ամուր սեղմել նրա ոտի ծայրն ու ժպտալ:

—Մսիօ Ենոտ, —զիմեցի ես բժշկին, —մեր գաւառում որքան հիւանդանոց կայ:

—Սորոլ...—ուղղեց կինս և արհամարհանքով ծիծաղեց իմ սրամտութեան վրա:

—Երկու, —պատասխանեց Սորոլը, անհամբերութեամբ մեկնելով երկու ձեռքերը դէպի Յլեան, որը նրան կոնեակ էր բերում: —Երկու!

—Խակ իւրաքանչիւր տարի որքան մահւան դէպէ է տեղի ունենում ամեն մի հիւանդանոցում:

—Պաւէլ Անդրէիչ, ես ձեզ հետ խօսելիք ունիմ, —ասաց ինձ կինս: Նա ներողութիւն խնդրեց հիւրերից և զուրս եկաւ հարևան սենեակը: Ես կանգնեցի և հետեւցի նրան:

—Դուք այս րոպէին կը գնաք վեր ձեր բնակարանը, —ասաց նա, կանդնած ինձնից շատ մօտ և նայելով կրծքիս:

—Դուք վատ էք դաստիարակւած, —ասացի ես:

—Դուք այս րոպէին կը գնաք վեր ձեր բնակարանը, —խստ կերպով կրկնեց և աջ ձեռքը շտապ շարժեց, որպէս թէ թել կը տրելիս լինէր, և արհամարհանքով երեսիս նայեց:

Նա կանգնած էր այնչափ մօտ ինձնից, որ եթէ ես քիչ կռանացի, անշուշտ իմ միրուքը կը դիպէէր նրա դէմքին:

—Բայց ի՞նչ է որ, —ասացի ես: —Ինչ բանում ես այսպէս յանկարծ մեղանչեցի:

Նրա ծնօտը դողդողաց, նա շտապով տրորեց աչքերը, թեթև կերպով նայեց հայելու մէջ և շշնջաց.

— Սկսում է կրկին հին պատմութիւնը։ Դուք, իհարկե, չէք դնալ... է, ինչպէս ուզում էք ևս ինքս կ'երթամ, իսկ դուք կացեք։

Նա վճռական դէմքով, իսկ ես ուսերս շարժելով և հանաքարար ծիծաղել աշխատելով, վերադարձանք հիւրասենեակ։ Այդանոց արդէն նոր հիւրեր կացին։ մի հասակաւոր կին և մի ակնօցաւոր երիտասարդ մարդ։ Առանց ողջունելու նորերին և առանց հրաժեշտ տալու հներին, ես բարձրացայ իմ կացարանը։

Ես վիրաւորւած էի, ստորացած, դժգոհ և վախեցած։ Թէյի ժամանակ իմ և նրա մէջ առաջացած դէպքից յետոյ ինձ համար պարզ էր, որ մեր «ընտանեկան բաղդը», որի մասին այս վերջին երկու տարում մենք արդէն սկսել էինք մոռանալ, ոչինչ, անմիտ պատճառների ոյցով կրկին նորոգւեց և որ ոչ ես և ոչ կինս չըկարողացանք մեզ պահել և որ վաղը կամ միւս օրը ատելութեան փոթորկից յետոյ, որպէս ես կարողացայ դատել անցեալ տարիների փորձերով, սէտք է առաջանար ինչ որ զզւելի բան, որ տակն ու վրա սլիտի անէր մեր կեանքի կարգը։ ճնշանակում է այս երկու տարւայ ընթացքում, մտածում էի ես, անցու գարձ անելով իմ սենեակներում, մենք չդարձանք աւելի խելօք, սառն ու հանդիսացած նշանակում է կ'սկսեն կրկին արտասուքներ, ազաղակներ, անէծքներ, չեմոդաններ, արտասահման, փողի պատճառով առաջացած կեղծ զգացմունք, յետոյ շարունակ հիւանդոտ վախ, որ նա այնամեղ—արտասահմանում—որ և է մի իտալացու կամ ոռւս հեշտամէրի հետ հայնոցում է ինձ, կրկին մերժումն անցագիր տալու, նամակներ, կատարեալ միայնութիւն, դրա հետևանք տիրութիւն իսկ հինգ տարուց յետոյ ծերութիւն, սպիտակ մազեր, թուլութիւն... Ես շրջում էի և երևակացում այն, ինչ որ լինել չէ կարող, թէ ինչպէս այդ գեղեցկուհին, այդ փափկիկը դրկում է երաժիշտի հետ, որպէս «Կրէցցէրեան սոնատում»... Արդէն հաւատացած, որ այդ անպատճառ կատարւում է,—ինչու, հարցնում էի ինքս ինձ յուսահատութեան մէջ, ինչու համար նախկին մեր կոիւներից մէկի ժամանակ ես ապահարզան չաւի, կամ թէ ինչու նա այդ միջոցին ինձանից ընդմիշտ չեռացաւ։ Այժմ գոնէ չէր լինիլ այս տիրութիւնը, ատելութիւնը, վրդովմունքն, և ես կ'անցնէի իմ կեանքը հանդիսացած, աշխատելով և ոչ մի բանի մասին չմտածելով։

Բակը մի կառք մտաւ զոյգ լապտերներով, յետոյ մի լայն սահնակ երեք ձի լծած: Ակներև էր, որ կնոջս մօտ երեկոյիթ կար: լսելով կառապանների ուրախ խօսակցութիւնն ու կառքերի ձայնը, ես ճակատու դրի լուսամուտի շրջանակի վրա և սկսեցի խաւարին նայել:

«Բակը մի քիչ տեսնեում է,—մտածում էի ես, աշխատելով միտքս ցրւել,—իսկ ցանկապատն ու նրանից դէն բաները չեն երեւում: Պեուրովօյում կրակ կայ... Այս սովեալների հետ ի՞նչպէս վարւել ի՞նչ անել:

Ներքեւում, կնոջս մօտ մինչև 12 ժամը խաղաղ էր, և ես ոչինչ չէի լսում, բայց կէսպիշերին սկսեցին շարժել աթոռներն ու ձխչըխկոցներ ամանները: Նշանակում է, ընթրիք կայ: Յետոյ կըրկին շարժեցին աթոռներն ու շատ պարզ կերպով յատակի տակից լսելի եղաւ ուրացի ձայն: Մարիա Գերասիմովնան արդէն քնած էր և ամբողջ վերին յարկում ես մենակ էի. հիւրասենեակում ինձ պատերից նայում էին իմ նախնիքների աննշան ու խիստ մարդկանց պատկերները, իսկ կարինետում լուսամուտի վրա իմ լամսացի արտացոլումն էր փալփլում անհաճոյ կերպով: «Իուք այս րոպէին կը գնաք վեր ձեր բնակարանը», —այս խօսքերը դեռ ևս հնչում էին իմ ականջներում: Իսկ ներքեւում կատարող ամեն մի բան ես լսում էի նախանձոտ ու խանդոս զգացմունքով և մտածում: «Այստեղ տանտէրն ես եմ: Եթէ ուզենամ, մի բոցիում կարող եմ ցրւել այս ամբողջ լարգելի խմբակը: Բայց ես գիտեի, որ դա յիմարութիւն է, որ ոչ ոքի չէ կարելի ցրւել և տանտէր» խօսքը ոչինչ չէ նշանակում: Որքան հարկաւոր է, կարելի է հաշենլ իրան տանտէր, ամուսնացած, հարուստ, խկական քաղաքական-խորհրդական, և միևնոցն ժամանակ չիմանալ, թէ այդ ինչ է նշանակում:

«Ընթրիքից յետոյ մէկն ու մէկն երգեց տենորի ձայնով:

«Չէ որ առանձնապէս ոչինչ չէ պատահել! — համոզում էի ինքս ինձ: — Ինչու համար եմ ես այսպէս յուզւած: Վաղը չեմ գնալ ներքեւ նրա մօտ, ահա և բոլորը — և մեր կուի վերջը»:

Մէկ ժամից քառորդ անց ես զնացի քնելու:

— Ներքեւում հիւրերն արդէն ցրւեցին, — հարցը ես Ալէքսէյին, որ հանում էր իմ շորերը:

— Ճիշտ այդպէս, ցրւեցին:

Կնոջս մօտ հիւրեր յաճախ էին լինում, այդ ինձ յուզում էր, բայց ես երբէք ծառալին հարց ու փորձ չեի անում, այդ բանն անարժան գտնելով թէ ինձ, թէ կնոջս. իսկ այժմ վճռեցի հարցնել:

— Իսկ ուրա ինչու էին բղաւում:

— Ալէքսէյ Գմիտրիչ Մախոնովը նւիրել են¹⁾ սովետալներին հազար փութ ալիւր և հազար ոռուբի փող: Իսկ մեծ տիրուհին, չգիտեմ ինչպէս են անւանում նրանց, խոստացան իրենց կալւածքում հալիւր յիսուն մարդկանց համար ճաշարան հիմնել: Փառք Աստուծոյ... Նատալիա Գաւրիլովնան վճռեց, որ բոլոր պարոններն իւրաքանչիւր ուրբաթ ժողովւն:

— Այսոեղ ներքեւմ ժողովւն:

— Ճիշտ այդպէս: Ըսթ րիքից առաջ մի թուղթ կարգացին. օգոստոսից մինչև այսօր Նատալիա Գաւրիլովնան, բացի հացը, ժողովել են ութ հազար ոռուբի փող: Փառք Աստուծոյ... Ես այնպէս եմ կարծում, ձերդ գերազանցութիւն, որ եթէ տիրուհին աշխատեն հոգիներ փրկելու համար, շատ կը ժողովին: Այսոեղի մարդիկ հարուստ են:

Արձակելով Ալէքսէյին, ես հանգցրի ճրագլ ու գլուխս թագորի վերմակի տակ:

« Իսկապէս, ինչու եմ ես ալսոլիս անհանգստանում — մտածում էի:

« Ի՞նչ ոյժ է քաշում ինձ դէպի սովետալները, ինչպէս թիթեռնիկին դէպի կրակը: Զէ որ ես նրանց չեմ ճանաչում, չեմ հասկանում, երբէք չեմ տեսել ու չեմ սիրում: Որտեղից է այս անհանգըստութիւնը: »

Յանկարծ ես խաչակնեցի երեսս վերմակի տակ: Այդ ակամայ շարժողութիւնն ինձ վախեցրեց: Երեխ մտաւոր քայլայումն է միւսումն Ֆու, դու անդունդ!

— Բայց ինչպիսին է, — ասում էի ինքս ինձ կնոջս վերաբեր-

¹⁾ Աղախնի խօսակցութեան մէջ որ և է պարոնի կամ տիկնոջ մասին գործ է ածւում լոգնակի (են, նրանց):

Ծան. Թարգմ.

մամբ: —Ինձանից գաղտնի այս տանն ամբողջ յանձնաժողով է կազմակերպել: Ինչու գաղտնի. ինչու դաւադրութիւն: Ես ի՞նչ եմ արել նրանց: Նա և իւան իւանիչն ինչպէս ծիծաղած կը լինէին իրենց մոքում ինձ վրա, երբ ես այսօր թէյի ժամանակ խօսում էի իմ մենակութեան մասին! Վիրաւորիչ է... ծանր է...

«Իւան իւանիչն իրաւացի է, — լոտածում էի ես: Պէտք է հեռանալ: Այս մեծ-մեծ սենեակները, կանացի անտեղի խօսքերը, տիրութիւնն ու մարդկանց բացակայութիւնն ինձ կատաղեցնում են: Անպատճառ պիտի հեռանամ»:

Միւս առաւտեան զարթեցի ես հասուատ վճռով—պատրաստ-աել և շուտով ճանապարհւել: Երէկւան մանրամասնութիւնները, թէյից յետոյ ունեցած խօսակցութիւնը, կինս, Սոբոլը, ընթրիքը: Իմ երկիւղներն իմ մէջ ամօթի զգացմունքներ էին զարթեցնում, և ես ուրախ էի, որ շուտով կ'ազատւեմ այդ բոլորից: Երբ ես սուրճ էի խմում, Վլադիմիր Պրոխորիչը զանազան գործերի մասին երկար գեկուցումներ էր տալիս ինձ: Ամենահաճելին նա վերջն էր պահել:

—Այն գողերը, որոնք մեր ցորենը գողացել էին, գտնւեցան, — յայտնեց նա ժպտալով: — Երէկ քննիչը Պեստրովօյում՝ բանտարկեց երեք գիւղացիների:

— Կորէք աչքիցս! — բզաւեցի ես և բիսկւիտս ձգեցի նրա վրա:

(Վերջը լավորդ համարում):

Դ. ԴՆՄԻՇՃԵԱՆԻ

Մարդիկ շրջում են անհոգ խմբերով,
Երջում են պայծառ արեգակի տակ.
Եւ նրանք ինչ զիտեն թէ ինչ ցնորդներով
Ես էլ շրջում եմ նրանց մէջ մենակ:
Արևը մութն է երևում աչքիս,
Երջում եմ օտար ամենքի համար,
Եւ ինձ ասում եմ. ռուր է նաղելիս,
Ա՛խ ինչու նա էլ դարձաւ ինձ օտար...
Բայց ինձ տանջել է ուզում նազելիս.
Զգիտեմ թէ ուր կորչեմ, հեռանամ:
Մարդկանց ծիծաղն էլ ճնշում է հոգիսր
Զգաց ժունքներիս չկայ բարեկամ:

ԵՒՈԼԻՒՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԵԼ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹⁾)

Ո՞վ էր Դարւին։ Կրթւած թէ անկիրթ մարդիկ սովորաբար պատասխանում են ազգ հարցին—Շարւինը նա է էլի, որ պնդում է, թէ մարդը կապիկներից է ծագել։ Մի բան, որ ճշմարտութեան չի համապատասխանում։

Զարլս Դարւին աւելի մեծ զարկ տւաւ բնական գիտութիւնների առաջաղիմութեան, քան մի որ և իցէ ուրիշ մարդ։ Նա յեղաշրջեց բնագիտութիւնը և ամբողջ գիտական աշխարհում վտառակեց մեծ ռէֆորմատորի եզակի անունը։ Նա հիմնեց բոլոր թէօրիաներից ամենամեծ թէօրիան։ Նա լուծեց—ինչու չափազանցառ բար ասում են—բոլոր հարցերի հարցը։

Բնագիտական տաղանդը տոհմական էր Դարւինների գերդաստանում։ Նշանաւոր բնագէտ էր Դարւինի պապը, պապի հայրը, եղբայրը։ Երազմ Դարւինը—Զարլս Դարւինի պապը—համարում է Գէօթէի, Լամարկի շարքում Դարւինիզմի առաջին կարապետներից մէկը։ Նա իւր բնագիտական գրւածքի մէջ (Zoonomia ²⁾) յայտնել է ծագման թէօրիացի նոյն հիմնական սկզբունքները, որոնց պաշտպան են եղել Գէօթէ և Լամարկ, բայց սրանցից բոլորովին անկախ է եղել Երազմ Դարւինը։

¹⁾ Տես Մուրճ 1897 թ. № 2—3, 5.

²⁾ Հրատարակ. 1794 թ.

Դարւինի թէօրիան անշուշտ պէտք է զանագանել ընդհանուր էւոլյուցիօնիզմից։ Վերջինս ընդարձակ է, տիեզերական։ Առաջինը մտնում է երկրորդի մէջ, կազմում է նրա մի մասը։ Դարւինի աշխատութիւնը վերաբերում է միայն կենդանի էակների աշխարհին։ Նրա երկու թէօրիաները բնական և սեռական ընտրութեան մաս սին։ Վերաբերում են միայն բոցերին ու կենդանիներին։ Անօրգանական աշխարհի էւոլյուցիան, կեանքի ծագումը և այլն նրան չեն զբաղեցնում։

Երկու տեսակ մեծ ծառայութիւններ են վերագրում Դարւինին։ Նախ՝ նա աւելի խորը և աւելի բազմակողմանի կերպով ըմբլունեց ու զարգացրեց ծագման թէօրիայի հիմնական զազափարները, որոնք արդէն արտայացտում էին Գէօթէի, Լամարկի կողմից, երկրորդ՝ նա մի նոր թէօրիա հիմնեց, որը բացառում է մեզ օրգանական զարդացման (էւոլյուցիայի) բնական պատճառները, պարզում է բուսական և կենդանական տեսակների մշտական փոփոխութեան գաղտնիքը։ Այդ վերջինն է քննական ընտրութեան թէօրիան» (sélection naturelle, естественныј подборъ):

Լամարկը իւր ծագման թէօրիայով ասում է միայն, որ բոլոր տեսակները (espèce, Art, видъ) ծնունդ են առնում ընդհանուր սկզբնական պարզ ձևերից, իսկ Դարւինը իւր քննական ընտրութեան թէօրիայով ցոյց է տալիս մեզ, թէ ինչու, ինչ մեքենայական պատճառների ոյժով առաջ է եկել այդ աստիճանական զարգացումը և կերպարանափոխութիւնը։

Անհուն աշխատանք էր պէտք Դարւինին իւր մեծ թէօրիան հիմնաւորելու համար։ Եւ նա կատարեց այդ աշխատանքը հազւագէպ տոկունութեամբ ու բարեխղճութեամբ։ Նախքան իւր հռչակաւոր գործը հրատարակելը, նա հաւաքեց ֆակտերի մի ամբողջ լեռ։

1832 թւականից մինչև 1837 կատարեց նա իւր տշխարհապտոյտ ճանապարհորդութիւնը Beagle-նաւի վրայ և անխոնջ կերպով Փակտեր հաւաքեց։ 1837 թւականից մինչև 1842—հինգ տարի շարունակ աշխատեց դարձեալ ֆակտեր հաւաքելու համար։ 1842 թւականից մինչև 1859 լուսաբանեց ֆակտերը և սիստեմի բերաւ։ Վերջապէս 1859-ին հրատարակեց իւր գրւածքը «Տեսակների ծագումը» վերնագրով։

Ֆակտորը անհաշիւ էին, բայց դրա մէջ չէր Դարւինի թէօրիայի ոյժը. նա կայանում էր այն ներգաշնակ պատճառական կապակցութեան մէջ, ոչ տեղի ունի օրգանական (բուսական, կենդանական) երեսյթների անվիրջանալի շարքում և որ Դարւինը հաստատեց հիմնականապէս:

Գանգ թէօրիայի էութեան:

Տեսակները փոփոխուում են: Այդ փոփոխականութիւնը (variation) տեղի ունի ընտանեկան կամ կուլտուրական վիճակում, և բնական կամ վայրենական դրութեան մէջ: Երկու դէպքում էլ տեղի ունի ընտրողութիւն (sélection). առաջինում՝ այդ ընտրողութիւնը արւեստական է, երկրորդում՝ բնական, առաջինում՝ աւելի արագ է կ ստարում ընտրողութիւնը (ուրեմն և փոփոխականութիւնը), երկրորդում՝ աւելի դանդաղ:

Կանգ առնենք բնական ընտրողութեան վրայ, որը Դարւինիզմի հիմնաքարն է կազմում, և որը ծառացում է իբրև բանալի անթիւթիօլոգիական (կենսաբանական) հարցերի լուծման համար:

Բնական ընտրողութեան դազափարը արդիւնք էր այն համեմատական ուսումնասիրութեան, որ արաւ Դարւինը վայրենի և ընտելացած կենդանիների մէջ:

Այն միտքը, որ մարդու գործունէութիւնը գիտակցաբար կարող է փոփոխումներ առաջացնել ընտանի կենդանիների կամ բոյսերի աշխարհում, առիթ տեսց Դարւինին ենթադրելու, որ ազատ բնութեան մէջ ևս տեղի ունի մօտաւորապէս նոյնանման, (անալոգ) գործունէութիւն:

Տարբերութիւնը նրանումն է, որ մարդկային ոյժերը գործում են գիտակցաբար, այն ինչ բնութեան ոյժերը առաջ են մղում կոյր, ճակատադրական անհրաժեշտութեամբ:

«Գոյութեան կոիւ անւանեց Դարւինը այն կոյր ոյժը, որը բնութեան ծոցում փոխարինում է մարդկային գիտակցական գործունէութեան. գոյութեան կոիւն է պատճառը, որ օրգանական (բոյսերի, կենդանիների) աշխարհը ենթակայ է մշտնջենական կերպարանափոխութեան: Գոյութեան կուի մէջ է, որ կատարում է «Բնական ընտրութիւնը»:

Այդ միտքը իսկապէս Դարւինի յատուկ գիւտը չէր: «Գոյու-

թեան կուից գաղափարը պատկանում է տհածսագէտ Մալթուսին, որը առաջին անգամ զարգացրեց նրան իւր ազգաբնակչական թէօրիայով։

Այդ հանդամանքի առթիւ ահա թէ ինչ էր գրում Դարւինը էրնսոն Հեկկելին 8 հոկտեմբեր 1864.

«Մի քանի տարի շարունակ—ասում է նա—իս չէի կարողանում բացատրել ինձ այն զարմանալի երևոյթը, թէ ինչպէս օրդանական տեսակներից ամեն մէկը այնքան հրաշալի կերպով յարմարւում, ընտելանում էր իր կեանքի, միջավայրի պայմաններին։ Երկար, լարւած մտածում՝ էի։ Սակայն, ես այնքան լաւ ուսումնասիրել էի անասունների կեանքը, նրանց սովորութիւնները—որ ես արդէն նախապատրաստած էի ընդունելու «Գոյութեան կուի» միտքը։ Եւ երբ մի բաղդաւոր դիմուածով ձեռքս ընկաւ Մալթուսի զիրքը «Ազգաբնակութեան մասին», այն ժամանակ ես էլ յղացաց բնական ընտրութեան և գոյութեան կուի գաղափարը, իբրև պատճառ տեսակների փոփոխականութեան։»

Պարզ եց որ ընութիւնը անողորմ պատերազմի մի հսկայական դաշտ է։ Միլիօնաւոր մանր ու խոշոր մարմիններ գտնւում են մըշտընչենական փոխադարձ ընդհարումների մէջ, յաղթում են, յաղթւում են։ Յաւիտենական կուր գետնի տակ ու գետնի երեսին, ծովային խորութիւնների մէջ, նոյն իսկ օդային մթնոլորդում։ Մոտեք երկրային խորքերը։ այնտեղ թանձր մթութեան մէջ բոյսերի արմատներն են իրար դէմ մաքառում—կուիւ է յանուն սնունդի ու գոյութեան։ Քննեցէք ջրային միկրոսկոպական, մանրիկ կաթիլը, — նոյն իսկ այնտեղ կուիւ է, և դրանք ինֆուզորիաներն են, որոնք կոտորում են իրար՝ գարձեալ սնունդի համար։

Կուիւ է բոլորի՝ ընդդէմ բոլորի, —և վայ յաղթւածին։ այս է ընութեան սոսկալի կոչումը։ Ով պատշաճաւոր զէնք չունի կուելու համար, ընկնում է կուի մէջ, ամբողջ սերունդով բնաջինջ է լինում։ Ով տանում է յաղթանակը, նա էլ սկսում է բեղմնաւորւել, շատացնում է սերունդը և նրա հեռաւոր գոյութիւնը ապահով է կացուցանւում։ Այդպիսով ձուլում է անասնական արխատոկրտահան, այդպիսով առաջ է քայլում օրդանական յառաջդիմութիւնը։

Գոյութեան կռւի թէօրիան—կարելի է ասել—Մալթուսի ռազմաբնական թէօրիային ընդհանուր գործադրութիւնն է օրգանական աշխարհում:

Նման պատճառներ,—նման երևոյթներ: Սակայն ոչ բոլորովին նման են պատճառները: Բոյսը, կենդանին կռւում են հազարաւոր ազդեցութիւնների դէմ իրենց ապրուստը ճարելու համար, կռւում են, որովհետեւ բեղմնաւորութիւնը հրէշաւոր է, իսկ ապրուստի միջոցները սակաւ:

Գոյութեան կռիւը տեղի ունի նաև մարդկութեան մէջ, թէկը տարբեր ձևերով: Սակայն, գոյութեան կռիւը, որքան էլ նա տարբեր է երկու աշխարհներում իւր պատճառներով ու հետևանքներով, այնուամենայնիւ երկու զէպքում էլ կրում է մի ընդհանուր, նշանաւոր զիծ՝ այն, որ էւոլյուցիայի (կամ կուզէք ապրոգրէսի) ճանապարհը անցնում է արեան ու արսափների, լացի ու արտասուքի, ճնշման ու բռնութիւնների միջից: Այս է բնութեան անդիմադրելի, ճակատագրական օրէնքը: Անասնական բարձրագոյն տեսակների գոյացման համար անհրաժեշտ էր միջիոնաւոր ստոր տեսակների ոչնչացումը: Այսօրւայ մարդկային քաղաքակրթութեան համար անհրաժեշտ էր հնադարեան սորիկութիւնը, միջնադարեան ճորտութիւնը և դարաւոր պատերազմներն ու արիւնհեղութիւնները: Անցնենք:

Ուրեմն բնական ընտրութիւն գոյութեան կռւի մէջ: Եւ այդ քննորութիւնը հիմնւում է այն երկու նշանաւոր ֆիզիոլոգիական ոլժերի վրա, որ յիշաակել ենք անցեալում, բայց որոնց մասին աչժմ՝ կը խօսենք աւելի մանրամասնօրէն: Այդ երկու ոյժերն են՝ յարմարումը (adaptation) և ժառանգականութիւնը, որոնք ի վերջոյ վերածւում են օրգանական նիւթի ֆիզիկական և քիմիական յատկութիւններին: Այս վերջինը ընդհանուր յայտարարն է բոլոր կենսական երևոյթների: «Յարմարում» մենք անւանում ենք այն ոյժը, որի շնորհիւ օրգանիզմը (մարմինը՝ բուսական կամ կենդանական) իւր շրջապատող միջավայրի (կերակրի, լոյսի, կլի և այլն) ազդեցութեան տակ ձեռք է բերում իր

կեանքի ընթացքում նոր առանձնայատկութիւններ, որոնց նա չի ժառանգել իւր ծնողներից:

Օրդանիզմի վրայ ներգործող միջավայրի այդ բոլոր պայմանները Հէկէլը որոշում է անուցում (Ernährung) խօսքով: Նա այդ խօսքը լայն է հասկանում: այլտեղ մտնում են և կերակուրը և մթնոլորդի ազդեցութիւնը, և արեգակի լոյսը, տաքութիւնը և զետնի որպիսութիւնը, և այլն: Մեծ ազդեցութիւն ունին օրգանիզմների վրայ նաև նրանց կենդանի հարեւանները. թշնամիներն ու բարեկամները, գիշատիչներն ու պարագիտները, և այդ բոլոր պայմանները միասին ազդում են մարմինների ներքին նիւթի փոխանակութեան վրայ (Stoffwechsel) ու այլպիսով առաջ են բերում նրանց փոփոխականութիւնը կամ յարմարումը¹⁾:

Այդ է պատճառը, որ երբէք երկու օրգանական անհատներ լիակատար կերպով չեն նմանում միեւնաց: Ֆակտ է որ միեւնոյն մօրից ծնւած եղբայրները կամ՝ քոյրերը բոլորովին իրար նման չեն լինում; այլ որոշ տարբերութիւններ, անհաւասարութիւններ լինում են նրանց մէջը: Նոյն իսկ երկորեակների նմանութիւնը բացարձակ չէ: Նոյն իսկ մօր արգանդում էլ գործում է ցարմարման փոփոխման ոյժը, մօր ընդունած սնունդը տարբեր կերպով է ազդում իր արգանդի երկորեակներից իւրաքանչիւրի վրայ: Նոյն երեսով է անասունների մէջ. խոզը, շունը և ուրիշ անասուններ ծնում են միաժամանակ մի քանի ձագեր—նրանք բոլորն էլ որոշ յատկութիւններով տարբերում են իրարից, մէկը մեծութիւնով, միւսը գոյնով, երրորդը ոյժով և այլն:

Ցարմարման օբէնքները բազմաթիւ են և բազմատեսակ, բայց մենք այդ նիւթի վրայ աւելի կանգ առնել չենք կարող և կ'անցնենք ժառանգականութեան (hérité): Ցարմարումը առաջադիմական ոյժ է, նա անդադար փոփոխում է, իսկ ժառանգականութիւնը պահպանողական ոյժ է—նա ձգտում է պահպանել էականը: Քննենք այդ պահպանողական ոյժի հութիւնը:

Որքան ճիշտ է այն Փակտը որ միեւնոյն մօր զաւակները որոշ գծերով տարբերում են իրարից, նոյնքան ճիշտ է և այն, որ

¹⁾ E. Haeckel, Natürliche Schöpfungsgeschichte.

նրանք նմանում են թէ իրար և թէ իրանց ծնողներին։ Երկու տերեւ չկան բնութեան մէջ, կամ երկու կենդանական անհատներ, որոնք լիսակտար նմանութիւն ունենալին։ Դա ընդհանուր օրէնք է։ Բայց ընդհանուր օրէնք է և այն, որ միշտ նմանը ծնում է նմանին, և երբէք չի պատահում օրինակ, որ կատուն գորտ ծնէր, կամ շունը—կատու։ Դա—ֆակտը։ Այժմ տեսնենք պատճառները։

Մի ժամանակ ժառանգականութեան երեսյթների մէջ ևս մարդիկ որոնում էին գերբնականի զօրութիւնը։ Խսկ այսօր ֆիզիոլոգիական գիտութիւնը հաստատում է արդէն, որ ժառանգականութիւնը ինչպէս և ամեն մի ուրիշ կենսական ֆունկցիա՝ բղխում է բոլորովին բնական պատճառներից։

Յարմարմանն օրէնքի մէջ—ինչպէս տեսանք—դեր էին խաղում զլսաւորապէս սնուցման ողաշմանները։ Ժառանգականութեան մէջ էլ զեր խաղացողը բեղմնաւորութեան (Fortpflanzung) ֆունկցիան է։

«Սնուցում և բեղմնաւորում»—դրանք մարմինների երկու հիմնական ֆունկցիաներն (պաշտօններն) են, որոնք զուգակցաբար են զարգանում։

Ժառանգականութիւնը մէկն է կենսաբանական այն խոշոր հարցերից, որոնք անթիւ վէճերի ու բանակութեների առարկաց են եղել և դեռ շարունակում են լինել։ Կան—որքան մեզ յացոնի է—չորս թէօրիաներ—Դարւինի, Հէկկելի, Սպենսերի և Վայսմանի։

Աւելորդ չի լինի կանդ առնել այդ թէօրիաների վրայ, մասնաւող որ այդտեղ մեզ կը պարզի մի հարց, որը ահազին նշանակութիւն ունի պրոգրէսի կամ էւոլյուցիայի պատճռութեան մէջ։ Դա ճենք բերւած յառկութիւններից (qualités acquises, erworbenen Eigenschaften) ժառանգական լինելու կամ չլինելու հարցն է, որը տասնեակ տարիներից ի վեր զբաղեցնում է դիտնականներին։

Ամենից առաջ Սպենսերն է ներկայացրել իր ժառանգականութեան հիպօթէզը։ «Ամեն մի բոյս կամ կենդանի, —ասում է նա, —որ պատկանում է այս կամ այն տեսակին (espèce), բազկացած է յատուկ ֆիզիոլոգիական միութիւններից (unités physiologiques)։

եւրաքանչիւրը այդ միութիւններից ունի ներքին մի հակում (tendance intrinsèque) ձուլւելու իւր հարազատ տեսակի ձեռվութեար է այդ հասկանալ,—ինքն էլ է խոստովանում Սպենսերը. բայց դա ճիշտ իրողութիւն է՝ աւելացնում է նա: Կայ ուրեմն մի անյայտ ոյժ, որը գրդում է Փիզիոլոգիական միութիւններին ձուլւել որոշ կերպով—և այդ անյայտ ոյժը նա անւանում է Պոլարի (Polaris): Այդ պատճառով Սպենսերի հիպօթէզն էլ կոչվում է Polarogenesis. (պոլարի գէնեզիս)

Այդպիսով, եթէ ուղենանք հասկանալ ժառանգականութեան գաղտնիքը Սպենսերի թէօրիայի համաձայն, պիտի ասենք միայն, որ երեխանների նմանութիւնը իրենց ծնողներին արդիւնք է այն առանձնայառուկ հակումների (tendances spéciales), որ կրում են իրենց մէջ ծնողական օրդանիզմների Փիզիոլոգիական միութիւնները:

Այժմ ահաւասիկ Դարւինի հիպօթէզը:

Նա ներկայացնում է «նիւթի» (Materie) գաղափարը և դրա համար էլ հիպօթէզը կոչում է Պանգենեզիս (համաձնութիւն): Նա հիմնւած է այն Փակախի վրայ, որ կենդանական օրդանիզմը կազմւած է անթիւ, անհամար մանր բջիջներից (cellule, ռլետովկա) որոնցից խորաքանչիւրը ունի ինքնուրոյն կեանք, ինքնուրոյն աճում և էւոլուցիա: Ապա ուրեմն ամեն մէկը այդ բաղադրեալ բջիջներից բեղմնաւում է նոյնակէս ինքնուրոյն կերպով: Կենդանի օրդանիզմի բոլոր մասերից բաժանւում են մանր սաղմները (germe) ու գնում միանում են արեան շրջանաւութեան մէջ,—այդպիսով դոյնում են բեղմնաւորման բջիջները (cellules reproductives):

Տարբերութիւնը քիչ է Դարւինի և Սպենսերի մէջ, Դարւինը քիչ աւելի մատերալիստ է:

Տեսնենք Հեկկելը ինչ է ասում:

Նա էլ ներկայացնում է «շարժողութեան» գաղափար—և նրա հիպօթէզը կոչում է Պերիգենեզիս (Perigenesis) «նիւթի մանրիկ մասնիկները (Plastiden) արտադրում են ոչ թէ նիւթ, —ասում է նա հակառակ Դարւինին—այլ արտադրում են շարժումնեւ: Հեկկելի կարծիքով, բեղմնաւորութեան ակտի ժամանակ ծնողների

պրոտոպլազմի մի մասը անցնում է որդուն և այդ պրոտոպլազմի հետ միասին անցնում է նրան (պրոտոպլազմին) յատուկ մօլեկուլար շարժողութիւնը: (Molekular—Bewegung): Պրոտոպլազմի այդ մօլեկուլար շարժողութեան երևոցթները, որոնք կեանքի փակ պատճառն են, տարբեր են բոլոր կենդանի էակների մէջ:

Այս է ասում Հէկկելլը: Այժմ անցնենք Վայսմանին:

1885 թւականին գերմանացի գիտնական Վայսմանը հրատարակեց ժառանգականութեան մի նոր թէօրիա իր մի գրւածքի մէջ. «Die Continuität des Keimplasmas als Grundlage einer Theorie der Vererbung»: Այդ գրւածքը մեծ աղմուկ հանեց. Վայսմանը հերքում է բոլոր նախորդ թէօրիաները: Ոչ պանգենեղիս, (Դարւին), ոչ պերիգենեղիս (Հէկկել) և ոչ էլ սովորիգենեղիս (Սպենսէր) չեն կարող լուծել ժառանգականութեան գաղտնիքը:

Ըստ Վայսմանի՝ ամեն մի հասուն օրդանիզմի մէջ կայ երկու տեսակ պլազմա (Plasme) ¹⁾ մէկը—կոչւում է սաղմնային (germinatif), միւսը—մարմնային (somatique): Առաջինը համապատասխանում է տեսակին (espèce), երկրորդը—անհատին (individu):

Երբ նոր էակը ծնունդ է առնում, ծնողների սաղմնային պլազմայի մի մասը միայն ծառայում է նորածին օրդանիզմի գոյացման համար, միւս մասը մնում է սկզբից ապագայ սեռական օրդանների մէջ և կազմում է նոր սաղմնային բջիջ նոր սերունդի համար:

Ուրեմն, սաղմնային բջիջի պլազման ամբողջապէս չի գործադրւում նոր ծնւածի կազմակերպութեան համար, այլ այդ պլազման շարունակաբար անցնում է սերունդից սերունդ, իբրև մի երկայն արմատ, որի վրայ տեղ-տեղ երեան են գալիս բողբոջներ, որոնք անհատներն են իրար յաջորդող սերունդների:

Սաղմնային բջիջից գուրս է գալիս անհատը իբրև որոշ տեսակի պատճանող անհատ (գորտից—գորտ, արծից—արծիւ և այլն):

Իսկ մարմնային բջիջից (cellule somatique) գուրս է գալիս անհատը իւր անհատական առանձնայատկութիւններով (ուժեղ արծիւ, փոքրիկ գորտ և այլն):

¹⁾) Պլազման բջիջի էական հիւթն է:

Երկու բջիջների պլազմաները զործում են անկախ, ինքնուրոցն Նրանք իրար վրայ ոչ մի ազդեցութիւն չունին:

Ահա այդտեղից և հետևում է մի նշանաւոր եզրակացութիւն, որ անմիջապէս դուրս բերաւ Վայսմանը և յայտարարեց գիտական աշխարհին: Նա հարց գրեց. «արդեօք անհատի ձեռք բերած առանձնայատկութիւնները (Qualités acquises) կարող են ժառանգաբար անցնել յաջորդ սերունդներին»:

Եւ նա պատասխանեց—ոչ. մինչդեռ գրեթէ բոլոր գիտնականները՝ Դարւին, Սպենսէր, Հեկబել և այլն միաբերան հաստատում էին, որ ձեռք բերած յատկութիւնները անպայման ժառանգական են:

Վայսմանը հերքում էր այդ՝ հիմնած այն դրութեան վրայ, որ մարմնային (somaticque) բջիջի փոփոխութիւնները չեն ազդում սաղմնային ժառանգական բջիջի վրայ: Այսինքն անհատը կարող է փոփոխել, կատարելագործւել, նա կարող է զարգացնել իւր այս կամ այն ընդունակութիւնները, մտաւոր, Փիզիկական և այլն,— և այդ բոլորը ոչ մի ազդեցութիւն չի թողնի նրա սերնդի, նրա երեխաների վրայ: Ծնողները իրենց կեանքում ձեռք բերած առանձնայատկութիւնները չեն տալիս որդոց:

Այս էր այն նշանաւոր յայտնութիւնը, որով Վայսմանը միանգամայն զարմանք յարուցեց գիտնականների շրջանում: Սկզբում ոչ ոք չէր ուզում հաւատալ, բայց հետզհետէ այդ թէօրիան քաղաքացիութիւն ստացաւ և այսօր ամենուրեք արդէն ընդունում է. միայն բժշկական գիտութիւնները դեռ ևս դիմավրութիւն են ցոյց տալիս:

Վայսմանի թէօրիան իսկապէս առաջին հայեացքից անմիտ է թւում: ԶԵ որ ամենուրեք հաստատած ճշմարտութիւն է, որ ուժեղը ծնում է ուժեղ զաւակներ, թոյլը—թոյլ: ԶԵ մը ամենքին յայտնի է, օրինակ, որ կրթւած, խելօք մարդկանց որդիք ևս լինում են ընդհանրապէս խելօք, որ ապուշը ծնում է ապուշ, արթեցողը—արթեցող և այլն:

Ընդհանուր կարծիքը այս էր մինչև Վայսմանի երեալը: Նա կորուկ հերքեց այդ կարծիքը, որը չի կարող իրրե օրէնք ծառայել:

Բայց չէ որ—ասում է նա—ամենախելացի մարդը ևս յաճախ ծնունդ է տալիս ապուշ զաւակներին Եւ չը որ, ընդհակառակը, յիմար, տգետ ծնողներից յաճախ առաջ են գալիս որդիք մեծ խելքով ու ընդունակութիւններով։

Ապա ուրեմն ծնողների անհատական յատկութիւնները չեն սպառնառ, որ որդիք մնում են յիմար կամ տղետ, խելօք կամ կրթւած, այլ սպառնառ այն կրթութիւնն է, որ տրւում է որդոց, այն միջավայրն է, ուր նրանք մնում են, անում, զարգանում են. կարծ ասենք, ըստ Վայսմանի՝ այդ պատճառը «ընտրութիւնն է» (selection) բնական և արւեստական Այստեղ Վայսմանը աւելի դարւինիստ է, քան ինքը Դարւինը։ Վերջինս ահազին նշանակութիւն էր տալիս ձեռք բերած առանձնայատկութիւնների ժառանգման, մինչդեռ նա այդ բանի մէջ կարիք չունէր։ Նրա ընտրողութեան թէօրիան արդէն ամեն բան բացատրում է։

Եթէ անհատուկան յատկութիւնների ժառանգումը ճիշտ լինէր, եթէ տաղանդը, հանճարը (որոնք յաճախ ձեռք են բերւում վարժութեամբ, անհատական կրթութեամբ) ժառանգական լինէին, այն ժամանակ կրթութիւնը համեմատաբար կարծ ժամանակամիջոցում, իբրև մի հսկայական ֆակտոր, սկսք է կատարելագործէր մարդկութիւնը։ Սակայն այդ նպաստաւոր հանգամանքը չկայ, ինչպէս Վայսմանը նկատեց։ Ոչ փիլիսոփայի որդին է փիլիսոփայ լինում, ոչ բանաստեղծի որդին—բանաստեղծ, ոչ հրապարակախօսի որդին—հրապարակախօս։ Ոչ գիտութիւնը, ոչ հանճարը, ոչ խելքը, ոչ բարոյականութիւնը ու անբարոյականութիւնը,—ոչ մէկը դրանցից՝ իբրև ծնողի անհատական յատկանիշ՝ չի անցնում զաւակներին։

Ել նւր մնաց ժառանգականութիւնը, էլ ինչո՞ւն է կայսնում նրա մեծ, բարերար նշանակութիւնը մարդկացին ցեղի առաջադիմութեան մէջ—զարմացած կը բացականչէ բանիմաց ընթերցողը։

Վայսմանը չի ուրանում ժառանգականութեան մեծ նշանակութիւնը, Զէ որ նա թունդ դարւինիստ է։ Նա ընդունում է, որ ժառանգականութիւնը ահազին դեր ունի հասարակական էլոլիւցիայի մէջ։

Նա միայն հերքում է անհատական, ձեռք բերւած յատկու-

թիւնների ժառանգումը, բայց նա չի ուրանում և չի կարող ուրանալ այն նշանաւոր իրողութիւնը, թէ կայ ցեղական, ազգայնական, տոհմական դարաւոր առանձնայատոկութիւնների ժառանգումն։ Այդ այն ֆակտն է, որի ոյժով այսօր ֆրանսիացին տարբերում է գերմանացուց, հայը քրդից, քուրդը եղիղից, և այլն և այլն։

19. Իդ գարու ֆրանսիացին—ասում է Թոմաս Ռիբո¹⁾—ըստ էութեան նոյնն է բնաւորութեամբ, ինչ որ Կեղարի ժամանակների գալլը (gaulois), նոյն աշխոյժը, կենդանութիւնը, նոյն թեթևամոռութիւնը, նոյն սէրը դէպի գէնքը, դէպի պսպղուն իրեղէնները։

Այսօր—շարունակում է Ռիբո—ցեղական ժառանգականութեան տեսակէտից հետաքրքրական նմուշներ կարող են լինել երկու ժողովուրդ։ Հրէաները և գնչուները (ցիգան), առաջինը՝ իբրև հնադարեան քաղաքակրթութեան մի ազգ, երկրորդը՝ իբրև մի ցեղ, որ այսօր դարշում է քաղաքակրթութիւնից։

Երկուսն էլ պահպանել են իրենց դարաւոր յատկանիշները։ Գնչուները արգէն կորչում են, շուտով նրանց հետքը այլ ևս չի երևալ։

Ժառանգական են դարաւոր ազգայնական, ցեղական հակումները, ժառանգական են ընտանեկան, տոհմական այս կամ այն բնորոշ ընդունակութիւնները։ Անթիւ օրինակներ կան, բայց չենք ուղղում աւելի հեռու ձգելի ժառանգական են ընդհանրապէս այն բոլոր առանձնայատոկութիւնները, որոնք երկար տարիների ընթացքում դոյզութեան կուի մէջ, բնական կամ արւեստական ընտրութեան շնորհիւ, անընդհատ վարժութիւնների առարկայ են եղել։ Նոյնը ասել է Լամարկը, նոյնը պնդում է այսօր Վայսմանը։

Երաւ է, երեխան իւր ծնողների անհատապէս ձեռք բերած գծերը չի ժառանգում, բայց չի նշանակում, որ քրդի լամուկը, եթէ ծնելու օրից եւրոպա ընկնի, նոյն ընդունակութիւնները և նոյն առաջադիմութիւնը ցոյց կը տայ դպրոցական նստարանի վրաց, ինչ որ դիցուք շւէցարացու կամ անգլիացու զաւակը։

Միջավացը, կրթութիւնը տարբեր կերպով են ազդում տար-

¹⁾ Th. Ribot, L'hérité psychologique.

բեր ցեղերի պատկանող անհատների վրայ; Որոշ հակումներ (չասենք «բնածին») արդէն սաղմնային դրութեամբ թագնւած են նորածին երեխայի մէջ:

Tabula rasa. ի դոքտրինը վազուց յաղթահարւած է: «Ամեն մարդ,—ասում է Խընանը—ամեն մի հանճար կամ տաղանդ հանդիսանում է մեր ազգերի առաջ իրեւ անթիւ սերունդների միջոցով դարերից ի վեր ամբարւած կապիտալ: Դաղափարները, բարոյական ու մուաւոր ընդունակութիւնները ենթակաց են նոյն մշտնջենաւոր էւոլիցիային, որը այսօր դարձել է նշանաբան ամեն մի գլուխական հետազօտութեան:

*
* *

«Եթէ—ասում է Հէկկել—Դարւինի «ընտրութեան թէօրիան» բացատրում է օրգանական կեանքի բազմազան երևոյթները, ապա նա կարող է մարդկային կեանքի երևոյթներն ևս բացատրել նոյն պատճառներով: Մարդը նոյն ողնաշարաւոր կենդանին է, միայն բարձրագոյն զարգացման տէր, և մարդկային հասարակական կեանքի բոլոր կողմերը իրենց սաղմնային դրութեամբ պոյութիւն ունին նաև անասնական աշխարհումն:

Որքան վկայում է մեզ հասարակական գիտութիւնների ներկայ վիճակը,—անկարելի է համաձայնել Հէկկելի այդ կարծիքին: Բնագէտները ընդհանուրապէս սիրում են բնական գիտութիւնների օրէնքները վերագրել և մարդկային հասարակութեան: Սակայն այդ չի աջողւում նրանց, ինչպէս մենք աւելի ուշ կը տեսնենք:

Մենք կը տեսնենք, որ Հէկկելի կարծիքը մասամբ միայն ճիշտ է, որ մարդկային հասարակութիւնը թէպէտ և բնական շարունակութիւն է անասնական հասարակութեան, այնու ամենայնիւ ունի իր էւոլիցիայի յատուկ օրէնքները: Մենք կը տեսնենք, որ հասարակական երևոյթները հասարակական պատճառներով են բացատըրւում, ինչպէս բնական երևոյթները բացատրւում են լնական պատճառներով:

Ամփոփենք Դարւինիզմի մասին մեր ասածները և ապա թւենք այն գլխաւոր առարկութիւնները, որոնք հրատարակում են այդ թէօրիայի դէմ:

Արդ, բոլոր ներկայումս գոյութիւն ունեցող անասնական ու բուսական տեսակները զարգացել են նախնական մի քանի տեսակներից, և այդ զարգացումը (évolution) բացատրվում է բնական ընտրութիւնով: Բնական ընտրութիւնը կատարվում է գոյութեան կուի միջոցով: Վերջինս բղխում է այն հիմնական իրողութիւնից, որ ծնունդ առնող կենդանական ու բուսական ասպմերի թիւը հսկայական է, անվերջանալի, և որովհետեւ բոլորի համար մնունդ չկայ, — նրանցից քչերն են միայն ապրում ու բազմանում: Կուի մէջ յաղթողները ընդմիշտ անդունդ են զնում, իսկ յաղթողները բազմացնում են իրենց սերունդը և ասպահով են դարձնում հեռաւոր սերունդների գոյութիւնը: Այդ դարաւոր էւոլիւցիայի մէջ անընդհատ գործում են երկու ոչժեր, մէկը առաջադիմական — յարմարումը, միւսը՝ պահպանողական — ժառանգականութիւնը: Սերունդները անվերջանալի շարքով յաջորդում են իրար ժառանգարար տալով միմեանց որոշ, տեսղական յատկութիւններ և միաժամանակ անդապար տարբերւելով սկզբնական ձևից, անդապար կերպարանափոխելով:

* * *

Կան երկու կարգի առարկութիւններ Դարւինիզմի դէմ: 1) Կրօնական, 2) Գիտական: Կրօնական առարկութիւնները մենք կը թողնենք, քանի որ նրանք լուրջ գիտական վիճաբանութեան չեն կարող ենթարկել: Տեսնենք, թէ ի՞նչ է առարկում բանականութիւնը:

Ա) Առաջին և ամենազլիսաւոր առարկութիւնը, որ սովորաբար բարձրացնում են էւոլիւցիական թէօրիայի դէմ, այն է՝ որ տեսակների (Art) և սեռերի (Gattung) մէջ տեղը չկան անցողական ձևեր (Zwischenformen), որոնք կապէին, շղթայէին նրանց իրար հետ:

Սակայն շնորհիւ այն բազմաթիւ գիւտերին, որոնք մինչև օրս եղել են կենդանաբանութեան, բուսաբանութեան և պալէօնոլոգիայի աշխարհում, վկայում են, որ այդ անցողական, կապող ձևերը կան: Իսկ եթէ շատերը բացակայում են, այդ էլ իհարկ է նրանից է, որ պալէօնոլոգիան դեռ շատ ջահել է, գեռ չի զարգացած: Այսօր գոյութիւն ունին 300.000 անասնական տեսակներ, իսկ դէօլո-

գիրական պեղումներից առաջացել են դեռ միայն 80.000։ Մնացած-ներն էլ անշուշտ հանդէս կը գան ժամանակի լնթացքում։ Պէտք է ի նկատի առնել և այն հանգամանքը, որ երկրային մակերեւոյթի հազիւ $\frac{1}{1000}$ մասը միայն հետազոտած է մինչև օրս։

Բ) Երկրորդ առարկութիւնը վերաբերում է նպատակայարմար օրգաններին։ «Ինչպէս բացատրել այնպիսի բարդ օրգանների գոյացումը, ինչպիսին է աչքը, ականջը ևայլն, որոնք կազմակերպել են որոշ նպատակների համար և այնքան հրաշալի կառարելագործման են հասել։»

Հակաէւոլիւցիօնիստները, իբրև գէօլոգիական սկզբունքի ջերմ պաշտպաններ, աչքի, ականջի շինութեան մէջ ևս տեսնում են հախախնամութեան մատը։ Սակայն միմիայն Դարւինի թեօրիան է, որ լոյս է ափուում այդ կնճռու հարցի վրայ Բնական ընարողութիւնը, որ մի կոյր ճակատադրական ոյժ է, որ չգիտէ որոշ դիտաւորութիւններով, որոշ նպատակներով գործել, — հասցնում է ամենաանկատար, պարզ օրգանները ամենակատարեալ դրութեան, և այն՝ անդիտակցաբար, մեքենայաբար։

Տէլէօլոգիայի, ճնպատակայարմարութեան պաշտպանները պընդում են, որ ընդհանրապէս կենդանու ամեն մի օրգանը ևսեղծւած է որոշ Փունկցիաների (պաշտօնների) համար։ Աչքը — տեսնելու համար, ականջը — լսելու, ձեռքը — բռնելու, ևայլն։ Այդպէս է սահմանել հախախնամութիւնը։

Բայց որ նախախնամութիւնը այդ հարցում ոչ մի դեր չունի, դրան պարզ ապացոյց այսպէս կոչւած «սկզբնական օրգանները» (organes rudimentaires) որոնք գտնուում են զանազան կենդանիների մէջ և ոչ մի փունկցիա չեն կատարում։

Կան ստորերկրեայ կենդանիներ, որոնք աչքեր ունին, բայց չեն տեսնում։ Անդադար գործելով գետնի մթին խորքերում, նրանք ընտելացել են իրենց միջավայրին, աչքերը ծածկւած են անթափանցիկ քօղով և արեգակի լոյսը երբէք այնտեղ չի մտնում։ Այդ կենդանիների աչքերը աւելորդ են, նրանք տեսնելու կարիք չեն զուում։

Ուրեմն նախախնամութիւնը մոլորւել է նրանց աչքեր տալով! Կան զեռուններ կղզիների վրայ, որոնք զուրկ են թևերից։

Հարցնում ենք, արդեօք նախախնամութիւնն է դժբազգացրել այդ խեղճերին, զրկելով նրանց թռչելու բազգից։ Ոչ, զա հէնց նրանց բազգից է, եղել Եթէ այդ զեռունները թե ունենալին, պիտի թռչելին, բարձրանալին օդ, բայց չը որ կղզի է, քամին կարող էր մղել նրանց զէպի ծովը, և այնտեղ նրանք պիտի կորչէին։ Նախախնամութիւնը այսուղ գործ չունի։ Չեռունները միայն յարմարւել են իրենց միջավայրին, իրենց կեանքի պայմաններին։ Գոյութեան կուրի մէջ ձեռնտու է եղել նրանց թե չունենալը և նրանք չեն զարգացրել թեւրը։ Ահա ձեզ պարզ, թնական բացատրութիւն։ Դրանով են բացատրում նաև շատ ուրիշ երևոյթներ։

Ինչու օձը, խլիզը միմիայն մի հատ թռք ունի, իսկ միւսը չկաց կամ սկզբնական, սաղմնալին դրութեան մէջ է։ Պատճառը հասկանալի է։ Այդ կենդանիները դարերի ընթացքում կենսական պայմաններին յարմարւելով, միշտ աւելի և աւելի ձգել են, երկարացրել իրենց մարմինները և այնքան են նեղացել, որ երկու թռք այլ ևս անհնարին է եղել պահելը. այդ պատճառով աւելի ձեռնտու է եղել փոխանակ երկուսի՝ ունենալ մի հատ թռք և աւելի մեծ, աւելի զարգացած։ Աւրեմն մի թռքը անդադար վարժեցրել են, միւսը՝ ոչ, մինը զարգացրել է միւսի հաշւով։ Գոյութեան կուրի ազդեցութեան տակ, կենդանիները յարմարւում են միջավայրի պայմաններին, և այդ յարմարւելու միջոցին ոմանք նոր օրգաններ են ձեռք բերում, ոմանք էլ կորցնում են հին օրգանները։

Հէնց այդ ֆակտի մէջ է կայանում այն նշանաւոր օրգանական ալբոզրէսը (յառաջդիմութիւն), որի մասին այնքան վիճել են և դեռ վիճում են։

Ամեն մի աարբերականութիւն (գիշերենցիացիա, Différentiation) պրոցրես է—այսպէս էին առում առաջներում։ Եւ հէնց Դարւինն էլ նոյնն է ասում։ Նրա կարծիքով օրգանական պրոցրէսը կայանում է օրգանների աստիճանական ապակենարոնացման մէջ։ Աշխատանքի բաժանումը աւելի և աւելի զորդանում է, հետզիւոէ նոր-նոր օրգաններ են առաջանում, որոնցից իրաքանչիւրը որոշ յատուկ ֆունկցիա է կատարում։

Բայց այդ կարծիքը այսօր ջրւած է։ Մենք տեսանք թէ ին-

պէս շատ կենդանիներ, կորցնելով իրենց այս կամ այն օրգանը՝ աւելի աջող կերպով են մղում գոյութեան կռիւը, մենք տեսանք թէ ինչպէս յայտնի զեռունները (կղզիաբնակ) կորցնում են իրենց թեերը. օձերը խլէզները ոչնչացնում են իրենց մի թղթը—և այդ պիտով իրենց աւելի նպաստաւոր դիրք են տալիս կեանքի կռւի մէջ։ Նոյն կեանքի կռււը ստիպում է որոշ տեսակի կենդանիներին ոչնչացնել իրենց ժառանդած այս կամ՝ այն օրգանները և ընտելանալ պարաղիտական կեանքին Սրանք կորցնում են և ջղացին սիստեմը, և զգացարանքների օրգանները և ազատ շարժւելու ընդունակութիւնը—կորցնում են ամեն բան... Ինչո՞ւ համար. հարկաւ, երկար շարունակելու համար։

Օրգանների կորուսոր թերեւ ինքն ըստինքեան յետաղիմութիւն է, բայց քանի որ այդ կորուսոր կենդանիների համար նպաստաւոր է, ուրեմն նայ առաջադիմութիւն է (պրոգրէս)։

Ապա ուրիմն ամեն մի տարբերականութիւն՝ յառաջդիմութիւն չէ և ոչ էլ ամեն մի յառաջդիմութիւն—տարբերականութիւնն Հետաքրքիր է, ինչպէս Դարւինիզմին հետեւզ սոցիոլոգները աշխատում են զործադրել օրգանական պրոգրէսի թէօրիան հասարակական¹⁾ կեանքի մէջ։

Բազմաթիւ են ապրոգրէսի ձևակերպութիւնները։

Սպենսէրը՝ Դարւինի հարազատ աշակերտը՝ որին կնքում են այսօր սոցիալական Դարւինա անունով, պնդում է, որ հասարակական սլրոգրէսը աստիճանական տարբերականութիւն է, աստիճանական փոփոխութիւն համատեսակից (homogène,)—դէպի անմիտեսակը (hétréogène, այլակերպ)։ Մարդկացին հասարակութիւնը սկզբում մի պարզ, միապատճ մասսա էր, ուր չկար աշխատանքի բաժանում, ուր ամեն մարդ կատարում էր ամեն պաշտօն։ Բայց հետզետէ այդ մասսան գրգացաւ, տարբերականութեան ենթարկեց։ Աշխատանքի բաժանումը առաջ գնաց հսկայական քայլերով, առաջ բերաւ հասարակական նոր-նոր դասակարգեր՝ նոր-նոր ֆունկցիաներով—ահաւասիկ պրոգրէսը։ Նա բերաւ հասցրեց մարդկացին հասարակութիւնը ներկայ «բաղդաւոր» դրութեան, ուր աշխատանքի

¹⁾ Մենք միշտ հասկանում ենք «մարդկակին» հասարակութիւն։

բաժանումը այսքան զարգացել, կատարելագործւել է, ուր ամեն մարդ կապիտալիստական հսկայական արդիւնագործութեան մէջ ունի իւր յատուկ, որոշ պաշտօնները, ևայլն, ևայլն. միշտ, ուրեմն, տարբերականութիւն, միշտ ապակենտրոնացում, միշտ միատեսակից, միատարբից—անմիատարբը:

Նայ ուրիշ սուբեկտիւ սոցիոլոգներ, ի միջի այլոց և ուռու գրող Միխայլովսկին, գտան, որ Սպենսերի գատողութիւնները չափից գուրս դաժան են, իստասիրութեան մէջ որ այն կապիտալիստական հասարակութիւնը, որի բարիքները այնքան հռչակում է Սպենսերը, հէնց իւր ծայրայեղ տպակենտրոնացման փաստով հասցրել է ամբողջ բանւոր ընդհանրութիւնը անասնական, անշարժ գրութեան: Զէ որ այսօրւայ գործարանական բանւորը, կատարելով մշտնջենապէս միւնոյն ֆունկցիան, միւնոյն տաղսկալի պաշտօնը, դառնում է աւտոմատ, գործում է իբրև մեքենայ, իբրև մեքենայի մի մասը: Բթանում է բանւորը, խլանում են նրա բոլոր ընդունակութիւնները:

Միխայլովսկին փորձեց հակադրել Սպենսերին «վրոգրէսի» մի ուրիշ ձեւակերպութիւն, բայց նա ընկատ մի այլ ծայրայեղութեան մէջ:

Պրոգրէսը ռուս սոցիոգի կարծիքով, կայանում է նրանում՝ որ աշխատանքի բաժանումը միշտ աւելի և աւելի քշանում է հասարակութեան անդամների մէջ, իսկ միւս կողմից նոյն աշխատանքի բաժանումը աւելի կատարեալ և բազմակողմանի կերպով զարգանում է անհատի զանազան օրգանների մէջ:

Ճիշտ ձեւակերպութիւնը չենք ցիշում, բայց կարծում ենք, որ միտքն այս է մօտաւորապէս:

Երկու կողմով հիւանդ է այս ձեւակերպութիւնը: Նախ նաև՝ ի համապատասխանում իրականութեան: Սպենսերի մեծ առաւելութիւնը նրա մէջ է, որ նա հասարակական խնդիրներում օբեկտիւ է դատում, հիմնած իրական ֆակտերի, պատմական էւոլյուցիայի վրայ.—այդտեղ է հէնց նրա գլխաւոր արժանաւորութիւնը՝ իբրև սոցիոգի:

Մինչդեռ Ուիխայլովսկին՝ իբրև սուբեկտիւիստ՝ իր անձնական ցանկութիւնն է օրէնք զարձնում:

Նա ուզում է, որ աշխատանքի բաժանումը հետզհետէ զարգանայ անհատի տարբեր օրգանների մէջ, ուրիշ խօսքով՝ նա ուղղում է, որ անհատը հնարաւորութիւն ունենայ զարգացնելու իւր բոլոր բազմակողմանի ֆիզիկական ու հոգեկան կարողութիւնները. խօսք չկայ, ինքն ըստ ինքեան շատ համակրելի միտք: Աակայն նա իրականութիւնից չէ բղխում, այլ իդէալականից. Միիայլովսկին ներկայացնում է մեզ ցանկալին և ոչ իրականը: Պատմական ճշմարտութիւնը մնում է անշռուշտ Սպենսերի կողմը:

Մի ուրիշ բան, որ աչքի է ընկնում ոռուս սոցիոլոգի ձեւակերպութեան մէջ, այդ այն է, որ նրա կարծիքով ապագան պատկանում է անհատուկան լիակատար ապակենդրոնացման—մի այնպիսի ապակենդրոնացման, որ քարողում է անիշխանականութեան հայր Շտիրնէրը¹⁾:

Այդ ծայրայեղ անհատական ապակենդրոնացումը ուրիշ խօսքով կոչւում է անիշխանական անհատականութիւն:

Սպենսերն և ս ինդիւիդուալիստ է, բայց մանչեստրական, բուրժուական մոքով:

Անհատը ազատ է: Ազատ է գործարանում ծախելու իւր մկանների ոյժը, բայց և ազատ է փողոցներում աշխատազուրկ թափառելու, ազատ է ապրելու, բայց և ազատ է քաղցից մեռնելու...

Ահա այս անողորմ բուրժուական ինդիւիդուալիզմի դէմ է, որ Միիայլովսկին դնում է իւր անիշխանական ինդիւիդուալիզմը:

Ազատ է անհատը, (ի հարկէ—ապագայում, իդէալական հասարակութեան մէջ), ազատ հասարակական, ընկերական ամեն տեսակ կապերից ու ճնշումներից, մեն-մենակ աշխատում է, մեն-մենակ լրացնում իր բոլոր կարիքները, ազատ է, ինքնուրոյն, լիովին ապակենդրոնացած:

Բայց սա էլ մագնիսի միւս բևեռն է, սա էլ հակառակ ծայրայեղութիւնն է...

Կը գայ արդեօք մի այդպիսի երազական ապագայ: Կը գայ մի ժամանակ, երբ մարդարարածը կ'ապրէ առանձնացած, անկախ որ և է հասարակական կամ ընկերական կապերից, լիակատար ապա-

¹⁾ Max Stirner.—„Der Einzige und sein Eigentum“.

կենդրոնացման մէջ... Կո գայ արդեօք մի օր, երբ աշխարհիս վրայ կը թագաւորէ Շտիրնէրի «Անհատը» (Der Einzige) կամ Նիշէի Գերմարզը (Uebermensch):

Խնդիւիդուալիստ-անիշխանականները, թերեւս և Միխայլովսկին, տածում են արդ յոյսը, բայց հասարակական գիտութիւնը այդպիսի մարդարէութիւններ չի անում, այլ նա հաստատում է, որ Ոռբին-զոնը չի եղել նախապատմական ժամանակներում՝ և ապադայում ևս երբէք չպիտի լինի:

Փակենք պրոգրէսի հարցը:

Այժմ մի փոքր էլ զբաղւենք Դարւինիզմի ճշուժեան ապացուցներով: Այդ ապացուցները մասամբ անուղղակի կերպով երևան են գալիս արդէն մեր տեսութեան մէջ:

Մենք դեռ յօդւածիս սկզբում տեսանք, թէ ինչպէս հեշտ կերպով ջրում է Աստւածաշնչի «Ժէօրիան» տեսակների սուեզման մասին:

Դրանից յետոյ մենք բերինք գիտնական մարդկանց առարկութիւնները, որոնք նոյնպէս ջրում են: Կրօնին և նրա ժամանակակից արբանեակներին մենք ձայն շտւինք այդ խնդրում: Հոգեորականը, մինչեւ նա կրօնական աստիճանաւոր է իր Փարազայի մէջ, չի կարող ձայն ունենալ բնագիտական խնդիրներում: Նրա դատողութիւնը Դարւինական ժէօրիայի վերաբերմամբ նոյնքան զուրկ է արժէքից, որքան մի կոշկակարինը կամ մի հացթուինը:

* *

Բնագիտութեան նոր ճիւղերի մէջ էմբրիոլոգիան է, (Embryologie, սաղմնաբանութիւն), որ հաստատուն հիմք է տալիս դարւինականութեան: Այդ ճիւղը ուսումնասիրում է բուս սկան և կենդանական սաղմերը իրենց աստիճանական զարգացման մէջ: Նա ցոյց է տալիս, որ կայ մի զարմանալի ներդաշնակութիւն մի կողմից՝ օրգանական սաղմերի այդ աստիճանական զարգացման, միւս կողմից՝ երկրագնդի վրայ յաջորդաբար առաջացած բոյսերի ու կենդանիների երկարաձիգ շնթայի մէջ տեղը:

Աւրիշ խօսքերով՝ օրգանական անհատի սաղմազին զարգացումը (էւոլյուցիան) զուգակցաբար է գնում ամբողջ տոհմի (Stamm) պալէօնտոլոգիական¹⁾ զարգացման հետ:

Անհատի զարգացումը միայն կարճ և արագընթաց կրկնութիւն է իւր տոհմի (պապական շղթայի) զարգացման,—և այդ արագ կրկնութիւնը տեղի ունի շնորհիւ այն երկու նշանաւոր օրէնքների ժողովադարձ ներդործութեան, որոնք կոչւում են յարմարումն և ժառանգականութիւն (Հեկկել):

Մարդս իր անհատական գոյութեան սկզբում մի հասարակ ձու է, մի փոքրիկ բջիջ. նոյն բանն է ներկայացնում ամեն մի անասնական օրգանիզմ, որ ծագում է սեռական թեղմնաւորութեան միջոցով: Մարդկացին ձուն էապէս նման է ուրիշ կաթնասուն կենդանիների ձուերին, իսկ բարձրագոյն կաթնասունների ձուից ոչնչով չի տարբերում: Կապէի ձուն ոչնչով չի տարբերում մարդու ձուից, մարդունը — ձիու կամ շան ձուից:

Աստիճանաբար զարգանալով և տարբերականութեան ենթարկելով՝ մարդկացին սաղմը անցնում է այն բոլոր ֆաղիսները, որ անցել են նրա անասնական նախահայրերը անչիշատակ ժամանակներից ի վեր, միլիօնաւոր տարիների ընթացքում:

Եւ իրաւ, մարդկացին կամ բարձր-կենդանական սաղմի զարգացման մէջ կայ մի շրջան, որը անց են կացնում նաև սոորին ձըկները, յետոց այդ ձկանման մարդկացին մարմինը ընդունում է երկակիենցաղ արարածների (Amphibia) կերպարանք. ապա աւելի ուշ, կերպարանափոխելով, անցնում է կաթնասունների տարբեր աստիճանները, մինչեւ որ ստանում է մարդկացին կերպարանք:

Երկրագնդի պատմութեան մէջ մենք տեսնում ենք մարդու հեռաւոր պապերի նոյն յաջորդական շարքը. նախ՝ ձկներ, ապա երկակիենցաղ կենդանիներ, ապա և սոորին և բարձրագոյն կաթնասուններ (Հեկկել): Ներդաշնակութիւնը ակներև է. մենք

¹⁾ Պալէօնտոլոգիան բնագիտութեան մի ճիւղն է, որ զբաղւում է, քոչսերի և կենդանիների մեռած տեսակների մնացորդներով, որ գտնում են գհանի տակ.

այդ աւելի պարզ կը տեսնենք, երբ կը դիտենք երկրագնդի էւոլիւցիան:

*
* *

Դարւինը դիտմամբ աւելի ուշ հրատարակեց «մարդու ծագման» թէօրիան (Pithecoïdентheorie): «Վախենում էր, մի գուցէ այդ մեծ և անակնկալը յանկարծակի խրոնեցնի հասարակութիւնը և մեծ, արտասովոր յուզմունք առաջացնի ընթերցող աշխարհում. իսկ այդ հանդամանքը խոշոր արգելք կը լինէր նրա թէօրիայի տարածմանը»:

Այդ պատճառով, նա վճռել էր կամաց-կամաց ընտելացնել հասարակական կարծիքը նոր ճշմարտութիւններին: Նախ հրատարակեց «Տեսակների ծագումը» (1859), իսկ 12 տարուց յետոյ, 1871 թւականին,—իւր մեծ հանճարի փառահեղ ծնունդը՝ «Մարդու ծագումը»:

Երկրորդը առաջնի տրամաբանական հետեւանքն է:

Մարդկացին ծագման թէօրիան մի մասն է ընդհանուր ծագման թէօրիայի: Այս վերջինը հիմնաւորւեց—որպէս տեսանք,—ինդուկցիայի ճանապարհով (Induction), այսինքն առաջ եկաւ իբրև անթիւ ֆակտերի վրայ հիմնած ընդհանուր օրէնք: Իսկ առաջինը (մարդու ծագումը) հանդիսանում է մի առանձին դէղուկցիայի օրէնք (déduction), մի մասնակի եզրակացութիւն՝ ընդհանուր օրէնքից:

Մարդն ևս անպայման ենթարկում է նոյն ընդհանուր օրէնքին, որովհետև բնական արարածների մէջ նա չի կարող բացառութիւն կազմել:

Առ այժմ այսքան: Յետոյ կրկին կը դառնանք այդ ինդրին:

*
* *

Այժմ մենք հրաժեշտ ենք տալիս Դարւինից:

Մի առժամանակ կը հեռանանք երկրագնդի սահմաններից, կ'անցնենք տիեզերքի անհուն տարածութեան մէջ ու այնուղեղ կը կատարենք մի փոքրիկ երկարացական ճանապարհորդութիւն: Զէ՞ որ տիեզերքն էլ ունի իւր էւոլիւցիան, չէ՞ որ արեգակը, լուսինը, եր-

կընային բոլոր մոլորակներն ևս պատրաստի չեն ստեղծւել «ամենաա-
կարող արարչից», այլ ունեցել են իրենց դարաւոր զարգացման
պատմութիւնը՝ Համառօտակի կը հետևենք այդ սպատմութեան,
կը տեսնենք թէ ինչպէս սկզբնական «մառախլային մասսայից» ի շարս
այլ տիեզերական մարմինների, անջատուել է մեր երկիրը. կը տես-
նենք, թէ ինչպէս երկրային կեղեց հետզհետէ սառչելով՝ այնտեղ
ծնունդ է առել կեանքը, և թէ ինչպէս աստիճանաբար զարգացել
են մարմինները սկզբնական մոնէրից սկսած՝ մինչև Մարդկապիկը:

ՊԱՐԱԴԻՔՍ

ԱՐԾԱԿ ԱԹԱՑԵԱՆԻ

Ես քեզ սիրում եմ, բայց ոչ իբրև մի երկնալին պատկեր,
ոչ թէ իբրև մի սրբազն ոգի եթերի խորքում,
եւ ոչ թէ իբրև անմոռանալի մի շարք երազներ,
եւ ոչ էլ ինչպէս յամառ դիցուհու աշերն են սիրում։

Ես քեզ սիրում եմ ոչ իբրև մի վարդ բացւած մայիսին,
եւ ոչ իբրև մի զրախտացին հնչիւն սուրբ ու ոլորուն,
որ ելեէջով կոհակներ տալով զերում է հոգին,
Կամ իբր մի ասող կէսպիշերացին վառ ու սոսպզուն,

Ոչ այնպէս, որպէս ազնիւ կրքերի ովկեանն են սիրում։
Կամ որպէս մի ասրուկ սուրբ ազատութեան տենչերով վառւած։
Ազօթք է ձօնում նորա Արարչին և վեր լնծայում
Դէպի երկնքի անհուն խորքերը, ուր նա է բազմած։

Ես չեմ ազօթում պատկերիդ առաջ այնպէս, թագուհի!
Հեռու ինձանից, բայց ոչ իմ հոգուց... այնուղ մի սեղան
Զոհաբերութեան թռղ մինչ յաւիտեան քեզ համար վառւի,
եւ թող տառապեմ այդ սուրբ կրակով մշտնջենական։

Էլ ի՞նչ կայ բարձր սիրոյ կրակից տիեզերքի մէջ,
էլ ի՞նչ կայ անհուն, երբ սիրոյ ասողը բազմած է հոգում,
եւ տառապանքի ողջ լիացումը ազու և անվերջ
Վայելւում է միշտ մինչև գերեզման երազի գրկում...

ԱՆՏԱՐԻ ԵՒ ԴԱՇՏԱՎԱՅՐԻ¹⁾

ՏՈՒԻՐԳԵՆԵՀԻԻՑ—ԹԱՐԳԱՄ. ԶԱՂԱԼ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

...Փռքը առ փոքր ոկտեցին նրան յետ քարշել՝ գիւղը, խիտ պարտէզը, որի լորենիները այնպէս ահագին, այնպէս ստուերաշտու են և կուսական շուշաններն այնպէս անուշաբոյր. ուր բոլորակ թիերն ամբարտակից կարգով կախւել են ջրի վերայ, ուր պարարտ արտի մօտ աճում է փարթամ կաղնին, ուր բուրում են կանեփն ու եղինջը... Այն տեղերը, այն լայնատարած դաշտերն, ուր փափուկ, թաւշանման հողն է սեին տալիս, որտեղ հաճարը՝ ուր էլ նայելու լինիք՝ հանդարտ հօրանց է գնումն, մեղմ ծփուղի, և զեղին շողքը լնինում թափանցիկ, սպիտակ, բոլորաձև ամպակոյտերի միջից. այնտեղ ախորժելի է...

(Մի պոէմայից, որ մոռացութեան է տրւել):

Գիտէք, արդեօք, ինչպիսի գւարճութիւն է՝ լուսադէմին դուրս գնալ դէսլի բնութեան ծրցը: Դուրս էք ելնում պատշտամը... Գորչ երկնքի վրայ տեղակա թարթափում են աստղերը. խոնաւ հովր երբեմնակի փչում է վետ-վէտ. լուսում է զիշերւայ զապւած փըսփըսոցը. ստուերով ողողւած՝ ծառերը աղմկում են թոյլ կերպով:

1) «Записки охотника»-ի վերջաբանը.

Ահա գորդը ձգում են կառասացլի վերայ, ոտերիդ մօտ դնում են հեշտաենը՝ արկղի մէջ. ձիերը կուչ են գալիս, փոնչում և վեր-վեր են անում ոտները, վայելուչ ու պերճօրէն. մի զոյգ նոր արթնած սպիտակ սագեր, լուռ և յամբաքայլ արտօրալով, անցնում են ու-ղիով: Ցանկապատի յետել, պարտիզի մէջ, խաղաղ կերպով խորն-փում է պահապանը. ամեն մի հնչիւն կարծես կանգնում է պաղ օդի մէջ, կանգնում և չի անցնում: Ահա գուք նստեցիք. ձիերը միանգամից շարժւեցին! բարձր զղրդաց կառասացլը... Դուք գնում էք—անցնում էք եկեղեցու մօտով, բլրակից դէպի աջ, ամբարտակի վերայով... Մշուշը հաղիւ է սկսել բարձրանալ լճակից: Դուք մի քիչ ցուրտ էք զգում, վերարկուի թիկնոցով ծածկում էք ձեր երեսը. սկսում էք նիրհել: Զիերը ուժգին չոչչպացնում են ջրալից փոսերում. կառապանը սուլում-շւացնում է: Բայց ահա անցաք մօտ չորս վերատ... երկնքի ծայրը բոցալառում է, թիւպենիների վե-րայ արթնանում են ճայերը և անշնորհքութեամբ թըռ-չում են մի ծառից միւսը. ճնճղուկները ճռւղում են աղօտ երեա-ցող դէղերի մօտ: Օդը լուսաւորւում է, ճանապարհը աւելի է երե-ւում, երկինքը սլարգւում է, ամպերը սպիտակում են, դաշտերը կա-նաչի են տալիս: Խրճիթներում բոցալառած այրւում են մար-դերը, զարպաների յետել լսում են խոպտ ճախներ: Խսկ այդ միջոցին արշալոյսը վառում է. ահա ոսկէ շերտերը ձգւեցին երկնքի վերայ, ձորակներում մշուշը ոլորապտոյտ բարձրանում է վեր. ար-տոյտները զբնգուն երգում են, առաւտօտեան հովը փչում է և հան-դարտ դուրս է լողում բոսորագոյն արեգակը: Լոյսը հեղեղում է ամեն բան. ձեր սիրտը թրթռում է, ինչպէս թռչնակ: Հով է, զւարթագին, հաճելի! Խրջապատը տեսնեում է հեռուն: Ահա ան-տառակի ետեկի գիւղը. ահա մի քիչ դէնը միւսը՝ սպիտակ եկեղե-ցիով, ահա թիւտենիների անտառակը լեռան վերայ. Նրա յետել ճախնուտը, ուր և գնում էք... Յառաջ, իմ ձիեր, յառաջ! Արագ ընթացէք!... Մօտ երեք վերստ է մնացել, ոչ աւել: Արեգակը արագ բարձրանում է. երկինքը սլարդ է. Նղանակը դեղեցիկ է լինելու: Նախիրը ձգւել է զիւղից դէպի մեզ: Դուք բարձրացաք սարը... Խնչպիսի տեսարան է! Դետը ոլորապտոյտ անցնում է մօտ տասը վերստ, աղօտ կապտին տալով շամանդաղի միջով. Նրա յետել հիւ-

թալի, կանաչ մարգերը. մարգերից յետոց զառիվայր բլրակները. հեռուում եղդիւրիկներն են (ԿԻԲԻԸ) աղմուկով պտոյտ տալիս ճանձի վերայ. փայլվլոցով ողողւած խոնաւ օդի միջով պարզ երեսում է հեռուն... ամառւայ նման չէ: Խնչպէս ազատ է շնչում կուրծքդ, ինչպէս արագ են շարժուում անդամներդ, ինչպէս ամրանում է գարնան թարմ շնչով ընդդրկւած ամբողջ մարդը!...

Խսկ ամարացին, յուլիսեան առաւոտը! Ո՞վ է՝ բացի որսորդից՝ փորձել, թէ որքան գւարճալի է լուսադէմին թփերի մէջ քարշ գալը: Ձեր ոտների հետքը կանաչ գծերով պառկում է ցողապատ, սպիտակացած խոտի վերայ: Հէնց որ շարժում էք թաց թուփիը, — կարծում էք թէ ձեզ սրսկում են գիշերւաց հաւաքւած տաք բուրմունքով. օդը ամբողջովին կշտացած է օշինդրի թարմ դառնութեամբ, հաղարտերևուկի և առւոյտի մեղրով. հեռուում պատի նման կանգնած է կաղնեաց անտառը և փայլում ու կարմրին է տալիս արեկի ճառագայթներից. դեռ հով է, բայց արդէն զգացւում է, որ շուտով կը տկաւի տօթը: Մարդու գլուխը թոյլ կերպով պտոյտ է գալիս անոյց բուրմունքի առատութիւնից: Թփերը վերջ չունեն: Տեղ-տեղ միայն հեռուում գեղնի է տալիս հասնող հանարը, նեղ շերտիկներով կարմրին է տալիս ձիակորեկը (գրեչիք): Ահա ճռընչում է սայլը. դանդաղորէն մօտենում է գեղջուկը, ձին վազօրօք կանգնեցնելով ծառի հովանու տակ... Դուք բարեցիք նրան, հեռացաք — և գերանդու զբնգուն ձանը տարածւում է ձեր յետելը: Արեգակը աւելի և աւելի է բարձրանում: Խոտը արագօրէն չորանում է: Ահա արդէն տօթ է: Սացնում է մի ժամ, միւսը... Երկինքը սկանում է ծայրերից. խեղդող տօթով է շնչում անշարժ օդը: — Բարեկամ, այստեղ մւր կարելի է ջուր խմելը, հարցնում էք հնձողից: — Ահա այն ձորակի մէջ աղբիւր կայ: Ոլորուն խոտերի հետ խճճւած՝ կաղնեաց խիտ թփերի միջով իջնում էք ձորակը: Ճիշտ է. դահաւանդի տակ թագնւած է աղբիւրը. կաղնեաց թուփը աղահօրէն տարածել է ջրի վերայ իր թաթաձև ոստերը. արծաթափայլ, մեծ-մեծ պղպջակները, երերւելով, բարձրանում են մանրիկ, թաւշեաց մամուռով ծածկւած յատակից: Ընկնում էք հողի վերայ, մի լաւ խմում աղբիւրից, բայց ծուլանում էք, չէք ուզում շարժւիլ: Դուք հովանու տակ էք, շնչում էք բուրալի խոնաւու-

թեամբ. ձեզ հաճելի է, իսկ ձեր գիմացի շողարձակ թփերն այրում և զեղնում են արեգակից: Բայց այս ի՞նչ է: Քամին յանկարծակի թռաւ, անցաւ, ձեր շուրջը օդը ղողաց. արդեօք սա որոտմունք չեր: Դուրս էք գալիս ձորակից... Ի՞նչ արձմագոյն շերտ է երկնակամարի վերաց: Տօթն է թանձրանում, թէ ամպակոյտերն են վրայ գալիս... Բայց ահա մի փոքր փայլատակեց կայծակը... Հը՛, սա ամսին է որոտում! Ձեր շուրջը դեռ պայծառ լուսաւորում է արեգակը. դեռ կարելի է որսալ: Բայց ամպակոյտը մեծանում է. Նրա առաջի ծայրը ձգւում է թենոցի նման, կամարի ձև է սուանում: Խոտը, թփերը, բոլորը յանկարծ մթնագունեցին... Եուտով! ահա, կարծես, այնուեղ խոտի մարադ է երեւում.. շուտով!... Դուք վազեցիք, հասաք, ներս մտաք... Ինչպիսի անձրեւ է, ինչպիսի փայլակ: Տեղ-տեղ յարդեայ կտուրից ջուրը կաթկաթում է բուրալի խոտի վերաց... Բայց ահա արեգակը կրկին սկսեց խայտալ: Փոթորիկն անցաւ. դուրս էք գալիս: Տէր-Աստած, ինչպէս ուրախ է շողշողում ամեն բան ձեր շուրջը, ինչպէս օդը թարմ և նօսր է, ինչպէս բուրում են մորին և սնկերը!...

Բայց ահա իրիկնաղէմ է: Վերջալոյսը սկսեց բոցավառւել հրդեհի նման և ընդգրկեց երկնքի կեսը: Արեգակը մայր մոնելու վերայ է: Օդը մօտիկից առաւել թափանցիկ է, կարծես ապակեայ լինի, իսկ հեռաւում տարածւում է քնքոյշ և, ըստ երեսյթին, տաք մշուշը. քիչ առաջ հեղուկ ոսկով ողողւած մարգերի վերաց, ցողի հետ միասին, իջնում են բաց-կարմիր շողերը. ծառերից, թփերից, խոտի բարձր գէզերից տարածւում են երկար ստւերները... Արեգակը մայր մոռաւ, աստղը վառւեց և դողում է արևմտւոքի հրացեալ ծովում. . Ահա այդ ծովը գունատուում է, երկինքը կապուում. Զոկ-ջոկ ստւերները անհետանում են, օդը լցւում է մառախուզով: Ժամանակ է տուն գնալու, գէպի գիւղ, այն խրճիթը, ուր պիտի գիշերէք: Հրացանը թեղդ ձգելով, քայլերդ արագացնում էք, չնայած ձեր յոդնածութեան... Իսկ այդ միջոցին վրայ է հասնում գիշերը. քսան քայլի վերաց այլ ևս ոչինչ չի երեսում. շները հաղիւ են սպիտակին տալիս խաւարի մէջ: Ահա այսուղ, ու թփերի վերայով, երկնքի ծայրը աղօտ կէրպով պարզւում է... Այդ ի՞նչ է, չըղթէ... Ոչ, դա լուսնակն է դուրս գալիս: Իսկ ահա այնուղ,

դէպի աջ, փայլվում են գիւղի կրակները... Ահա, վերջապէս, և ձեր խրճիթը՝ Պատուհանի միջով տեսնում էք սպիտակ սփռոցով ծածկւած սեղանը, վառւած մոմը, ընթրիքը...

Կամ թէ կը հրամայես լծել կառքը և կը գնաս անտառ սալամն (բանակ) որսալու Զւարձալի է անցնել նեղ ուղիով, որ ընկած է պատի նման կանգնած արտերի միջով։ Հասկերը կամաց դիպչում են երեսիդ, տերեփուկները կպչում են քո ոտներիդ, լորամարգերը աղմկում են շուրջդ, ձին անցնում է արագավազ։ Ահա և անտառը, սուերախիտ և անդորրի Վայելչակազմ և բարձրուղեղ կաղամախները բարձրում փսփսում են վերեխց. թխտենիների կախւած, երկար ճիւղերը հաղիւ են շարժւում. զօրեղ կաղնին, ինչպէս քաջամարտիկ զինւոր, կանգնած է զեղանի լորենու մօտ։ Անցնում էք կանաչ, սուերներից խայտամամուկ դարձած՝ ուղիով, խոշոր զեղնաճանճերը անշարժ կանգնած են ոսկեշող օդի մէջ և յանկարծ թռչում, հեռանում են. մժեղները ոլորապտոյց շարժւում են, փայլելով սաւերում և մժագունելով արեւի դէմ։ Թռչնակները խաղաղ երգում են։ Թուլսկատարի ոսկեաց ձայնիկը զրընգում է անմեղ, անխորհրդապահ բերկութեամբ. նա շատ է սազ գալիս շուշանի բուրմունքին։ Առաջ էք գնում, առաջ, դէպի անտառի խորքերը... Անտառը խոտանում է լուսում է... Անբացատրելի խաղաղութիւն է տիրում հոգուդ. շուրջդ էլ այնպիսի նիրհ է տիրում և այնքան անդորր է։ Բայց ահա վրայ վազեց քամին, և ծառերի կատարները սկսեցին աղմկել, կարծես կոհակներ լինէին ցած իջնելիս։ Նախորդ տարւայ թափւած շառագոյն տերեւների տակից բսել են բարձր խոտեր. մնկերը կանգնած են առանձնակի իրանց վեղոյրների տակ։ Յանկարծ դուրս է թռչում նապաստակը, շունը սրածայն հաջոցով ընկնում է յետեից...

Եւ ինչպէս գեղեցիկ է այդ նոյն անտառը աշնան վերջը, երբ գալիս են կտցարները (ՅՈԼՃԱԽԵՊԻ)! Նրանք չեն մնում անտառի ներսը. պէտք է որոնել ծայրերում։ Քամի չկայ. նոյնսպէս չկան՝ ոչ լոյս, ոչ սուերներ, ոչ շարժում, ոչ շշուկ. մեղմ օդը լի է՝ գինու բուրմունքի նմանող՝ աշնան անուշահոտու թեամբ. բարակ մշուշը հեռուում կանգնած է դեղնած դաշտերի վերաց։ Ծառերի մերկացած շառագոյն ոստերի արանքներով խաղաղ սպիտակին է տալիս ան-

շարժ երկինքը. տեղատեղ լորենիների վերայ կախւած են վերջին ոսկեփայլ տերեները: Խոնաւ զետինը առաձգական է ձեր ոսների տակ. բարձր կանգնած չորացած խոտերը անշարժ են. սարդոստացնը փայլում է գունատւած խոտերի վերայ: Կուրծքի հանդարտ է շընչում, բայց հոգիս տարօրինակ կերպով աղմկում է: Անցնում ես անտառի բերանով, հետևում ես շան ընթացքին, իսկ այդ միջոցին, մեռած և կենդանի, անձկալի պատկերներ, սիրելի դէմքեր են միադընկնում, վաղուց քնած քո նախկին տպաւորութիւնները անսպասելի կերպով արթնանում են. երեւակայութիւնդ ալանում, անցնում է, ինչպէս թռչնակ, բայց և այնպէս որոշակի շարժւում և կանգնում է ձեր աչքերի առաջ: Սիրոդ կամ մէկէն դողում ու արոփում է, բուռն կրքով առաջ է նետում, կամ անդառնալի կերպով խորասուզում է յուշիկների մէջ: Ամբողջ կեանքդ հեշտ և արագ յետ է բացւում ոլորքի նման. մարդ տիրում է իր ամբողջ հոգուն: Եւ շուրջը ոչինչ չի խանդարում նրան—ոչ արեգակ է երեսում, ոչ քամի կայ, ոչ էլ շշուկ...

Իսկ աշնանային պարզ, մի քիչ ցուրտ, առաւօտները նոյն իսկ սառեցնող օրը, երբ թխտենին, առասպելական ծառի նման ամբողջովին ոսկեղէն, զեղեցիկ նկարւում է բաց-կապոյտ երկնքի վերայ, երբ ցած իջած արեգակը արդէն չի տաքացնում, բայց ամառւանից աւելի պայծառ է փայլում. կաղամախի փոքրիկ անտառակը ամբողջովին շողշողում է, թափանցելով, կարծես նրա համար համար հաճելի և հեշտ է մերկ կանգնելը. եղեամը դեռ սպիտակին է տալիս հովհաններում, իսկ թարմ զեփիւուր հանդարտիկ շարժում և քշում է թափւած, կորացած տերեները,—երբ գետի կապոյտ ալիքները ցնծազին սլանում են, համաչափութեամբ բարձրացնելով և իջեցնելով ցրւած սագերին ու բաղերին. հեռում ուռենիներով կիսածածկւած ջրաղացն է թըլիթըլիկում, և վճիռ օդում խայտարդէտ աղաւնիներն են արագ պատոյտ տալիս նրա վերայ...

Գեղեցիկ են նոյնպէս ամարային մշուշապատ օրերը, թէև որսորդները շեն սիրում նրանց: Այզպիսի եղանակներին որսը չի աջողւում. թռչունը դուրս թռչելով ձեր ոտների տակից՝ իսկոյն անհետանում է անշարժ մշուշի փոքր ինչ սպիտակ մէգի մէջ: Բայց ինչպէս հանդարտ է, ինչպէս անասելի կերպով հանդարտ է շուրջդ:

Բոլորը արթնացել են և բոլորը լռում են։ Անցնում էք ծառի մօտով—նա չի շարժւում։ Քնքշանքը տիրել է նրան։ Օդի մէջ հաւասար տարածւած բարակ շամանդաղի միջով ձեր առաջ սւեխն է տալիս երկար ձգւած շերտը։ Դուք ընկունում էք նրան անտառի տեղ։ մօտենում էք, —անտառը դառնում է օշինդրով ծածկւած մի թումբ ակօսամիջում։ Ձեր վերելը, շուրջը—ամեն տեղ մշուշ է... Բայց ահա քամին շարժւում է թեթևակի, բաց-կապոյտ երկնքի մի կտորը երեսում է նօսրացող, ծխի նման բարձրացող մշուշի միջով։ ոսկեփայլ—զեղին ճառագայթը յանկարծակի ներս է սպրիզոմ, ճաճնշափայլ հեղեղով զարկում է դաշտերին, յենուում անտառին, —և ահա կրկին տեսն բան ծածկում՝ է երկար է տեսում այդ մըրցումը։ բայց ինչպէս անասելի կերպով յստակում և փառահեղ է դառնում օրը, երբ լոյսը, վերջապէս տանում է յողթանակը և տաքացած մշուշի վերջին ալիքները կամ դլորւում և փուռում են սփոռոցի նման, կամ զալարում և անհետանում խորունկ, քնքշափայլ բարձրութեան մէջ...

Բայց ահա ճանապարհեցիք դէպի դաշտավայրի այն կողմը, որ տեղով անցնում են մեծ ու փոքր ուղիները։ Շուրջ տասը վերստթափառում էք զիւղամիջի ճանապարհներով, —ահա, վերջապէս, և մեծ ճանապարհը։ Երկար ժամանակ անցնում էք անվերջ կառախմբերի մօտով։ պատահում են սլանդոկներ՝ պատշգամի վերաց հռացող հեշտանուներով, կրնկի վերաց բաց դարպաններով և ջրհորով։ անցնում էք զիւղից զիւղ, անհուն դաշտերով, կանեփի արտերի մօտով։ Կաչաղակները թւոչում են թփից թուփ։ կինարմատները, երկար փոցխերը ձեռքերին, յամրաքայլ անցնում են դաշտերով։ կապոյտ կտաւէ մաշւած բամկոնով անցորդը՝ պարկը շալակած՝ կամաց շարժւում է յոդնած քաղերով։ կալւածտիրոջ՝ ծանրաբեռնուած և յաղթանդամ ու ջարդւած ձիերով լծւած՝ վեցածի կառքը սրարշաւընդառաջում է ձեզ։ Կառքի պատուհանից դուրս է ցցւած բարձի մի ծայրը, իսկ յետեի մասում, խսիրէ քսակի վերայ, պարանից բռնած, վերարկով նստած է՝ մինչև յօնքերը ցեխուած՝ սպասաւորը։ Ահա փոքրիկ դաւառական քաղաքը՝ փայտեաչ ծուռ տնակներով, անվերջ պատւարներով, վաճառականական անբնակ քարուկիր շինութիւններով, խոր ձորակի վերայ լնկած հինաւուրց կամրջով։

Նարունակում՝ էք յառաջ, աւելի յառաջ... Կրկին սկսում է դաշտավայրը՝ նայում ես բարձրութիւնից, — ինչպիսի տեսարան է բացւում։ Մինչև ծայրերը վարած ու ցանած՝ կլոր և ցածր բլրակները ցիրուցան ընկած են ալիքածեւ։ Թփերով ծածկւած ձորակները ոլորապտոյտ անցնում են նրանց միջով։ Երկայնաձև կղզիների նման ցրւած են փոքրիկ անտառակները։ գիւղից գիւղ անցնում են նեղ շաւիղները։ եկեղեցիները սպիտակին են տալիս։ Ուսենի ների¹⁾ միջով շողողում է գետակը, որի վերայ չորս տեղ ամբարտակներ են շինած։ հեռու դաշտում շարան-շարան երեսում են արօս։ ները (դրախա). հինաւուրց տիրական տունը՝ սպասաւորների բնակարանով, այգիով և կալատեղով՝ պատսպարւել է փոքրիկ առաջանի մօտ։ Աւելի և աւելի էք շարունակում է բլուրները աւելի են փոքրանում, համարեա թէ ծառ չի երևում։ Ահա, վերջապէս, անսահման, անհուն դաշտավայրը!...

Իսկ ձմերալին օրը ձիւնի բարձր հիւսերի վերացով գնալ նապաստակ որսալու, շնչել սառն օդը, աշքերը ակամայ կկոցել փափուկ ձիւնի ակնախտիղ մանրիկ փայլվոցից, բերկրիլ՝ մի փոքր կարմրին տւող անտառի վերայ փուած՝ երկնքի կանաչ գոյնով!... Իսկ գարնան առաջին օրերը, երբ շուրջդ ամեն ինչ փայլում ու փլչում է, հալւած ձիւնի ծանր գոլորշու միջով արդէն զգացւում է տաքացած հողի հոտը. ձիւնի հալւած տեղերում, արեգակի թեք ճառագայթի տակ, վատահօրէն երգում են արտոյտները, և զւարժագին աղմուկով ու աղաղակով ձորակից ձորակ սրընթաց վազում են հեղեղատները...

¹⁾ Բնագրում «Խօնութեա», որ ուսենիների մի տեսակն է։

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱԽԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈԶԱԿՅԱՅԹԵԱՆՑԻ

Շատ է խօսել ու դրւել, որ մեր կրթւած ու զարգացած – ինտելիգենտ անձինք չեն աշխատում մտնել գիւղական զատակարգի մէջ և նրան առաջնորդել դէպի ինքնօգնութիւն, դէպի լուսաւորութիւն և ալին: Եղել են և ազգափոխ բարեմտութեամբ ժողովրդի մէջ մտնողներ, սական հէնց առաջին փորձում աճնապիսի ժայռերի են հանդիպել, որ տեղն ու տեղը փշրւել են, որից և շատերը զջացել են իրենց ալդ բարեմտութեան համար:

Բաւական է լիշել զիւղացու հետեւեալ արհամարհական կարծիքը զէպի ինտելիգենտ անձը, երբ վերջինս աշխատում է մօտենալ գիւղացուն: «Աղէկ պուր ըլէս էր, խօրդ պատէն կախ կըլէս էր» լաւ փունչ լինէիր՝ հօրդ պատիցը կը կախուէիր: աճնապին զարմանում է զիւղացին, որ լաւ մարդը թողնում է ինտելիգենտ շրջանը և մօտենում է զիւղական շրջանին:

Ինտելիգենտի ամեն մի շարժումը, ձեռնարկութիւնը զիւղացու կողմից սաստիկ կասկածի և անվստահութեան է ենթարկում, որով և ամենանմիշ բաներ զիւղացուն թշնամութեան և վրէժխնդրութեան են տրամադրում, որպիսի զէպերի շատ անդամ ականատես ենք եղել: Շատ խնդիրներ, որ տեսականապէս ամենահաւաքական են թւում, դորձնականապէս բոլորովին հակառակն են տպացուցանում:

Առաջարկելով ընթերցողներին մեր ալս զիւղատնտեսական զրոյցները, զրանով կամենում ենք նրանց մի որոշ զաղափար տալ մեր իսկապէս թշառ՝ զիւղացիների վիճակի մասին:

Մեր ցուց տւած զիւղերի բնակիչների թւերի, նրանց հոգերի քառակութեան և շտեմարանների անունով եղած զումարի մասին մեր տւած տեղեկութիւնները կարող են փոքր ինչ տարբեր վիճել իսկականից, որովհետեւ ոչ մի պաշտօնական հիմնարկութիւնից ճիշտ տեղեկութիւն ստանալ չկարողացանք. ալդ տեղեկութիւնները ստացել ենք զործին ամենամօտ անձինքներից: Մեր ակնարկած փոքրիկ տարբերութիւնը չի նսեմացնի արծարծած խնդիրների նշանակութիւնը:

Նրկրագործ տարրը լիակատար իրաւունք ունի աւելի բարեկեցիկ կեանքի մէջ լինելու, բայց նրա մէջ արմատաշած ներկաչ խոր տղիտութիւնը և ինքնոգնութեան զգացմունքից դուրկ լինելը միանգաման չոտ չի տալիս մեզ՝ նրան բարեկեցիկ վիճակի մէջ տեսնելու, մինչև նա իր վրալից չթօթափէ արգելառիթ պալմանները:

Ահա մի խնդիր, որը մեր երկրում պէտք է շատերին զբաղեցնի, որովհետև երկրագործ-դիւղացու բարեկարդ դրութիւնը մեծ նշանակութիւն ունի ամեն զասակարգերի համար Մենք էլ երկար ժամանակ ապրած լինելով գիւղական շրջաններում, մասնակից լինելով գիւղացու աշխատութեան ծանրութիւններին, նրա չաջողութիւններին ու անչաջողութիւններին, ուրաքանչափ ու առաջարկում մեր համառօտ զիտողութիւնները, որպէս զի հնար գտնվի լուծելու այդ բարդ և կարևոր խնդիրը,

Նախքան գլւղացու զարգացման, ինքնոգնութեան և նրա աշխատութեան ձեերի զիւրացնելու մասին խօսելը, աւելորդ չէ նկատել որ ներկալում գիւղացու արդիւնաբերութեան բուն աղբիւրը—հողը-սակաւացել է: Դրան ապացուց կարող է ծառայել վերջին երեք-չորս անդամ կատարած ժողովրդութիւնը, որ ցուց է տալիս, թէ մեր երկրում որքան աճել ու բազմացել է ազգաբնակութիւնը, որը օգտում է ներկալումն հողի նոյն քանակութիւնից, որքանով որ բաւականանում էին նրա պատերը:

Բնութեան պալմանների չնորհիւ մարդիկ միջոց ունին բազմանալու, իսկ հողի սահմանները միանդամ ընդ միշտ գծած, որոշւած են, որից աւելի ընդարձակելու ընդունակութիւն չունի: Ուստի Բնչպէս պէտք է աճել, որ ժողովրդի ներկալում աւելացած մասին բաւարարութիւն տալ հողի նոյն քանակութիւնը. չէ որ հողը առաձգական չէ, որ կարելի լինի նրան լայնացնել, մեծացնել, որ ժողովրդի ամլացած մասին նոր հող տրւի արդիւնաբերելու:

Մենք նկատի ունինք զլսաւրապէս Նրեանաց նահանգի հողակին և երկրագործական պալմանները, որին պալմանակից են, քիչ տարբերութեամբ, նրան շրջապատող նահանգները:

Սրանից 60 տարի առաջ, երբ ուստաց պետութիւնը տիրեց այս երկրին, այն ժամանակ, օրինակ, Խոդիր աւանում ապրում էին 40 ընտանիք (300 հոգի), որոնց ձեռքին գտնում էր մշակելու հող 700 դեսիատին: Ներկալում զանազան ժամանակների զաղթականութեան և բնական աճեցողութեան չնորհիւ՝ ապրում են 350 ընտանիք (2.100 հոգի):¹⁾ որոնց

¹⁾ Ազդակիով, ըստ Յոդւածադրի ազգաբնակութիւնը աճել է ամելի

մշակելի հողը նորն է մնացել—700 գետափառին, Նոյն խալ զժքախտաբար դեռ պակասել է, որովհետեւ, չփառենք ինչ պատճառով, հողի մի մասը վերջին տարիներում ճահճալին է դարձել և արդիւնաբերութեան համար անպէտքացել է։ Ավելամարլու գիւղում նոյնպէս ոռւսաց տիրապետութեան սկզբում ապրում էին 30 ընտանիք (240 հոգի) ¹⁾ և մշակելի հող ունեին 707 գետափառին, խալ ներկագումս ապրում են 125 ընտանիք (1000 հոգի) և մշակելի հողի քանակութիւնը դարձեալ նոյն 707 գետափառին է մնացել, նոյն համեմատութիւնն ունին և սրանց շրջապատող միւս գիւղերը։

Հողի ան տարածութիւնը, որ սրանից 60 տարի առաջ կերակրում էր 240 մարդ, այժմ պէտք է կերակրէ 1000 մարդ, աչսինքն երեք անդամ աւելին Ան հողը, որ առաջ պաղաքերում էր մէկին տաս և կերակրում էր գիւղուք չորս մարդու, եթէ երկրագործութիւնը կատարելագործելով մէկին տասի վոխսարէն պաղաքեր էր քսան, երեսուն, զուցէ մի կերպ բաւականութիւն տար ներկայումս ժողովրդի աւելացած մասին, բայց ցաւելով պէտք է ասել, որ այդպիսի չառաջադիմութիւն, կատարելագործութիւն չի եղել մեր երկրի հողագործական պամանների մէջ և չատ աննշան վորձեր ու աշխատութիւններ են գործազրում հողը պարարտացնելու համար, ընդհակառակը նոյն հողը երկար տարիներ ցանելով՝ բոլորովին ուժապառ է եղել և տարէցտարի զգալի կերպով պակասում է հողի արդիւնքը։

Նաևած մեր գիւղացիների հողագործութեան ներկայ ձևերին ու գործիքներին, պէտք է ասել, որ գիտակցորէն ոչ մի փորձ չէ արւած երկրագործութիւնը ղարգացնելու և կատարելագործելու համար, ինչ ձևով ու գործիքներով հողը մշակում էին մեր գիւղացիների պապերը, նոյն ձևով ու գործիքներով աւանդաբար սովորութիւնը և շարունակում էն նրանց ներկայ հողագործ թոռները։ Պէտք է խոստավանել, որ այդ ձևերը իր ժամանակին կարող էր առաջացնել մի կուտուրական ընդունակ ժողովուրդ, որից զանազան պամանների չնորհիւ գեռ չետաղիմել է ներկայս հողագործը։

Ժողներով իր տեղում խօսելու, թէ ինչ միջոցներ պէտք է զործագրել քիչ հողով չատ մարդկանց բաւարարութիւն տալու համար, աչսինքն երկրագործութիւնը կատարելագործելով ու զարդացնելով պաղաքերութիւնը շատացնել, առ այժմ պարտ ենք մասում ասել, թէ ինչ միջոց-

քան 7 անգամ։ Բայց դա սխալ է. 1829—32 թթ. կազմած ժողովրդագրութեամբ, երբ այժմեան Երեանեան նահանգը անցաւ ոռւսներին, իգոր գիւղում կար 133 տուն և 624 բնակիչ (մեծագուն մասը 108 տուն Տաճկաստանից գաղթած)։ խակ 1886-ի հաշում՝ 366 տուն, 2912 բնակիչ։

Ման. Խմբ.

¹⁾ Ախալ է. 1829—32-ին կար 101 տուն (մեծ մասը (64 տ.) Պարսկաստանից և փոքր մասը—37 տ.—Տաճկաստանից գաղթած, (Տես Շոպեն-ի չափանի գիւղքը էջ 567). Ման. Խմբ.

ներով կարելի է մեծացնել, լախացնել մեր հողերը, Ալդ հարցը պարզելու համար անհրաժեշտ է մեզ ուշք դարձնել մեր երկրի պատմական անցեալի վրայ, քննելով նաև մեր երկրի ներկալ դրութիւնը, որ մի փառաւոր նախատինք կը լինի մեզ, թէ մենք ո՞քան չետ ենք մնացել մեր պապերի աշխարհաշն ոգուց ու ձգուամներից:

Ա, երցնենք Վաղարշապատի և Սուրմալուի գաւառները, որոնց կէսը կազմում է Արարատեան լախատարած դաշտը, խակ կէսը՝ նրան շրջապատող լեռները, ծողովուրդը նախ շատ խիտ կերպով բնակւած է դաշտային մասի վրայ, իսկ կէսը՝ լեռների բարձրութիւնների և լանջերի վրայ, լանջից դէսի ներքեւ մինչև դաշտի հարթութիւնը հողերի ահագին տարածութիւն կաչալի ամայի, անմարդաբնակ և հողագործութեան համար անպէտքացած: Ալդ տարածութեան վրայ բուսած սակաւ խոտից օգտւում են ոչխարտէրերը, ձմրտն երեք ամիսներում, աճն էլ շատ անկանոն կերպով ոչխարները արածացնելով:

Ալդ ամայի տարածութիւնները, որ ներկալումս ծածկւած են մանր ու մեծ քարերով և իրենց դրութեամբ միմիան պատիժ են դաշտաբնակ ու լեռնաբնակ ժողովրդի համար, որովհետեւ անմարդաբնակ լինելով մեծ չարմարութիւն են տալիս աւազակներին պահւելու և դրանով համարեա կտրւած են երկու կողմի ժողովրդի լարաբերութիւնները, մի ժամանակ մեծ օգուտ են տալիս եղել հողագործներին:

Ներկալումս ալդ ամայի տարածութիւնները բոլորովին անջրդի լինելով, հողագործի մտքովն էլ չի անցնում աճն տեղերից օգտւելը. բայց հետաքրքրուողը ալժմ կարող է տեսնել ախտելով նշանաւոր առուների հետքեր, որոնք ապացուց են, թէ հնումը աճնտել մարդկանց նշանաւոր բազմութիւն է ասլրել. Շատ տեղերում անցկացրած են եղել լախն ճանապարհներ, առուներ, արտերի տեղերը դեռ հեռւից նկատելի են իրենց բաժանումներով. ազգիների պատերը ցալիմ կիսականգուն են, իսկ մէջներումը հէնց ալժմ էլ կարելի է փորել և խաղողի արմատներ զուրս բերել: Շատ տեղերում, ուր դժւարութեամբ են պատւում ոչխարի և ալծի ոտները՝ աճնտեղ վալընացած աճում և պտուղ են տալիս խաղողը, տանձը, ծիրանը և ալճն: Ալդպիսի ամայի տարածութիւններ շատ կան նրեանակ նահանջի զանազան տեղերում:

Հետաքրքիր է գիտենալ, թէ ներկաէ ալդ ամայի տարածութեան նախկին բնակիչները ո՞րտեղից են ջուր վերցել իրենց ցանքերը ուռողելու համար: Դրան պատասխան կարող են լինել զեռ ներկալումս գոլութիւն ունիցող անջուր առուները աւերակ ջրազացներով, խանգարւած արհաստական լները և դեանի տակով անցկացրած խսդովակաւոր ջրանցքները:

Մեզ օրինակ նրւանդակերտ քազաքի աւերակները, որոց շինութիւնների և ալդիների տեղը մի քանի տասնեակ վերստ տարածութիւն է

բունում, թէպէտ ալդ նախկին քաղաքը ուզգակի Արաքսի ափին է գտնվում, բայց նրա ժողովուրդը երբէք Արաքսի ջրից օգտաւած չի եղել, որովհետև Արաքսը աւելի ցածր է քան դաշտերը. ալլ ջուրը սսացել են. Սինակ լեռների բարձրութիւնից, որտեղ ներկալում էլ կաչ մի մեծ լճի հետք Ուրեմն ալդ նախկին թագաւորանիստ մայրաքաղաքի և նրան շրջապատող գիւղերի ժողովուրդը օգտաել է ոչ թէ հոսող ջրերից, ալլ արհեստական լճերից՝ ստորերկրեալ խողովակաւոր ջրանցքներով. Երւանդակերտից դէպի արենելահարաւ, 30 վերստ հեռաւորութեան վրաչ, գտնւում են շինութիւնների աւերակ հետքեր, որին ժողովուրդը «Ղարա-հասար» (ոև պարիսապ) է կոչում, իսկ գրանից դէպի վեր՝ բոլորովին դէպի հարաւ՝ նորնուկէս կան աւերակ շինութիւնների հետքեր և քրիստոնեաների գերեզմաններ խաչքարերով, որտեղ ներկալումս ոչ մի քրիստոնեակ չի ապրում, ալլ քրդեր և թուրքեր են.

Ղարա-հասարից վեց վերստ դէպի արենելան կողմը կաչ մի աւերակ շինութիւն որբատաշ քարերով ու կրով շինած, գեղեցիկ քանդակագործ նկարներով. Ալդ շինութիւնը կոչում է «Քարւան-սարա» աւալինքն հաղորդակցութեան կալարան, որի ձեր շատ չարմար է ալդ բառի մաքին. Շէնքը բաղկացած է 30 կամարակապ սենեակներից, որը մինչն վերջին ուսւթրքական պատերազմը, նաև մի երկրորդ չարկ ունէր:

Ներկալում Ղարահասարրում բնակում են հինգ տուն թուրքեր, որոնք, իրենց խմելու ջուրը վերցնում են հարեան գիւղի աղբիւրից, իսկ ցանքերը ջրում են ձիւների գարնան հալոցներով, որը տեսում է մինչև ամրան կէսը:

Ցիշեալ Ղարա-հասարից 15 վերստ դէպի արենելք գտնւում է Ալիքուչակ թրքաբնակ գիւղը. այնտեղ կան աւերակներ և նրանց մէջ մի եկեղեցու հիմք. Ալդ գիւղից դէպի հիւսիս՝ մինչն Արարատեան դաշտը՝ տարածւած են նախկին ալգիները և արտերը, հնումն, ջրելու համար շինւած են եղել արհեստական լճեր և ստորերկրեալ խողովակաւոր ջրանցքներ, որոնց հետքերը մինչն ալժմու էլ կան. Ցիշեալ աւերակներից դէպի վեր՝ աչման մարդաբնակ Ասմա և Մազրա գիւղերում 1883 թւին գետինը ներկելիս՝ արօրի խոփր զուրս բերաւ երկար շարք կաւկ խողովակներ, որոնց միջով մի ժամանակ ընթացել են աղբիւրների ջրերը, որոնք ներկալումս բոլորովին չորացել են, և տեղերն են միայն երեսում.

Ասմա գիւղը ալժմ բոլորովին անջրտի է¹⁾.

1) Նոյն գիւղի մօս, լերան վրաչ, ժակուերի մէջ կան հնուց փորած սենեակներ. ստորոտում երբեմն արօրի խոփր զուրս է բերում ոսկէ և արծաթի, գրամիներ, որոնցով հետաքրքրւելը նապէաների պարտքն է.

Բոլոր վերոիշեալ աւերակները գտնւում են Արաքս գետի աջ ափին (Սուրմալուի գաւառում), իսկ նրա ձախ ափին (Եջմիածնի գաւառում) կատ նոյնպէս մի ընդարձակ ամազի տարածութիւն, մինչև Արագած լեռան ստորոտը, որտեղ նոյնպէս բազմաթիւ աւերակների հետքեր կան:

Ղարա-հասարի մօտ գտնւող, վերեսում նկարագրածս, աւերակ քար-ւանսարակի նման մի աւերակ շինութիւն էլ գտնւում է Արագած լեռան վրայ (Ալեքսանդրապոլի գաւառում), որը կարծես մինենոյն քարից և մինենոյն ճարտարապետի շինածն է, Հաւանական է, որ շատ հնումը Վրաստանի և Հայաստանի մէջ առետրական նշանաւոր հաղորդակցութեան հանապարհներից մէկն է եղել այդ կողմը,— այն է՝ Թիֆլիսից դէպի Ֆամբակածոր, այնտեղից Արագած լեռան վրայով դէպի Երևանդակերտ, իսկ վերջինից Ղարա-հասարի մօտով դէպի Հին Բաւազէտ, վան և Թաւրիզ քաղաքները: Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ այդ հանապարհների վրայ գրտուող այժմ աւերակներով լի տարածութիւնը հին ժամանակներում եղել է չին և ծաղկած զբութեան մէջ, որից օդուել են հողագործները: Հետեապէս եթէ ներկայումս ձեռք առնւին նոյն միջոցները, ինչ միջոցներով որ օդուել են նախկին բնակիչները, — վերանորոգին նախկին ստորերկրեաց ջրանցքները և նորերը փորեին, բաց անւեն նախկին ազբիւրները որ ներկայումս չորացել են, այն ժամանակ նշանաւոր քանակութեամբ կ'ընդգրածական տեղական հողադրութների մշակելի հողերը:

Այն աղբիւրները, որ աչժմ կան աննշան քանակութեամբ Արարատեան դաշտը շրջապատող Բարդող լեռների վրայ, հին ժամանակներում շատ առատ են եղել, որին վկատ են ժողովրդական շատ աւանդութիւներ:

Հաւանական է, որ այդ աղբիւրները սկսեցին չորանալ այն օրւանից, երբ վաւրենի ցեղերի աւերիչ ձեռքերով ոչնչացան լիշեալ լեռների բնական անտառները, որոնց հետքերը ներկայում կինդանի վկաներ են նրանց անցեալ զոլութեան: Արարատ լեռան կէս բարձրութեան վրայ կատ մի փոքրիկ անտառ Ղորդան անունով. դժբաղդաբար սրա էլ մի մասը, ամեն տարի, կրակի մատնելով ալրում են Զալալի ցեղի բարբարոս քրդերը Նոյնպիսի անտառի հետք կատ նաև Փառնաւատ գիւղից դէպի Կաղզւան տարածւած լեռների վրայ, որը նոյնպէս օրէցօր ոչնչանում է քրդերի ձեռքով: Ազդ երկու անտառապատ լեռների բարսութին մէջ տեղին, Գիարմաջը լեռան գագաթին, սրանից 16 տարի առաջ, արտահեց ինձ անցնել գերի. մաստի և պանտառանձի խլոտ մացառուտի միջով. 16 տարի յետով ինձ նորից վիճակւեց բարձրանալ նոյն լեռան զլուխը և յաւելով նկատեցի, թէ ինչպէս քիւրդը, ոչխարի և աչծի հետ միացած, շատ եռանդուն կերպով ոչնչացրել և մի աննշան հետք էին թողել նախկին մացառուտից:

Անկասկած մի ժամանակ սմբողջ Բարզող լեռնաշղթան պատած է եղել խիտ անտառով, որի շնորհիւ հոսելիս են եղել նոյն տեղերից առատ

աղբիւրներ և ջրեր և հնարաւորութիւն են տւել իրենց ստորոտներում ներկայ աւերակներով լի ամայի տարածութիւնը մարդաբնակ լինելու ջանկալի է, որ նոյն լեռները արհեստական կերպով նորից ծածկւէին անտառներով, որի օգուտը ապագալում անհերքելի է:

Հողը իր մէջ միշտ ջուր է պարունակում. հետեապէս աչտ չպէտք է անուշաղիր թողնել; և ամեն ջանք զործ պէտք է դնել անջրդի տեղերում հողի միջից ջուրը երես դուրս բերել պեսարկղներով»:

Աչտ արհեստը հին ժամանակներում մեծ զարգացումն էր ստացել Ասիակում, իսկ ներկալումն Պարսկաստանի Ատրպատական նահանգը, որ ըստ միծի մասին զուրկ է հոսող ջրերից և անտառներից՝ ոռողջում է քեահբեղներով—ստորերկրեալ խողովակաւոր ջրանցքներով—և շատ, նոյն խակ աւազու անապատներ արհեստական ոռողման չնորհիւ նախանձելի են դարձել իրենց արդիւնաբերած առատ պտուղներով:

Նոյնը կարելի է կատարել և մեղնում, թէպէտ մեր երկրում աւելի դժւարութեամբ կը փորեն քեահբեղներ, որովհետեւ մեր երկրի լեռների կազմած քը աւելի կարծր է Պարսկաստանի լեռների կազմածքից, ինչպէս ցոյց են տւել փորձերը:

Հէնց մեր սեփական փորձերով տեսել ենք, որ մեր լեռներում միծ ու կարծր քարեր կան, իսկ Պարսկաստանի լեռները աւազախառը, անքար և փուլիր են:

Արդելառիթ քարերի չնորհիւ մեր երկրում ստորերկրեալ ջրանցք փորելիս՝ զետնի տակով 4—5 արշին անցնելուց չետոյ հարկաւոր է լինում մի նոր լող բաց անել զէպի զուրս, ան ինչ Պարսկաստանում 40—50 արշին զետնի տակով գնալուց չետոյ հազիւ կարիք է լինում նոր լող բաց անելու:

Աշխատութեան դժւարութիւնը երբէք արգելք չպէտք է համարել աչտ օգտաէտ զործը կատարելու համար, որովհետև ջրի օգուտը մեր երկրում հողագործութեան համար ակնչալունի է:

Ան քեահբեղները, որ Պարսկաստանում երեք բանւորով կարելի է մէկ տարում փորել վերջացնել, մեղնում նոյն քան բանւորով կարելի է 3 տարում վերջացնել որի օգուտը ի նկատի ունենալով՝ եռապատիկ աշխատութիւնն անգամ մեծ կորուստ չպէտք է համարել:

Ուրիմն մեր երկրի հողը ընդարձակելու համենից առաջ պէտք է վշեալ ամայի տարածութիւնները ջրաբբի դարձնել որի միջոցները առաջարկեցինք, ան է՝ փորել քեահբեղներ և հողի տակ անհետ կորչող ջրերը երես դուրս բերել, երկրորդ՝ բնութիւնից հրաշակերտած ձորերում շինել արհեստական լճեր և հները նորոգել աւելորդ ջրերը ժողովելու և տնտեսելու համար. երբորդ՝ լեռների բարձրութիւններում անտառներ զարգացնել, որպիսի ակները խակապէս անօղուա են երկրադործութեան հա-

մար և, ինչպէս տեսանք վերևում, մի ժամանակ անտառապատ են եղել։ Անտառները հողի և օդի մէջ կը պահեն զովութիւն, որով կ'առատանան ներկայիս նւազած աղբիւրները։

Այդ բոլորը կատարելով՝ նշանատոր և մեծ տարածութեամբ կ'ընդարձակեն մեր հողերը և շատերը հաց ստանալու միջոց կ'ունենան։

Աւելորդ եմ համարում խօսել Արարատեան նահանդի ան ամայի հովիտների ոռոգելու մասին, որոնց միջով անցնող գետերից կարելի է ջուր բարձրացնել, որտեղ զլուխ պատռելու մեծ խնդիրներ չկան, այլ ցանկութիւն և դրամ է պէտք։

Ո՞վ է մեր առաջարկած վերոլիշեալ խնդիրներին կատարում տողը, ձեռնարկողը։ Միթէ մեր զիւղացին կարող է արդպիսի ծանր դործերի ձեռնարկել և ապագաչի չուսով ներկացում ծանր զոհաբերութիւններ անել։ Դրա համար պէտք է բարեխիղմ հոգատար, դրամ և բանւոր ձեռք։

Վերջապէս այդ ամայի տարածութիւնները անհող զիւղացիներին չեն պատկանում, ուրեմն ինչ չուսով նա զոհաբերութիւն անէ, աշխատութիւն դորդ դնէ։

Այդ ամայի տարածութիւնները պատկանում են գլխաւորապէս պիտական գանձարանին և ապա մասնաւոր կալւածատէրերին։ Լեռնալին բարձրութիւնները, որտեղ աղբիւրներ կան և որոնք պէտք է անտառով պատել, նոյնպէս պատկանում են գանձարանին և մասնաւոր կալւածատէրերին¹⁾։

Այս խնդիրը լուծենու համար ընդհանուր ուժերով պէտք է աշխատութիւնը առաջ տանել, որի նախաձեռնողը պիտութիւնը պէտք է լինի։

Նախ պէտք է մշակել մի օրինական պայման, որի շնորհիւ ալդ առաջի հողերը պիտի անցնեն հողազուրկ զիւղացիներին։ Չեսոյ պէտք է կազմել վիճակազրութիւն, թէ ներկացումն որքան հողազուրկ զիւղացիներ կան և որքան ու ինչ կերպ կը ցանկանալին մասնակցել այդ աշխատութեանը, և ապա որոշէր միւսների և պիտութեան մասնակցութեան պահմանները։

Ինչպէս անհող դաշտեցին, նոյնպէս մասնաւոր կալւածատէրը, պիտութիւնը, լեռների վրայ ապրող զիւղացիները այդ դործից ունին իրենց առանձին օգուաները և ահա ինչպէս։ Մասիս սարից մինչև կազման՝ ամբողջ լեռնաշղթան՝ 150 վերստ երկարութեամբ և 20—40 վերստ լայնութեամբ ծառերից բոլորովին գուրկ է, Երեակաչեցէք, որ այդ լեռնեցին բահի 20 կոպէկանոց կոթ առնելու համար երկու օր պէտք է կորցնէ, մինչև իջնի զաշտալին զիւղերը, առնի և վերադառնար Ապա որքան զըժարութիւն կը լինի տան ծածկի փալտ և ուրիշ աղդպիսի պէտքերը նողալիւ

1) Թէպէտ այդ հողերի վրաէ ապրում են հողիցը օգտագործութիւնը զիւղացիներ։

Հեռնցիների օգուտը ալս դէպքում ակնչալտնի լինելով՝ նրանք պէտք է ուրախութեամբ մասնակցեն իրենց՝ երկրագործութեան համար անօգուտ՝ հողերը անտառով պատելուն. Դաշտուցին էլ ի նկատի ունենալով իր անհող դրագուն, որի ծանրութեան տակ իսկապէս ձընչում է, չպէտք է խնայի իր աճեցրած մացառներն ու ճիւղերը լեռներում վերատնիելու համար. իսկ ամենից շատ մասնակցութիւն պէտք է ունենալ կառավարութիւնը, որը թէպէտ երկար ժամանակից, այն է՝ 50—70—100 տարուց չետու կը քաղէ իր օգուտը ամալի տեղերը չէնցնելով, բայց 50—70 տարին երբէք երկար չպէտք է համարել պետական ալղայիսի մի հսկաչ ձեռնարկութեան համար:

Պետութիւնը գոնէ պարտաւոր է կարգադրել, ձեռնահաս պաշտօնեաների միջոցով հսկել, պահանջել և ըստ կարելոյն նպաստել նիւթականապէս:

Ծիծաղելի կը լինի, եթէ մննք առաջարկենք հողազուրկ գիւղացուն 50—100 տարի սպասել, որ զարդանան անտառներ, առատանան ջրեր և այն ժամանակ նա կարողանաէ երկրագործութեամբ պարապել, մինչդեռ գուցէ նրա ոսկորներն էլ փտած լինին ան ժամանակի. Նրա ներկաէ պահանջներին չուտափութ օդնութիւն կը համեն արհեստական լծերը, սոսոր երկրեաէ քեահրեզները, իսկ անտառները ապագալում մեծ ապահովութիւն կը լինեն աղբիւրները չորանալուց պաշտպանելու և զարդացնելու համար:

Գուցէ շատերը կասկածեն ալղայիսի տեղերում անտառներ աճելու մասին. բայց ալդ կասկած գիարատում է նախկին անտառների ներկայում մնացած հետքերով և ապա սեփական փորձերով. Որինակ. մօտ 4 հազար ոտ բ սրձրութեան վրա եօթը տարի առաջ տնկած ծառերը արդէն պիտանի են դարձել և դործածում են այժմ. նոյն բարձրութեան վրա զեղձենին ան երրորդ տարին հիանալի աճում է, մինչդեռ նա ամենաքնքուշ ծառն է մեր երկրում. թթենին երրորդ տարին տեսց առաջին պտուղը, որի զարդանալով կը տարածւի և շերամապահութիւնը, ուստի որանից աւելի բարձր տեղերում իրենց չարմար ծառերը կ'անեն. զերխմաստը և պահատան աճում են 8 հազար ոտ բարձրութեան վրալ:

Հաշեկչիո կազմելով, զուցէ շատերը անօգուտ համարեն ախճանքան ծախք և աշխատանք ակմիլց գործ զնելը՝ ապագալում ստանալիք օգտի հետ համեմատելով. բայց մենք վստահ կերպով ասում ենք, որ աշխարհի մէջ գիւղացու համար ոչ մի օգուտ գերակռող չի կարող լինել հողի օգուտից. Կարիքն էլ երբ և լիցէ, քաղաքակրթութիւնը տարածւելով, ստիպելու է մեզ կատարել ալդ բոլորը, սական ուշ կը լինի, և մենք զառնապէս կ'ողբանք մեր կորուսած ժամանակը. Եթէ անօգուտ չէ ահազին ծախքեր անել և աշխատութիւն գործ զնելով ճահճաները չորացնել երկրագործութեան համար պիտանի դարձնելու, ինչպէս անում են կարիք ու-

Նեցող լուսաւորւած երկրներում, նոյնպէս աճօգուտ չի լինի ծախսք անելով մեր երկրում դէմի (անջուր) հողերը ջրաբբի դարձնել:

Ալաշափ բաւական ենք համարում խօսել դէմի հողերը ջրաբբի դարձնելու մասին, որով մեր երկրագործների ապազան հողի կողմից նշանաւոր կերպով ապահոված կը լինի. իսկ ներկալումս կան աւելի այլող հարցեր, որոնք դառնացնում են մեր գիւղացիների կեանքը, և որոնցով նրանք աւելի տանջում են, քան թէ կեանք են վախելում աշխարհիս երեսին:

Բնութիւնը կտրծես ստեղծւել է մեր գիւղացուն ոչ թէ երջանկացնելու, այլ տանջելու համար. արեւակի՞՝ մեր գիւղացուն ոչ թէ տաքացնելու՝ այլ խաչելու, ալբերու համար է զուրս զալիս. Հողը, թէպէտ գիւղացի երկրագործի սկզբնական իշխանութեանն է ենթակաև բաց նրա համար ոչ թէ պատուղ տալու, օգուտ տալու միջոց է, այլ նրան տանջելու և չարչարելու համար բնութեան մի պատիժ է կարծեաւ Եւ նոյն ցորենը արդիւնաբերող գիւղացիները շատ ժամանակ կարօտ են ցորենի ալիւրին, որի հետ երբէմն կորեկի կամ դարու ալիւր են խառնում, որպէս զի համը դառնացնելով միջոց չտան երեխաների ախորժակը զարգանալուն, որովհետեւ նրանք չեն կարողանում լիութեամբ պաշար հասցնել իրենց բազմանդամ գերգաստանին...

(Յարուճակելի)

ԼԵԶԻԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑԻ

Արդէն մօտ կէս դար է որ մեր գրականութիւնը իւր անիւր շուռ է տւել՝ գրաբարը փոխելով աշխարհաբարիս Դա լեզւի կատարելութեան ինդիր չէր, այլ մի հիմնական աշխարհայեացքի. գրականութիւնը՝ ժողովրդի համար—ահա թէ ինչ էր ուղում ասել այդ յեղաշրջումը։ Գրականութեան լեզուն պէտք էր մօտեցնել ժողովրդական լեզւին, որպէս զի ժողովուրդը կարդացածը հասկանար. նոր գրականութիւնը իւր պաշտօնը հասկանում էր շատ աւելի լայն մտքով. նա կամենում էր մոնել ազգի բարձր խաւերից մինչև ամենաստորինները և ոչ թէ գործ ունենալ մի սահմանափակ թով ուսումնականների հետ։ Աշխարհաբարով ոչ միայն գրական լեզուն պիտի ժողովրդին մատչելի լինէր, այլ և նոր գրականութեան նիւթերը. նոր գրականութիւնը չպիտի օտար մնար մարդկութեան, ազգի և ժողովրդի ոչ մի մեծ թէ փոքր ինդրին, այնպէս որ գրքին դիմողները պիտի լինէին ամեն կարդի մարդիկ։ Այդ նոր պահանջի ամենաքննորոշ արաայացութիւնը եղաւ պարբերական մամուլը, որի գոյութիւնն իսկ ենթադրում է ընթերցողների լայն շրջան, և առանց որի չի կարող մի ազգ՝ նոր ժամանակի ազգութիւն լինել։

Աշխարհաբարի, այսինքն ժողովրդին մատչելի կերպով գրելու պահանջը զգացել են մեր նախնիները զեռ 6-700 տարի առաջ, երբ սկսեցին գրել ռամկախառն գրաբարով և որը մի նոր գրական շարժում առաջացրեց։ Սակայն այդ շարժումը կանգ առաւ մահմեղական նւաճողների տիրապետութիւնով—Հայաստանի մի ծայրից մինչև միւս ծայրը. բայց և հետեւեալ դարերում ռամկական գրա-

բարը յարատեւեց. կարգացէք 17-րդ դարից Առաքել Դաւրիժեցուն, 18-րդ դարից Աբրահամ Կրետացուն—դոցա ընթերցումը չի պահանջում մի առանձին գրաբարագիտութիւն, և նոցանում լիքն են աշխարհիկ բառեր ու դարձւածներ: Վենետիկի Մխիթարեանները 18-րդ դարի միջերքից վերականգնեցին դասական գրաբարը, հայ կլասիկների ընտիր հրատարակութիւններով և հին լեզուի ուսումնախրութիւնով. զոեհկացրած գրաբարը յարգից ընկաւ, և նորատեղը սկսեց բռնել արդէն իսկական աշխարհաբարը, դարիս սկզբներից՝ արևմտեան հայերի մէջ, զարուս երկրորդ կէսից՝ արևելեան հայերի մէջ, նախ մըցելով գրաբարի հետ, ապա իբրև միակ կոչւածը գործածական գրական լեզու լինելու ներկայումս:

Նոր գրական լեզուն պարզ ընդօրինակում չէր մի որ և է բառբառի. ուամիկ ժողովուրդը չափազանց ազգւել էր օտար ազգերի տիրապետութիւնից. դորա ազգեցութեան ներքոյ նա կորցրել էր նաև իւր լեզուի առանձնայատկութիւններից շատերը՝ բառեր, դարձւածներ, սմերի նրբութիւններ. իսկ այն ամենից, ինչ պահպանել էր, մի մասը կրում էր սատրացած ճաշակի դրօշմ, որպիսին կարող էր արտագրել հայ ժողովրդի քաղաքական և սոցիալական ստորացրած դիրքը: Դորա վրայ աւելանում էր հայ ժողովրդի բաժանւածութիւնը ըստ բառբառների, որով մի հայկական բառբառ կազմում, մշակում և զարգանում է եղել առանց ամբողջ հայութեան հաւաքական ոյժի, այլ միմիայն տեղական ժողովրդի ոյժերով, միայն այն ոգով, որ կարող էր արտադրել մի սահմանափակ ժողովուրդ. և ընդհանուրը մի կողմից աւանդական գրաբարն էր, որը ժողովուրդ կրթելու ոյժը կորցրել էր, և միւս կողմից՝ մահմեղական ազգերի լեզուները, մեր երկրում գլխաւորապէս Աղերբէջանի թուրքերի լեզուն, որը դարերի ընթացքում միակերպ ազգել է հայերէն բառբառների վրայ՝ թէ Երևանում, թէ Նախիջևանում, թէ Ղաբաբաղում, թէ Շամախում, թէ Նուխում, թէ Ազուլիսում, թէ Լոռում, թէ Թաւրիգում, թէ Սալմաստում, թէ Թիֆլիսում, (ուր աւելացել է դորա վրայ նաև վրացերէնի ազգեցութիւնը), ինչպէս տաճկականը արևմտեան հայերի բառբառների վրայ՝ Վանում, Կարինում, Բայազէ-

դում (և այդ տեղերից Ալէքսադրապոլ, Ախալցխաց և Ախալքալաք գաղթաների վրայ, Նրիմում և աշտեղից Նոր-Նախիջևան դաղթածների վրայ, և այն¹⁾):

Բազմաթիւ բառբառների մէջ այն, որ համեմատապէս ամենից կատարեալ կերպով ներկայացնում էր հայկական գլխաւոր մարմնի աւտոնբական ողին՝ բառերի արտասանութեան, կազմութեան, դարձւածների մէջ, և այն, գա՞ երեսնեան բառբառն էր, որը քիչ թէ շատ զտւած՝ գործ էր ածուում իրը միջագաւառային հայերէն լնզու դեռ աւելի առաջ քան գոյութիւն ունէր աշխարհաբար գրականութիւնը:

Այդ բառբառի գուտ ժողովրդական ձեւը վերարտագրեց Աբովեան իւր Շվեյցարիա արձակ պոէմացում: Բայց այդ ձեւով նա գրական լեզուի յատկութիւնները չունէր, և այդ պատճառով նորա վրայ չհիմնեց աշխարհաբարի մշակութիւնը, որը աւելի առաջ էր գնացած շատ թէ քիչ կիրթ հայախօսութեան մէջ. այդ աշխարհաբարը, իրը միջագաւառային հայերէն լնզու, յայտնի էր ոչ միայն Երեսնի գաւառին, այլ և գուրը:

Այսպիսով երբ մեզնում դեռ ևս չկար արևելեան հայոց աշխարհաբար գրականութիւն—կար արեւելեան հայոց աշխարհաբար գրական լեզու, որ խօսում էր, բայց չէր գրւում: Եւ հէնց այդ է որ կոչւում է աշխարհաբար, որ զեռ չի նշանակում գաւառաբառաբառ. աշխարհաբար կոչւում է նոր ժամանակի գրական լեզուն, որ կազմել էր սակայն նոր գրականութիւնից առաջ: Թէ ինչ կերպարնք էր կրում այդ լեզուն, այդ մասին թող վկայեն մի քանի քաղւածներ առաջին տարիների աշխարհաբարը զրւածներից. նորընտիր կաթողիկոսի առաջ Ներսիսեան դպրոցում յացանի վարժապետ Յակոբ Կարինեանցի գրաբար արտասանած մի ճառը ինքը հեղինակը յա-

¹⁾ Այդ ազգեցութիւնը շատ աւելի զօրեղ է եղել, քան ինչ որ հայունի է մեր գրականութիւնից, ուր, մեր գիտութեամբ, բնաւ շօշափւած չէ ապդ խնդիրը, մինչդեռ այդ հարցի քննութիւնը միմիան իտանակաց նշանակութիւն չունի, այլ ամենամօտ կերպով շօշափում է մեր հերթական խնդիրներից մէկը—ժողովրդի ընթերցանութեան գործը: Մենք այդ խնդրին մի այլ անդամ կը վերադառնանք:

ջորդ 1860-ին այսպէս վորխեց «դէպի մեր գործածական աշխարհաբար լեզուն»:

«Ա Ե Հ Ա Ֆ Ի Ա Ռ Ո Ւ Ն Ա Վ Ա Ր Ա Վ Ե Ց Ա Վ Ե Լ Ո Ւ Ք.

Կարելի է մի քանիսներին անհաճոյ և անյարմար երեխ նոր կերպով խօսելու եղանակո, որը որ սկսելու եմ: Կարելի է այսօրւան օրս շատերը կամենում են լսել ինձանից, որ ես զանազան ճարտար ձեերով, շատ ածականներով Զեր գալուստը շնորհաւորելու ճառ ասեմ և նորա հետ շռայլութեամբ թափեմ Զեր բարեմասնութեանց վրայ մարդանաճոյ գովասանքներ, միանգամայն վիզ առնելով բեմական ատենախօսի և կենսագիր պատմաբանի պաշտօնը: Բայց ես կանգնած լինելով արդարամիտ ժողովքի ատենի մէջ և աւելի ևս նորա Գահակալի առաջ, որ աշխատում է, որ ամենայն ջանք գործ է զնում իր ազգը Բարի Մարդ և Բարի Քրիստոնեայ շինելու, թողնում եմ անօգուտ գրութիւնները և կարողութեանս չափ լաւ եմ համարում խօսիլ պարզ ճշմարտութեան և փառքից զրկած օդուակարի վրայ միայն:

«Այս բանի համար ստիպում է ինձ և ժամանակիս յարմարութիւնը, վասն զի այն բանը՝ որը որ ամէն օր հալում եմ իմ աշակերտների ականջներումը, ինչ տեղ ու ինչ ժամանակ կարող եմ հանդիսի մէջ հանել, եթէ ոչ այս պատկառելի ժողովումը, որպէս զի հաստատուին նոցա թերակատար խորհուրդները, թէ արդարև ճշմարտութիւն է այն, որ գասատան անզարդ աթոռիցը քարոզում է միայն նոցա ականջներումը ու որը որ իրա համար տեղ է գտնում վսեմապատիւ ժողովքի միջի ատենախօսութեան ամբիոնի վրայ:

«Այս երկրորդ անդամն է, Տեարք իմ, որ բարեբազզ եմ գտնուում, կամ իսկապէս ասել, իմ վրայ հարկ է զնուում, որ ես այս տեսակ ատենախօսութիւն անեմ: Տասն և չորս տարի առաջ արժանացիշատակ Ներսէս Հայրապետի այս գպրոցիս այցելանելու ժամանակն, Նորա պատկառելի կերպարանաց առաջը ես բեմբասաց եղայ ժամանակի կարիքին յարմար, հերքելով մեր ազգի անուսումնութեան կարծիքը, որոյ մէջ հաստատ փաստերով առաջարկեցի, թէ ինչքան հարկաւոր է մեզ

այժմ, որ մենք կարգաւորեալ ուսմունքով կրթենք մեր որդւոցը և և թէպէտ այն ժամանակը ախորժ ունինդրութեան հանդիպեցան իմ խօսքերս, բայց թէ ի՞նչ տպաւորութիւն դործեցին և նրանց պտուղը ի՞նչ եղաւ, ժամանակակից պատմութիւնները կարող են յայտնել և մեր ապագայ սերունդներին քարոզ լինել:

«Այժմ կրկին կանչուելով այս ասպարիզի մէջ՝ շուարուած տարակուսում եմ, թէ հրտեղից սկսեմ, ի՞նչ խօսիմ և որտեղ խօսքս վերջացնեմ Որովհետեւ ժամանակը տեսնում եմ կարճ և գիւրափոփոխ, մեր ազգի պէտքերը և կարիքները չափիցը անց կացած, մեր ազգակիցների մոքերը և խորհուրդները միմեանցից տարբեր և որը որ ամենից շատ ցաւալի է և ազգի կորստեան պատճառը, երկպառակութիւն մէկ հօր ու մօրից ծնած եղբարց մէջ։

«Եւ ահա այս ամենը միասին մտքիս առաջ դուրս տալով, շլայնում են խորհուրդներիս տեսարանը։ Եւ ի՞նչ, այս դժուարութիւններից յաղթուելով լոեմ արդեօք. քաւ լիցի, վախենալը տկար հոգւոյ նշան է, իսկ յուսահատութիւնը՝ կենդանի մեռելութիւն։

Աւրեմն յոյս դնելով ազգասիրութեան հոգւոյ օդնականութեան վերաց, Քահանայապետ մեծ... և այլն ¹⁾։

Եւ կամ ահա մի այլ յօդւածից մի կտոր, աւելի ևս մաքուր աշխարհաբար։

«Մի մարդու բնակութեան համար շինում են ահագին պալատներ. չէ որ առաւել լաւ կը լինէր մի քանի համեստ շինութիւններ կառուցանել բիւրաւոր թշուառների համար, որոնք մի տեղ չունին իրենց գլուխը դնելու։

«Դուք արդէն հարուստ էք, բայց էլի աշխատում էք բազմապատկել ձեր գանձերը։ Ում համար, ձեր որդւոց համար։ Առաքինի մարդու համար մեծամեծ հարասութիւններն առաւել անպատշաճ են քան թէ օգտակար, որովհետեւ նորա ուշքու միտքը ցնորում են։ Իսկ մոլի մարդը միշտ նորանոր մի-

¹⁾ Կուունկ Հալոց Աշխարհի, 1860 էջ 185 և յաջորդները։

ջոցներ է գտանում իւր հարստութեան մէջ իւր բաղձանք-ները և իւր հաճութիւնները լցուցանելու:

«Յատ ամօթ բան է խարել նրանց, որոնց հետ կենում ենք: Երկու աւազակ մոտան մի գիւղ և բոլոր բնակիչներին կոտորեցին բացի երկուսից: Սրանց մինը կոյր էր, իսկ միւսը անդամալոյծ. կոյրը անդամալուծին նստացրեց իւր ուսերի վրայ և անդամալոյծն սկսաւ ցոյց տալ նրան ճանապարհ: Երկուսն էլ ճամբաց ընկան և իւրեանց համար ապաստանարան գտան: Այսպէս էլ կենաց դժուարութիւնները կը հեշտանան, եթէ մարդիկ փոխադարձութեամբ օգնեն մինը միւսին:»

«Ինչ է այս կեանքը? Միտս բերելով...» և այլն ¹⁾:

Ահա արևելեան հայոց այն աշխարհաբարը, որ մշակել էր մեզնում զեռ ևս աշխարհաբար գրականութիւնը հաստատելուց առաջ: Այդ աշխարհաբարի ամենահաւատարիմ ներկայացուցիչը կարող է Վառնկը՝ ամսագիրը համարւել, որից և վերը առաջ բերինք երկու նմուշներ:

Այդ նոյն աշխարհաբարն է, որ հիմք ծառայեց Շիւսիսակայլ ամսագրին, քիչ ու միչ փոփոխութիւններով. ահա Նալբանդեանի լեզուից մի նմուշ 1858 թւականից, տպւած Ս. Նազարեանցի խմբագրութեամբ.

«Նախիջևանը գտանում է Դօն գետի աջակողմեան ափում, մի բաւական բորձը սարի վերաց. ափսոս որ քաղաքի շինւածքը չեն սկսանվում իսկոյն գետի ափից, գորա հակառակ զետեղից կես վերստ ճանապարհ պիտոյ է կատարել մինչև քաղաքի սկիզբը: Պատմում են թէ կամեցած էին սկզբումը զետի ափից սկսանել քաղաքաշնութիւնը, և որպէս թէ փոքած էին մի քանի մարդիկ բնակութիւն հաստատելու գետի մօտ, բայց աւաղակներից երկիւղը ստիպել էր նորանց հեռանալ այդ տեղից: Պիտոյ է կարծել, որ անհիմն է այդ պատճառը, որովհետև քաղաքի կենտրոնը, ուր գտանվում է Աւագ եկեղեցին, և զլխաւոր հրապարակը, այլ և մի ս եկեղեցիների համարեա թէ միաշափ հեռաւորութիւնը կենտրօնից, սորա-

1) Գ. Մորատեանց. Կռունկ, 1860 էջ 101—102.

չորս կողմով, ցոյց են տալիս, որ քաղաքի հիմնարկութիւնը եղած է առանց ուշագիր լինելու այն օգուտներին, որ յառաջանալու էին զետի մօտաւորութենից: Խնչպէս և եղած լինէր այս, միայն քաղաքը բաւական գեղեցիաշէն է, տուները նւրասպական ճարտարապետութեամբ, մանաւանդ որ գտանւում էին քաղաքի կենտրոնում, համարեա թէ բոլորը քարից ու աղիւսից շինած: Եկեղեցիքը, որ վեց հատ են թւով, հոգակապ և ամենեին նոր ճարտարապետութեան կանոններով, որոնցից Աւագը, Սուրբ Գրիգոր Լոռաւորչի անունով, գտանւում է քաղաքի մէջ տեղը մի մեծ հրապարակի վերաց Մօտ տեղի նախիջևանի շրջակաքում չկան այդպիսի հոյակապ տաճարներ: Եւ այն:

Նոյն յօդւածի շարունակութիւնից ահա մի կտոր աւելի գիտական նիւթի մասին դրած.

«Նախիջևանի բնակիչների թիւը, բաց ի հինգ հազարնակ շրջակայ գեղեցից, հասանում է մինչեւ 12,000: Կեսնքը այդ քաղաքի մէջ միօրինակ է և ձանձրալի. կանաչք և աղջիկները վարում են մի վնասակար նստողական կեանք, դոցանից շատը զոհ է լինում բարակացաւ ասացեալ տկարութեանը: Զարմանք չէ. Նախիջևանում, ինչպէս նաև առ հասարակ Ասիացի մէջ, ըստ մեծի մասին գործածական կերակութքը են խմորեղն, որ մեծապէս զօրացնելով զօլոտուխա ասացեալ տկարութիւնը մանուկ մարգերի մէջ, սոցա պատանեկութեան հասակում, մինչ արիւնը առասութեամբ վագում էր մարմնի դէսի ի այդ առհմանքը, արդէն մեծ յաջողութեամբ ձեռնոտու են լինում; որ բարակացաւական բլբակները բաժանեէին արիւնից և նստէին թօքերի կազմուածքի մերացն: Եւ այն:

Մենք զիտմամբ վերցրինք աշխարհաբար լեզւի նմուշներ շիւսսափայլի (1858 թ.) և Կոռունի (1860 թ.) առաջին տարւայ հրատարակութիւններից, որովհեաւ նոքա են գլխաւորապէս, որ յայտարարում են արեւելեան աշխարհաբարի մուտքը զրականութեան մէջ: Դոցա հետ յիշատակելու է Ռ. Պատկանեանի ու ընկերների առաջին հրատարակութիւնը (1855 թ.) և երկրորդը

1856-ին դոքա աշխարհաբարի գահակալութեան առաջին ժամեաց յայտարարներն էին, որի համապատասխան և այդ պրակները կրում էին այս նշանաբանը՝ «գրէ այնպէս, ինչպէս որ խօսում են, և խօսէ այնպէս, ինչպէս որ գրում ենու» Սա էլ, թէև աշխարհաբար, բայց իւրատեսակ էր. աւելի քան Հիւսիսափայլի մէջ—այստեղ ոտանաւորի ներդաշնակութեանը զոհւած էր աշխարհաբարի կանոնաւորութիւնը. դորա կլասիկականն նմուշը տալիս է «Արաքսի Արտասուքր», գրւած և հրատարակւած այդ ժամանակներում.—թէև շատ մուգիկային բայց մի կատարեալ խառնուրդ է նա խօսակցական աշխարհաբարի, գրաբարի և տաճկահայկականի: Իբրև լեզու—այդ ձեւի խառնուրդը զարգացում չունեցաւ և մնաց մեկուսացած. բայց յիշւած և նոցա յաջորդած պրակների ոչ բոլոր ոտանաւորների լեզուն այդ աստիճանի մեծ խառնուրդ էր ներկայացնում. Դոդութեանի «Ծիծեռնակը» (Ծիծեռնակ, ծիծեռնակ, Դու գարոնան սիրուն թունակ, Դէսի ուր, ինձ ասա, Թուչում ես այդպէս արագ: Անդ հեռու ալեսոր Հայր ունիմ սգաւոր, Որ միակ իւր որդուն Սպասում է օրէօր: Երբ տեսնես դու նորան, Խնձնից շատ բարեարա, Ասա թող նստի լայ իւր անբազդ որդու վրայ)՝—այդ ոտանաւորը գրեթէ անխառը մաքուր աշխարհաբար խօսակցական լեզուն էր, որպիսին մեր նոր գրականութիւնը ժառանգ էր ստացել, այսպէս ասած, անդիր աշխարհաբար ժամանակից:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ նախքան նոր լեզու ով գրականութիւն սկսելը՝ մենք, գաւառաբարբառներից դուրս, արդէն ունէինք մի լեզու, առանց գրականութեան, բայց կատարելութեան չհասցրած գրական լեզուի արժանիքներով: Դա խօսակցաբար մշակւած լեզուն էր, որ բնաւ չպիտի շփոթել գաւառական բարբառների, հետևապէս և ոչ Արովեանի պոէմայի լեզուի հետ: Բայց արդէն նոր շրջանի սկզբում, այդ աշխարհաբարը, զանազան մարդկանց գրչի տակ՝ շատ կամ քիչ տարբերութիւններ էր ցոյց տալիս, որ մասամբ կարելի է տեսնել վերը առաջ բերած նմուշներից: Դա սկիզբն էր խօսակցական աշխարհաբարի զրական Մշակութեան, որ զանազան գրողներ տարբեր էին հասկանում: Այդ տարբեր հա-

չեացքները ստեղծեցին աշխարհաբարի գանազան շկոլաներ, որոնց ուղղութիւնները որոշում էին նրանով, որ ոմանց ձգտումն էր ժողովրդին աւելի ևս մատչելի լինել, ձեռք մեկնելով գաւառաբարբառներին, երբեմն նոյն իսկ զգուշաբար իջնելով մինչ նոցաստիճանը. միւսների ձգտումն էր աշխարհաբարը մօտեցնել զրաբարին, որպէս զի կարելիին չափ քիչ տարբերութիւն լինի նորի և հնի մէջ. երբորդների ձգտումն էր ոչ այս և ոչ այն, այլ միայն հնարաւորութիւն ստեղծել, որ աշխարհաբարը արտայալտի եւրոպական մոքի ամբողջ ժոխութիւնը իւր բառերի գանձով և նորաբոլոր արամաբանական նրբութիւնները՝ իւր քերականական կազմութիւնով: Այս վերջին շկոլան մեծ մասամբ նպաստաւոր եղաւ երկրորդին, նոյն իսկ առանց դիտաւորութեան, որովհետև իւր քուռն ցանկութեամբ շտապով բառերի գանձ ժողովելու՝ նա այդ աւելի հեշտութեամբ գտնում էր Հացկազեան բառարանի մէջ, որ մի պատրաստի գործ էր, քան թէ գաւառաբարբառների մէջ, որոնց զեռ ուսումնասիրել հարկաւոր էր, մանաւանդ որ տեղական բառերի պէտքականութիւնը գրականութեան համար զեռ ևս ապացուցւած չէր. Նոյն նպաստը այդ շկոլան գտնում էր նաև գրաբարի գարձւածների մէջ: Սակայն այդ զանազան ձգտումները չստեղծեցին իրարից կատարելապէս զատւած շկոլաներ, այլ յաճախ ձուլում էին իրար հետ՝ իրար վրայ ներգործելով, և ոչ թէ բաժանելով մեր արևելիան աշխարհաբարը մի քանի ճիւղերի. լեզուն մնաց մի և անբաժան, բայց տարբեր ազգեցութիւնները նորանում մասամբ պահպանեցին, մասամբ ստեղծեցին քառական զրութեան տարբեր. այնպէս որ միւնոյն գրականութեան մէջ մենք գտնում ենք տարբեր ուղղութիւնների աշխարհաբար, մի երևոյթ, որ, հարկաւ աւելի նւազ չափսերով, կրկնւում է նոյն իսկ միւնոյն գրողի գրւածքում:

Մեր աշխարհաբարի գրական զարգացման համար անկարևոր չէ եղած այս հանգամանքը, որ նա, այդ զարգացումը, չի ընթացել զուգահեռաբար հայ ազգի զարգացման հետ: Աշխարհաբարը, զեռ նոր միայն գրական լեզու դարձած՝ իրեն տեսաւ եւրոպական ազգերի ծովածաւալ գրականութեան դէմ յանդիման կանգնած, որի հետ նա աւելի գործ ունեցաւ քան հայ ժողովրդի մոքի հետ.

այդ մեծ, ճոխ ու նրբալեզու գրականութիւնից նա իսկոյն սկսեց օգտուել, մինչդեռ ինքը, աշխարհաբարը, գրական անցեալ չէր ունեցել. և ահա, մինչդեռ աշխարհաբարը մի կողմից կուի մէջ էր գրաբարի հետ, նա սորա օգնութեանը դիմեց՝ եւրոպական գրականութիւնից շուտով օգտուել կարողանալու համար։ Եւ փոխառումները գրաբարից այնքան շատ եղան, որ աշխարհաբարը դառաւ հասարակ ժողովրդի համար մի նոր ձեւի գրաբար—քիչ հասկանալի, նամանաւանդ որ գրաբար խօսքերի և դարձւածների վրայ աւելացան բազմաթիւ եւրոպական բառեր և օտար լեզուների աղբեցութեան ներքոյ կազմւած նախադասութիւններ։ Այդ բոլորից աւելի զերծ մնաց ժողովրդի կեանքից վերցրած վիպագրութիւնը, որը իսկական շարունակողը և զարգացնողը կարող է համար ել այն խօսակցական աշխարհաբարի, որ կազմւել էր նոր գրականութիւնից առաջ։

Աւելի քան քառասուն տարի է ահա, որ մեր աշխարհաբարը գրական կեանք ունի. այդքան տարիներում նա անշուշտ յառաջդիմութեան սլուղներ է հասունացրել. շատ բան, ինչ սկզբում հարցական էր, այժմ որոշւել ու հաստատւել է. բայց և այնպէս նորա դրութիւնը քառական է և այն աստիճանի, որ կարսղ է նոյն իսկ վասնգաւոր լինել, եթէ այդ իրողութիւնը իւր ամբողջ ծաւալով չգիտակցւի մեր գրական դասակարգի կողմից։

Այդ հանգամանքը մեզ դրդել է խոնդիրը քննութեան առնել, և մենք նամանաւանդ սիրով հետեւում ենք այդ դրդումին, որ համոզւած ենք, թէ մեր հասկացած ձեռվ քննութիւնը նաև գրողնական հետեւանք պիտի ունենայ։ մեր արդի դրական լեզուն կանոնաւորելու մոքով։

Պէտք է նկատել որ այնքան տարբերութիւններ որ կան մեր այժմեան աշխարհաբարի մէջ միևնոյն իմաստով գործածւող բառերի նկատմամբ՝ չկան գրականալէս զարգացած ոչ մի լեզւի մէջ։ Մեր գործը կը լինի թւել մի առ մի այդ անհաստատ ձերը, չիշելով դոցա մէջ նոցա, որոնք միայն անդրագէտների դրչի արդիւնք են։ Աս կը լինի այդ կարգի բառերի գրեթէ լիակատար ցու-

ցակ, որոշ կերպով դասաւորած։ Մեր միտքն է առայժմ՝ ընդհանուրապէս արձանագրել անհաստատ կամ տարբեր ձևերը, առանց մշկին կամ միւսին նախապատռութիւն տալու։ բայց ուր այժմեանից կարող ենք դիտողութիւններ անել և լեզւական մի խնդիր պարզել և դորանով մեր գրական լեզւի կանոնաւորման նպաստել—այդ մենք կ'անենք այստեղ և եթ, վերապահելով իրաւունք միւսների մասին մեր դիտողութիւնները ապագայում անել։

Անցնենք ուրեմն։

I. Տարբերութիւններ միեւնոյն դերանունների հոլովման մէջ

1. ես, դու—ինձնով և ինձանով, քեզնով և քեզանով։ ինձնից, ինձանից, քեզնից, քեզանից։ մեզնով, մեզանով, ձեզնով, ձեզանով։ մեզնից, մեզանից, ձեզնով, ձեզանից։

2. նա, այս, այդ—նորա սորա, դորտ և՝ նրա, սրա, դրա։ նորանով, նրանից, նորանից։ նորանում, նրանում (միւսներն էլ այդ ձևերով)։ յողնակի՝ նոքա, սոքա, դոքա—նրանք, սրանք, դրանք։ նոցա, նոցանով, նոցանից, նոցանում։ սոցա, սոցանով և այլն։ դոցա, դոցանով դոցանից, դոցանում։

Նկատողութիւն։ «Նա» ունի և երրորդ սեռական՝ նորին, նոցին, որոնք այժմ՝ գործ են ածւում միմիայն մեծարանքի կամ պատրի տիալուների համար։ նորին գերապատռութիւն, նորին մեծութիւն, նոցին թագաւորական մեծութիւններ, և այլն։

3. ինքը—սեռական՝ իր, իրա, իւր, իւրեան, իրեն։ արական՝ իրեն, իրան, իւրեան։ գործիական՝ իրենով, իրանով, իւրեանով։ բացառական՝ իրենից, իրանից, իւրեանից։ ներդոյական՝ իրենում, իրանում, իւրեանում (կամ՝ իր մէջ և այլն)։ Յոդնակի՝ իրենք, իրանք, իւրեանք, ինքեանք (վերջինս սակաւ)։ իրենց, իրանց, իւրեանց, և այլն։

II. Տարբերութիւններ միեւնոյն գոյական անունների սկզբներում

4. ձգառում և ձգառումն—ձգառումի և ձգառման, ձգառումնով և

ձգտմամբ, ձգտումից. յոդնակի՝ ձգտումներ և ձգտմունքներ. ձգտումների և ձգտմանց. ձգտումներով, ձգտումներից, ձգտումներում:

Այդպէս են նաև՝ կախում և կախումն, խանգարում և խանգարումն, գոհացում և գոհացումն, վիճում և վիճումն, և այլն:

Նկատողութիւններ: ա) Այդ բառերից ոմանք ունին նաև ունք և ութիւն վերջաւորութիւն, բայց որովհետև ոմանք միայն ունք և ոմանք միայն ութիւն վերջաւորութիւնն են ընդունում, այդ պատճառով մենք առանձին-առանձին պիտի խօսնք նոցա մասին:

բ) ում կամ ումն վերջաւորութիւններով բառերը ներկայ աշխարհաբարում համեմատավէս սակաւ են. ամենամեծ մասամբ նոքա տեղի են տւել ութիւն և ունք վերջաւորութիւններին:

գ) ումն կամ ում վերջաւորութիւնով բառերը աւելի գրականութեան մէջ են գործածում, քան ժողովրդի մէջ, որը աւելի հակում է դէպի ութիւն և ունք վերջաւորութիւնները:

դ) Հասարակ ժողովրդի մէջ չկազ ոչ մի բառ ումն վերջաւորութիւնով. նա ճանաչում է միայն ում վերջաւորութիւնը. օրինակ՝ ուսում և ոչ ուսումն (ուսում տալ, ուսում առնել), խոստում և ոչ խոստումն. ժողովուրդը ասում է համբարձում (յայտնի տօնի անուն, որից և յատուկ անուն Համբարձում), և ոչ համբարձումն. Մկրտում (յատուկ անուն) և ոչ Մկրտումն:

ե. ում վերջաւորութիւնով կան նաև զուտ ժողովրդական բառեր. օրինակ՝ դադում անել (=վաստակել, օգուտ ստանալ). բեդնում անել (=խայտառակել. անունը բեդնում անել):

ֆ. ձգտում (կամ՝ ձգտումն) և ձգտմունք, յարձակում և յարձակմունք, համոզումն և համոզմունք, տատանում և տատանմունք, վիճումն և վիճմունք, վրզովումն և վրզմունք, ստիպումն և ստիպմունք, հոլովումն և հոլովմունք, և ուրիշներ:

ում և ումն վերջաւորութիւնով բառերի հոլովմը տեսանք վերև. ունք վերջաւորութիւնով բառերինը այսպէս է. ձգտմունքի, ձգտմունքով (ձգտմամբ, պատահմամբ, բերմամբ ձեի մասին տեսներք), ձգամունքից. ձգտմունքներ,—ների և ձգտմանց,—ներով,—ներից:

Սակայն ներկայիս աշխարհաբարի դրութիւնը բնորոշելու համար կարևոր է գիտենալ, որ ամեն գրող հաւատարիմ չի մնում այս տարբեր ձեւերից մէկն ու մէկին. ձգառումն զրողը զրում է սեռականը ձգտումի, ձգտումների և ձգտմունքների, ձգտմանց, և այլն:

Նկատողութիւններ: ա) Ոչ բոլոր բառերը ունք վերջացող ընդունում են նաև ում (ումն). օրինակ, բերմունք, պատահմունք, արարմունք, և ոչ նաև բերումն, պատահումն, արարումն. և ընդհակառակը՝ ներում և ոչ ներմունք; կահաւորում, և ոչ նաև կահաւորմունք: բ) ունք կամ ում վերջաւորութիւնները փոխուում են ութիւն-ի, բայց միայն յաճախ (վարմունք-վարւողութիւն, կահաւորումն-կահաւորութիւն) և ոչ միշտ (օրինակ, արարմունք, բայց ոչ նաև արարութիւն. իսկ արարողութիւն այլ բան է նշանակում):

Մակրայներ: Յայտնի է, որ մակրայները յաճախ կազմում են գոյականների գործիականից: Այդ ունք վերջաւորւած բառերից բերմունք և պատահմունք, մակրայներ տալու համար, գործիականում գառնում են նաև, և աւելի յաճախ, բերմանքը և պատահմանքը, չնայած որ չկայ այժմ բերումն բառ, և ոչ էլ պատահումն բառ՝ պատահմունք (ըլցայ, դէպ.ք) խօսքի մոքով. ասում են՝ բաղդերերմանքը նա հարստացաւ. պատահմանքը ևս այսուեղ ընկայ:

6. առաջարկութիւն—առաջարկ, խաղարկութիւն—խաղարկ, տաղտկութիւն—տաղտուկ, և ուրիշներ:

Նկատողութիւն: Այդ կարգին է վերաբերում նաև ձեռնարկութիւն և ձեռնարկ բառերը. միայն թէ ձեռնարկ սոսացել է նշանակութիւն նաև ուղեցոյցի և դասագրքի մեր արևելեան աշխարհաբարում: Անշուշտ այս վերջին իմաստով ձեռնարկ բառը կը վերանայ:

Մանրամասնութիւն բառը եզակիում չի կրնատուում, մինչդեռ յոդնակիում ասւում է՝ մանրամասնութիւններ և մանրամասներ (մանրամասների, մանրամասներով և այլն):

7. խոստովանութիւն, միիթարութիւն, հեշտութիւն, անարգութիւն և խոստովանք, միիթարանք, հեշտանք, անարգանք:

8. ընտրութիւն, կրկնութիւն, հմայութիւն—ընտողութիւն, կրկնողութիւն, հմայողութիւն:

Բացատրութիւն: Խօսքը այստեղ միմիացն այն բառերի մասին է, որոնք այդ երկու ձևերով գործ են ածւում միմեանց տեղ, այսինքն միեւնոյն իմաստով, և ոչ այն բառերի մասին է, որոնք այդ երկու ձևերով որոշ իմաստներ ունին և գոյցա համեմատ էլ որոշ գործածութիւն են գտնում ներկայիս զրականութեան մէջ, ինչպէս, օրինակ, մաքրութիւն և մաքրողութիւն. և կամ մանաւանդ՝ տեսութիւն (վիզիս, նաև զօրքերի աեսութիւն, եղելութիւնների տեսութիւն) և տեսողութիւն (աչքի տեսնելու ոյժը):

Նկատողութիւն: Մեր ներկայ աշխարհաբարում ութիւն վերջաւորութիւն ունեցող բառերը երեք ծագում ունին—ածականներից (պարզ գրութիւն, յատկութիւն և էութիւն ցոյց տալու համար). զործող անձեր նշանակող բառերից (զործողութիւն կամ պաշտոնավարութիւն ցոյց տալու համար), և բայերից: Առաջինները կազմում են ածականի վրայ ութիւն աւելցնելով՝ մեծ՝ մեծութիւն, փոքր-փոքրութիւն, ուրախ-ուրախութիւն, տիսուրտիսութիւն, մեծամիտ-մեծամտութիւն, վարւող-վարւողութիւն, հասկացող-հասկացողութիւն, ըմբոնող-ըմբոնողութիւն, և ուրիշներ. պարտաճանաչ-պարտաճանաչութիւն, զործունեայ-զործունէութիւն, կանխակալ-կանխակալութիւն, ցաւագար-ցաւագարութիւն, համբերատար-համբերատարութիւն, խելազար-խելազարութիւն, առողջ-առողջութիւն լուսաւոր-լուսաւորութիւն, բժշկական-բժշկականութիւն:

Երկրորդները կազմում են անձ ցոյց տւող բառերից և նշանակում են զործողութիւն, կամ պաշտոնավարութիւն. և որովհետեւ զործող անձ ցոյց տալու համար մեր լեզում շատ ձևեր կան, ուսոի շատ բազմատեսակ են նաև այդ կարգի բառերը ութիւն վերջաւորութիւնով: Ահա նմուշներ. քննադատ-քննադատութիւն. ուսուցիչ-ուսուցութիւն, նկարիչ-նկարչութիւն, գերասան-գերասանութիւն, գոխասան (գովք բառից=գովք ասող)-գովասանութիւն, վիպսասան՝ վիպսասանութիւն. գործակատար-գործակատարութիւն, զործակալ-զործակալութիւն, տոմարակալ-տոմարակալութիւն, խնամակալ-խնամակալութիւն. զինեզործ-զինեզործութիւն, վաճառական-վաճառականութիւն, կոշկակար-կոշկակարութիւն. աշուղ-աշուղութիւն, բժիշկ-բժշկութիւն, մարգարէ-մարգարէութիւն, կախարդ-

կախարդութիւն, առաքեալ-առաքելութիւն, գատախաղ-դատախացութիւն, խոզարած-խոզարածութիւն, ըմբիշ-ըմբիշութիւն, բան-ւոր-բանւորութիւն, և այն, և այն:

Բայական ծագումից են՝ գրութիւն, սովորութիւն, (սովորոյթ), թուլառութիւն կամ թուլառութիւն, փրկութիւն, խոստովանութիւն, (=խոստովանք), կատաղութիւն, գայթակղութիւն, սակարկութիւն, ընտրութիւն, հմացութիւն, համբերութիւն, մոռացութիւն, էութիւն և այն, և այն:

Ոմանք «ութիւն» չեն ընդունում՝ տառապանք, հրապուրանք, (հրապոյք), թոթովանք, գեղգեղանք, աղաչանք, պաղատանք, բամբասանք, կապանք, պատրանք, դաւանանք, ամօթանք (=ամօթ), խոսում, խոսումնենք, և այն: Կան սակաւ բառեր—իք վերջաւորութեամբ՝ նոյն իմաստով, օր. սպառնալիք (=սպառնանք=սպառնալիութիւն), թէե այդ վերջաւորսւթեամբ բառերը առհասարակայլ իմաստ ունին (օր., սառնամանիք, և այն):

Ուրեմն մենք ունինք միևնոյն կարգի մտքեր յախոնելու համար բառեր ութիւն (նաև-ողութիւն), ունք, ում (նաև-ումն), անք և իք վերջաւորութիւններով. ապա նաև կրճատ ձևեր (առաջարկ, և այն) և վերջապէս աւելի պարզ ձևեր (օր. գրութիւն յաճախ նշանակում և դիրք, սկզբունք ոմանք ասում են սկիզբ, սովորութիւն=սովորոյթ, ձեռագրութիւն=ձեռք, և այն), և նոցանից շատերը, որպէս տեսանք, գործ են ածւում մէկը միւսի տեղ կամ կատարելապէս փոխարինում են իրար:

9. Հիմք, հիմունք (նաև հիմն).

Տարբեր վերջաւորութիւնները մասամբ տւել են այդ բառերին նաև տարբեր զործածութիւն, բայց ոչ բոլորովին: Առայժմ սա հաստատ է որ շօշափելի առարկաների (օրինակ՝ որեւէ շինութեան) նկատմամբ գործ է ածւում միայն հիմք բառը, (տան հիմք), իսկ հիմունք-ը գործ է ածւում միայն մոտային առարկաների համար «սպատճառաբանութիւն» խօսքի իմաստով (օրինակ՝ որննը են ձեր հիմունքները): Բայց մոտայինի համար էլ գործ է ածւում հիմք բառը (օրինակ՝ ինչ հիմք ունիս այլպէս կարծելու): Ապա կարելի է նշմարել, որ մոտային առարկաների համար հիմք աւելի գործածական է եղակի հոլովներում, իսկ հիմունքը՝ յոդնակիում: (իմ

հիմունքները, և ոչ իմ՝ հիմքերը, այդ հիմունքներից բղխում է, և ոչ այդ հեմքերից բղխում է. այդ բոլոր հիմունքներով ես կարծում եմ որ..., և ոչ՝ այդ բոլոր հիմքերով ես կարծում եմ որ...)։ Աերջապէս կարող ենք նկատել, որ եզակիի սեռական հոլովումերը խօսքը շօշափելի առարկայի մասին է, գործ է ածւում հիմք բառը (օրինակ, տան հիմքի քարերը), մինչդեռ մոտային առարկաների համար գործ է ածւում այժմ հնացած հիմն բառի սեռականը, և առառում է օրինակ՝ ինչ հիմնն վրայ այդպէս էք խօսում, և ոչ՝ ինչ հիմքի վրայ էք այդպէս խօսում։

10. անձ, մաս—անձն, մասն; Հոլովումը՝ անձի, անձով, անձից և անձնի, անձնով, (անձամբ. տես ներքեւ), անձնից. անձեր և անձինք. անձերի և անձանց, անձերով, անձանցով, անձերից, անձինքներից։ —Մասի, մասնի, մասով, մասնով (մասամբ, տես ներքեւ), մասից, մասնից, մասում, մասնում. մասեր, մասներ, և այլն։

Նկատողութիւն։ Կաց մնացած նաև մասունք, որը սակայն գործ է ածւում ննջեցեալների և մասնաւորապէս սուրբերի մարմի մասերի համար, և նախկին ցողնակիից դառելէ առանձին բառ՝ մասունքի, մասունքով, մասունքից. մասունքներ կամ միայն մասունք, մասունքների և մասանց, մասունքներով, մասունքներից։

Մակրայ—անձամբ և մասամբ (և ոչ անձով, մասով, օրինակ՝ անձամբ գնացի. մասամիշ ճիշտ է)։

11. կին, կնիկ։ Հոլովումը—կնոջ, կնոջով, կնոջից և կնկայ, կնկանով, կնկանից. կանայք, կնիկներ, կիներ, կնանիք (երկու վերջինները սակաւ). կանանց, կնիկների, կիների, կնանոց, կնանոնց, (երկք վերջինները սակաւ). կանանցով, կնիկներով. կանանցից, կնիկներից, կնանոնցից (վերջինս սակաւ)։

Նկատողութիւն։ Ժողովրդականն է աւելի կնիկ, բայց կին նոյնպէս շատ գործածական է. սեռականում, սակայն, «կնկայ» բայց արձակապէս ժողովրդական է, իսկ «կնոջ» գրեթէ միմիայն գրական։

12. դարուն—դարունք, աշուն—աշունք։ Հոլով.՝ դարնան և դարունքի, դարնանով (անգործածական), դարունքով, դարունքից. դարուններ, դարունքներ, և այլն։ Նոյն ձեռվ և աշուն (աշնան, աշունքի և այլն)։

Մակրայ—գարնանը և դարունքին, աշնանը և աշռնքին:

13. Քիթ և քինթ—քթի և քնթի, և այլն. քթեր և քնթեր, և այլն:

14. արտասուք, արտասունք: Հոլովւմ են՝ արտասուքի և արտասունքի, և այլն. արտասուքներ և արտասունքներ, արտասուքների, (սակաւ՝ արտասուաց), արտասունքների, և այլն:

Կայ և արցունք, որը աւելի սահմանափակ գործածութիւն ունի, և այդ պատճառով չենք յիշատակում գրութեան տարբեր ձևերի մէջ:

15. թոյլութիւն, ծոյլութիւն և ուրիշներ—ծուլութիւն, թուլութիւն, և այլն:

16. ձեռ, ձեռք.—ձեռի, ձեռքի, և այլն. ձեռներ, ձեռքեր, ձեռների, ձեռքերի, և այլն:

Մակրայ—ձեռքեր, սեռական՝ ձեռքերի և ծեռաց. բայց վերջինս գործ է ածւում միմիայն որպէս մակրայ և նշանակում է «իսկոյն». օրինակ՝ նա ձեռաց գնաց բերաւ (=նա իսկոյն գնաց բերաւ):

17. ոտ և ոտք, ոտն և ոտնը: Հոլովումը—ոտի, ոտքի. ոտնով, ոտքով. ոտից, ոտքից. ոտներ, ոտեր, ոտքեր. մնացածը գոցա համապատասխան:

Նկատողութիւն: Ուն ձեւը ոչ միայն գրաբարեան է, այլ և պահպանւած է մի քանի բառբառներում, ուր կայ և ուժնը. իսկ ներկայ աշխարհաբարում իբրև բառի սկիզբ—նա չի գործածւում երբէք. բայց հոլովներում երեւան է գալիս:

18. որդ, որդն, որդնը, Հոլովում են՝ սեռական՝ որդնի. որդնով. որդնից. որդներ, և՝ որդեր, որդների և որդերի և այլն:

19. եղ, եղն, եղնը—եղան, եղի. եղնով, եղով. եղից, եղնից. եղներ, եղների և այլն:

20. բեռ, բեռնը—բեռան, բեռի, բեռնի. բեռնով, բեռով. բեռնից, բեռից. յոգնակիում՝ միատեսակ՝ բեռներ, բեռների և այլն:

III. Տարբերութիւններ միայն հոլովումների մէջ:

Այստեղ յիշատակելու ենք այն բառերը, որոնք ուղղականում՝ միայն մի ձեւ ունին, բայց հոլովում են առնապն երկու տեսակ:

Քանի որ գերանունները մեզում միատեսակ են ուղղականում, և տարբերում են միայն հոլովումների մէջ, ուստի նոքա ևս պէտք է տեղ բռնէին այստեղ. բայց նոցա վերը առանձին յիշատակեցինք, (ես, դու, նա, այս, և այլն), ուստի այստեղ չենք կրկնում:

21. Երեխայ. — Երեխայի, երեխի. մնացեալը դոցա համաձայն. յոգնակի՝ երեխաններ, երեխայք, երեխերք. երեխանների, երեխանց, երեխորց, (վերջինս սակաւ). երեխաններով, երեխանցով, երեխոնցով (սակաւ). երեխաններից, երեխերքից (սակաւ):

22. մարդ. — մարդու և մարդի. մարդով. մարդուց և մարդից. յոգնակի՝ մարդիկ, մարդեր (սակաւ), մարդիկներ (սակաւ). մարդկանց, մարդոց, մարդիկների (սակաւ). մարդկանցով, մարդերով, մարդիկներով (սակաւ). մարդկանցից, մարդերից, մարդիկներից:

23. մանուկ. — մանուկի և մանկան. մնացեալը միատեսակ՝ մանուկով, մանուկից. յոգնակի՝ մանուկներ և մանկունք (սակաւ). մանուկների և մանկանց (վերջինս սաելի սակաւ). մանուկներով և մանկանցից (սակաւ):

Նկատողութիւն: «Մանուկ» իբր մարդու անուն, հոլովում է միայն մի ձեռով՝ Մանուկի (և ոչ նաև Մանկան):

24. տղայ (գրւում է նաև տղա). — տղի, տղայի, տղով, տղայով. տղից, տղայից. յոգնակի՝ տղաներ, տղերք. տղաների, տղայոց, տղերունց, տղորց (վերջինն երեքը և մանաւանդ վերջին երկուսը սակաւ). տղաներով, տղերանցով, տղաներից, տղերանցից:

Նկատողութիւն: Տղի և տղերք աւելի ժողովրդական են, քան տղաներ, տղաների, և ունին նաև յատուկ գործածութիւններ: Խսկապէս տղայ մեզում նշանակում է ծնողների արու զաւակը, լինի սա մեծ թէ փոքր. բայց յաճախ նա գործ է ածւում այլ մոռերով. իբր փոքրիկ տղա, իբր ծաւայ, իբր գիմում մտերիմ ընկերոջ (այ տղա), դիմում մեծը փոքրին (տղաս, արի այստեղ): «Տղերք» ունի նշանակութիւն նաև «ընկերներ» խօսքի (տղերք, վերկացէք

գնանք!). որոշ դէպքերում բռնում է նաև «զինւորներ» բառի տեղը:

25. աղջիկ.—եզակիում գրեթէ միշտ միատեսակ՝ աղջկայ, աղջկանով, աղջկանից. յոգնակիում սակայն աղջիկներ և աղջկերք (=աղջըկերք). աղջիկների և աղջկերանց, աղջիկներով, աղջկերանցով. աղջիկներից, աղջկերանցից:

26. որդի. —որդու և որդոյ (վերջինս աւելի սակաւ). որդով, որդուց. յոգնակի՝ որդիք, որդիներ, որդւկերք (երկու վերջիններս սակաւ). որդկերանց, որդոց, որդիների. որդիներով, որդկերանցով. որդիներից, որդկերանցից, որդիքներից.

27. մատ—մատի և մատնի. մատով, մատնով. մատից, մատնից. մատներ և մատեր (վերջինս աւելի սակաւ). մատերով և մատներով, մատներից և մատերից:

28. ընկերութիւն և այլն.—ընկերութեան, ընկերութիւնի և ընկերութենի (վերջիններս սակաւ). ընկերութեամի և ընկերութիւնով, ընկերութիւնից, ընկերութենից (վերջինս սակաւ). յոգնակի՝ ընկերութիւններ և ընկերութիւնք (վերջինս աւելի սակաւ). ընկերութիւնների և ընկերութեանց. ընկերութիւններով. ընկերութիւններից:

Նկատողութիւն: —թիւն վերջաւորւող բառերի թիւը մեծ լինելու պատճառով՝ նկատած տարբերութիւնները կազմում են մեր ներկայիս աշխարհաբարի ամենաաչքի ընկնող անհաստատութիւններից մեկը, գլխաւորապէս այն, որ եզակիի դործիականին և յոգնակիի սեռականին է վերաբերում, քանի որ երկու ձեւերն էլ անխոտիր կերպով շատ յաճախ են գործ ածւում: Այդ առիթով նկատենք, որ զուտ աշխարհաբար ձեւերով զրողները շատ սակաւ են. կան որ զերադասութիւն տալով հանդերձ աշխարհաբար ձեւերին՝ գործ են ածում ընկերութեամի, չզրելով սակայն ոչ ընկերութիւնք, ընկերութեանց:

Ինչ վերաբերում է մեզ, մենք ջանացել ենք, հետեւելով ժողովրդական ողուն, մասամբ նաև ներդաշնակութեան պահանջներին, որոշ կանոններով ղեկավարւել: Մենք դիտել ենք, որ ուրա-

խութեամբ, աղահութեամբ, և այլն, ասում է մակրայների մըտքով (ուրախութեամբ կը դամ. ագահութեամբ կերաւ, և այլն), և ոչ միայն գրականութեան մէջ, այլ և ժողովրդի լեզումն Ուրեմն ժողովուրդը ճանաչում է — եամբ վերջաւորութիւնը, բայց միայն մակրայների համար Դորանից մենք եզրակացնում ենք, որ մակրայների համար պէտք է ընդունել գործիականի — եամբ վերջաւորութիւնը: Խսկ ինչ վերաբերում է բուն գործիականին՝ ժողովրդի մէջ գործածական է — իւնով վերջաւորութիւնը (քո ուրախութիւնովը ես էլ ուրախանամ, և այլն): Այդ պատճառով մենք այդ ձեւը պահպանում ենք իսկական գործիականի համար և ասում՝ դու քո համբերութիւնով կը ցաղթես, բայց՝ համբերութեամբ տարայ բոլոր ցաւերը:

Այդ առթիւ կարող ենք նկատել, որ աշխարհաբարում ոչ միայն այս դէպքում, այլ և ուրիշ դէպքերում օգտւում են զրաբարի գործիականից՝ մակրայ կազմելու համար. ասում են յարգանօք, թախանձանօք, հրճւանօք, անձկանօք (մինչդեռ դորա բուն ուղղականը այժմ՝ կորել է և ուղղականը այժմ անձկութիւն բառն է), իրօք (որ նշանակում է փսկապէս) և որի բուն ուղղականը նոյնպէս կորած է և նորա տեղը բռնում է այժմ Փիրողութիւնս բառը), ինդրանօք, սատարանօք:

Սեռականի համար հետեւում ենք ժողովրդականներին ձեին. բայց երբ յոդնակի սեռական հողովով շատ բառեր են շարւում միմեանց յետեւից՝ մենք, ներգաշնակութեան համար, թոյլ ենք տալիս եանց գործածել (սների կտուրների բարձրութիւնների համեմատ=տների կտուրների բարձրութեանց համեմատ):

29. եղբայր. — եղակիում միատեսակ (եղբօր, եղբօրից). յոդնակիում՝ եղբայրներ և եղբարք (սակաւ). եղբայրների և եղբարք (սակաւ). եղբայրներով, եղբայրներից:

Նկատողութիւն: Եղբարք, եղբարք ձեւը սահմանափակ գործածութիւն ունի. նա դեռ ևս մնացել է, երբ հաւաքական անուն կամ ֆիրմայի անուն են ուղում նշանակել. (օրինակ, եղբարք Գովրիկեաններ) և գործածական է մանաւանդ վաճառականական թէղթակցութիւնների մէջ:

30. տէր.—եղակիում միատեսակ (տիրոջ, տիրոջից). յոդան-
կիում՝ տէրեր և տեարք. տէրերի և տեարց. տէրերով, տէրերից:

Նկատողովթին: Տեարք ձեւը ներկայումն մնացել է միմիացն
օրպէս պատուի տիտղոս, և պարզններ» խօսքը փոխարինող (տեարք
հանդիսականներ. կամ՝ Մեծապատիւ Տեարք (այս ինչ անուն): Իբր
սեփականատէրեր՝ միշտ ասւում է տէրեր: Տէրտէր (քահանաց) հոլով-
ւում է այլ կերպ—տէրտէրի, տէրտէրով, տէրտէրից. տէրտէրներ,
և այլն:

31. յարգանք.—եղակիում՝ յարգանքի, յարգանքով, յարգան-
քից. յոդանկի՝ յարգանքներ. սեռական՝ յարգանքների և յարգա-
նաց. յարգանքներով և յարգանօք. յարգանքներից:

Այսպէս են և բոլոր բառերը անք վերջաւորութիւնով:

32. ամառ, ձմեռ.—ամառւաց, ամրան, ձմեռւայ, ձմրան.
ա-
մառով, ամառնով, ձմեռով, ձմեռնով, ամառւանից, ամրանից, ձմեռ-
ւանից, ձմրանից. ամառներ, ձմեռներ. ամառների, ձմեռների, և
այլն:

Մակըայ. ամառը, ձմեռը. ամառները, ձմեռները:

33. խումբ, սերունդ, և այլն.—խմբի և խումբի. խմբով և
խումբով. խմբից, խումբից. յոդնակի՝ խմբեր և խումբեր. խմբերի
և խումբերի, և այլն. սերնդի և սերունդի, և այլն. սերունդներ և
սերնդներ, և այլն:

Նոյն երկու ձևերով են հոլովւում ժողովուրդ, մոռնդ, եղունդ,
կուրծք, շունչ, դունչ, անասուն, կերակուր, եկամուտ, առեւտուր,
(=առուտուր), կուժ, բուկ, բուք, խուց, սառուց, կտուց, կտուր,
սուզ, տունկ, խունկ, մածուն, սունկ, խուրձ, կրունկ, խոր-
հուրդ, գունդ, սունկ, հունտ, բլուր, բազուկ, մուր, արուռ, մա-
ծուն, խլուրդ, կնունք, բայց ոչ՝ շուն (շան, շներ), անուն (տես
ներքե), մուկ (մկան, մկներ), ձուկ (ձկան, ձկներ), ջուր (ջրի, ջրեր),
անանուն (անանունի), տունկ (տունկի, տունկեր), դուռ (դռան,
դռներ), մուտք (մուտքի, մուտքեր), խուլ (խուլի, խուլեր), տուն
(տան, տներ) խառնուրդ (խառնուրդի, խառնուրդներ), Անուշ, Հայ-
կանուշ (Անուշի, Հայկանուշի), ծնունդ (տես ներքե), մամուս. (մա-
մուսի, մամուսներ), գլուխ (գլխի, գլուխներ և գլխներ), կուտ

(կուտի, կուտեր), թուղթ (թղթի, թղթեր), սպունգ (սպունգի, սպունգներ), թուր (թրի, թրեր), ուրուր (ուրուրի, ուրուրներ)։ կանգուն (կանգունի, կանգուններ), նամուս (նամուսի), գարուն, աշուն, ասուս, մատուռ (մատուռի), կոռոնկ, ուրիշներ, որոնց շարքը մենք յիշածներով սպառած չենք համարում։

34. Նիստ—նիստի և նատի. նիստով, նատով. նիստից, նստից. նիստեր, նստեր. նիստերի, նստերի, և այլն։

Այս կարգին են պատկանում այն բոլոր գոյականները ի ձայնաւորով բառի վերջին վանկում, որոնք հոլովւելիս՝ կարող են և սղւել և չսղւել. ազդպէս են՝ ծաղիկ, պանիր (պանիրի և պանիրի, պանիրներ և պանիրներ), թախիծ (թախիծի և թախիծի), և ուրիշներ, բայց ոչ մելիք (մելիքի), խաղալիկ, սանիկ, մասնիկ, մանկլաւիկ, և ուրիշներ, որոնք բնաւ չեն սղւում։

Սարգիս, Աւետիս, Աւետիք, Գագիկ յատուկ անունները նոյն կարգին են պատկանում, այսինքն երկու տեսակ են հոլովում, բայց դարձեալ միւսները ոչ. օրինակ, Բենիկ (Բենիկի), Կուսիկ (Կուսիկի), Յովակիմ, Յուսիկ, Սաթենիկ, Շուշանիկ։

35. Մահիճ. — մահիճի և մահիճի, և այլն. յողնակին միատեսակ՝ մահիճներ, և այլն։

Այս կարգին են պատկանում այն բոլոր գոյականները, որոնց վերջին վանկի ի ձայնաւորը սղւում է կամ չի սղւում եղակիում։ մինչդեռ յոգնակիում բնաւ չի սղւում։

Նկատողութիւն: Բառեր, որպէս երգիչ, ուսուցիչ, և այլն անպատճառ սղւում են եղակիում և անպատճառ պահպանում են ի ձայնաւորը յոգնակիում (երգչի, երգիչներ, ուսուցչի, ուսուցիչներ)։

36. Դուռ—դրան (նաև դւան), դրնի (վերջինս սակաւ). դըռնիվ, դռնից, դռներ, և այլն։

Նոյնն է և կուռ (կուռն և կոռի, կռներ)։

37. մատուռ.—մատուռի և մատրան. մատուռով. մատուռից. մատուռներ, և այլն։

Այս բառը ուրեմն տարբերւում է նախընթացից նորանով որ չի սղւում։

38. Ճնունդ.—Ճնունդի, Ճննդի, Ճննդեան. Ճնունդով, Ճըննդով, Ճննդեամբ. Ճնունդից, Ճննդից, Ճննդեանից (սակաւ). յոդնակի՝ Ճնունդներ և Ճննդներ (սակաւ), և այլն:

Նոյնն են և գալուստ, գալուստի և գալստեան. փախուստ, թաքուստ, կորուստ և ուրիշներ:

Նկատողութիմ: Գալուստ իբր յատուկ անուն՝ Գալուստի կամ Գալստի, բայն ոչ՝ Գալստեան:

39. անուն.—անունի և անւան. անունով, անւամբ. անունից. անուններ, անունների, անւանց (սակաւ). անուններով, անուններից.

40. ձիւն.—ձիւնի, ձնի և ձեան. ձիւնով, ձնով. ձիւնից, ձնից. ձիւններ, և այլն:

41. սիւն, անկիւն.—սիւնի, սեան (սակաւ). սիւնով, սիւնից. սիւններ, և այլն:

42. արիւն.—արիւնի, արնի և արեան. (արիւնով, արնով, արիւնից, արնից):

43. ձի.—ձիու և ձիան. ձիով, ձիուց. յոդնակիում՝ ձիաններ, ձիեր և ձիանք. ձիանների, ձիերի, ձիանց. ձիաններով, ձիերով, ձիանցով (սակաւ). ձիաններից, ձիերից, ձիանցից (սակաւ):

44. ձու.—ձւի և այլն. յոդնակի՝ ձւեր և ձւաններ. ձւերի և ձւանների, և այլն:

45. տուն.—տան, տնով, բայց բացառականում՝ տնից և տանից. ներգոյական՝ տնում. յոդնակիում՝ միատեսակ՝ տներ, տների, տներով, տներից, տներում:

46. ասպարէզ, հանդէս, ներսէս.—ասպարիզի և ասպարէզի. ներսէսի և ներսիսի. ասպարէզով, ասպարիզով. ասպարէզից, ասպարիզից. ասպարէզում, ասպարիզում. յոդնակիում՝ ասպարէզներ, ասպարէզների, և այլն (միատեսակ):

Նոյնը վերաբերում է նաև բոլոր այլ բառերին և անուններին, որոնք գրաբարի հետևողութեամբ, այժմ ևս էս, և էզ են գըր-

ւում՝ այսպէս, հանգէս, կէս, ասպարէզ և ուրիշներ. Յովհաննէս, Ներսէս, Սրբտուակէս, Արտաշէս, Մովսէս և ուրիշներ:

Նկատողութիւն: Չնայած որ յատուկ անուններից չիշածները և նոցա նմանները երկու ձեռվ հոլովւած ենք գտնում ներկայիս աշխարհաբարում, բայց արդէն իսկ կարելի է նկատել երկու հանգամանք. Ներսիսի, Մովսիսի (գրաբարից վերցրած) ձեւ միանգամայն խորթ է ոչ միայն ժողովրդին, այլ և գրականագէս կրթւածների խօսակցութեան. երբէք ոչ ժողովրդի և ոչ կրթւածների խօսակցութեան մէջ չի առւում՝ Յովհաննիսի, Ներսիսի, և այն, այլ միայն Յովհաննէսի (Օւաննէսի), Ներսէսի, Արփառակէսի, (օր., Յովհաննէսին տեսաց): Բացի այդ, նկատած ենք, որ Ներսիսի, Արտաշէսի գրողները այդպէս գրում են երբ խօսքը պատմական անձերի մասին է. իսկ ոչ պատմականների կամ ժամանակակիցների համար նոյն իսկ նոքա գրում են Ներսէսի, Արտաշէսի, և այն: Այդ հանգամանքը արդէն ցոյց է տալիս, որ յատուկ անունների համար գրաբար ձեւ (Ներսիսի, և այն) միայն արհեստականօրէն է պահպանում:

Այդ տարբերութիւններից յառաջացել են նաև տարբեր ձեւերը ազգանունների մէջ՝ Ներսիսեան և Ներսէսեան, Յովհաննիսեան և Յովհաննէսեան, և այն: Այդ առթիւ պիտի նկատենք, որ ազգանուններ ինչպէս զրելու մասին կատարելապէս աւելորդ է զբաղւել. ամեն ոք կրում է մի որ և է ազգանուն, որ նա իրաւունք ունի այնպէս կազմել, ինչպէս ինքը (և ոչ ուրիշը) կը կամենայ. Ինչպէս ուրիշը չի կարող այլ կերպ զրել մէկի ազգանունը, երբ սորան հաճելի է Աւետեանց կոչւել և ոչ անպատճառ Աւետիսեանց, Տաֆֆի կոչւել և ոչ Տաֆֆիեան, նոյնպէս և ոչոքի գործը չէ թէ մէկի ազգանունը Յովհաննէսեան է, Յովհաննիսեան, Օհաննէսեան թէ Վւաննէսեան, Ներսէսեան է, թէ Ներսիսեան, և այն:

47. աստւած.—աստուծոյ և աստծու. աստուծով, աստըծով. աստուծուց, աստըծուց (աստծուց) և աստւածանից. յոդնակին միատեսակ՝ աստւածներ, աստւածների, և այն:

48. ատեան, մատեան, պատեան, վայրկեան.—ատեանի և ատեանի. ատեանով, ատենով. ատեանից, ատենից. նոյն են և միւսները. յոդնակի՝ ատեաններ, մատեաններ, պատեաններ, և այն (միատեսակ):

49. Յոյս, լոյս,—յուսոյ, լուսոյ, և՝ յոյսի, լոյսի. յուսով, յոյսից, լուսով, լոյսից. յոդնակիում միատեսակ (յոյսեր, լոյսեր, յոյսերի, և այլն):

Նկատողութիւն: Յոյս իբր իդական անուն հոլովում է միատեսակ՝ Յոյսի, Յոյսից:

50. կոյս.—կոյսի, կուսի և կուսոյ. կոյսով, կուսով. կոյսի, կուսի. յոդնակի՝ կոյսեր. կոյսերի և պուսանաց». կոյսերով. կոյսերից:

Նկատողութիւն: Յոդնակի սեռական «կուսանաց» մնացել է միմիայն «կուսանաց վանք» ասելու դէպքի համար, մինչդեռ կոյս հոգեսրականի համար ասւում է միայն՝ կոյսի, կոյսից, կոյսեր, կոյսերի, և ոչ նաև՝ կուսով, կուսանք, կուսանաց:

51. մահ.—մահւան, մահի, մահով, մահւամբ, մահից, մահւանից:

52. առաւօտ.—առաւօտաց և առաւօտեան, առաւօտից և առաւօտանից. յոդնակի՝ առաւօտներ, առաւօտների և այլն (միատեսակ).

53. մայիս.—մայիսւայ և մայիսի. մայիսից:

Ասում են՝ մայիսւայ ծաղիկ, բայց՝ մայիսի կէսին:

54. հոգի.—հոգու, հոգւոյ, հոգով, հոգուց, հոգիներ և հոգիք (սակաւ). հոգիների և այլն:

55. մահ.—մահի և մահւան. մահով. մահից և մահւանից:

56. կայսր.—կայսրի և կայսեր, կայսրով, կայսրից և կայսերից. կայսրներ և այլն:

57. Երեան, Էջմիածին.—Երեանի և Երեանաց, Էջմիածնի և Էջմիածնաց. (Երեանով, Էջմիածնով. Երեանից, Էջմիածնից):

58. Շուշի, Նուխի.—Շուշւայ և Շուշու, Նուխւայ և Նուխու. (մնացեալլ միատեսակ՝ Շուշով, Նուխով. Շուշուց, Նուխուց):

59. Բաքու.—Բաքւայ և Բաքւի (մնացեալլ միատեսակ՝ Բաքով, Բաքուց):

60. Մաձինի, Բաֆֆի, և այլն—Մաձինու և Մաձինիի, Բաֆֆու և Բաֆֆիի. Մաձինիով, Մաձինուց և Մաձինիից, Բաֆֆուց և Բաֆֆիից:

Նոյնը վերաբերում է բոլոր ցատուկ անուններին ի վերջաւորութիւնով. Բելինի, Ռոսինի, Սալիսբիւրի, Վիշի (Փրանսիական քաղաք) և այլն, բացի հայկական անուններից՝ Բագրատունի, Արծրունի, Ամատունի, և այլն, որոնք հոլովում են մի ձեռվ միայն՝ Բագրատունու, Բագրատունուց. Արծրունու, Արծրունուց, և այլն:

Սակայն նկատելու է, որ օտար անունները, ի վերջաւորութեամբ, սովորապէս հոլովում են հայկական նոյնաձև անունների հակառակը. աւելի սովորական է ասել՝ Ռոսինի, Ռոսսինիի, Սալիսբիւրիի և այլն:

61. Թիֆլիսեցի, Վաղարշապատեցի, Աշտարակեցի—Թիֆլիսեցի, Վաղարշապատեցի, Աշտարակեցի:

Նոյն է և Բաթումեցի և Բաթումցի. Քութայիսեցի, Քութայիսցի, և ուրիշներ:

Բացց ոչ բոլորը. օրինակ, ասում են միայն՝ շուշեցի, ազուլեցի, գանձակեցի, շամախեցի, Կարնեցի, սուրմալուեցի, պոլսեցի (Կ. Պոլսեցի). և, միւս կողմից, միայն՝ հաշտարխանցի, գեղաբեկցի, իգդիրցի, նորաշէնցի, գետաշենցի, և այլն:

—եցի վերջաւորութիւնը երբէմն փոխարինւում է —ըցիով, կամ —ացիով. վանեցի կամ վանըցի, ախալցիսեցի կամ ախալցիսցի:

Հոլովումը եզակիում միատեսակ վերջաւորութիւններով—Թիֆլիսեցու, երևանցու. Թիֆլիսեցուց, երևանցուց. յոզնակիում սակայն՝ շուշեցիք և շուշեցիներ. երևանցիք և երևանցիներ. Թիֆլիսեցիք և Թիֆլիսեցիներ. զարաբաղցիք և զարաբաղցիներ, և այլն. սեռական՝ շուշեցոց և շուշեցիների, և այլն. բացց մնացեալում միատեսակ՝ շուշեցիներով, շուշեցիներից, Թիֆլիսեցիներից, Կ. պոլսեցիներից, և այլն:

Նկատողութիւն: Ցիշեալ տարբեր ձևերից մեկը՝ երևանցիք, երևանցոց, գանձակեցիք, գանձակեցոց. զարաբաղցիք, զար սբաղցոց, և այլն, նաև ժողովրդականն է:

62. պատճառ, նպատակ, կարգ, միջոց, հրապարակ—գործիականում պատճառով և պատճառաւ. նպատակով և նպատակաւ, կարգով և կարգաւ, միջոցով և միջոցաւ, հրապարակով և հրապարակաւ:

Նկատողութիւն.—պատճառաւ, նպատակաւ, կարգաւ ամենքը
չեն գրում. իսկ այդպէս գրողները այդ ձևերը գործ են ածում
մակրայների համար. օրինակ՝ բնաւ չի ատւում՝ «նա իւր կարգաւ
պարծենում է, այլ աւում է միայն՝ նա իւր կարգով պարծենում
է. բայց աւում է՝ կարգաւ շարւեցին կամ կարգով շարւեցին.
աւում է՝ այդ որ այդպէս արաւ՝ նպատակաւ էր. նոյնպէս գրում
են—այդ պատճառաւ (կամ այդ պատճառով) մենք չեկանք. հրա-
պարակաւ յայտնեց:

63. չնորհ, առիթ.—գործիական՝ չնորհիւ և չնորհով, առի-
թով, առթով և առթիւ:

64. շոգենաւ—շոգենաւեր և շոգենաւներ:

Խնդիրը այսաեղ այն բարդ բառերի մասին է, որոնց վերջին
մասը միավանիլ գոյականներ են: Արդ, միավանիկ գոյականները յոգ-
նակիում ընդունում են պարզ—իր վերջաւորութիւն (գրեր, աշ-
քեր, մազեր, և այլն) ¹⁾. մինչդեռ մեր ներկաց արևելեան աշխարհա-
բարում դոցանից կազմած բարդ բառերից ոմանք պարզ—եր են
ընդունում; ոմանք—ներ, և ոմանք թէ այս և թէ այն:

օրինակ — եր վերջաւորութեան. դատաստանագրքեղ.

օրինակ — ներ , հողագործնեղ.

օրինակ խառն վերջաւորութիւնների. լրագրեր, լրագիրներ
և լրագրներ:

Դմանալու համար թէ այսաեղ մեր լեզուն զեկավարում է
որևէ որոշ կանոններով, թէ ոչ—պէտք է դիմել պարզ մեթոդին.
պէտք է տարբեր յոդնակի ունեցող բարդ բառերի բնաւորութիւնը
ուսումնասիրել և տեսնել թէ ինչ տարբերութիւն են ներկայաց-
նում այլ և այլ բարդ բառերը, որի հետեանքն է տարբերութիւնը
յոդնակիում: Եթէ կանոն կը գտնեի—ապա նորանով պիտի զեկա-

¹⁾ Թէս այդ կանոնը, որ գրաբարում անպահման է, աշխարհաբարում
այլ ևս անպահման չի կարող համարւել, քանի որ գրաբարում երկվան-
կանի բառերից ամանք աշխարհաբարում դառել են միաւանկ, բայց յոգ-
նակիում հոլովում են բաղմականի բառերի ձևով. մենք ունինք ձեւ,
բայց ոչ ձեռեր, այլ ձեռներ, թու—թոռներ, և այսպէս մի քանի ու-
րիշներ:

վարւել բոլոր այն դէպքերում ևս, որոնք ներկացիս համար գեռ հարցական են:

Առաջին շարք. դատաստանագրքեր, հողատէրեր, վկայաթղթեր երկրորդ շարք.—պատմաբաններ, գինեգործներ, պատմախօսներ:

Կայ արդեօք այդ երկու շարք բառերի մէջ զանազանութիւն, չնայած որ նոցա ու զզականները միավանկ բառերով են վերջանում (հողատէր, պատմաբան, և այլն):

Զանազանութիւն կայ, և դա հետեւեան է. առաջին շարքի բառերը իսկ և իսկ այն միտքն են յայտնում, ինչ միտք որ յայտնում են նոցա կազմող բառերը. մինչդեռ երկրորդ շարքի բառերը իսկ և իսկ այն միտքը չեն յայտնում, ինչ միտք որ յայտնում են նոցա կազմող բառերը:

Այսպէս՝ դատաստանագիրք բառը իսկ և իսկ նշանակում է դատաստանի գիրք, հողատէր իսկ և իսկ նշանակում է հողի տէր. վկայաթուղթ=վկայութեան թուղթ:

Դոցա յոդնակին կազմում է այնպէս, ինչպէս միավանկ բառերինը—պարեր. դրբեր:

Բայց այդպէս չեն երկրորդ շարքի բառերը. գինեգործ չի նշանում գինու գողօծ, այլ գինի գործող (=շինող). պատմաբան չի նշանակում պատմութեան լԱն, այլ պատմութիւն իմացող:

Առաջինները, ուրեմն, իսկական բարդ բառեր են և չեն նշանակում ուրիշ բան, քան նոցա կազմող խօսքերը. մինչդեռ երկրորդները, կազմած լինելով երկու բառերից, յայտնում են մի այլ միտք, քան նոցա կազմող բառերը:

Երկրորդներին պատկանում են ուրեմն նաև այն բարդ բառերը, որոնց վերջին մասը կազմող խօսքը անկախորէն նշանակութիւն չունի. օրինակ՝ չկայ կալ (=կալնող), խօս (=խօսող) բառեր. մինչդեռ կան գահակալ, աթոռակալ, պատմախօս, գրախօս բառերը. չկայ կեր (=ուտող) բառ. բայց կայ մարդակեր. չկայ վար (=վարող) խօսք, բայց կայ զօրավար:

Այդ երկրորդ կարգին են պատկանում ուրեմն նաև այսպիսի բառեր—միավանկ, բաղմավանկ, որոնց յոդնակին է միավանկներ, բազմավանկներ. որովհետև, օրինակի համար, միավանկ չի նշանա-

կում մի վանկ, այլ նշանակում է մի վանկ ոննեցող (և այդ պատճառով նա ածական է, յաճախ նաև գոյականի իմաստով): Նոյնն է և ստորակէտ, միջակէտ, վերջակէտ, ուր, օրինակ, միջակէտ նշանակում է ոչ թէ միջին կէտ, այլ միջում՝ դնւող կէտ, վերջակէտ=վերջում դնւող կէտ. ստորակէտ չի նշանակում ստորին կէտ, այլ կիսատ խօսքից յետոյ դնւող կէտ: Եթէ մի օտար գիտէ միայն ստոր և կէտ բառերը, նա չի հասկանալ թէ ինչ է նշանակում ստորակէտ. մինչդեռ բաւական է որ նա գիտենաց թէ ինչ է հող և տէր—և նա հեշտութեամբ կը հասկանաց թէ ինչ է հողատէր. գիտենալով հանդերձ մէջ և կէտ բառերը, նա չի հասկանալ միիջակէտ խօսքը, մինչև նորան այդ չբացադրւի:

Մի լաւ օրինակ. տնատէր և տանուտէր. առաջինը նշանակում է ոչ այլ ինչ բայց եթէ նորան կազմող բառերը (տան տէր). նորայոգնակին է տնատէրնը. երկրորդը, թէկ բազկացած է նոյնակս տուն և տէր բառերից, բայց չի նշանակում տան տէր, այլ մի ուրիշ բան, այն է գիւղապետ. և նորա յոգնակին է տանուտէրննը:

Եւ այդպէս են երկրորդ շարքին պատկանող բոլոր բառերը. նոքա չեն հասկացւում ինքն ըստ ինքնան, այլ պէտք է բացատրւեն. մինչդեռ առաջին շարքի բառերը կարու չեն բացատրութեան. նոցա իմաստը հէնց իրենց կազմող բառերի մէջն է:

Այդ կանոնը ձեռքներիս՝ կարող ենք վճռել բոլոր այդ կարգի տարակուսական դէպքերը:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

(Շարունակելի)

ՂՈՉԱՂԸ

ԻԲՐԵՒ ՏԻՊ ՀԱՅ ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՄԷԶ

(Աղելեան, Ա.-Տպիտութեան զրեք.՝ Մուլջ 1896 թ. № 5--
1897 թ. № 3-4)

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ

Եթէ մտքով լնտ դառնալու և նակելու լինենք այն ճանապարհի ծայրին, որտեղից համարեա թէ սկսում է հայ աշխարհիկ գրականութիւնը, մեր աչքին կը դիպչի մի խորին ուշտղրութեան արժանի երեսով։ Մեր նորածիլ գրականութիւնն հէնց իր արշալուսին մի շատ բազդաւոր վիճակ է ունեցել։ Մինչդեռ ոռւս գրականութիւնը միայն 40-ական թւականներից և աւելի շեշտած 60-ական թւերից է սկսում ուշադրութեան առարկաէ զարձնել հասարամ գիւղացուն և նրա կեանքը, մինչդեռ նա ալդ ժամանակներից է միայն իր ծոցն առնում անպիսի թարմ ու կենսունակ տարր, որպիսին ժողովուրդի կեանքն է, մեր գրականութիւնն ալդ կողմից շտու աւելի երշանիկ պալմանների մէջ է զանւել։ Նոր գրականութեան հալրը չամաչեց, այլ սիրով ու պատով հիւր կանչեց գիւղացուն իր տրեխով ու մորթէ փափախով, իր ցնցոտիներով ու խոնջացած մարմնով և գրականութեան մէջ առաջնակարդ ու պատւաւոր տեղը չատկացրաւ նրան։ Այս մի շատ կարեւոր և նրջանիկ հանգա հանք է, որ մեր գրականութիւնը հէնց սկզբից ազպիսի առողջ հողում է տնկւել, աչդպիսի առողջ հիմքերի վրա զրւել, Գիւղացին մտաւ գրականութեան մէջ, միայն նրա մի ծիւղի՝ վիպագրութեան մէջ։ Երկար ժամանակ նրա դրութիւնը զրադեցրաւ գրականութեան միւս ծիւղերը. բայց այս էլ մեծ բան էր, որ գրականութիւնը իր թերը թափ տալուն պէս լաւտարարեց իրան ժողովուրդի համար և նրա կեանքը նիւթ առաւ. Մեր վիպագրութիւնը, լետոյ, 70-ական թւականներից միայն զբագմունքի նիւթ դարձրաւ հասարակութեան միւս խաւերի կեանքը. Գրականութիւնն վիպական ճիւղը ալդ ուղ-

դութեամբ էլ շարտնակեց առաջ գնալ: Հայրն ունեցաւ մի հաւատարիմ որդի: Պոօշեանն էր, որ, 60-ական թւերից սկսած մտնելով գրական առապարեզ, իր գրւածների մեծագոյն և կարեռը մասի նիւթը ժողովրդական կեանքից առաւ Նկասելու արժանի մի երնութ է, որ մինչդեռ վիպագրութեան մէջ գիւղն առաջին տեղն էր բռնում, հրապարակախօսութեան մէջ գիւղն առաջին տեղն էր բռնում, հրապարակախօսութեան մէջ նա վերջին տեղումն էր. մինչդեռ վիպագրութեան մէջ ուշագրութեան էր առնւում զիւղը, խաւար, չետ մեացած ժողովուրդը, հրապարակախօսութիւնը զբաղւած էր մտաւորապէս աւելի բարձր շրջաններին նիւթ մատակարելով. նրանց էր զարթեցնում և գործի հրաւիրում:

Թէ Արովիեան՝ գլխաւորապէս, և թէ Պոօշեան՝ իւր սկզբի դրւածքում՝ նրան հետեւելով զուտ իրական վէաի ներկայացուցիչներ չէին սական: Նրանք գիւղացուն իդէալականացնում էին: Ազասին զիւղական ժողովուրդի առաքինութիւնների և բարեմասնութեանց մի մարմնացումէ. ունի անպիսի մտքեր, որոնք գժւար կարող են լինել 1826-ական թուների զիւղացու գլխում: Սուն ու Վարդիթերը մի-մի ներկայացուցիչներ են զիւղացու լաւագոյն լաւակութիւնների: Թէ հօր, և թէ որդու գրքերում զիւղական կեանքը անպէս է ցոյց տրւած, որ կարծես թէ ալդ կեանքը մի հովերգութիւն է, լի երջանկութեամբ, սիրով, հաւատարմութեամբ. սական ժամանակի ոգին անպէս չէր, որ թուլ տար շատ պոկել իրական կեանքից. երկու հեղինակների գրւածներումն էլ իդէալականն ու իրականը ձեռք-ձեռքի տւած են գնում-ունենալով իդէալական մարդիկ, նրանք աւելի մեծ չափով իրականից առած լուսանկար անձնաւորութիւններ ունին:

Ազակեանն «Արութիւն և Մանւէլյուով թոթափում է իր վրակից իդէալականութեան մնացորդները և պինդ խրուռմ է իրականութեան մէջ: Դրանով նա բռնում է մի պատւաւր տեղ մեր վիպագրութեան զարգացման պատմութեան մէջ: Նրա ալդ և չետագաէ գրւածներում ալլ ևս չկան իդէալական մարդիկ. բոլորը իրական են, սովորական, սոսկական: Աչառեղ գիւղացին հաւատարմութեամբ է վերաբարդրւած:

Գրական ալդ հոսանքը թուլացաւ չետագաէ տասնամեակներում. Պոօշեան և Ազակեանը մնացին միակ ներկայացուցիչներ վիպագրութեան ալդ հոսանքի, որ իր նիւթն առել էր ժողովուրդի կեանքը: Միակ նոր մարդը վագամենու Աղէքսանդր Արարատեանն էր, որի տւածներից կարեւորներն աւելի մտսնաւոր բնաւորութիւն ունէին, ներկայացնելով ժամանակի կեանքն ան չափով, ինչ չափով նա արտաքալուել է ուսումնարանական գործում: Նրա առաջին վաստակը՝ «Յորկու թումբը», որ մեծ չափով կրում է Պոօշեանի «Սու և Վարդիթերի» և նրա միջոցաւ՝ Արովիեանի կէսիրական ուղղութեան աղդեցութիւնը, տեղի տւաւ չետագաէ գրւածներին, որոնք աւելի ու աւելի մօտենում էին իրականութեան:

Ալդ կենսունակ ուղղութիւնը նոր զարկ է ստանում միաէն 90-ական

թւականներին և շարունակում է զարգանալ: Մենք ունինք երկու աչքի ընկնող երիտասարդ գրողներ՝ Ճուղուբեան և Աղելեան, որոնք մասնաւորապէս գիւղական կեանքն ունին աչքի առաջ: Նոր սերունդը նոր ուղղութիւն է տւել վիպագրութեան ալյ հոռանքին:

Ամենից առաջ նկատելու արժանի է այս իրողութիւնը, որ այդ երկու գրողների գործերում, բայցի իրականութեան հաւատարիմ լինելոց, այլ ևս ուրիշ բան չէք գտնի՝ խոչալականին հակւած լինելու մտքով: Զարմանալի էլ չէ: 30 տարին քիչ ժամանակ չէ, որ այդ ուղղութիւնը կատարելապէս հաստատէր մեր գրականութեան մէջ: Աղակեանի տւած զարկը արդէն շատ մեծ էր. աղջտել օգնութեան հասան Բաֆֆին իր սկզբական պատկերների ուղղութեամբ, Նիրւանգաղէն իր ամբողջ զրական գործունէութեամբ և Սունդուկեանն իր իրականին հաւատարիմ դրամաներով: Նոր սերունդը սնւել էր զրանց վրայ ու ինչ խօսք, որ չետ դնալ ալլ անկարելի էր:

Նախկին տասնամետակների ժողովրդական զրողները գլխաւորապէս աչքի առաջ ունէին գիւղական դասի ընտանեկան կեանքը, ընտանիքի անդամների փոխադարձ լարաբերութիւնները. Նոր զրողներն ընդհակառակին՝ զլուաւորապէս հետաքրքրուում են գիւղական համանքի կեանքով, համանքի անդամների փոխադարձ լարաբերութիւններով: Բայցի այս դէպի առաջ արած քայլից, նկատենք և այն, որ հին զրողները տւել են մեղ ժողովուրդի կեանքը առանց նրա բացատրութիւնների մէջ մտնելու, մինչդեռ նորերից Աղելեանը փորձեր է արել և շարունակում է անել ըմբռնելու համար ժողովուրդի կեանքի հիմունքները և բացատրել նրա բազմաթիւ ու բարդ երեսուների հիմնական պատճառները: Տեխնիկալի կողմից ևս նշանաւոր լառաջդիմութիւն է եղել. նորերի զրւածներն ալյ ևս աղղագրական նիւթերի ամբարներ չեն, ինչպէս երկու հին զրողների գործերը այլ աւելի ու աւելի են մօտենում վիպագրութեան իսկական ձեխն:

Աղելեանն ալնքան նոր զրող է, որ զեռ ժամանակը չէ նրա դրական ֆիզիոնոմիան որոշելու: Նա զեռ ևս ինքնուրովն ճանապարհ չի ընտրել, այլ ընտրելու վրայ է: Գիւղական կեանքի երեսութների բացատրութիւնով նա նման է Գ. Ռևապենսկուն, «Նրա ցաւ»-ում¹⁾, օրինակ, նա արծարծում է Գ. Ռևապենսկու «Հողի իշխանութեան» գաղափարը և դրանով ձգտում է բացատրել նաև մեր զրական կեանքի երեսութները. «Ծանր խնդիրը» ուղղակի նմանութիւն է (պիշտ էլ է պատկերի մէջ) Գ. Ռևապենսկու Յաճակ դրւածքի, «Հիւանդատ խիզճը» Յոլիա սօնելու համար ակնարկութեան անդամների ձեւը, որ ձգտում է հրապարակալուսական ակնարկութեան անդամների ձեւը:

¹⁾ Ա. Աղելեանի վիպական դրւածքները բոլորն էլ «Մուրճ» ումն են տպագրւած և առանձին գրքերով լուս չեն տեսած:

Ների բնաւորութիւն ստանալ, Ուսպեհնկունն է, Վերջին գրւածքում՝ «Տգիտութեան զոհերում» արդէն նկատելի են ինքնուրութիւնն նշաններ մեր գիւղական կեանքի հիմունքներն ըմբռնելու մտքով. թէն, ինչպէս կը տեսնենք, հեղինակը հազիւ է կարողացել զիտակցիլ այն իդէան, որ գուրս է սողացել գրչի տակից, նուն խև անդիտակցաբար, բայց որը պարզ երնում է հետամուտ ընթերցողին:

«Տգիտութեան զոհերը» արժանի է խորին ուշադրութեան և մի այլ կողմից. Հին հեղինակները մեղ տւել են գիւղական կեանքը, բայց՝ նահապետական կեանքը, Յետազաք տասնամեակներում մենք չենք ունեցել մի գրող, որ հետամուտ լինէր ժողովրդական կեանքին և ուշի ուշով արձանագրէր նրա կրած փոփոխութիւնները, այսպիսով մենք ունենք նահապետական կեանքը և այժմեան կեանքը—չըլիակ միայն այն ճանապարհը, միջին օղակը, որով փոփոխւել է գիւղական կեանքը. Երկու ծալրերի համեմատութիւնը ցուց է տալիս, որ շատ խոչոր ու մեծ ուշադրութեան արժանի փոփոխութիւններ են եղել հայ գիւղի կեանքում, որոնց մասին մենք ոչինչ չենք լսել. Մինչդեռ այդ երեսութիւններն ու փոփոխութիւնները ահազին նշանակութիւն ունին ժողովուրդի իտագաչ վիճակի համար. հարկաւոր է ըմբռնել թէ ինչ ուղղութեամբ է փոխուում ժողովուրդի կեանքը և ուր է զնում աղ հոսանքը, և ապա՝ լու է նա, թէ վատ, պիտի դէմ դնել նրան, թէ թողնել, որ շարունակի հին ուղղութեամբ առաջ զնալ.

I¹⁾

Աղելեանը լայտնի վերաբերմունք ունի դէպի իր վէպի դործող անձերը. կան այնպիսինները, որոնց ասում է, կան և այնպիսինները, որոնց սիրում է. Դէպի վէպի հերոսներից մէկը՝ Դալուստը նա երկու տեսակ վերաբերմունք ունի, նաևած թէ ինչպէս է նա իրան պահում. Հեղինակը քայլ առ քայլ հետեւում է նրան. բաւական է որ ճնշւի, չանդիմանութիւն ստանաչ, հալածանքի կամ ատելութեան ենթարկի, որ հեղինակի սիրուը լցւի ցաւակցութեամբ. Հինց որ նկատեց թէ Գալուստը ծռւում է ուղիղ ճանապարհոց, գնում է իր ատած անձերի լետեից, ապրում է ու գործում նրանց ցուցմունքներով, կամքի թուլութեան պատճառով չի ընդդիմանում եղած բռնութիւններին և, կարծես ակամայ, ստիպւած վատ գործ է անում, իսկուն հեղինակը փոխում է իր վերաբերմունքի ձեզ, սկսում է կշտամբել,

1) Ի նկատի ունենալով որ քննադատած վէպի հեղինակը, նամակով խմբագրութեանս, լայտնիլ է իր գիտաւորութիւնը վէպը նոր և արմատական խմբագրութեան ենթարկելու, ներկաւ լողածից մենք բաց ենք թողնում այն մասը, որ վերաբերում է վէպի գեղարեսական կողմին:

երես դարձնել նրանից, Աղելեանն իր մէպումն է ամբողջովին, որպէս մի կողմնակի անձնաւորութիւն նա ապրում է իր գործող անձերի հետ. նրա համար այդ անձերը կենդանի մարդիկ են, որոնց հետ լաւ կամ վաստ չարաբիրութեան մէջ է, Հեղինակի վարմունքներից նկատելի է աս, որ նա առհասուարակ ցաւակցում է ամեն մի ճնշածի և նեղութեան մէջ ընկածի, ամեն հալածւածի և հարստահարւածի, շատ անգամ առանց ուշալրսութիւն զարձնելու թէ ինչպիսի մարդ է նա, որպէս ընտանիքի և համայնքի անդամներ Ամեն զժբախտ—Հեղինակի բարեկամն է, մօտ է նրա սրախն:

«Տղիտութեան զոհերում» գործողներին կարելի է երկու կարգի դասաւրել. «զոչաղներ» և առջ զոչաղներ, «իմեզ մարդիկ»: Առանձին տեղ են քոնում, մի քանի երկրորդական անձերի հետ, Գալուստն ու Նողառ. մէկը (Նողառը) որպէս խելառ, ուստի և անընդունակ կեանքում բանական և ներգործական դեր խաղալու, միւսը որպէս թողլ կամքի և անհաստատ սկզբունքների տէր մարդ, որին դժւար է դասաւրութեան ենթարկել, Հեղինակի, համակրանքը միշտ «իմեզ մարդկանց» կողմն է և, ընդհակառակն, ատելով ատում, հարւածում և զատապարտում է «զոչաղներին». Այս երկու կարգի անձերն են, որ ներգործական և ազգու դեր են խաղում Աղելեանի վշպում, դրանք են որ ընդհարւելով, չափուի չարաբերութիւնների մէջ մտնելով, իրար հետ շիւելով կազմում են գիւղի շարժուն կեանքը, տալիս են նրան որոշ գոչն ու որոշ կերպարանք:

Ի՞նչ մարդ է աղոչաղը, Ահա թէ ինչ է ասում հեղինակը Նողառի հօրեղբօր Գրիգորի մասին. «Գրիգորը զոչաղներիցն էր, ժամանակի հոռագին լաւ հասկանալով նա զլուխը քաշ սուս ու փուս, մրջինի նման անընդհատ դէպի տուն էր կրում. Կաքն էր ու ինքը, ուրիշների հետ զործ չունէր. շատ հարկաւորն էր միթէ, որ մէկը մի բանում կարօտ է, միւսը քաղցած է, երրորդն օգնութիւն է աղերսում, չորրորդը անդունդի խորքից իր ձեռքը մեկնում և լալադին ձանով աղատութիւն պաղատում. աւելորդ բաներ են, զոչաղ ես—խարիր, սուս ասա, ուժ արա, գողացիր, կեղծաւորութիւն արա և տունդ լցրու: Հարեանս ինչ բան է, հիւրասիրելով կամ հիւր զնալը ինչ բան է. դրանք բոլորն էլ զատարկ սովորութիւններ են: Աշխատիր, տակդ պնդացրու, կ'ասեմ տղակ ես»: (Մուրճ, 1896 թ. № 10—11, էջ 1300):

«Ղոչաղի» մի քանի այլ լատկութիւնների հետ ծանօթացնում է Սինող-Ղուկասը, մեր առաջ զնելով մի «զոչաղ» մարդու և ղրանով միանգամայն պարզելով մեղ համար հաս իրան, իր ներքին աշխարհը, իր ձըգտումները, բնաւորութեան խոշոր գծերն ու իղէանները:—«Ղոչաղ կացէք, զոչաղ, խրատում է նա իր երկու որդիներին, տեսնում էք Համբարձումնեց, Աղատին, մի խորամանկն է որ... համ իր սաղ ընտանիքն է պատմ, համ էլ փող է ինտ ձգում. ինչու, որովհետեւ շատ զոչաղ է, մէկ որ

շատ աշխատող է. հէնց հրէն զործի է, իսկի հանդսառւթիւն չունի: Հողառ գործութիւնը շատ է սիրում, եռանդ ունի, և ամեն բան, ինչ որ ձեռքից դալիս է, անում է: Քանի անգամ եմ լսել, թէ Համբարձումենց Ազատը վաճառականների համար բամբակ ու բոժոք է առել մեր գիւղացիներից, խարել է, սոլորական գնից պակաս գնով է առել և էղպէսով, ի հարկէ, բաւական փող է աշխատել: Պա դա զոչաղ մարդու բան չի: Որտեղ մի վիճելի կամ զատարան ընկնելու դործ կալ, տեսար Ազատը իսկոյն մէջ մտաւ. մի բան կամ կը շինի կոմ չէ, բայց միջումը անպատճառ կաշառք կը վերցնի: Հարսաններից մի հարկաւոր բան կը խնդրի, կը ստանաչ, բայց ամիսներ կ'անցնեն, փոխարէնը չի տալ: Քանի ուզես, կ'ասի կը տամ, կը տամ, և վերջը ծիծաղելնիկ և երեսը պնդացնելով կ'ուրանար: Նախատինք, հայնուանք, բամբառանք կը լսի, բայց չի տալ. բանուրներ կը բանացնի, առաջ սիրով կը վարւի հետները, իսկ վերջը, սիլի-տղիլի անելով, վարձները կը կտրի: Բանուրները կը տրանջան, կ'աղաջեն, բայց իդուր. ինչ որ տրեմց՝ տւեց: Պա սա զոչաղութիւն չի: Տեսաք ինչպէս իր ընձանի ընտեռմ գտնուած հողը զոտով տիրապետեց: չի որ դա Սամսոնինն էր: Տեսաք նա ինչպէս զոռ արեց, երեսը պնդացրեց, թուր ու մուր կերաւ և իր հօրեղքոր հետ կիսու բակը սաղ էլ իր ձեռքը գցեց: Հիմա տեսնում էք ինչ տներ է շինել տալիս: Որդիք, կուք էլ էղպէս զոչաղ կացէք, որ սոված չմնաք, առաջ զնաք, փող լիս ձղէք» (Մուրճ, 1896, № 5, էջ 261—262).

Բերած քաղաքածներից մենք տեսնում ենք որ «զոչաղները» չականի կարգի մարդիկ են, որոնք ունեն չականի նպատակ և ձգտում են նրան հասնել չալտնի միջոցներով: «Ղոչաղները» «գլուխը քաշ մրջիւնի պէս տուն են կրում», որ «առուած չմնան, առաջ զնան, փող լիս ձեն»: «Մըր ջլւնի պէս» ասելով հեղինակը ուղարկ է ցոյց տալ նրանց աշխատասիրութիւնը, ամեն զործի ձեռնարկելու վասահութիւնը, եթէ աղջպիսով կարելի է առուն կրել: բայց զրամի միւս երեսը շուռ տալիս, մենք տեսնում ենք, որ նրանք «առուն են» կրում ուրիշներից խմելով, արգելելով ուրիշներին «առուն կրել»: ստացւում է ծանօթ «գոլութեան կոխւը», որ դաժան կերպարանք ունի և երեսում է իր նախնական մերկութեամբ: Ազդ պալմանաւորւում է գիւղական կոպիտ հանդամանքներով: Ակսպէս ուրեմն զոչաղները լաւանի կարդի մարդիկ են, որոնք իրանց նպատակին հասնելու համար ընկնում են գոլութեան կուփ ամենաթունդ տեղը և չաջողութեան համար ոչ մի միջոցի առաջ չեն կանգնում: Կեանքի աղջպիսի պալմաններում ստացւում են որոշ բնաւորութեան տէր անհատներ, մշակւում են որոշ բարոյական և մտաւոր չատկութիւններ և դործելու որոշ եղանակներ: Ազդ տեսակ կերպարանք ստացած գոլութեան կուփ առաջին պտուղը եսականութիւնն է, ամենակոպիտ ձևով արտավագուած: Սսականութիւնը լա-

րաբերական հասկացողութիւն է, նա ունի իր աստիճաններն ու տեսակ-ները: Կայ եսականութիւն, որ իրանից զուրս ոչինչ չի ճանաչում, կայ՝ որ իր ընտանիքից դուրս ոչինչ չի ճանաշում, կայ՝ որ իր ընտանիքից և բարեկամների աւելի կամ պակաս նեղ շրջանից զուրս ուրիշ բանն չի տեսնում, և ալդովէս շարունակ մինչև զասակարգերն ու աղքերը, որոնք մի տեսակ հաւաքական եսականութիւն են ներկալացնում: «Ղոչաղութեան» աշխարհում գործում է երկրորդ տեսակը. դա եսականութիւն է միացած աչլասիրութեան նւազ և հազիւ չնչող սաղմերի հետ: Ազդ կարդին պատկանող «ղոչաղը» եսական է այն մտքով, որ ուրիշ իր դրութեան մէջ գտընւողների շահերը նա չի հասկանում, չի ճանաշում և ոչ էլ ուզում է հասկանալ, ճանաչել կամ աչքի առաջ ունենալ. ինքն ու իր ընտանիքը, ահա բոլորը, ուրիշն ու իր ընտանիքը կամ նոյն իսկ բարեկամը նրան շատ քիչ է զբաղեցնում կամ թէ իսկի չի զբաղեցնում: Դրա հետ միացած են աչլասիրութեան նւազ, հազիւ չնչող սաղմեր այն մաքով, որ «ղոչաղը» կեանքի կուռում սրան ու նրան հարաւածելով, նեղելով, հարստահարելով, աշխատում ու չարչարում է նաև իր կնոջ ու երեխաների համար—ուրեմն ոչ միայն իր համար, աչլ և ուրիշի համար:

Եսականութիւնը որոշում է նրա վերաբերմունքը դէպի իր շուրջը գտնուող մարդիկը. աչդ վերաբերմունքը երկու բնաւորութիւն է կրում, նաւած թէ ինչ չարաբերութեան մէջ են շուրջը գտնաւզ մարդիկ նրա հետ: Դէպի օտարները ինչ տեսակ մարդիկ էլ լինեն նրանք, նոյն գալն է ինչ որ դէպի իր դրութեան մէջ գտնածը, աչսինքն դէպի ուրիշ «ղոչաղը». ձեռքն ընկաւ, ուժը պատեց՝ կ'աշխատի ողմել, խեղդել, նեղը լծել, հիւթը ծծել, մի խօսքով կարողացածին չափ իր շահերին ծառակեցնել, առուն կրելու» համար պէտք ածել: Խակ եթէ զիմացինը կինն է, տղան, աղջիկը կամ եղբայրը—այն ժամանակ չարաբերութիւնը փոխում է, վերաբերմունքը աչլ կերպարանք է ստանում: Նա չի ճանաշում նրանց անհասական հակումներն ու ձգտումները, նրանց բնաւորութեան ուրիշ լինելը. ոչ ոք իրաւունք չունի իր պէս չմտածելու, իր ցուց տւած ուզդութիւնից գուրս գործելու, ուրիշ հակումներ, ձգտումներ ու նպատակներ ունենալու քան ինքը. բացի, չնաչած սրան, նա կերակրում է նրանց, պահում պահպանում և կաշուց գուրս դալիս նրանց համար ապահով դիրք ստեղծելու: Ալսպէս ուրեմն «ղոչաղների» ամենաղերաւոր չատկութիւնը, նրանց ընդհանուր լալտարարը, բնաւորութեան հիմնական գիծը—եսականութիւնն է:

Ակեր-կոխիր (տապալէր) ու կերէ», ասում է Համբարձումը. ալս խօսքերը բովանդակում են «ղոչաղի» գործունելութեան ծրագիրը: Ալսպի-սով մնանք աւնինք գաղանական հակումներով զինւած անձինք, որոնք գիւղի կեանքում բաց են թողնում իրանց գալւաչին հակումների և եսա-

կանութեան սանձն ու սկսում են «վեր կոխել և ուտելի»։ Ստացւում է մի ռազմական դրութիւն, ուր պահանջում են չափու բարուական և մտաւոր լատկութիւններ։ խորամանկութիւն, կեղծաւորութիւն, խաբերացութիւն, ստախօսութիւն և այլն։ Սրանք «զոշաղների» սովորական զէնքերն են կուի ժամանակ, և վայ նրանց ճանկն ընկաւ... Այդ բոլոր զէնքերին աւելանում է և մի ուրիշը, որ նոյնպէս հաւասար չափով լատուկ է ամենին—չանդգնութիւնը՝ ուղղակի և փոխաբերական իմաստով։ նա, «զոշաղը» չի կանգնում ոչ մի գործի առաջ, որից շահ ունի, որ նրան միջոց է տալիս առուն լցնելո։ ոտի տակ է տալիս բոլոր սրբութիւնները, որ մշակւած են գարերով, կոխ է տալիս հանրակեցութեան հիմնական սկզբառները, բարուական պարտականութիւնները դէպի իր ընկերը և համագիւղացին։ խօսքը չետ առնել, խոստումը չկատարել աշկարա գողութիւն անել խզել հարեւանական և բարեկամական կապերը,—դա սովորական է «զոշաղութեան աշխարհում»։ Եւ այդ բոլորը նա անում է ոչ թէ զիտակցելով, ոչ թէ հասկանալով նրանց իսկական արժեքը,—նա այլքան զիտակից չէ իր վարմունքներին, —նա այդ անում է օրգանապէս, ուղղակի կեանքի կարծ փորձով համոզելով, որ այդ բոլոր «գատարկ բաները» խոչնդրու են իր նպատակներին։ նա ճանաչում է միան այն նպատակը, որին ձըգտում է, և զրա համար դործ է գնում ամեն ջանք, ունատակ է տալիս ամեն լիչ։ Երեսում է, որ այդ «ամեն ինչը» իր համար անքան նշանակութիւն է ունեցել երբեմն, որքան վեասելիս չի եղել իր կաշուն, զուտ նիւթական շահերն են նրան կապած պահել մաքրութեան, ազնւութեան, անկեղծութեան հետ, ամօր այդ շահերը այդ լատկութիւնների հետ մի տոպրակում չեն պարտակում, իրար զէմ են կանգնած—և նա զուրս է շպրտում այդ բոլոր «աւելորդ բաները»։ Մեր հարցին թէ ինչ մարդ է զոշաղը, պատասխանում ենք. զոշաղը մի իխստ եռական, կտրուկ և համապատասխան մտաւոր ու բարուական լատկութիւններով օժտւած մարդ է։

«Ղոշաղները» կրթւում են Սինող Ղուկասի ձեռին, որի ամենօրւաչ խրատներից մէկի հետ ծանօթացանք վերը։ Զահիները այդ խրատներն են ծծում իրանց մէջ, աշխատում են ճշութեամբ հետեւ հօր տաւծ ծրագրին և նմանել նրա զոված մարդուն։ Բոլոր «զոշաղների» նպատակն է «տունը լցնելո», հրապարակ հանելով իրանց բոլոր աւերող և կլանող լատկութիւնները և զործելով ամեն տեսակ միջոցներով, որ գալիս է ձեռներից։ բայց ինչի համար, ինչն է «տուն լցնելու» նպատակը, Որ, ինչպէս Սինող-Ղուկասն է ասում, սոված չմնաք, առաջ դնաք, փող մետ ձգէք»։ «Սորված չմնաք...», բայց սոված չմնալու համար հարկաւոր չէ իրար պատառուել, հարստահարել, նեղը լծել, սոված չմնալու համար հարկաւոր է միան աշխատել։ Ի՞նչ որ թիւրիմացութիւն կաչ ալստեղ մեր և ձեր «զոշաղի մէջ»։ անչուշու Սինող Ղուկասը «որ սոված

չմնաք» առելով ուրիշ բան է հասկանում: Ճիշտ է, որ, «սովորած չմնալու» համար, անհրաժեշտ չէ գայլ լինել: Սաթենիկի հայրը՝ Մկրտիչը «դոչաղ-ներից» չէ, բայց իրան չափով ապրում է, եօլա է գնում: Ծերունին խրատելով որդիներին, որ աշխատեն կուշտ լինել, այդ խօսքերը իր իսկական իմաստով չի հասկանում, նա չի վերցնում կուշտ լինելու տուժումը այլ՝ դէպի վեր, որքան կարող են: Նա ոչ թէ կուշտ լինել է քարոզում, այլ լաւ կուշտ լինել, այդ փոքրիկ խօսքն է խսկապէս, որ շատ մեծ նշանակութիւն ունի: այդ խօսքը հասարակ գոյութեան կոիւը զարձնում է կոիւ արտօնեալ դրութեան համար, կոիւ՝ լաւ, առաջնակարգ տեղերի համար: «Դոչաղն» աշխատում է, շարչարում, կուռմ ոչ թէ կուշտ լինելու, այլ լաւ կուշտ լինելու համար, որ շտա առելի է, քան սովորական մտքով կուշտ լինելը:

«Որ առաջ գնաք...» Գիւղացու համար առհասարակ և «դոչաղ» գիւղացու համար մասնաւորապէս այդ խօսքերը այն իմաստն ու նշանակութիւնը չունին ինչ որ մեզ, փոքր ի շատէ լան շաներ ունեցողներիս, համար (մեր տեսակէտից, ի հարկ է): «Առաջ գնալը» գիւղացու աչքում նոգնանիշ է հարստութեան, ապահովութեան և ազդեցիկ դիրքին ու ձայնին: «Շատ առաջ գնաց», ասում է գիւղացին այն մարդու համար, որ «իրան դրսուել է, տակը պնդացրելու», կարճ ասած, ինչ միջոցով կ'ուզի լինի, նիւթական ապահովութիւն է ձեռք բերել և որի ձանը, ազդպիսի պազմաններում գտնելու պատճառով, կշիռ գիւղացին մարդկանց մօտ... Առաջ գնալ—գիւղում նշանակում է ազդեցութիւն ունենալ: Այդ ազդեցութիւնը կարող է երկու բնաւորութիւն ունենալ, կարող են նրանից ակնածել, նրա ուժը գիւտակցելով փորձ չանել վաստ գիտաւորութիւններով նրան մօտենալու: «Դոչաղները» նորան դուրս կը համարեն իրանց լարձակման գծից: Կարող է գրան աւելանալ և նրա ազդեցութեան աւելի ներգործական կողմը: Կարող են նրա ասածով սժառ գալը միւսները, առանց նրան ոչինչ չանել, և ազն: Այս վերջինը, եթէ կարելի է ապագէս արտաքատել, «դոչաղի» գործունէութեան էմոցիալ կողմն է: Շատերը այդ կողմին իսկի չեն ել ձգտում: ազնքան որ իր կաշուն չամարձակւին գիտչել, նրանից լետու ինչ կ'ուզի լինի:

«Փող չետ ձգէք»... Աշխատել արգէն սերունդի և ապագայ հանդիսատ օրերի խնդիր կաց, մանաւանդ սերւանդի խնդիրն ապատեղ աւելի է շեշտաւած, քան առաջին երկու կէտում, թէն այնտեղ էլ չի բացակացում: որովհետեւ ապահով գիրքի և կուշտ լինելուն միան իր համար չէ որ ձգտում է ըղոչաղը, այլ և որդիների համար: Ծերութիւն կաց, հիւանդութիւն և ուրիշ փորձանքներ կան, երբ մարդ չի կարող աշխատել: ուրիշի վրայ, թէկուզ այդ ուրիշը հարազատ որդին լինի, ուս դնել դժւար է:

ուստի հարկաւոր է փող լիտ ձգել, որ հէնց որդու տանն ապրելիս էլ մի տեսակ կոչւած լինես, իրաւունք ունենաս:

Մենք ծանօթացանք «զոշաղների» բնաւորութեան մի քանի հիմնական գծերի, նրանց ձգուամների և նպատակների և նրանց գործերու եղանակի հետ ինչպէս տեսնում էք «զոշաղներն» են, որ կազմում են գիւղի կեանքում ամենաշարժուն դասը, նրանք են, որ ջանք ու եռանդ դարձած, դիմում են աջ ու ձախ և դանակ դառած ու դմակի վրայ ընկած, որքան կարողանում են՝ կտրում, «տուն են լցնում», իրար հրելով և լաւագուն պատառի ու ապահով զիրքի համար իրար միս կոծելով. Ղոչաղութիւնն է, որ ահապին ազդեցութիւն ունի զիւղական կեանքի ընթացքի վրայ, նա է, որ իշխում է շատ անգամ և շատ ու շատ դէպքերում «խեղճ մարդկանց» վրայ և հէնց այդ «խեղճ մարդկանց» ստեղծւելու պատճառն է դառնում. նա է որ աղքատի տակից կարպեան է քաշում, գոմից կովն ու եղբ, արտի երեսն է տանում և մանրատքը «չոլերն» է անում. Դա մի ուժ է, որ իր հօրութեան դիտակցութեամբ ուռած, խաղեր է խաղում ամենքի զլիին, որոնց իր ձեռքը կալող է ձգել. Այս է այն խոշոր և վերին առտիճանի հետաքրքրական ու նշանաւոր իդէան, որ դուրս է սողում Աղելեանի վէպից և բարձրանալով տարածւում ամբողջ վէպի վրայ և բացատրում վէպում տեղի ունեցած դէպքերի մեծագուն մասը. Մենք կը հետեւ ինք վէպի ընթացքին ընդհանուր առևամբ և ցոց կը տանք թէ ինչպէս «զոշաչութիւնը» ներկալանում է որպէս մի տիրապետող սկզբունք, որ իրանից դուրս ուրիշ սկզբունք չի ուղում ճանաչել, թէ ինչպէս նա իշխում է մարդկանց գործերի և մտածմունքներին և ուղղութիւն է տալիս նրանց, թէ ինչպէս «զոշաղութեան» սկզբունքը առնելով ձեռներես, որպէս ճրագ և բարձր պահելով վէտում տեղ գտած դէպքերի վրայ, կարելի է նրանց լուսաւորել, պարզաբանել, բացատրել և հասկանալ:

(Վերջը քաջորդ անգամ)

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

ԵԱՀԱԶԻՉՆԱՆ, Սմբատ.—Ամառնալին նամակներ։ Մոսկվա, տպ.
Ք. Բարխուդարեան, 1897. 200 էջ, ութածալ. գինն է 1 ռ. 50 կ.

Սմբատ Շահազիզեանցի ալս նոր աշխատասիրութիւնը մի զեղաղիտական (կալէզրուկոպակին) հանողէս է, ուր հեղինակը ներկայացնում է ընթերցողներին այն մտքերը, որոնք, որպէս պիտի կարծել, նորա սրտին ամենամօտիկներն են և որոնք նորան ամենից շատ են զբաղեցրել. «Ամառնալին» խօսքը ոչ մի ալ գաղափար չի տալիս զրքի բովանդակութեան մասին, բացի թերևս այն, որ ալդ «նամակները» գրւած են ամարանոցում, թեթև կերպով, ընդհանուր գծերով, առանց մնձ մանրամասների, «Նամակների» ձեն էլ չի պահպանւած ակզրից մինչև վերջ. սկսելով նամակի ձեռվ իւր մի աղզականին և նախկին աշակերտին, պ. Շահազիզը մոռանալով սկզբի ձեւ, շարունակում է գրել իսկական չօդւածներ, և միայն տեղ տեղ, անսպասելի կերպով, նորից վիշտում է իւր նախկին աշակերտի անունը, որով միայն խանգարում է գործի գեղարւեւտական կողմը,

«Նամակները» թւով 33 հատ են, որոնցից 21-ը, սկսած 5-րդից, Հին Հալաւատանին են վերաբերում, գրւած Ա. Գարագաշեանի «Բննական պատմութիւն հալոց» և Գր. Խալաթեանի «Արմանակ» առաջին գրքերի առիթով, Նամակները շօշափում են հետեւեալ նիւթերը. հալոց ծագումը և գրաբարը. Մովսէս Խորենացին որպէս պատմազիր. Հին Հալաւատանի բնակիչները (2 նամակ). Հայկ և Բել սընգրւելու (մազեր շինելու) և երես ներկելու սովորութը. Տիգրանուհին ըստ Փաենոփոնտի և ըստ Խորենացու. Տիգրան. հին կրօն. շան պաշտամունք. կին և մարդ աստւածներ. Վահագն և օձավիշապի պաշտամունքը. Հին հաւացոց էպուր. հին վիպասանսւթեան տեսակները. Խորենացու «Ոզմի» մասին (2 նամակ). Վասակի մասին (2 նամակ). թէ երբ է ապրել Խորենացին (Նամակ ԽХ և ԽХI). Այս բոլոր հատւածննրում պ. Ա. Շահազիզը ողենորւած պաշտպան է Մովսէս Խորենացու պատմութեան

վաւերականութեան ընդդէմ նորա կրիտիկոսների և մանաւանդ Խալաթեանի ու Գարագաշեանի, Ընդդէմ Գուտշմիտի, և Կառիէռի՝ պ. Շահաղիզ ընդունում է Մար-Աբասի գութիւն ունեցած լինելը (նամ. IV). Հայերի հնդկաեւրոպական ծագումը և իրանական կուտսուրան նա գըտնում է նշանակած նոյն խոկ Խորենացու մէջ, և, վիճելով Խալաթեանի հետ, մեր պատմաօր խօսքը թէ հայերը դուրս են եկել Բարելոնից, պ. Շահաղիզը գտնում է ոչ հակասական. Ընդդէմ Խալաթեանցի, նա գտնում է որ Տիգրանին վերադրած «երեսօք գունեանո (երեսը ներկած) խօսքը Խորենացին հարկ չունէր Եւսեբիոսից վերցնելու, հետեւով սորա Ակարմրաւտո բառին-և որ հին հայերի մէջ կար սնդուրելու, ծայրելու և շպարելու արհեստները»:

Նամակ I X -ում նա գտնում է որ այն, ինչ մեզ չափոնի է Տիգրանուէրի անունով, եղել է ոչ Տիգրանի քոյլը, որպէս ասում է հայ վիպասանութիւնը Խորենացու մէջ, ազ նորա կինը, որպէս նկարագրել է Քսենոփոնը:—Մի քանի գլուխներ նւիրելով հայոց հին կրօնին, պ. Շահաղիզ անցնում է Հայոց Լապոսին (Վիպասանութեան) և, Ընդդէմ Խալաթեանի, պնդում է որ Խորենացին ոչինչ չի հնարել Վահագնի երգի մէջ և որ հայոց վիպասանութեանն են արդ երգի («Երկնէր երկին և երկիր») ոչ միան սկզբի չորս տողերը ազ և լաջորդ վեց տողերը (նկատենք, որ պ. Շահաղիզի մնկնութիւնը երգի վերջին տողի «Աչքունքն էին արեգակունք» շատ քաշքուկ է թւում շում է ՎII կամ VIII դարը. իսկ

մեղ). Կոյնապէս սխալ է զտնում նապ. Խալաթեանի ազ կարծիքները Խորենացու մէջ պատահող վիպական տողերի մասին (Արտաշէսի երգը և ուրիշներ), որոնց նկատմամբ պ. Խալաթեանց բացասական ուղղութիւն է բռնում:

Չորս նամակներ (սկսած XVII-ից) ներբած են Գարագաշեանի հաւեացքներին Խորենացու մասին, երկու գլուխներում պ. Շահաղիզը իստ է դարձնում Գարագաշեանին սորա խօսքերը, որոնցով նա աշխատում է իւր «քննական պատմութեան» Դորդ մասում արդարացնել Վասակին, ներկայացնելով սորան իրեն Ալմաստուն քաղաքագէտո, հիմնելով Վասակի հասցէով Կորիւնի շուալլած դովեստների վրաց Շահաղիզը գտնում է որ Կորիւնը, իւր աշակերտ Մեսրոպի և գրելով վերջինիս մասին, հարկ չէր տեսնում թէ Վարդանի և թէ Վասակի և ազոց մասին խօսել քաղաքական տեսակէտներով, և որ Կորիւնը ազ խըդդրում իննակէտ չի կարող ծառաչել. իսկ ամեն ուրիշ կողմերից էլ Վասակը գատապարտելի էր իրեն վես հասցնող վրկութեան գործին:

Իւր չօղած-նամակներից, նւիրած Հին-Հայաստանին և մասնաւորապէս Խորենացուն, երկու վերջինները (XX և XXI) գրւած են Խորենացու երբ ապրած լինելու խնդրի առիթով, որ, ինչպէս չափոնի է, վիճելի խնդիր է գառել, մասնաւոնդ Փրանսիացի պրոֆ. Կառիէո՛ի հետազոտութիւններով, որը Խորենացու ապրած ժամանակը որոգակունք» շատ քաշքուկ է թւում շում է ՎII կամ VIII դարը. իսկ

այժմ պ. Խալաթեանց, աւելի հեռու գնալով՝ որոշում է այն ԱՀ դարը. Մինչդեռ գիտնական հետազոտողները իրենց ենթադրութիւնները հիմնում են այն աղքիւրների վրայ, որոնցից օգտւել է կամ իրը թէ օգտւել է Խորենացին, պ. Շահազիզը, կամնալով Խորենացուն Վ դարի գրող ճանաչել, ընդդիմախօսում է հակառակ մտածողներին, նոցա առաջը դնելով ՎII, ՎIII և ԱХ դարերի քաղաքական և կրօնական հանգամանքները Բիւզանզիոնում և Արարիալում, խնդիրներ և հանգամանքներ, որոնք ի մօտու պիտի շօշափէին հաւերին ևս, բաց որոնց մասին բնաւ վիշտառկութիւն չկայ Խորենացու մէջ։ Պր. Շահազիզ վիշեցնում է Բիւզանզեունում ծագած և բորբոքւած պատկերամարտների կութիւն և պատկերապաշտների կութը, որ տեսեց աւելի քան 100 տարի, մինչև 842 թւականը, վէճեր, որոնք «բոցի նման տարածւեցին և արեեւեան քրիստոնեաց ազգերի մէջ»։ Այդ վէճերի մասին վիշտառկութիւն կաչ լետազար դարերի հաչ պատմագիրների մէջ, բայց Խորենացու մէջ և ոչ մի խօսք դոցա առիթով բացի այդ, Խորենացու վերաբերմունքը դէպի լունաց եկեղեցին և կղերը շատ հաշտ է, որպէս և պիտի լինէր Վ-րդ դարում, մինչչեռ լետազար դարերում ծագրած պատկերութիւն կար Հայերի և Յուների մէջ։ Ինչ վերաբերմում է Արաբացոց, որոնց շարժման մէջ է ձգում իսլամը, և որոնք ծաղկեցնում են գիտութիւնները և իրենց օրինակով զարկ տալիս գիտութիւնների ծաւալմանը Հայերի մէջ, —իսլամական դարերը «ոչ մի նշով

չեն ձգում Խորենացու պատմութեան վրաց։ Պր. Շահազիզը գտնում է մի այն մի բան Խորենացու մէջ, որ լատուկ չէր Վ կրօնական դարին։ այդ ազգանութեան գաղափարն է, որով առգործած է Խորենացին։ բայց այդ նա մեկնում է նրանով, որ և Վ-րդ դարը, իւր աղմկալից վիճակով հնմանագոյն մտքեր կարող էր հազորդել առաջաւոր Հային», որպիսի էր Մ. Խորենացին։

Երկու գլուխ էլ նւիրւած են պատմագրութեան եղանակների զարգացմանը առհասարակ. և այդ գլուխները վերջացնում են պատմութեան նվիրւած լուրածների շարքը։

Մենք տւինք աչսքանով գրքի մեծագոյն մասի (շուրջ $\frac{2}{3}$ -ի) պարունակութիւնը. Մնացած գլուխները կարող ենք ալսպիսի խորագիրներում ամփոփել։ Տաւրիկեան թերակղզին (Նամ. XXV), Կեանքի տիպեր. Ազատամիտ և Աւանդապահ կուսակցութիւններ (Նամ. XXVIII). Գըրչակներ՝ մամուլի մէջ (Նամ. XXX). Աշխարհաբարի զարգացումը, մասուկների կրթութիւնը, քահանաների զիտական պատրաստութիւնը (Ն. XXVII), Գրաբարը և Աշխարհաբարը (Ն. XXXIII), Վերջաբանու

Ա. Ար բոլորի մէջ պ. Շահազիզը տալիս է կարճ ու ամփոփ կերպով իւր մտքերի ուղեծուծը վիշած առարկաների մասին։ Ընթերցողը հաղիւթէ այս ամենի մէջ զտնի նոր հորիզոններ բայցող մտքեր և ոչ էլ գիտեցածի նոր ձևակերպութիւններ. բայց և այնպէս զիրքը կարդացում է մեծ հետաքրքրութեամբ, որովհետեւ իւր ընտրած նիւթերին

հեղինակը ներշնչել է կեանքի չառաջդիմութեանը փափառող մարդու կենդանի ողին, արտաւագտւած մի լեզով, որը հենց ինքը մի տեսակ հանդէս է մեր լեզվի աստիճանական զարգացման 60-ական թւականներից մինչև մեր ժամանակը, պարունակելով իւր մէջ անցածի և նորագոյնի տարրեր: Գրածքը ներշնչած է կենդանութեան ոգով և իդէալով: Խորենացուն նւիրած բոլոր գլուխներում պարզ երևում է, որ հեղինակը Խորենացու մէջ դասած է եղել մի ամուռ պատանդան, որի բարձրութիւնից նա ուսուցել է հարբենասիրութիւն և լեզու: Խորենացին նորա համար ոչ այնքան պատմական նիւթ է, որքան գեղարեւստական հանճարի գործ, և որպէս աշղպիսին, ազգային գրականութեան պարծանք ու կրթութեան միջոց: Այդ պատմառով այնքան ուժեղ տպաւութիւն չի թողնում նորա աչդ բոլոր «Նամակների» Փակտապին կողմը, որքան ան, թէ ինչն է իւր՝ հեղինակի իբրև հայի ոգեկան աշխարհի կազմութեան համար թանգ եղել հայոց պատմագիրը: Խորենացու կրթուկուների առթիւ գրած գլուխներում մենք պէտք է, սական, առանձնապէս մատնանիշ անենք XX Նամակի վրայ: Որը պէտք է ուշադրութեան առնւի Խորենացու այն կրթուկուներից, որոնք մեր պատմաբանին VIII և IX դարերն ան փոխագրում:

Սական, ընդհանուր առմամբ, աչդ բոլոր զլուխներում հրապարակախօսը և զրագէտը գերակշռում է զիտնականից:

Իսկ միւս Նամակների համար մենք դորա վրաէ կարող ենք աւելացնել, որ պ. Ս. Շահազիզ հրապարակախօս է, բայց իւր թեմաներով ու տեսակէտներով ետ է մնացել ժամանակից: Գրաբար ու աշխարհաբարի խնդիրը այժմ էլ լաւ թեմա է, բայց նոր բան ասելու պահմանով: Շատ լաւ թեմա է նաև Ազատամիտ և Աւանդապահ կուսակցութիւնների հարցը, բայց միայն այս քանն ասել թէ աւանդապահն էլ օգտակար է, ազատամիտն էլ, զա խրատ չէ ներկայիս համար: Իսկ եթէ դորա պակասը լրացնելու համար են այն Նամակները, որ մենք խորագրեցինք կեանքի տիպեր և Գրչակները մամուլի մէջ, ապա այդ Նամակները հասկանալու համար պէտք է մաքի աւելի մեծ թափանցողութիւն, որով չեն կարող պարձենալ ներկայիս ընթերները, դոցա մէջ նաև մենք ինքներս: Խոստովանում ենք, որ չափակացանք:

Գրքի մէջ պատահում են երեքն մտքեր, չարմարեցրած բառերին, մի բան, որ անսպասելի պիտի լինէր գտնել այնպիսի գլուխներում, որոնք լուրջ առարկաներից են խօսում: Միթէ ՀՀԿՎ ըդ Նամակին վայել է այսպիսի բառախաղ (էջ 144):

«Այս, ամենալն նոր սերունդ իւր ժամանակի մշակն է, որ մուրճը ձեռին, ձուլում է նոր գաղափարների տարագ և, քաղցը արձագանք սփռելով իւր շուրջը, հիմնում է ան, որ սուսում է նոր դարու: (Ատորագծումը բնագրումն է):

Անկասկած է, որ ևթէ մենք ունենալիք մի ազ թերթ ես, նորա անունն էլ պիտի լիշտէր որ և է կերպ... իսկ այդ տողերը մեզ մի փոքր լիշտցնում են... պ. Յարօվին:

Նամակ ՀՀԱՊ ում պ. Շահազդիդ, խօսելով պատմագրութեան մասին, մի ամբողջ էջ, նոյն իսկ պաթետիկական ոճերով, նվիրում է այն խնդրին, թէ մեր հաջրենակիցներին հարկաւոր է ընդհանուր պատմութիւն, «...մենք մեզ իրաւունք ենք տալիս զիմել մեր աղնիւ համալսարանականներին և խոնարհաբար առաջարկել զորանց պարագել այս հարցով, ապա ընծայել իւրեանց հաջրենակիցներին մի ընդհանուր պատմութիւն։ Գուցէ նոքա մտածում են, որ ժամանակը չի հասել, բայց մենք կարծում ենք, որ արդէն ժամանակից անցել է։ Եթէ իմ ասածը համակրական արձագանք գտնի մասուկ սերունդի սրտում, այն ժամանակ և իրագործած կը լինի մեր նոր գրականութեան գլխաւոր խնդրինից մէկը»։ (Էջ 137. ստորագծումը մերն է)։

Իսկ մենք, մեր կարգին, իրաւունք ենք համարում պահանջել մէկից, որը մի «Ընդհանուր պատմութիւն» մեր նոր գրականութեան զիսաւոր խնդրինից մինն է լայտարարում, որ նա խոստավանի, թէ այդ գործի սկիզբը չի կարելի դնել աշխաղէս, քան արմելեան ազգերի հին պատմութիւնը զրելով, նիմնաւծ արեւելագէտների այս գարում յայտնագործած ֆակտերի վրայ, և իրաւունք ունինք պահանջելու։ որ նա զիտենայ, թէ այդ սկիզբը վեց

տարի առաջ արւած է մի զրքի տպագրութիւնով, որ կոչում է «Արմելեան ազգերի հին պատմութիւնը» (1891 թ., Թիֆլիս, տպարան Ոռտինեանցի)։

Հրապարակախօսութեան մէջ պ. Շահազդիզը պատկանում է մի տղութեան, որի հիմքը աւելի հաւատն է քան իրականութիւնը։ Նա թէև ընդունում է որ մարդկութեան «առաջնազարդ իդէալները ներկւած են արիւնով» և որ նոյն իսկ քրիստոնէութիւնը «ատիպիկ կրակ ու երկաթ գործածել», բայց այդ բոլորը նրանից է, որ ներկայ կեանքի դրութիւնը «տակաւին անկատար է»։ Բայց ահա «մարդասիրութիւնը առաջ կը բերէ և միջազգային իրաւունք, —ոչ այն, որ զօրաւորը գործադրում է միաւն իւր վերաբերութեամբ, ազ այն, որի սրբութիւնը միապէս պարտաւորիչ է և զօրաւորի, և թուլի համար» (Էջ 13)։ Որքան անորոշ խօսքերը 1900 տարի առաջ կեանքի դրութիւնը «զեր անկատար» էր, ալֆմ էլ «զեր անկատար» է, որովհետեւ, տեսէք որ

«Մեր օրերում, իշխան Բիստմարկի չնորհիւ, մեծ փառքի է հասել Ալիմարտի աքսորական՝ չոլախ Զեփեստոսը, որովհետեւ երկաթ է ծեծում կոռուպիան թնդանօթների համար և երկաթի սրտեր ձուլում վերաճող սերունդի համար»։ (Էջ 139)։

Եւ այս ամենի գիմաց պ. Սմբատ Շահազդիզը իւր հայ ընթերցողներին օրորում է միշտպայմն իրաւոնքի չոչութեան պահանջելու։ որ սերով, —«ոչ այն, որ զօրաւորը զոր

ծաղրում է միայն իւր համար, ալ...» շարունակութիւնը արդէն զիաէք! Միջազգային իրաւունքի զարգացումը իրա կարգին, մարդասիրութեան զարգացումն էլ իրա կարգին, բայց, ի սէր Աստուծու, երբէք չկարծէք թէ ապդերի ապագան երբ և իցէ կարող է վերջնականապէս որոշել միջազգային իրաւունքով, և որ միջազգային իրաւունքը երբ և իցէ պլանի ազատ կացուցանի ազգերին՝ ինքնապաշտպանութեան ծանր բայց և վերին աստիճանի բարուական և կրթիչ պարտաւորութիւնից:

Պր. Շահազիլի գրքի մէջ մանք գանում ենք նաև հայեացքներ հոգեորականութեան մասին: Քահանան ներին քարոզում է գիտութիւնների հմտութիւն:

«Առանց գիտական ճշմարտութիւնների հոգեորականին անկարելի է կատարել հովութեան պաշտօնը: Բանաւոր հօտին բանական հսկիւ պիտի: Եթէ ոչ այսպէս, ալդ հովիւը լանուն քրիստոնէութեան կարող է միայն սասակացնել ժողովրդի մոլեռանդութիւնը, ապա և խելպէի Մեծ վարդապետի սիրու ուսումը»: (Եջ 189—190):

Այս սողերը ցոյց են տալիս, որ պ. Շահազիլ բնաւ զի սիրում իւր աչքը ուշականին զարձնել: Եթէ քահանաների աղիստութեան հետեւանքը պլանի վիճէր ժողովրդիւնը, ապահու ժողովրդիւնը, ապահու ժողովրդը

վազուց պիտի վիճէր աշխարհքիս ամենամոլես անդ ժողովրդիներից մէջ էլը: Մինչդեռ, ընդհակառակը, հայ ժողովրդի համար համարձակ կարմիլի էր հակառակ վկայականը տալ: Մուլենանդ է ճանաչւած մահմեդական ժողովրդը—բայց նաև ժողովրդը մուլենանդ չէ: Եւ միթէ քահանացորդութեան վրա ապրուստի ապահու վութեան տեսակէտից նախող մի դասակարգ, որը ալդ պաշտօնը փողով է առնում, կարող է կրօնապէս մոլեռանդ վիճել և կրօնական ազգեցութիւն ունենալ ժողովրդի վրա? Ազդպիտի մի դասակարգ կարող է միայն տղէտ, ընկած և սնապաշտ վիճել բայց ոչ մոլեռանդ:

Հոգեորականութիւնը պիտի արդիօք զեկավարութ վիճի, թէ ոչ ահապ. Շահազիլի խօսքերը,

«Եւ հոգեորականութիւնը, եթէ չի կամնում ձեռից բաց թողնել զեկավարութ ոչքը հասարակ ժողովրդը զաստիարակելու, պէտք է անպատճառ ընտելանակ գիտական ճշմարտութիւններին:» (Եջ 143):

Ինչով է ապացուցաւմ արդիօք թէ հոգեորականութիւնը մեղնում զեկավարութ ոչք է, որ զեռ ցանկանանք որ նա ալդ ոչքը իւր ծեռից բաց չթայի: Թող հոգեորականութիւնը գիտական ճշմարտութիւններին ընտելանակ և իւրուսանն ծառակի ժողովրդի բարուական և կրթական բարութեան, բայց զորանից զեռ չի բդիսում նորա զեկավարութեան անհամաժառութիւնը, մանաւանդ որ հոգեորականը շատ անգամ չպիտի կա-

բողանակ օգտուել գիտական ճշմարտութիւններից, ինքը պ. Շահազիզը մի այլ տեղ խոստովանում է թէ՝

«Հոգեսորականը, ինչ եկեղեցն և պատականէր, ալլապէս չէր կարող գրել թէ մատոնաւոր, թէ ընդհանուր պատմութիւն, քան թէ գրել են ԽՎ դարում ֆրանսիացի քարոզիչը Բոսսիւէտ և ՀԻ դարում Հ. Գաթը ըրձեանը Գրել հոգեսորականին այն հակեացքով ու մեթոդով ինչպէս գրում են աչժմ բուն աշխարհական պատմաբանները, նշանակում է ինքը իրան հակածառել (Էջ 137),

Հոգեսորականը ուրիմն չի կարող պատմութիւնը ալլապէս գրել. թող պ. Շահազիզը ասի թէ հոգեսորականը ինչպէս պիտի գրէ բնակիսն պատմութիւնը...

Գիրքը ներկալացնում է հետաքրքրութիւն նաև լեզվի կողմից. վերջնու թւում է մեզ թէ զարդացումն է ան լեզվի, որ պ. Շահազիզ ինքը մի տեղ անւանում է Շաղարեան Նալբանդեան լեզու Դա նոյն մեր ափմեան գրական լեզուն է, մուկովեան հակերէնի սօսւով. չափ է որ, ցուցանում է, ալսօրեան, կամի ասել, փոքր մի, պարտ է մտածել — աչդաները պէտք է որ վաղուց արխիւտրւած լինէին. Պր. Շահազիզը զեռ կարելի է համարում ածականներ շինել պիկական վերջաւորութիւնով, զրելով Փիլմանտրոպիկական, նատուրալիստիկական, ոչ ալլուստիկական, աշխարհաբարեր լինին. — Մեր աշխարհաբարը չէ՝ «թագավարութիւն» մեծ

կան, (անալոգիա բառից) նատուրալիստական և աղն: (Այս բան է, ի հարկէ, սիստեմատիկական Փիզիկական): Նա գրում է համաշխարհական պատմութիւն, իբր թէ արդէն ամեն նուրինք ընդունւած համաշխարհային խօսքը բաւականաշափ լւա չէ! Պր. Շահազիզ չի ընդունում նաև, ել խօսքերը, ու ամեն տեղ գրում է նոյա փոխարէն եւ ա. որոնց բովանդակութիւնը եւ նւազ լուս չէ սըփուռմ» (Էջ 23). «Նա խոկապէս տանչ է և եւ յամանակակից երկպատակութիւններից». (Էջ 18). «Ինչպէս անսնում ենք եւ մինսուն արմատից երերի մէջ. (Էջ 27). «արւեստաբար խուճուճել մազերը և մեր օրերին (?) մի սովորական բան է. (Էջ 37). «բայց վիպատանութեան համար եւ հարկաւոր չէ ալլպիսի դուռը թիւն» (Էջ 62-63). Եւ այն և աղն. զա արդէն «եւ»-ամոլութիւն է...»

Նա գրում է՝ «միքամբեաներ (Էջ 75). անկասկած է որ պ. Շահազիզը, աղպէս գրելով ոչ կամեցել է մեր խօսակցական և գրական լեզվից օգտուել, և ոչ իրեն հաշիւ է տւել թէ մեր լեզուում բարդ բառերի լողնակին ինչ կանոններով է կազմւում. (անս այդ մասին Սուրճի այս համարում «Լեզվական զրոյցներո բառերի շարքի № 65): Հարկաւոր է արդեօք հայերէնի ձկունութիւնից ամեն անգամ օգուտ քաղել և գրել՝ եզրափակութիւն (Էջ 24-25), ընդդիմակացութիւն (Էջ 26-27), երբ նոյա տեղ արդէն կատարեկապէս հատուաւած տերմիններ ունինք — եղբակացութիւն, ընդդիմադրութիւն. — Մեր աշխարհաբարը չէ՝ «թագավարութիւն» մեծ

Չանք են դորձ դրել նւաճել» (Էջ 16. փոխանակ նւաճելու). «Դուրս եկան շրջել» (Էջ 46. փոխանակ շըր-ջելու).

Չնատած ալս բոլոր վերապահում
Ներին, պ. Շահազիզի զիրքը մի զո-

վացնող աղբրաջուր պիտի համարւի
մեր երիտասարդ ինտելիգէնցիակի
համար. դրւածքից թարմութիւն է
բուրում, և ուր հարցին պատասխան
չկալ—ընթերցողը գէթ դրգումներ է
ստանում մտածելու.

Ա. Ա.

ՔԱՄԱԼԵԱՆ, Ս.—«Երկասիրութիւններ» Ա. պրակ: Թիֆլիս, 1896,
166 էջ, գինը 50 կոպէկ:

Պ. Քամալեանի երկասիրութիւնների ալս առաջին պրակն առ երեւով մի խարտարդէտ ժողովածու է, սակայն բոլորը կարդալուց չնոտոյ հոգուդ առջն ներկայանում է նրանց հաւաքական տապաւորութիւնը՝ իրեն մի դեղնցիկ ինիճանկար (մողագիկ) կամ մի կալէդոսկոպ, որի ալս պատկերը ձնչում ու վշտացնում է քո սիրտը, միւսը, թեթեսութիւն տալիս նրան, Բայց աւաղ, Բնչ անէ հեղինակը, իթէ մեր անցեալ ու ներկաչկեանքն ալնքան տիսուր է եղել ու է, և ալս պատճառուով էլ նորա մանրանկար պատկերահանդէսը մեզ աւելի վիշտ՝ քան բերկրութիւն է պատճառում:

«Անցւոր և թեզօշին» նկարագրում է անտառի ազատ կեանքից զրկած ծառի կեանքը քաղաքի հրապարակում, ուր նա զրկւելով մակինի հողից՝ փոխանակ աճել-զարգանալու՝ հալ ու մաշ է լինում: Նորա ցաւակից բարեկամն ալսպէս է հարցնում.

«Աչքս մնաց, որ դու էլ Հասակ քշես, մեծանաս, Նրկար ու ծիգ ճիւղերով Մարդու, կենդանու հով տասու: Ալս հարցմանը պատասխանելով Թեղոշին բաց է անում սիրելի անցւորին իւր ցաւոտ սիրտը» և ցուց տալիս իւր իւր անպաշտպանի խոր վէրքերը:

«Փողոց աւող մշակները» մի երգի պախառն պատկեր է զաղթական հայ թշւառների կեանքից, որոնք հայրենի սիրուն ու անուշ վաթանից զրկւած, քնութեան գորովալից զրկից հալածւած տոհորում են ու ալս փողոցափին աղտ ու կեղտի մէջ էլ հայրենիքն են երգում, «աշխարհքէ խաբրութիւն» են հարցնում, որ իմանան թէ արդիօք իրանք Երբ պէտք է միւս մահկանացուների բաղդին արժանանան՝ հայրենիքի օղը ծծելու, նրա ջուրը խմելու երջանակութիւնն ունենան:

«Մի պատու Հաւլարարում» ներ-

կարացնում է 1894 թ. թշւառ գաղթականների համար հանդանակութիւն անող մի խումբ երիտասարդների տպաւորութիւնները, Հայ արհեստաւոր ու վաճառական զասի վերաբերմունքը դէպի եղբալըների և քոյրերի թշւառութիւնն է խսկութեամբ ներկայանում մեզ Քարացած սրտերի ազդեցութեամբ սիրտդմբթ ճնշում է, ու ապա նա մերթ ընդարձակւում, ազատ բարախում՝ հակապատկելների հանդիսատես լինելով Բարեբազդաբար ազնիւ ոգիները գերակշռում են, և նրանց համամակրական վերաբերմունքն այնքան սրտաղին է լինում, որ քիչ է մնում արտասւես: Սիրտդ լցում է, լցում, երբ տեսնում են որ ժողովրդական ոգին մեռած չէ:

«Սև օրերից մին» զնդանաբարոյն Շահ-Արքասի բռնութիւններից մի պատկեր է: Բռնի գաղթեցրած հակերին կրօնափոխ անելու համար շահի գործադրած սարսափներն իսկապէս շատ ծանր են եղել, բայց նրանց ալս նկարագրութիւնը համեմատարար թու տպաւորութիւնն է զործում՝ քան այն իրողութեանց նկարագրութիւնը, որոնց հեղինակը ակսնաւանական ակտին ապահով է եղել: Միւս կողմից էլի նկատի պէտք է ունենալ, որ հայ ժողովրդի զլիսին թափած վերջին կրակ ու բոցը ամեն բան մռացնել տւեց, մեր ջղերն ընդարմացել, թթացել են. անցեալի սարսափներն ազօտանում են ներկալում ապրող հայի գիտակցութեան մէջ:

Այս պատկերներից լետով պ. Քամալեանի ազգային առակների շարքն է դալիս: «Ճանձ» առակը մարդոր-

սութեան օրինակն է ներկալացնում: «Աղւէս»-ն իւր՝ սովորական խարդախութիւնները, որ սակացն նրան չէ աղատում մի անդամ նոյն խոկ կաքաւից խաբւելու: «Սրտացաւ գալը» անմիտ եղների անձնւէր բարեկամձեանալով՝ խարդաւանանքով այդ տիմարներից թուլտութիւն ստանալով մի առ մի խեղտոտում է բոլորին: «Ե՛լի ողորմի հօրը» միւներից թողլ է, անբնական է երեսամ: Խստամիրտ ու հարստահարիչ հայրը մահան գուռը հասած զղջում է եկանչելով որդկերանցը խրատում, որ նրանք անպէս անեն, որ զոնէ պատճառ լինեն ծնողի օրհնէնքին: Բայց այս ժառանգները խոստանում են մինը միւտից ամելի անքան վատթար բաներ անել, որ հարստահարած ժողովուրդը տեսնելով երանիւ տապ հօրը: — «Խոտորնակին խոտորնակ» ցուց է տալիս թէ ինչպէս կարիճը, նոյն խոկ հակառակ իւր ցանկութեան, ըստ պատկան սովորութեան խալթում է զորտին, իսկ սակը՝ նոյնը պատճառ բերելով խեղդում է նորան: — «Աւդպէս էժան չի» առակում գալը թէն շատ նախանձում է շան ապրուստին և ճանապարհ է ընկնում նրա հետ զէպի քաղաք: Բայց լոելով որ ազատութեան գնով է ձեռք բերում այդ չարմարութիւնները, նա կիուածանապարհու է զառնում: Կենդանի տպաւորութիւն են գործում գալի այն խօսքերը: որոնցով նա չարքաշ կեանքը: զերադաս է համարում շղթաչակապ: ու կուշտ կեանքից:

«Հայ ժողովրդի նաւասարդը»: (նոէր հայ ուսուցիչներին): Ուսուց-

չական կեանքից գեր առած պատ-
կերը նւէր լինելով հանդերձ՝ միենովն
ժամանակ թեթև լանդիմանութիւն
չէ՝ ուղղած մեր այն ուսուցիչներին,
որոնք այնպէս սաւանասրտութեամբ
են վերաբերում իրանց ժողովրդի
անցեալին։ «Նաւասարդի տօնը» չօդ-
ածում հեղինակը շարունակում է
նախնեաց աւանդութեանց նախան-
ձախնդիր ոգւով խօսել նաւասարդի
անցեալի ու ներկալի մասին։ նա
սխալ է համարում ինձինեանի, Ալի-
շանի և ազրոց կարծիքը, թէ Աման-
օրը մեզանում օգոստոսին էր կա-
արւում։ Պ. Քամալեանը հիմնելով
այն իրողութեան վրայ, որ նաւա
սարդը մինչեւ հիմա էլ դեռ անդ տեղ
մեր ժողովրդի մէջ տօնւում է աշնանը,
եղրակացնում է, որ իսկապէս ան
պէտք է եղած լինէր իսկական ժա-
մանակակէտը։ Մինչդեռ պ. Կ. Կոս-
տանեանց ալս տարւալ «Արարատիո»
Գ. թւում սկսել է և խոստանում է
աւելի հիմնաւոր փաստերով ապա-
ցուցանել, որ Ամանօրը մեզանում
գարնանամուտին պէտք է եղած լի-
նէր։ Ճիշտ է պ. Քամալեանի կար-
ծիքը, որ օգոստոսը նոր տարւալ
համար իսկապէս խորհրդաւոր շըր-
ջանակէտ չէ ներկայացնում, բայց
աւելի և հեշտ պէտք է համարել
պ. Կոստանեանցի կարծիքը, որ բը-
նութեան վերանորոգման կէտն է
աւելի հիմնաւոր համարում ալդ տօ-
նախմբութեան համար։

Եւ ահա ժողովրդի նահապետների
ու պառաւ նաների բերանով աւանդ-
ամն է, որ պ. Քամալեան իրբն

ժամանակակից լսող մէջ է բերել։
«Բալէք ջան, էս տօնն ուրիշ տօ-
ների նման չի. սա մեր ապ ու պա-
պի օրից է սկսած, որ մի սրտուկ-
սրտու մարդ էր, ուրիշին զլուս
չէր բերող, նա կոիւ արաւ ու լազ-
թեց։ Յաղթերուց ետք ուրախութիւն
սարքեց անովի, ցեղովի, թոռնովի
ծռներով, ուստրովի գստրով ու ասաւ,
որ ամեն տարի վշնն էդ ազնու օրը,
ուրախութիւն անեն իւրար ¹⁾ քաղ-
ցը պառաւիս առելով։ Ես մեծացել,
պառաւել եմ, էս բանը ձեզ ասում
եմ, զուք էլ Աստուծով պառաւէք ու
ձեր որդիկերանցն ասէք։ Մեր ապ ու
պապը որ չինէր, մեր անունը հաչ
չէր ըլլիւ։

Խ'նչ հիանալի աւանդութիւն հին
հին դարերի։ Արդնօք ովէ զրել ժո-
ղովրդի բերանն աչս խօսքերը, Խո-
րենացին կամ վարժապետները։

Պ. Քամալեանցի ալս փունջի
բուրմունքն ևս աւելի քաղցրանում է
բուն ժողովրդական ուժեղ ու սիրուն
ոճներով ու բառերով։ Աչսպէս կա-
րելի է ճոխացնել կեանք տալ մեր
աղքատիկ ու վեհերու աշխարհիկ
լնգ'ին։

Յ. Տ - Մ.

¹⁾ Հեղինակը գրամ է իւրար
(իւրար)՝ անշուշտ իւր գաւառաբար-
բառից առնելով։ բայց աչտեղու-
կարծում ենք որ իւ ձախնաւորը ար-
տասանում է ոչ գրականի ձնով, առջ
ինչպէս ֆրանսերէն և, կամ ինչպէտ
թուրքերէնում իւչ (երեք) բառի
ձախնաւորը։ Մ. Խմբ.

ԴԱԼԻԹԵԱՆ, Սմբատ. — «Մանկական ոստանաւորներ» տարրական դասընթացքի Ա. և Բ. շրջաններուն համար Կ. Պոլիս. 1897 թ. է2 էջ. գլուխ է 60 փարաց

Հեղինակն իւր Զեկուցի մէջ տեղեկութիւն է տալիս ի միջի աչլոց, որ այս հատորիկում ամփոփւած են իւր գրածները (մի երկու բացառութեամբ) և որ, այն ձեռնարկը իր տեսակին մէջ առաջինն է։ Երեք առանձին գրքով հրատարակելն է նոր բան համարում պ. Դաւթեանը, որովհետեւ արևմտեան հակերի զասագրքերումն էլ սպակաս չեն այսպէս անւանեալ մանկական բանաստեղծութիւնները։ Խակ եթէ նա ի նըկատի առած լինէր արևելիան հագերի հրատարակութիւնները՝ անշուշտ չպիտի կարծէր որ աչք ձեռնարկութիւնը առաջինն է։ Վերջը պ. Դաւթեան հրաւէր է կարդում բանաստեղծներին այս խօսքերով. «Հաւանական և ցանկալի է որ այս քանի մը ոտանաւորներու հրատարակումը գրգիռ մ'ըլլաւ, և կարող գրիչները լորդորուին մշակելու այս անտես առնաւած սեռը, որ, թէն անփառունակ ու համեստ, սակայն ոչ նւազ օգտակար ու շահեկան է»։

Հեղինակի այս առաջարկութիւնից կարելի է եղբակացնել, որ նա ենթադրում է, որ, եթէ մեր բանաստեղծները ցանկան, ոչ միան նրանցից մէկ երկուաը, ալ շատերը պիտի կարողանան գրել մանկական բանաստեղծութիւններ։ Բայց սարաբաղբար բանն ալդպէս չէ։ Ամբողջ եւրոպական դրականութիւնը հանձարաւոր դասական հեղինակներով մէկ տեղ առած՝ տակաւին համեմատաբար շատ անշան բան է արտադրել այս ուղղութեամբ։ Դըլիսաւոր գժւարութիւնն այն է, որ հասակաւոր ու զարգացած մարդը դիւրաւ ու առանց ավելացնութեան չէ կարողանում իւր մտքի բարձրագոյն աստիճաններից մանկական մտաշվանի հորիզոնն իջնել, նորապէս մտածել երևակակել ու զգալ։

Մանուկների համար գրւած նոյնիսկ արձակ շարադրութեանց ընտիրները հազրակիւտ են. Քննադատութիւնն այն եղբակացութեանն է եկել, որ մանկական գրւածքները, եթէ ընտիր են, հասակաւորի վրաէ էլ պէտք է գրաւիչ տպաւորութիւն գործեն։ Ուրեմն չպէտք է կարծել, որ այն, ինչոր մեզ համար անհամ ու անբովանդակ է, մանկան միտքն ու սիրոց կարող է զբաղեցնել, նրան հետաքրքրական ու սիրելի գառնալ։ Հեղինակը պէտք է շարադրելիս ոչ միան մանկանը, ավել այս կարեւոր հանգամանքն 'ի նկատի ունենալ նւ, վիրաւի, հենց մանուկների սիրելագոյն զրքերն են, որ հասակաւորներն էլ հաճութեամբ կարգում են։

Այս տեսակէտից նավելով պ. Դաւթեանից բանաստեղծութիւնները զըժւար թէ կարողանան քննադատութեան դիմանալ։ Մանկական որտին

ու հոգուն մօտ են ասելի ոչ թէ արւեստական արտադրութիւնները, այլ բուն ժողովրդական բանաստեղծութիւնները այս կամ այն առիթով, այս կամ այն տպաւորութեան տակ՝ մանկան հետ ու նրա ներքին աշխարհից արտավաճուած թեթև ու սահուն, կարծիկ ու խորոտիկ արտադրութիւնները, ժողովուրդը մի երկու խօսքով, բառախաղերով, բնածաշնական (օնոմատոպոէտիկական) արտավաճութիւններով ներկալացնում է մանկան, կենդանու կեանքը, բնութիւնը բազմակողմանի երեսթներով և ապն, մինչդեռ չինծու բանաստեղծութիւնն առհասարակ իւր ծանր ու բարակ զարձւածներով, վերացական գաղափարներով, դիտակտիկական տենդենցիաներով տաղտկալի է զառնում մատաղահաս ընթերցողին: Գրախօսականի ծրագրից դուրս է համեմատութեան համար այս երկու տեսակ արտադրութիւններից բազմակողմանի օրինակներ մէջ բերելլը: Ակստեղ աշխատենք համառակի բնորոշել պ: Դաւթեանի բանաստեղծութիւնները:

Այս արտադրութեանց մի մասից միան մանկական բանաստեղծութեան հոտ է գալիս, որովհետեւ, կարծես թէ, տեղ տեղ առկածում է ժողովրդի ոգին: Երկրորդ խմբակին մանուկը կարծում էր թէ անտարբերութեամբ կը վերաբերէի, իսկ երրորդից, որի ներկալացնուցին է «Ազնիւ տղան», առաջին ոտանաւորը, նա կարող է մինչև անզամ ձանձրով զգալ:

Բարուակրթիչ ձգտում ունեցող այս վերջին կարդի ոտանաւորնե-

րից¹⁾ մին աշխատում է պարզեների լուսերով մանուկ ընթերցողին կերպարանափոխել, իսկ միւսը աշակերտի ու վարժապետի միմեանց վոխաղարձաբար պատճառած ձանձրով նկարագրելով՝ չղիտես ինչ նապատակի է ձգտում: Աշակերտներից մէկը՝

Միշտ խելօք կը կենար,
Վարժապետը կը հաւնէր,
Կուտար անոր պարզեներ:

Մի ուրիշն էլ, մի առ մի թւելով
իւր անբաւ տանջանքները զպրոցում,
այսպէս է վերջացնում խօսքերը.

Գըրէ, կարդա հաշիւ ու թիւ,
Գետինն անցնին տախտակի կաւիճ:

Եւ նորա վարժապետն ի միջի
ալլոց հետեւեալ խօսքերն է ուղղում
«անպարտածանաչ» աշակերտին,

Այս կեանք է որ
Ես կը վարեմ Խեռ, անպիտան
Տղաքներու հետ՝ ամեն օր...
Ո՞րն երկուքէն, զժգնն տղալ,
Աչտեղ արդեօք ձանձրով կը
զգալ:

Ուզում է, երեխ ասել, որն աւելի
ձանձրով կը զգալ, և, իհարկէ, զըժւար է պատասխանել:

Ազօթքներից մէկը թեթև է, բայց
բոլորովին մանկական չէ, միաւ
թարգմանած՝ ծանր է Յ.Թիրեաքեանի
«Ողջուն Յիսուսին», ծննդեան տաղը
տպաւորութիւն գործում է:

Կենդանիների կեանքին վերաբերեալ ոտանաւորները, ինչպէս նաև
«Գիշերնու «Երկրագործին քրտինքը»

¹⁾ Այս ուղղութեան արձակ ու չափական նիւթերը վիստում են Կ.Պոլսի հայերէն դասագրքերում:

նմանօրինակների հետ իսկապէս արձակ շարադրութեանց նկարագրութիւններ են չափականի վերածած, նրանց մէջ բանաստեղծութիւն չկայ:

«Առաւօտ» ից մանկական բանաստեղծութեան բուրմունք դալիս է, բայց վերջը, դասի զանգակի ձայնը հնչեցնելով, դարձեալ սառը ջուր է լցնում ալդ գւարթ տրամադրութեան վրա:

Հեղինակը թէև աշխատել է պարզ բառեր ու մտքեր բռնեցնել, սակայն և այնպէս սկսնակ մանուկներին անհասնելի չէ համարել «անմեղ սիրտ, երջաճիկ ապրել, անհումութիւն, մեծափառ, բոլլ բողջ» և ալլ ալսպիսի դարձւածներն ու բառեցը:

Յ. Տ. Ա.

ԱՆՆԵՆՍԿԵՑՅ, Ա.—«Դասընկերներ». պատանէների ընթերցանութեան համար. ոռուսեր. թարգմ. Կ. Գիւլնազարեանց. 1897 թ., Թիֆլիս. տպարան Մ; Դ. Ռոտինեանցի. հրատ. Թ. Հ. Հռատ. թիվ 2.

263 էջ, գինը 50 կոպէկ:

Մարդիկ հասարակական կեանքի ներկաւ պաշմաններում ամենազէտ չեն և անկարող են իրանց բոլոր պահանջներին իրանք բաւականութիւն տալ. Ալսուեղից ուղղակի ծագում՝ է փոխադարձ ծառակութեան անհրաժեշտութիւնը. մէկը միւսի աշխատանքից սպասելիք ունի. Ամեն ծնող չի կարող ներկաւ պաշմաններում կրթել իր որդիներին. կեանքը առաջ է քաշում չափունի պահանջներ, որոնց բաւականութիւն տալ ցանկացողներից պահանջւում է չափունի վկաւաթղթեր՝ որոց դասընթաց անցնելու ասպահովագրեր, մի բան որ ամեն ծնող իր որդուն անկարող է տալ և տալու իրաւունք չունի. Ուսումնարանական կեանքի հիմքը կազմում է ալդ հանդամանքը. Նաևած հասարակութեան կեանքին տոն տառը խըմբերի ծգտումներին ու նպատակնե-

րին, կեանքում տիրապետող հաւացքներին, ուսումնարաններն ստանում են աչս կամ այն կազմակերպութիւնը. Ալդ տեսակ մի շարք պայմանների արդիւնք է նաև գիշերութիկ դպրոցը. Հենց ալդ տեսակ դպրոցների կեանքն է որ մեր առաջ գնում է ոռուս կին գրողն իր «Դասընկերներու»ում:

Ալդ գրքովկում զուրս են բերւած աշակերտների զանազան տիպեր, որոնց կեանքով նա ցուց է տալիս գիշերութիկ դպրոցների աղղեցութիւնը աշակերտական կեանքի վրաց Գրքովկը կարգալուց լիտոց գալիս էք այն եղրակացութեան, որ գիշերութիկ դպրոցների կեանքին կարողանում են դիմանալ և նրա աղղեցութեան շատ չենթարկել այն աշակերտները, որոնք մատաղ հասակում զուրկ են եղել ընկերական շրջանից և շատ էլ

սովոր չեն ընկերական կեանքին. իսկ ընկերների շրջանում ապրած-ները շատ շուտ հն ենթարկում ա-մեն տեսակ ազդեցութիւնների և մի-ջոց չեն ունենում ինքնուրունապէս զարգանալ և ինքնուրուն, անհատա-կան բնաւորութիւն կազմել, «Դաս-ընկերների» հերոսը՝ Կողեա Վոլֆենը մի պահած-փակալած երեխաւէ է. մի քիչ երես առած, ուստի և իրասածի, մի քիչ մեծամիտ և փառասէր. Ըն-տանիքում ոչ ոք նրան չի ասել թէ առքիդ վերելու ունք կայ, նրա ցան-կութիւնները կատարել են, նրա հետ սիրով են վարել: Նա չունի եղբայր-ներ ու քորեր, իսկ մօտիկ կալւա-ծատէրերի երեխաններին ուշ ուշ՝ տօ-ներին է տեմնում: Կանոնաւոր կեանք է վարում, պարապումէ, խաղում—այն էլ՝ միշտ մենակ, Գիւղական ե-րեխանների հետ նա չի կարողանում խաղալ. նրանք չգիտեն Կոլեալի գի-տեցած խաղերը, ուա էլ՝ փոխաղար-ձարար. Նա խելօք տղաւէ է, կարո-ղանում է ջոկել լաւ ու վատը, կամ աւելի լաւ ասած՝ իր համար հաճելին և անհաճելին: Նրանից դուրս նա ուրիշի չի ուզում ճանաչել. իրան ամենքից քարձը է համարում: Սա է, որ մտնում է մի գիշերօթիկ դպրոց: Յալտնի է որ ամեն դպրոց, պաշտօ-նական կանոններից զատ, ունի իր ներքին կեանքը որոշ աղաթներով: ու արագիցիաններով:

Նոր մտնողը կամակ-ակամաւ պի-տի ենթարկւի ազգ աղաթներին, եթէ նա չի ցանկանում ամրող դասա-րանի թշնամին և ատելին դառնալ: Ընկերովի չարութիւնները, զատ չպատրաստելը, չանցաւորին ծածկե-

լը և ազ արագիսի բաներ սովորա-կան են ազգ կեանքում և ամեն նո-րեկ կամաց կամաց սկսում է ինքն էլ իր կողմից անել նոյնը: Անկաս-կած է, որ ազգ տեսակ պալմաննե-րում իրան լաւ կը զգաւ այն երե-խան, որը սովոր է ընկերական կեան-քի, քան թէ Կողեա Վոլֆինի պէս մէկը: Եւ խեղճ տղան շատ ծանր օ-րեր է քաշում իր չարմարելու ան-ընդունակ վնելուն համար: Նա, որ տանը ոչ մի թթու խւսք չի լսել չարաչար ծեծ է ուսում դասարանի պահանջը չկատարելու համար: Նրա հետ չեն խօսում և միշտ վիրաւորում են: Ազգ ծանր փորձերի ազդեցու-թեան տակ նրա բնաւորութիւնը վաս ուղղութիւն է ստանում, սկսում է փոքր ինչ չարմարել և մի անգամ էլ՝ բարձր դասարանում՝ մատչելի գեր է խաղում իր ընկերների վերա-բերմամբ, վրէժ լուծելու համար: Սական ամուր բնաւորութեան սազ-մերի տէր վնելով և դպրոցում քիչ մնալով, նա ամբողջովին չի վասա-նում, այլ ստիպւած մի քանի վատ վարմունքներ է թուլ տալիս իրան:

Կոլեալի հակատիան է Վոլոդեա Դոմնասովիչը, որ դասարանի բերանն է, նրա արձագանքը, ինչ ասում է դասարանը, մեծ մասը, սովոր ըն-կերները—այն էլ նա կրկնում է: Դա-սարանի շահն ու իր շահը նա չի զանազանում: մենակ նա ոչինչ է, բաց ընկերների հետ՝ կրակն էլ կընկնի:

Դասարանի հոգին կազմում է Լի-նեովը, մի տղաւ, որ բնազրորէն գիտէ թէ ինչ մարդկանց հետ դործ ունի. նա լաւանի դէպքելում չար-

մարտում է, որ կարողանալ լիտոյ չարմարացնել, երբ կարիք լինի, Առանց նրան զասարանը ոչինչ չի անում. նա թէ խելօք է, թէ լաւ սիրո ունի՝ լաւ ընկեր է, և թէ ընդունակ նախաձեռնող է. նա Վոլժինի և Դոմոնտովիչի սինթեզն է.

Գրւածքը խրատական բնաւորութիւն ունի և խրատի համար էլ գրւած է. հեղինակը ոչ թէ տալիս է աշակերտական կեանքի բանաստեղծական նկարագրութիւնը, ալլ վեպական ձեից օգտւում է լայտնի խրատներ տալու համար. զրա համար էլ գրւածքը զեղարւեստական տեսակէտից մի շնորի բան է, արհեստական չենքի տպաւորութիւն է անում. Ալսքանը կարելի է ասել, որ նաևելով մեր գրականութեան մէջ նոյն հեղինակին պատկանող գրւածներին, նա չնորբով պատմիչ է և զուրկ չէ հեղինակելու ընդունակութիւնից. նա մի տեսուի կիսաբանատեղծ է:

Գրքովկը թանկ չէ և արժէ որ տարածւի պատճիների մէջ. միջնակարդ զալրոցների միջին զասարանի աշակերտները օգուտով կը կարդան ալդ գրքովկը:

Գալով թարգմանչի լեզվին—ուղղակի վատ է. նրա շարավարութիւնը աւելի ուռւսերէն է, միան բառերն են հաշացրած, Մենք բերում ենք օրինակներ առաջին դլխի առաջին

մասից: «Նրանք այնպէս էին կպել կուչ եկել իրանց մակրերի փէշերում.»

կպել... փէշերում (էջ 15): «Զէ՞ որ մենք միմենց ծանօթ ենք (էջ 15) «Պոկիր, համաձայնւեց մակըը. երկու օր տօնածառդ վառւեց, բաւական է» (էջ 17): Ոչ համաձայնւել—այս՝ համաձայնել, թնչէ նշանակում—տօնածառը վառւեց: «Դունեան... ասաց. ամէկ էլ տուր» (էջ 20). մէկ էլ տուր—նշանակում է մի անգամ էլ տուր. մինչդեռ Դունեան ուղում է ասել. մի հատ էլ տուր՝ մէկն էլ տուր: «Աշնանը կը մինչեւ Մուկւափի գիմնազիոնը ընդունել տեց իր երեխաներին» (22). աւսինքն՝ զիմնազիոնում: «Ճաշը... վակելելուց ալատեղ անցնեն մնացած գիշերը» (22): անցկացնել խօսքի տեղ գործ է ածւած անցնել, որ բոլորովին ալլ բան է նշանակում: «Պատիկ ժենեան բըռնեց հիւրերի փեշից» (25). հիւրի և ոչ հիւրերի, որովհետև հիւրը մի մարդ է՝ կոլեան: Ակուեա, դու իմ կողքին կը նստես, անպէս չէ»: հայերէն ասում են՝ իմ կողքին, իմ գիրքը և ալլն. իսկ երբ «իմ» ը չկայ, այն ժամանակ՝ կողքիս, գիրքս և ալլն. Զբաղմացնելով օրինակների թիւը, մենք կարծում ենք, որ ընթերցողը մեզ կը հաւատակ, եթէ ասենք, որ նրանք շատ են:

Ն. Աղավետանց:

„ԱՆՑԱԳԻ“ ԶՐՈՅՑԻ ՄԻ ՔԱՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Սարանից մի տարի առաջ, երբ լուս տեսաւ իմ մի գրւածքը «Տուրիստի վիշողութիւններ» վերնագրով, «Մշակ» լրագրի մատենախօսը ահա թէ ինչպէս վարւեց.

«Տուրիստի յիշողութիւնների» մէջ կար իմ մի գրւածքը՝ «Աննա», Պ. Մատենախօսը լիովին խեղաթիւրեց պատմածքի Փակտերը և իր հնարած Փակտերի հիման վրայ վատարանեց պատմածքը։ Նոյն դրքի մէջ կային երկու ուրիշ պատմածքներ—«Մեծ փականք» և «Զգայնացափ»։ Պարոնը լայտարարեց որ այդ պատմածքները չէր հասկացել, ուստի և վատ էին։

Սակայն, «Աննա» թարգմանեց Կ. Պոլսի «Հայրենիք» թերթում, ուր և նւիրւեց նրան մի քանի քաջալերիչ և գովասանական առաջնորդողները թարգմանեց անգլերէն և ալժմ էլ թարգմանւում է ուստերէն և ֆրանսերէն։

Որ «Մշակի» պ. մատենախօսը չէր հասկացել «Մեծ փականք» և «Զգայնացափ» պատմածքները—այդ ինձ զգարմայրեց բոլորովին։

Եւ սակայն ես այն ժամանակ լուեցի «Մշակի» խեղաթիւրումների դէմ և անշուշտ ալժմ էլ իւ լուէի, եթէ մի անդամ ևս նոյն պ. մատենախօսը չկերսկսէր աւելի չանդդութեամբ իր «ազնիւ» գործունէութիւնը (տես Մշակ № 101)։

Նոր լուս տեսաւ իմ մի Փիլոսոփական արևելեան զրուցը «Անյագ» վերնագրով։ Ահա թէ «Մշակի» մատենախօսը ինչպէս է մի նախադասութեան մէջ ամիբովում զրուցի մլատքը։ «Հաւատ, զայ և սէր—ասում է նա—ոչինչ են, եթէ աշխարհում գոլութիւն չունի անկեղծութիւն»...

Մինչ իմ պատմածքի մէջ ոչ թէ հաւատք, լուս և սէրն» է իննդիրը, այլ «կրօնը, անձնանւիրութիւնը և սէրը», այլ և զէպի բարձրը ձգտելու տենչանքն ու փափագը, որին համնել անհնար է, քանի «հիմնովին չի տապալի կեղծութեան վրայ կանգնեցրած աշս կազմակերպութիւնը և քանի բացարձակ անկեղծութիւնը չի լինի ամենասովորական, տիրող բարուականը» (տես, Անյագ, երես 57 և նախընթացները)։

Բայց այդ խեղաթիւրումը բաւական չէ եղել մատենախօսին։ Նա խեղաթիւրել է նաև փակտերն ու երեսովթները։ Նա ասում է. «Կայմի-

երիտասարդ, որ խնամում է մի վիրաւորւածի. նրա մօտ է տարել հեղինակը իր հերոսին, որ նա սովորի յոյս, մինչդեռ այդտեղ աւելի սէրն է գործում։ Իմ պատմւածքի մէջ ալդպէս բան չկաչ։ Իմ հերոսին ես տարել եմ անստեղ ոչ թէ յոյս սովորեցնելու, ալլ սէր դէպի իր նմանների վշտերը ամոքելու գործը (տես. եր. 29):

Բայց ալ. մատենախօսի քաջազործ խեղաթիւրութիւնը երեսում է վերջին կտորի մէջ, ուր նա ասում է. «Մի ալլ տեղ հերոսը պիտի սովորի սիրել մարդկութիւնը և ալդ նպատակով տանւում է մի սիրահարած երիտասարդի մօտ»։ Ալպան անուշադրութիւն իր կարդացածին! Ցետոց աւելացնում է թէ. սփիլսոփաչ հեղինակը կարծում է թէ ալդ եսամոլ, նեղ շրջանում խեղտւած անդուս սէրը կարող է ալտրուիտական անձնագրնութիւն թելազրել մի ուրիշին։ Հետաքրքիր է թէ որ բառերով ես ալդպիսի մի անտրամաբան թելազրութիւն եմ ենթազրել։ Ֆակտը այն է, որ ալդ կտորում ես հերոսին տարել եմ մի սիրահարած երիտասարդի մօտ ոչ թէ նրան մարդկութիւնը սիրել տալու, ալլ սովորցնելու ընդհակառակն, որ ալդպիսի «եսամոլ, նեղ շրջանում խեղտւած անդուս սէրը չէ կարող ալտրուիտական անձնագրնութիւն թելազրել մի ուրիշի, և որ սէրն էլ չէր այն ճանապարհը (ալպինքն դէպի բարձրը, դէպի լաւը ձգտելու), որ կարող էր տանել դէպի հերոսի որոնած նպատակը (տես. եր. 55), որովհետև չկաչ բացարձակ անկեղծութիւն և որ կեղծութիւն է թագնւած ալդ առերևոց երջանկութիւնների, մարդասիրութեան, բարութեան, ազնւութեան... և նուն իսկ «անկեղծութեան» տակ...»

Ընթերցողը անշուշտ տեսաւ թէ «Մշակի» ալ. մատենախօսը որպիսի լանդգնութեամբ դիմենետրապէս հակառակի է դարձրել, իեղաշրջել ֆակտը և դրա վրա վրաէ է միան որ հիմնել է ամրող «կրիտիկան»։

Վ. Ժ Կ Պ Պ Յ Ն

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարսից կառավարութեան վերաբերմունքը դէպի հայերը փոխանել է դէպի վասով, շնորհիւ այն հանգամանքի, որ պարսկա-տաճկական սահմանի նկատմամբ նա սպասում էր յարձակում զինւած հայ խմբերի կողմից տաճկական սահմանի քիւրդերի վրայ։ Պէտք է կարծել, որ Թաւրիզի տաճկական հիւսպատոսի այս տարի Սալմաստ գնալը, ամառը բնակելու համար, այդ գործին վերահասու լինելու համար էր Յայտնի է նաև, որ յունիսի սկզբին Թաւրիզ եկաւ և շտագով վերադարձաւ Վանի անգլիական հիւսպատոսը, Սալմաստում մնալով մի քանի օր Դորանից յետոյ թիւրք կառավարութիւնը դիմում արաւ պարսից կառավարութեան, ապահնջելով որ իւր երկրից դուրս անէ Փոռովարաներին, հակառակ դէպքում պատսխանառութիւնը պարսից կառավարութեան վրայ գնելով։ Պարսից ժողովուրդն էլ սկսել էր իւր վերաբերմունքը դէպի հայերը փոխել. նոյնպէս և Թաւրիզի նահանգապետ Ամիր Նիզամը, որը հրամայել է Տաճկաստանից Սալմաստի գաւառը նոր գաղթած հայերից գլխահարկ առնել. հայոց առաջնորդական տեղապահը Թաւրիզում դիմուել է տել այդ առթիւ, որ շահը յայտնած է թէ այդ գաղթականները հինգ տարով աղատ են հարկ չվճարելուց, բայց այդ առարկութիւնը, ըստ երևութին, անհետեանք է մնացել։ ԱմիրՆիզամը նաև հրամայել է Սալմաստում ապաստանած հայ գաղթականներին Ղարադաղ տեղափոխւել։

Հայ զինւած խմբերի և պարսկա-տաճկական սահմանի մօտ եղած տաճկական քիւրդերի միջև արդարեւ տեղի ունեցան կռիւներ, որոնց մասին Լոնդոնի Շոէլի-Նիւոյ օրաթերթը Թաւրիզի

իւր թղթակցից հետևեալ հեռագիրը ստացաւ, մեր տոմարով յուլիսի 27-ին:

«Պարսկա-տաճկական սահմանի վրայ անկարգութիւններ սկսւեցին: Քիւրդերի ներս խուժելու պատճառով պարսից կառավարութիւնը զօրքեր և թնդանօթներ ուղարկեց: Տաճկական զօրքերին հրաման է տրւած գնալ դէպի սահմանը: Կոխւը, լուրերին նայելով, տեղի ունէր քիւրդերի և ապստամբ հայ հրոսակների միջև»:

Իրողութիւնը, նոյն ժերթի թղթակցի տեղեկութիւններով, հետևեալն է եղած: Համիդիկ հեծելագնդի նշանաւոր զիւսաւորներից մէկը, Շերիֆ փաշա, անցեալ տարի անդթութեամբ կոսորեց մօտ 1000 հայ երիտասարդներ, որոնք փախչում էին Հաղբակի գիւղերից: Այդ յառաջացրել էր հայերի մէջ մեծ յուզմունք. դոցանից 500 հոգի յուլիսի 23-ին յանկարծակի յարձակւեցին Հեքքեարում գտնւող Շերիֆ փաշացի մարդկանց և վրանների վրայ, կոսորելով 600 հոգի, որոնց թւում և Շերիֆ փաշան, աւար վերցրին վրաններ, նախիրներ, հօտեր և այլն. կանայք և երեխանները խնայեցին: Շերիֆ փաշան Սուլթանի սիրելիներից էր և ստացել էր սորանից զարդեր և թանկագին սուր: Ապանւածների մէջ են նաև մի քանի թիւրք զինուորներ:

Միաժամանակ կ. Պոլսում պատահեցին դէպեր, որոնց մասին տեղեկութիւններ են տալիս հետևեալ հեռագիրները.

կ. Պոլսի, 10 օգոստոսի: Երէկ բոլոր դեսպանատները ստացան, ֆրանսսերէն և հայերէն լեզուներով, մի լիշտակագիր, որ կրում էր «Հայկական դաշնակցութեան» կ. Պոլսի կենտրոնական լեզափոխական կոմիտէտ» ստորագրութիւնը: Յիշտակագիրը հազորդում է, թէ տեսնելով որ բարենորդումների նախագծերը անիրագործելի մնացին, և հայերի դրութիւնը, որոնք ձգտում էին միան քաղաքացիական ազատութիւն և իրաւունքներ ստանալու, անտանելի զարձաւ, կոմիտեն յուց կը տալ, որ ինքն գեռ կենդանի է, և կեանքի առաջին նշանները ապագայ գործողութիւնների սկիզբ կը գառնան: Դեսպանները և նոյա մօտ եղող շրջանները այն միտքն են չափոնում, որ հայերը կատարելապէս վնասւեցին իրենց յանցաւոր փորձերով. նոքաղրկւեցին համակրութիւններից և արգելք զարձան ու ֆորմներին:

Լրնդոն, 7 օգոստոսի. «Times» լրագրին կ. Պոլսից հեռագրում են, որ Բ. Գուռը, վախենալով Քիւրդիատանում տիրող անիշխանու-

թիւնից, հրաման արձակեց զէնքի տակ կանչել արևելեան վիլայէթ-ների զօրքերը:

Կ. Պոլիս, 8 օգոստոսի: Պէքալի ոստիկանական վարչութեան մէջ ոռումբ զցեցին, որը, սակածն, պայթիւն չառաջցրեց:

Օսմանիեան բանկում բռնցին երկու կասկածնելի անձնաւորութիւններ եւրոպական հագուստով, որոնք իրենց հետ դինամիտ ունեին:

Բ. Դրան կողքի բակում, որ միացնում է մեծ վիզիրութիւնը պետական խորհրդի շինութեան հետ, դինամիտավին լանցաւոր փորձ եղաւ, որից ջարդեցին ապակիները պատուաններում և փոքր վնասներ պատճառեցին. Ասում են, որ մի քանի վիրաւորւածներ կան Ասում են, որ լանցաւոր փորձ անողները հաւերն են. Այդ փորձերի պատճառով սարսափ տիրեց. Մազաղիները փակւեցին, բայց շուտով կրկին բացւեցին, և երեկոնքեան հանգստութիւն էր տիրում:

Կ. Պոլիս, 8 օգոստոսի: Պաշտօնական հաղորդագրութիւնը առում է. «Երէկ, 3 ժամին կէսօրից լիտոց, Բ. Դրան արարողապետի զիւանատան կորիդորում պակթեց դինամիտավին ոռումբ: Ծառաներից մէկը սպանեց, երեքը վիրաւորւեցին. բացի դրանից, մի քանի վնասներ են եղել Հէնց նոյն ժամին զցեցին երկրորդ ոռումբ Ղալթա-Սէրալում, Պէքալում, բայց պակթին չառաջցաւ. Երկու լանցաւոր փորձերի հեղինակներն են հաւերն են, որոնց անլապաղ կալանաւորեցին: Օսմանիեան բանկում կալանաւորեցին մի հաւ, որը պատրաստում էր վառել չորս պատրուզ ունեցող ոռումբը: Քննութիւն է մկանած, միջոցներ են ձեռք առնեած և հանգստութիւնը վերականգնած է»:

Կ. Պոլիս, 8 օգոստոսի: Բ. Դուռը ամենախիստ հրամաններ տւառ գաւառների վալիներին և զօրքերի զիւաւորներին՝ չթոլլաւորել հաւերի դէմ բռնութիւններ, որոնք կարող են երեան գալ իբրև հետեանք արտեղի փորձերի, և նորա վրաչ զցեց պատասխանատութիւնը կարգ պահպանելու համար: Յուս ումին որ այս կարգադրութեան չնորհիւ, երեկուաէ անցքերը արձագանք չեն դանի դաւառներում: Ակատեղ տիրում է ամենամեծ հանգստութիւն, որը, կարծում են, հաստատ կը մնաչ, ի նկատի առնելով նախազդուչութեան խիստ միջոցները: Փողոցներն ընդունեցին սովորական տեսքը. առետուրը անընդհատ շարունակւում է: Կալանաւորւած հաւը, որ փորձում էր ոռումբ վառել օսմանիեան բանկում, անւանեց իրեն կարապետ: Նա հաւասարացներ է, որ երկու օր առաջ է եկել Ռուսաստանից, բայց այս բանին հակառակ են նորա մօտ գտնեած մեփական լուսանկար պատկերները, որոնք հանւած են ախտեղի լուսանկարների ձեռքով:

բաւական ժամանակ առաջ, Յանցաւորը հրաժարում է տալ ուրիշ բացատրութիւններ, Բ. Դրան մէջ պայթած ոռումբը զցւած էր պատուանից, Սուս են աճն լուրերը թէ երիտասարդ թիւրքերը մասնակցում էին ալդ փորձերին, Բոլոր փորձերը կատարել են հաւերը,

Կ. Պոլս, 13 օգոստոսի Ալսօր Ղալաթակում կալանաւորեցին մի կասկածելի հաջի, որը սպառնում էր հրացանով սպանել ոստիկանին. Դա առաջացրեց մի փոքրիկ սարսափ, որը, սակայն, շուտով անցաւ:

Կ. Պոլս, 14 օգոստոսի Երեկ երկու հարուճի, որոնցից մէկը ոռուանպատակ է, տուին ոռուսաց և Փրանսիական դեսպանութիւններին նամակներ «Հնչակ» կոմիտէի կողմից. Նոքա հէնց ազտաղ էլ ձերբակալւեցին. Նամակները չափուած են, որ նորերս դեսպանասներին մատուցւած լիշտակագիրը կեղծ է, որ ոչ մի դաշնակցութիւն գոլութիւն չունի, որ «Հնչակը» վերջին չանցաւոր փորձերի մէջ մասնակցութիւն չունի, որ ինքը դիտաւորութիւն ունի սպասել, թէ արդեօք կիրագործեն ռէֆորմները:

Ճիշդ չէ աճն լուրը, որ իբր թէ մտադրութիւն կաչ չանցաւոր փորձեր անելու ոռուսաց և գերմանական դեսպանների դէմ:

Այդ գէպքերի առ իթով ոռուսաց պաշտօնական «Պետական Համբաւաբեր» օրաթերթը տպեց հետևեալը.

«Մամուլի մէջ ժամանակ առժամանակ երեւում են լուրեր այն մասին, թէ Օսմանեան պետութեան սահմաններում երեւան են գալիս հայկական կոմիտէներ և խմբեր, որոնց վերագրում են մտադրութիւն՝ անցեալ տարւան օրինակին հետևելով բռնութիւնների դիմել և իրենց ցեղակից ազգաբնակութիւնը գրգռել անկարգութիւններ կատարելու: Ցիրաւի, չի կարելի չնկատել, որ մասամբ հաստառում են այդ տեղեկութիւնները այն ընդհարումներով, որ նորերս տեղի ունեցած տեղական հայերի և քիւրգերի մէջ տաճկասլարսկական սահմանի վրայ, և նոյնպէս այն չանցաւոր չարամտութիւններով, որոնք կատարեցին Տաճկաստանի նոյն իսկ մայրապաղաքի մէջ, ուր, ինչպէս երեաց, յանցաւորները գրեթէ բացառապէս հայեր են և գլխաւորապէս եկւոր հայեր: Հարկ չկաչ ցոյց տալու թէ որքան անմիտ են ացդպիսի գործողութիւնները: Հասարակական կարծիքը բարձրաձայն դատապարտեց լոցա, ոչ միայն այն չարիքների պատճառով, որ ացդպիսով հասցնում են իրենց մեր ձաւորներին զոհելով, այլ և ինկատի ունենալով այն անհիմն բոր-

բոքումներն ու ցնորքները, որոնք կարող են ծագել խաղաղ հայ ազգաբնակութեան մէջ:

«Մեր կառավարութիւնը իւր կողմից չի թագցրել իւր հակակ-
րութիւնը դէպի հայկական ազիտացիան, որ չկարողացաւ ազգա-
բնակութեան որ և է օգուտ բերել, այլ, ընդհակառակն, միայն
աւելի վատթարանում են այն պայմանները, որոնց ծանրութեան
դէմ ազիտատորները, ըստ երեսութին, իրաւունք են համարում
բողոքել: Պէտք են յուսալ, որ հայ ազգաբնակութեան բարեմիտ
մասը, օրինակելի գործով ցոյց կը տայ իւր վերաբերութիւնը դէպի
պատահած անցքերը և աղիտացիայի զեկավարների վրայ ակտը
եղած ազգեցութիւնը անելով՝ նոր դժբախտութիւնների դէմն
կառնէ»:

Ա. Ա.

ՆԱԽԹԱՐԴԻՒՄԱԲԵՐՈՂՆԵՐԻ XI ԺՈՂՈՎԸ

21 ապրիլի մինչի 2 մայիսի 1897 թ.

Ֆ. ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

Ներկայ քողածով ես մտադիր չեմ արձանագրել XI նաւթագործ-ների ժողովի նիստերը, այլ կամենում եմ մի քիչ ընդարձակ կերպով կանգ առնել ժողովում արձարծւած մի քանի հարցերի վրայ այն է. 1. ինժեներ-տեխնիսներուդ Պրն. Տէր-Գրիգորեանի զեկուցման մասին Բալախանու հանքերում ծառաւղիների պրոֆեսիական կուրսերի վերաբերեալ. 2. Ամառաւակ ամիսներին կերոսինագործների մէջ երկաթուղարին կաթսա-ները բացանելիս ի նկատի առնել նաև ծովով արտահանած կերոսինի քանակութիւնը. 3. Նաւթամիացորդների համար բռնկան տեմպերատուրի առտիւճան նշանակել. 4. Հետու արենելքում մեր կերոսինի առուտուրին լաւ կազմակերպութիւն տալ. 5. Ժողովի խորհուրդին թուլատրել ունենալ իւր սեահական պարբերական օրդանը, նւիրած նաւթաէին գործերին վերա-բերեալ հարցերի մշակման:

Վերոդիշեալ հարցերը, պէտք է խոստովանել, նոր չեն, Դեռ անցեալ ժողովներում ալդ հարցերը չարուցւած են եղել, սական որովհետեւ նոքա բաց են մնացել ուստի ներկայ ժողովում նորից խօսակցութեան նիւթ զարձան, Ես կ'սկսեմ առաջին հարցից. թէ որ աստիճանի մեծ պա-հանջ է զգացւում ունենալ Բալախանում հանքալին ծառաւղիների համար պրոֆեսիական կուրսեր, ազդ մասին պերճախօս կերպով վկացում են այն քազմաթիւ դժբաղդ դէպքերը, որ տեղի ունին նաւթալին հանքերում: Վիճակագրական տեղեկութիւնները ապացուցանում են որ դժբաղդ դէպ-քերը ըստ մեծի մասին տեղի են ունենում չնորհիւ, հանքերի ծառաւղ-ների իրանց արւեստին անտեղեակ լինելուն:

Նաւթաէին արդիւնաբերութիւնը հոկալական քալերով վերջին տա-րիների ընթացքում զարգանում է, սական քիչ թէ շատ հանքալին գոր-ծին տեղեակ մարդկանց սաստիկ պակասութիւն է զգացւում: Ալդ հանքա-

մանքի չնորհիւ հանքատէրերն շատ անդամ ստիպւած են լինում հանքում պաշտօնները չանձնել աջնպիսի մարդկանց, որոնք բոլորովին անհամապատասխան են գործին. Շատ պարզ է, թէ ինչ հետևանք կ'ունենալ այդ հանդամանքը. Հարկաւ գործի մէջ չաճտվակի գանդաղութիւն կ'առաջանայ մինչև որ նոքա կ'ընտելանան հանքալին գործի տեխնիկալին. Իսկ այդ վերջինը բաւականաշափ ժամանակ է պահանջում: Որ աստիճանի ձեռնոտու է հանքատիրոջ ունենալ գործին տեղեակ բանւորներ և այլ ծառալողներ, այդ անքան պարզ է, որ գորա մասին կանգ առնել և խօսելը մենք աւելորդ ենք համարում:

Հանքալին ծառալողները զլիսաւրապէս բաժանում են հետեւալ դասակարգերի. I. մեքենալապիտներ և նոցա օգնականներ. II. հոր քանոդող վարպետներ. III. կաչեգարներ և մասլեօնչչիկներ. IV. բանւորներ հոր քանդիլու համար. և V. տարտալչիկներ¹⁾.

Պ. Տէր-Գրիգորեանը բաժանելով հանքալին ծառալողներին այդ դասակարգերի, իւր զեկուցման մէջ նուն իսկ պարզում է դասատութեան եղանակը, ժամերը և զլիսաւրապէս իւրաքանչիւրի կուրսի չափը. Նա առաջարկում է զլիսաւրապէս գործնական եղանակ դաստուութեան, Բայց որովհետեւ բանւորների մէջ Հայերը կազմում են 30%, ուսւները 25%, տեղացի թուրքերը 17%, Լեզգիները 45%, պարսիկները 10% և մեացեալ ազգութիւններին պատկանողները 3%, և ի նկատի ունենալով որ թուրքերը, պարսիկները և լեզգիները դիտեն և հասկանում են թուրքերէն, ուստի պ. Տէր-Գրիգորեանը առաջարկում է կուրսեր սահմանել 3 լիգով. ուսւերէն, հայերէն և թուրքերէն: Ճողովը միանդաման համաձայն լինելով զեկուցանողի առաջարկութեանը՝ որոշեց չանձնել ժողովի ասլագաւ խորհրդին հոգալ կուրսերի թէ նիւթականի և թէ թուլուութեան մասին և ապա բանալ համաձայն պ. Տէր-Գրիգորեանի առաջարկութեան:

Երկրորդը բաւականին նուրբ հարց է: Այստեղ չօշափուամ են ուղղակի փոքր և միջակ կերոսինագործների շահերը: Մենք կրկնութիւն չէինք համարիլ, եթէ մի քիչ ընդարձակ կերպով խօսէինք այդ հարցի մասին, որպէս զի ընթերցողի համար մի քիչ պարզ լինին մեր ասածները: Աւելորդ չեմ համարում նկատել որ այդ ժողովը աւելի բազմամարդ էր, և ներկայ էին համարեա թէ բոլոր փոքր և միջակ կէրոսինագործները:

Երկաթուղարին վագոնները կէրոսինագործների մէջ բաժանելու համար կայ առանձին կոմիտէ: 1896 թւականին կէրոսինի և նաւթամնա-

¹⁾ Կաչեգար=հնոցպան, մասլեօնչչիկ=մեքենաներին իւղ քսող. տարտալչիկ=հորից նաւթ դուրս քաշող.

ցորդի¹⁾ գները զդալի կերպով բարձրացել էին. Կերոսինի գինը միջին թւով՝ 19.₆₈ կոպէկ, իսկ նաւթամնացորդի 8.₈ կոպէկ. պէտք է խոստովանել որ այդ գները բաւական ձեռնուու էին, ուստի բոլոր կերոսինի գործարանները բանում էին. Թէպէսև նաւթամնացորդը կարողանում էին բոլոր ծախել, սակայն արդինաբերած բոլոր կերոսինը արտահանել անկարել. Էր երկաթուղարին վագոնների պակասութեան պատճառով: Սկսեալ անցեալ սեպտեմբերից մինչ օրս երկաթուղարին վարչութիւնը իւրաքանչիւր 1.000—1.200 փութ արդինաբերած կերոսինի համար մի վագոն էր տալիս, իսկ իւրաքանչիւր վագոն իւր մէջ պարունակում է 600—610 փութ. Հետևապէս բերքի 50% ը մնում էր գործարանների ամբարներում. Ազպիսով բոլոր գործարանների ամբարները լցւած են կերոսինով:

Ազ հանգամանքը ստիպեց կերոսինագործներին միջոցներ որոնել այդ աւելացած կերոսինը արտահանելու համար: Կազմեցին զանազան պարտիաներ, որոնք ներկաւացրին իւրանց կարծիքը վագոնների կարգադրիչ կոմիտէին: Ես մի առ մի չեմ չիշիւ կարծիքները, ազ կանգ կ'առնեմ աւելի ուշագրութեան արժանիի վերաէ, որ իւր ժամանակին մեծ աղբ մուկ հանեց:

Վագոնները կերոսինագործների մէջ բաժանելու համար հետեւալ կանոնն էր գործադրում. իւրաքանչիւր ամսի 20-ին ամեն գործարան կարգադրիչ կոմիտէին ներկաւացնում է տեղեկութիւն ա) իւր գործարանում արդինաբերած կերոսինի քանակութեան մասին, սկսեալ նախորդ ամսւագ 20-ից մինչև ներկաց ամսի 20-ը, 2) որքան դորանից արտահանած է նոյն ժամանակամիջոցում կերոսին թէ ծովով և թէ երկաթուղով, և ապա գ) ինչքան պատրաստի կերոսին ունի գործարանում: Ծովով արտահանում հն առհասարաւկ սկսեալ մարտի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը:

Կարգադրիչ կոմիտէին կերոսինագործների մէջ վագոնները բաժանելիս միշտ ինկատի է առնում ծովալին արտահանութիւնը: Անպէս որ ծովով արտահանողները ամառւաէ ամիսներին քիչ վագոններ են ստանում. իսկ աւելացած վագոնները բաժանում են մնացեալների միջներ:

Պէտք է ասել որ կառպեան ծովով արտահանում են մեծ ֆիրմաները, որոնք Ոուսիալում կազմակերպւած առևտուր ունին: Դոքա են՝ Նորէւ Շիբաւեւ, Թաղիեւ, Կասպեան ընկերութիւն:

¹⁾ Կերոսինը=զտած, մաքրած նաւթ է, որ վառում են լամպաներում. նաւթամնացորդ (Առթանութեան օստագու) ան է որ ստացում է երբ հում նաւթից քաշած են լինում կերոսինը, բնովինը և ազ իւղերը. այդ մնացորդը, որ մազուտ էլ է կոչւում, բանեցնում են իբրև վառելիք (Փատահի և քարածուխի տեղ) գործարաններում, երկաթուղիներում և ալին, որի պատճառով նա ալժմ բարձր արժեք է ստացել և մեծ քանակութեամբ արտահանում է Ոուսատան:

Ահաւասիկ ալդ Փիրմաները ինդիրք են ներկալացնում կարգագրիչ կոմիտէին. որ ամառաւակ ամիսներին ծովով արտահանած քանակութիւնը արդիւնաբերութիւնից զուրս չդան, ալ նրա համար ևս վաղոններ նշանակեն. Ալդ առթիւ կարգադրիչ կոմիտէն իւր նիստերից մէկում, աճն է 19 լունաւարի ներկայ թւականի, հաւանութիւն տւառ ալդ կարծիքին և ներկալացրեց երկաթուղու կառավարչին, որպէս զի ալդ վերջինը ներկալացնի ուր հարկն է ի հաստատութիւն. Սակայն կարգադրիչ կոմիտէի երկու անդամը ձեռնպահ մնացին—պատ. Լեւ և Ալիքէգեան. առաջինը, ալդ ծրագիրը գտնելով միանգամայն վնասակար փոքր և միջակ կէրուխնագործների համար, խնդրեց ալդ առաջարկութիւնը թողնել անհետանք, իսկ երկրորդը ալդ հարցը վաղաժամ գտաւ. և նոյնպէս խնդրեց թողնել անհետանք:

Մենք միանգամայն համաձայն ենք պ. Լեւի կարծիքին և իւր ժամանակին բողոքեցինք «Նովուե Օբողրէնիէ» լրագրում. Եւ լիրափ, ձմեռաւակ ամիսներին փոքր գործարանատէրերի արդիւնաբերութեան 50% է մնում, իսկ ամառաւակ ամիսներին 5—25%, և ոչ աւելի. Ուրեմն ամառաւակ ամիսներին այն որ մեծ Փիրմաները ծովով են արտահանում, միջակ և փոքր գործարանատէրերը երկաթուղով են անում, և ալդպիսով պահպանուում է մօտաւոր հաւասարակշիռը. Բայց եթէ լիշեալ առաջարկութիւնը հաւանութիւն գտնէր բարձր շրջաններում, անկատկած շատ մօտիկ ապագալում միջակ և փոքր գործարանների մեծ մասը ստիպւած կը լինէր դադարեցնել իւր գործունէութիւնը. Սակայն ժողովում մնամասնութիւնը կազմեցին փոքր և միջակ գործարանատէրերը և փառաւոր կերպով լազմեցին մեծ գործարանատէրերին, թողնելով վագոնների դաստորութեան հին կանոնը.

Նաւի ամենացրդների համար բունկման տեմպերատուրի աստիճան նշանակելը դարձեալ չին հարց է, երբ նաւթափին IX ժողովում երկար ընդդիմախօսութիւնից լսուով որոշեցին թողնել ալդ հարցը առանց հետևանքի. Ալդ նիստում կողմանակիցները, լանձին նորել Փիրմանի կառավարիչ պ. Խաղելինի, առաջարկեցին նշանակել 90° ջելիուս Քրենկենի մեքենալով. Ալդ առաջարկութիւնը փաստաբանուում էր այն բազմաթիւ շոքենաւերի հրդեհներով, որ տեղի են ունենում վոլգա և միւս գետերի վերաբ. Սակայն ալդ պատճառաբանութիւնը կրիտիկակի չդիմացաւ, որովհետեւ ժողովականներից մի քանիսը հաստատեցին, որ ալդ հրդեհները տեղի են ունեցնեու թէ այն պատճառով, որ նաւթամենացրդները համապատասխան բռնկման աստիճանի չեն եղել, ալ բոլորովին ուրիշ պատճառաներով: Եւ լիրափ, եթէ ալդպէս լինի կէրուխնը բոլորովին արտահանել չէ կարելի, որովհետեւ նրա բռնկման աստիճանը 31 աստիճան ջելս. աւելի չէ, հետեապի.

աւելի վտանգաւոր է. բայց վերջին տարիների ընթացքում դեռ ոչ մի դէպք հրդեհի չէ եղել շոքենաւերում, որ բարձւած լինի կէրոսինով։ Առւելեանը լաւտնեց, որ Արդրկովկասեան երկաթուղին վառելիքի համար գործադրում է նաւթամնացորդներ 35 աստիճան բռնկման. ալ Ենարցեւը—Վաղիկավազեան երկաթուղու գծի կառավարիչը—լաւտնեց թէ այն ճանապարհի լոկոմոտիվների համար գործադրում են վառելիք 40—45 աստիճան Ցելսիոսի ջերմաչափով՝ Գրողնիի նաւթից ստացած մնացորդները, Երկար ընդդիմախօսութիւնից լեռոց հարցը քւէարկեցին և որոշւեց, 38 ճանով ընդդէմ 24.ի, նաւթամնացորդների համար բռնկման աստիճան չընշանակել։

Փողովում աւելի ուշադրութեան արժանի հարցն էր՝ հեռու Արևելքում (արևելեան Ասիալում՝ Հնդկաստան, Չինաստան և ալին) մեր կէրոսինի առևտուրը կազմակերպելը։ Այդ հարցը վիրափ որ լուրջ ուշադրութեան արժանի է։ Սական պէտք է ասել որ գորան մի լաւ բացատրութիւն տալ ոչ ոք չկարողացաւ, այն հասարակ պատճառով, որ մեր երկրացիներից ոչ ոք չէ ուսումնասիրած գործը տեղում, ալլ բոլորը այս կամ այն աղբիւրներից ստացած տեղեկութիւնների հիման վրայ էին խօսում։ Թէ որ աստիճանի արժանահաւատ են այդ աղբիւրները, մենք մեզ ձեռնհաս չենք համարում պատասխաննել։

Տ.րդ ժողովում որոշված էր այդ հարցի առթիւ հաւաքել ըստ կարելոյն ճիշտ տեղեկութիւններ, ենթադրելով որ այդ տեղեկութիւնները կարելի կը լինի ստանալ Փինանսների մինիստրութիւնից։ սական ցանկացած տեղեկութիւններ մինիստրութեան մէջ չգտնւեցան, Կերոսինագործների դաշնակցութիւնը (Սոիւլ) աւելի ճիշտ տեղեկութիւններ ունի, քան որ նէ ալլ հիմնարկութիւն։ Ուստի ժողովի խորհուրդը զիմել է Սոիւլի կառավարչի օգնականին և ստացած տեղեկութիւնների հիման վրայ կազմել հեռու Արևելքում կերոսինի առևտուրը համակերպելու ծրագիրը։ Աւելորդ չեմ համարում ալդ ծրագրի գլխաւոր կէտերը առաջ բերել

Հարցը, ինչպէս տեսնում էք, բաւական բարդ է և աչնքան էլ հեշտ լուծելի չէ։ Ազդակիսի մի գործ ձեռնարկելու համար նախ հարկաւոր է մած կապիտալ և ապա ընդհանուր ուժով աշխատել։ Այդ գործը լամենաչն դէպս մի մարդու գործ չէ, որքան էլ որ նա հարուստ լինի։ ալլ հարկաւոր է, որ արտեղ խոշոր կերոսինագործները համախմբւեն և ապա գործեն։ բայց եթէ այդ անհնարին է, գոնէ հարկաւոր է նոցա պատկառելի մասի միացումն։ Այդ է ամենազլիսաւորը և անքան պարզ է, որ կարօտ չէ ոչ մի փաստաբանութեան։ Սական պէտք է ասել, որ Սոիւլի նման մի պատկառելի ոժ, նա ևս առանց պետութեան օգնութեան անկարող է որ և

մի դրական քաղց անել այդ ուղղութեամբ. իսկ պետութեան օգնութիւնը պէտք է լինի թէ բարուական և թէ նիւթական,

Տէրութեան բարուական օգնութիւնը կը կալանաչ նրա մէջ, որ նա այն հիմնարկութեան, որ կը ձեռնարկէ ալդ մեծ գործը, կ'աջակցէ հարկաւոր դէպքում. զիցուք ամբարներ կառուցանելու համար տեղեր ու հողեր ձեռք բերելիս, տեղալին վարչութեան հետ բանակցելիս, եթէ որ և է արգելքի առաջն առնելու հարկաւորութիւն լինի. ունենալ հեռու Արևելքի կենդրոններում փորձւած կրնուլներ և առետրական գործակալներ, որպէս զի հարկաւոր դէպքում կարելի լինի ճիշտ աեղեկութիւններ ստանալ. իսկ նիւթական օգնութիւնը կը կալանաչ նրա մէջ, որ պետութիւնը ռուաչինական բանկում կը բանաչ վարկ ապահովութեամբ կերոսինի, կամ այն բոլոր հիմնարկութիւնների, որոնք կը կառուցւին հեռու Արևելքի կենտրոնում կէրոսինի առեւտրի կազմակերպելու նպատակաւ, զիցուք երկաթի ամբարներ, շինութիւններ և ազն, Քիչ պակաս գեր չեն կատարիլ նաև եթէ թեթեացնեւեն շոքենաւեր կապալով վերցնելու պալմանները, պատելով մաքսակին ահագին տուրքերից:

Վերջապէս հարկաւոր է պետրական գանձարանի կողմից նիւթական զո՞ն. Անդրկովկասնան երկաթուղու տարիքը հեռու արենելք ուղարկելիք ապրանքի համար հարկաւոր է պակասեցնել, որովհետեւ, կերոսինի առեւտրի արգի զրութեան նաևլով, տիրող տարիքով արտահանել կէրոսին հեռու Արևելք միանգաման անկարելի է դառնում. Կերոսինագործները ստիպւած կ'լինին իրանց զրաբանից ևս դնել, բացի այն որ արտահանուած կերոսինի համար ոչինչ չեն տանալ. Ազդպիսով մենք վախուստ տալով հեռու Արևելք կերոսին արտահանելուց, ստիպւած կը լինինք զադարեցնել եթէ ոչ ընդմիշտ, զո՞նէ առժամանակ կերոսին հեռու Արևելք ուղարկելլը. Այդ հանդամանքից օգտւելով Զոնդի կղզիների կերոսինագործները կ'աշխատեն շուկաները լցնել իրանց ապրանքով և ընդմիշտ կը վակւեն մեր առաջ հեռու Արևելքի շուկաները, ազդքան մեծ դժւարութիւններով և նիւթական մեծ զոհերի չնորին ձեռք բերածները, Զոնդի կղզիներում նոր զարգացող նաւթարդիւնաբերութեան վրա մենք առանձին ուշադրութիւն պիտի դարձնենք, որովհետեւ նա բաւականի ուժեղ մրցող է ներկայանում ոչ թէ միան մեզ համար, այլ նոյն իսկ ամերիկացների համար:

Ամերիկացիք, որպէս հմտւ և ճարպիկ առետրականներ, մեզ նման կարինետում նատած ծրագիրներով չեն զբաղվու այլ ուղղակի գործի կը դիմեն ու ամեն ջանք գործ կը զնեն, որ իրանց ձեռքից բաց չթողնեն այդ շուկաները. Հէնց այդ տեսակէտից նաևլով գործին, մենք աւելի եռանգուն կերպով պէտք է պատրաստւենք զիմազրելու մեր ախոնեաններին. Աերջացնելով իր զեկուցումը, ժողովի խորհուրդը աւելորդ

չգտաւ ասել, որ միմիան հեռու Արևելքի շուկաների վրայ մտածելը կը լինէր աւելի քան միակողմանի, այլ սորա հետ զուզընթացաբար հարկաւոր է նաև մտածել եւրոպական շուկաները ձեռքից բաց չժողնելու մասին. հակառակ դէպքում մննք մի օր կարող հնաք սարսափելի դրութեան մէջ ընկնել, աճն է ոչ Եւրոպական և ոչ էլ հեռու Արևելքում մի որեւէ ուշադրութեան արժանի շուկայ ձեռքի տակ չենք ունենալ: Սրանից վատ դրութիւն էլ ինչ պէտք է լինի: Աղջկէս էր վերջացնում խորհուրդը իր զեկուցումը:

Բացի խորհուրդի զեկուցումից, մի ծրագիր առաջարկեց նաև Սովորի կառավարչի օգնական պլ. Լեւենսոնը:

Ազդ պարոնը համարենա նոյն կէտերի վրայ շեշտելով առաջարկում է ալդ ձեռնարկութեան համար կազմել երկու ընկերութիւն. ա) ընկերութեան նպատակն է արտահանել մեր կերոսինը զէպի Արևելքի գլխաւոր իենտրոնները. Նախակ Գոնդ-Հոպէն և Խապոնիա, ունենալ աճն տեղերում սեփական ամբարեներ, բ) ընկերութիւն՝ վաճառելու համար մեր կերոսինը եր'յիր խորքերում. ուստի ցանկալի է որ ալդ երկրորդ ընկերութեան մասնակցին նոյնպէս ալտուղի կապիտալիստները Ազդ տեղի կ'ունենայ աճն դէպքում, նախ եթէ մեր բալոր կերոսինագործները միանան 10 տարի ժամանակով, և երկրորդ՝ եթէ տէրութեան կողմից լինի որոշ օժանդակութիւն.

Այլէ Զոնդի կողմիների արդինաբերութիւնը՝ ընդունվի որպէս մի ուժիղ ախուցիան, աճն ժամանակ հարկաւոր է շտապեցնել կերոսինացքը դէպի Կարմիր ծովը և կառուցանել աւելի շուտ քան Բաքու-Բաթումի անցքը:

Ազդ հարցի առթիւ խօսեց պլ. Անտոնինեանը, որը առաջարկեց մտնել անմիջական զարաքերութեան մէջ ուղղակի գնողների հետ, որովհետև միջնորդների միջոցով մեր կերոսինը ծախելիս օգտի ստւար մասը նրանց է հասնում. Պր. Ղուկասինեանը պարզելով թէ մինք դեռ ճիշտ զաղափար չունինք հեռու Արևելքի ոչ էլ վաճառելու պայմանների մասին, մննք առաջմ անմիջական զարաքերութեան մէջ մտնել գնողների հետ անկարող ենք, ուստի ցանկալի էր որ մինիստրութեան կից մի մասնաժողով կազմէի՝ որ պարզի մեր արդինաբերութեան հանգամանքները և աճն միջոցները, որ պիտի ձեռնարկւին հեռու Արևելքում գործը աւելի քան ամուր հիմքերի վրայ գնելու համար: Խակ ալդ ի հարկէ առանց կերոսինագործների միութեան անկարելի է: Ժողովը ընդունեց նաև ալդ առաջարկը:

Ժողովը նոյնպէս ընդունեց խորհրդի առաջարկութիւնը հրատարակել „Հեֆտյահօց ՃՅԱԾ“ անունով մի շաբաթաթերթ „ՀեդՅլյա“ լրագրի չափով, նւիրած լատկապէս նաւթարդիւնաբերական գործին, և ալդ հրատարակութեան համար որոշեց տալ 1000 ու ժողովի գումարներից:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏ- ՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

Գ. ՂԱՐԱՋԵՍՆԻ

Այս ընտրութիւնները տեղի ունեցան շատ աննպաստ պաշմաններում։ Երկու պատճառներում՝ էլեկտրական առաջանակութիւնները կատարվում են համար մարդկանց, որ Վեհափառ կաթողիկոսը բարեհածել էր հոգաբարձական ընտրութիւնները լետածդեկտինչ գալ տարի և զպրանոցի հոգաբարձութիւնը, հակառակ հասարակութեան ցանկութեան, զարձեալ մի տարի ևս պէտք է մնար իր պաշտօնում, զանկարծ, բոլորվին անոպասելի կերպով, նշանակում է հոգաբարձական ընտրութիւն լունիսի 1-ին։ Ազդ առիթով թեմի առաջնորդը 1—2 օր առաջ կարգադրում է հրաւիրել ծխականներին նկեղեցական պատգամատրների ընտրութեան, որը և տեղի ունեցաւ մայիսի 23-ին։ 2-րդ առաջման չունենալով ընդհանրապէս սահմանւած ընտրողական որոշ գրաւոր օրէնք, կանոնադրութիւն, թեմական հոգեսոր իշխանութիւնը ժամանակ չէր ունեցել և թերես կարուր էլ չէր համարել գէթ ժամանակաւորապէս ընտրողական հրահանգներ տալ ընտրող ժողովրդին։ Պարզ է, որ այս տեսակ պաշմաններում բնականաբար ընտրութիւնը պէտք է կամարէկը շատ անկանոն կերպով։ բռնութիւնը, կամապականութիւնը, բողոքելու անընդունակ, անքանու, աղքատ ծխականներին ընտրութեան չհրաւիրելը, ժողովրդին տիրապետող տգէտ աղաների, վաշխառուների ասպարէդ գալը, ահա սոքա են այն երեսովները, որ կարող էին տեղի ունենալ և տեղի ունեցան ներկաչ ընտրութիւնների ժամանակի։ Աթէ հասարակական գիտակցութիւն լինէր Երեանում և կամ հասարակութեան գլուխ անցած լինէին մի քանի բարեխիղճ, ժողովրդական իրաւունքների անկեղծ պաշտպան դործող անհատներ, սրանց ջանքերով ներկաւ ընտրութիւնները պէտք է նախ լետածդւէին 2—3 շաբաթ ժամանակով, որպէս զի ընտրող հասարակութիւնը ժամանակ ունենար հանդիսաւ խղճով որոնել արժան աւոր պարդիկ թով չտալով տգէտ աղաների կրքերին զոհել մի համալրելի հիմ-

նարկութեան բարձր չահերը, և երկրորդ—պահանջւէր ժամանակաւոր ընտրողական որոշ հրահանգներ թեմական առաջնորդից, Ոչ այս եղաւ, ոչ այն։ Եկեղեցական պատգամաւոլների ընտրութիւնը կատարւեց անդաշող կերպով, ընտրւած 21 պատգամաւորները եկեղեցիների երեցիների հետ ներկացնում էին խառնիճաղանճ, բազմերանգ մի կողէկցիա, որից երբէք չէր կարելի սպասել հոգաբարձուների չաջող ընտրութիւն, ինչպէս և եղաւ, Զնակելով որ շատ կարճատն էր ժամանակը մինչև հոգաբարձական ընտրութիւնը, բայց և այնպէս նկատելի էր այդ կարճ միջոցում մի առանձին շարժում պատգամաւորների շրջաններում և թէ բուռն հետաքրքրութիւն դուրս հասարակրւթեան մէջ դէպի հոգաբարձական ընտրութիւնը, որի հետեանքից կախւած էր թեմական դպրանոցի մօտակաչ վիճակը։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել քանի որ զպրանոցը վերին աստիճանի խղճալի դրութեան մէջ է գանւում ներկացումն, թէ տնտեսական և թէ կրթական կողմից։ Նախորդ հոգաբարձութիւնը, հանգուցեալ կիրեղ եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, ժառանգութիւն չէր թողել ներկաչ հոգաբարձութեան, իսկ ուսումնական, կրթսկան մասը, նիւթական սույզ միջոցների պատճառով, ևս առաւել խղճալի էր։ 1894 թւին ամշականներից խումբ փորձեց հոգաբարձական ընտրութիւններին անցկացնել իր ցանկալի մարդկանց, տապալել այն ժամանակւաչ հոգաբարձութիւնը իբր անհամապատասխան և պահպանողական։ Դժբաղստաբար մշակականների ջանքերով ընտրւեցան այնպիսի անարժան հոգաբարձուներ, որոնք իրանց անձնական և հասարակական չատկութիւններով բոլորովին անհամապատասխան էին և անծանօթ հայոց զպրոցական կեանքին։ Նրանք ալժմ իրանք խոստովանում են երնք տարի առաջ իրանց գործած սխալմունքը, բայց ի հարկէ արդէն ուշ է։ Նունպիսի և թերեւս աւելի աններելի սխալմունք գործեցին նրանք ներկաչ 1897 թվին, երեք տարից լետով, ինչպէս լետոյ կը տեսնենք։ 1894 թւին ընտրւած հոգաբարձութիւնը ոչ թէ ընդունակ եղաւ զպրոցի քայլքալւած դրութիւնը միերականդնելու, ալլ համարձակ կարելի է ասել, աւելի քաօս ատեղծեց՝ ահագին պարուքի տակ զցելով զպրոց։ Ճիշտ է հոգաբարձութիւնը, մանաւանդ նրա մի անդամը՝ Գր. Տէր. Խաչատրեանը՝ բարի ձգտումն ցոց տւեց բարելաւելու զպրանոցի ուսումնական մասը, բայց այդ կողմից շատ դըժբազմն եղաւ, Տեսուչ հրաւիրւեց պ. Տ. Յովհաննիսեան, ամենքը գրկաբացը ընդունեցին սրան, իբր աշխովժով, նորաւարտ, շատերին քաջ ծանօթ մի երիտասարդի, բայց նա բնաւ չարտարացրեց իրա վրաւ դրած լուսերը։ Երկու տարի կառավարեց զպրանոցը, բայց վակ այն կառավարելուն, բուրովին անընդունակ իբրև տեսուչ և թէ իբր ուսուցիչ, իր տարօրինակ վերաբերութեամբ դէպի զպրոցը պատճառ եղաւ որ զպրանոցում մի կատալիեալ քաօս ստեղծւեց, վերջերս հոգաբարձութիւնը նունպիս համոզւեց։

որ իր տեսչական ընտրութիւնը մի սխալմունք էր. նոյն խոկ հոգաբարձուներից տեսչի ընկեր հոգաբարձու Տէր-Խաչատրեանը ցաւ էր չաղտնել վերջերս տեսչի սխալ ընտրութեան վերաբերմամբ, Բայց զարմանալի բան. չնաև լովի, որ պ. Տէր-Խաչատրեան շատ լաւ հասկանում էր զպրանոցի անցեալ վիճակը իր հրաւիրած տեսչի վատ կառավարութեան չնորհիւ, մինչև վերջը նա ամեն պարագաներում ցուց էր տալիս ջերմ պաշտպանութիւն իր հովանաւորւածին, իր քրօցքին. Այդ բանը պ. Տէր-Խաչատրեանի իր հոգաբարձուի վարկը շատ վայր գցեց շատերի առաջ. Այնէր այդ հանգամանքը՝ հաստատ կարելի էր ասել, որ պ. Գր. Տէր-Խաչատրեանը կը վերընտրւէր իրը հոգաբարձու.

Գր. Տէր Խաչատրեանին դժբաղդացնողը խսկապէս եղաւ Տիգր. Յովհաննիսեանը, և սրան՝ Տէր-Խաչատրեանը.

Ինարկէ հոգաբարձութեան կողմից տեսչի ընտրութեան սխալմունքը ակամաչ էր. բայց նրա մեղքը նրա մէջն էր կարանում, որ նա թով և անփոլթ դժոււեց տեսչի զանցառութիւններին.

Սակայն Բնչ էր ներկայացնում ինքը հոգաբարձութիւնը, Բնչ արդիւնք ցուց տւեց. Արդիւնքի մասին ոչ մի խօսք չի կարող լինել, քանի որ երեք տարւաչ ընթացքում նա փակեց իր բացասական գործունէութեամբ, գպրանցը տասն եւ մէկ հազար ոռոբլու պարտքի տակ զցելով. Հոգաբարձութիւնը իր պարագը հաշւում է մօտ 7.500 ռ. որից մի քանի հազար ծախսել է ուսումնարանին կից կառուցած մի շինութեան վրայ, որով նա պարծենում է (Բնչ պարծանք է պարտքով տուն շինելը և այն էլ անպիտք տուն, որը աւելի չարմար է զինւորանոցի քան ուսումնարանի համար). և պարտքի մնացած մասը գործադրած է ուսուցիչներին վարձ տալու և այլ կարիքները լրացնելու վրայ. Հաշելով այդ գումարի հետ և, ներկայ թւականի մալիսից մինչև սեպտեմբեր, չորս ամիսների ուսուցիչներին վճարելիք ոռոմիկը—մօտ չորս հազար հինգ հարիւր ոռութիւն, ընդամենը կ'անի մօտ 11.000 ռ. Աւելացրէք ակս ցաւին և այն, որ հոգաբարձութիւնը ոչ մի տարի հաշիւ չէ տւել հաստրակութեան—նրա սնանկութեան կատարեալ լինելը պարզ կը լինի ընթերցողին.

Ակապէս զպրոցը ողորմելի վիճակի մէջ գտնելով, հասկանալի է, որ հոգաբարձութիւնը իր արժանաւոր տեսչով չէր կարող պատգամաւորների մէջ խիստ հակառակորդներ չունենալ.

—Հին ոէժիմից և ոչ մէկը չպէտք է վերընտրւի, պնդում էին պատգամաւորներից արժանաւոր տեսչութեան պատգամաւորները ջանք էին գործ դնում վերընտրել Պր. Տէր-Խաչատրեանին, Յովհ. Մելիքեանին, ընտրել հոգաբարձու այնպիսիներին, որոնք ընկերական կապերով կապւած էին տեսուչ Ա. Յովհաննիսեանի հետ և «խաթրը» պահպանելու սկզբունքը չաւերժացնել զպրանոցում.

Նորդարականներն էլ կաշւից դուրս էին գալիս վերընտրել հին ռէժիմից աճնպիսիներին, որոնց միակ արժանաւորութիւնն է տղիտութիւն, անդրագիտութիւն և... հարստութիւն։ Բացի ազգ՝ իրանց թեկնածուների ցանկի մէջ տեղ էին տվել աճնպիսի գունաւոր անձնաւորութիւնների, ինչպէս է, օրինակ, Բէկ-Նուսուպովը։ Դժբախտաբար արմատականների թիւը պատ գամաւորների մէջ շատ աննշան էր, 4—5 և ոչ աւելի։ Սրանք դէմ էին ամրող սրտով հին ռէժիմին, մշակականների թեկնածուներից մի քանի-որն և թէ պահպանողականների կազմած ցուցակին։

Պահպանողականները և նրանց զլուխ անցած անչաշող ագիտատորը, հայ պրամատուրդ» պ. Էմին Տէր-Գրիգորեանը, որը պնդում էր թէ չնացելով ամբողջ մի դրամա էր գրել հայ վաշխառուների կեանքից, բայց օգտակար է համարում դպրոցի համար ալս կամ այն վաշխառուին, մինչն վերջն էլ գործեց ալլ ուղղութեամբ հոգաբարձուներ ընտրելու Փորձեցին առաջադիմականների և մշակականների մէջ տեղի ունեցած տարածախութիւններից օգտել. բայց չկարողացան ի հարկէ լիովին հասնել իրանց նպատակին։ Եթէ նրանք անցկացրին Զաք. Գէորգեանի հոգաբարձու, Ֆառ Տէր-Սահակովին կանդիտատ և ալին, այդ մշակականների մեղքիցն էր. Կարող էք երևակացել. մշակականները մասնաւոր կուսակցական ժողովում իրանց ցուցակի մէջ գնում են աճնպիսի թեկնածուներ, որոնք ոչ թէ անպէտք են, այլ և վնասակար. Երբ լամառութեամբ պնդում ես թէ՝ պարոններ, հեռու պահէք զարոցը «ազաններից», վաշխառուներից, «տղէտ» վաճառականներից. ով է ձեզ հեզնօրէն պատասխանում, հակառակում և պաշտպանում «ազաններին», —մշակական ճանաչւած լայտնի մի քանի պարոններ. սա ֆակտ է. և կարող էինք անունները մէկ-մէկ չիշել ալստեղ, բայց առ ալժմ թողնենք. Ակամաչ ալս վրդովեցուցիչ իրականութիւնը լիշեցրեց ինձ վերջերս Տարագի մի նկատողութիւնը, թէ Թիֆլիսում «մշակականները» սկսել են երկրպագել և շոէել դրամատէրերին. ալստեղ նոյն երեսութն է աչքի ընկնում։

Առաջ բերենք աճատեղ մշակականների և նորդարականների հոգաբարձական թեկնածուների անունները¹⁾:

Մշակականների ցուցակը

1. Կամսարական Կ.
2. Գէորգեան Զ,
3. Ամիրեան Գր.
4. Յովհաննիսեան բժ.

Նորդարականների ցուցակը

1. Գէորգեան Զ.
2. Բէկ-Նուսուպով Լ.
3. Ամիրեան Գր.
4. Ա.Գրիգեան Տ.

¹⁾ Սովորաբար Երև. թեմ. զպրանոցի համար ընտրում են 6 հոգաբարձու և 4 կանդիտատ—ընդամենը 10 հոգի։

- | | |
|--------------------|-----------------------|
| 5. Աֆրիկեան Տ. | 5. Տէր Յակոբեան Տ. |
| 6. Տէր Յակոբեան Տ. | 6. Գաբրիէլեան Ա. |
| 7. Գաբրիէլեան Ա. | 7. Տէր Սարգսեան Մակ. |
| 8. Չաթալրաշեան Յ. | 8. Տէր Սահակով Յ. |
| 9. Անտօնեան Գ. | 9. Տիգրանեան Ստ. |
| 10. Մուսինեան Մ. | 10. Տէր Ղազարեան Քոր. |

Առաջին ցուցակը ընդհանրապէս աւելի համակրելի էր, ինարկէ, քան Արկրորդը. բայց առաջաղիմականը երբէք չէր հաշտվիլ ընդունել առաջին ցուցակից մի քանի թեկնածուներին. Պէտք է այդ ցանկից դուրս ձգէիր մի քանիսի անունները և տեղը լրացնէր նոր մարդկանցով. բայց մշակականներից մի քանիսի աղայական հայեացքը և թէ անձնական հաշիւնները ուժ տեղ դալով՝ ամեն բան փշացրին. Հետեանքն այն եղաւ, որ ներկայ ընտրութիւնը աւելի լաջող ելք ունեցաւ պահպանողականների համար:

Այթէ ես այսքան երկար կանգ առակ կողմնակի հարցերի մասին, նպատակս էր միախ դրութիւնը պարզել ընթերցողին և մատնանիշ անել միանգաման այն հանգամանքի վրայ, որ անհետաձգելի կարիք է զգացւում ներկալումս կազմակերպել ճշմարիտ առաջադիմական կուսակցութիւն, բոլորովին դուրս այժմեան լրագրական (մշակական թէ նոր դարական) կեղծ, անհաստատ «թափայական» կուսակցութիւններից:

* * *

Դիմենք այժմ ընտրութիւններին,
Նկեղեցիններում ընտրած էին պատգամաւորներ հետեալ անձինք.
Նկեղեցիններում ընտրած էին պատգամաւորներ հետեալ անձինք.

Ա. Սարգիս

1. Էամասրական Ա.
2. Չաթալրաշեան Յ.
3. Ալեքարեգեան Յ.
4. Բաղէռսիան (Երեցփոխ)

Պօղոս-Պետրոս

5. Զալուլեան Ո.
6. Ամիրեան Գ.ր.
7. Ցովհաննիսեան բժ.
8. Տէր Խաչատրեան Գ.ր.
9. Մելիքեան Յ.
10. Տէր Յակոբեան Տ.
11. Անտօնեան Գ.

Ա. Զօրավար

12. Գալստեան Ա.
13. Տէր Գրիգորեան Էմ.
14. Ղարաջեան Գ.
15. Տէր Սարգսեան Վ. (Երեցփոխ)

Կաթուղիկէ եկեղ.

16. Գէորգեան Զ.
17. Գալուրիէլեան Ա.րտ.
18. Ցովհաննիսեան Տ.
19. Գէորգեան Ա. (Երեցփոխ)

- Կօնդի Ս. Յովհաննէս եկեղեցի.
 20. Աթանառեան Մ.
 21. Տէր Պազարեան Թ.
 22. Մուսինեան Մ.
 23. Տէր Սահակեան Ե. (Երեցփոխ)
 Նորքի եկեղեցի.
 24. Տէր Աւետիքեան Ա.
 25. Ազարեանց
 26. Դեօպալեանց
 27. Դելանեանց

Ինչպէս վերը լաւանեցի, պատգամաւորների ընտրութիւնը անշաջող էր. նրանց մեծամասնութիւնը այնպիսի մարդկանցից էր կազմած, որ լաւ, օրինակնի հոգաբարձական ընտրութիւն սպասել չէր կարելի. Պահապանողականների և նրանց հետ անգոյն «չեղոքների» ոյժը աւելի գերակշռութիւնը ունեցած էր. աւելացրէք և այն, որ մշակականներից մի քանիսը իրանց աւելի թունդ կողմնակից լայտարարեցին «տղէտ» աղաներին, քան պահպանողականները—և դուք կարող էք հասկանալ իսկական դրութիւնը:

Սակայն երկու հակառակ խոմքերի մէջ տրամադրութիւնը աճնպէս էր ընդհանրապէս դէպի թեկնածու անձնաւորութիւնները, որ հեշտ կարելի էր հաշտութիւն և միութիւն սուած քերել. մենք չէինք զարմանալ, եթէ մինչեւ իսկ այդ միութիւնը կալանար, որովհետեւ զասի—առաջազիմականների հաւեացքները ուղղւած էին դէպի այդ «տենչալի» միութիւնը, միութիւն, ո աճնպիսի մի միութիւն պահպանողականների. հետ, որ «ազգ կը փրկի», առաջադիմական քաղաքի հետ կանէր և լետադիմական քաղաք և վերջը թերես «ազգը փրկւած» կը լինէր տեսնելով նրան «առաջադիմական» շաւզի վրա լիս մղած...

Նորդարականները ասում են մշակականներին.—պարոններ, վերցրէք ձեր թեկնածուների ցուցակից Գ.ր. Տէր-Խաչատրեանի անունը և ասպարէզից հանեցէք Տ. Յովհաննիսեանի պատգամաւորութիւնը, որ ապօրինի կերպով իբրև տեսուչ իր «նոպատակների» համար ընտրւել է պատգամաւոր, մենք էլ մեր կողմից Բէկ Լուսուպեանցին (Բէկ-Յովսէփեան—ըստ նորդարականների) հանելով մեր ցուցակից, մեր գլխաւոր թեկնածու Զաքարին կից ում ուզում էք դրեցէք. Եւ այս մտքով մշակականների մասնաւոր ժողովն էին ուղարկւած երիտր պատգամաւորներ, որոնց չգիտեմ ինչ հանգամանքների չնորհիւ, չէ լաջողւում իրանց նպատակը՝ լայտել ժողովին. Եւ անպատճառ հաշտութիւնը կը կալանար, որովհետեւ Գ.ր. Տէր-Խաչատրեանի անունը արդէն հանւած էր մշակականների ցուցակից և թէ Զաքար Գէորգեանի թեկնածութիւնը դրւած նոյն ցուցակում Զեական հաշտութիւնը չկալացաւ լոկ թիւրիմացութեան չնորհիւ:

Նորդարական պատգամաւորները վճռել էին, եթէ փոխադարձ զիջումով հաշուութիւն չկազանար, անսպատճառ անցկացնել իրանց թեկնածուներին, և բոլոր պահպանողական պատգամաւորները ձեռքները տարածած դէպի երկինք միաբերան երգւել էին բացականչելու. «Յուգա լինի նա, ով զաւաճաճի իրանցից մէկն ու մէկին».

Պէտք է նկատնել սական, որ նորդարականները խիստ միաբան էին դործում աւս անգամ. նրանք ունեցան 2 թէ 3 նախապատրաստական ժողով, իսկ մշակականները միան մի ժողով. Մի ժողով էլ կալացաւ բոլոր պատգամաւորների անխտիր մամնակցութեամբ. Արօէ մի քանի խօսք առել պատգամաւորների այդ ընդհանուր ժողովի մասին».

Մի քանի ընդհանուր բնաւորութիւն կրող հարցեր շօշափւեցին այդ ժողովում. Պր. Ռ. Զալալեանը առաջարկեց 6 հոգաբարձուներից 3-ը վաճառական ընտրել, 3-ը ինտէլիգէնտ դասից. Նկատելով, որ ժողովականներից որոնք չափազանց մեծ նշանակութիւն են տալիս վաճառական հոգաբարձուների կատարած դերին դպրոցի տնտեսական նիւթական դրութիւնը բարեկալու հարցերում և թէ արաւաչալուում էր տրամադրութիւն վաճառականներից աւելի մեծ թւով հոգաբարձուներ ընտրել, պատգամաւոր Դ. Ղարաջեանը լաւտնեց հանդամանօրէն իր կարծիքը թէ դպրոցի շահի տևասակէտից անչարմար է զտնում ինքը ապագայ հոգաբարձական կազմակերպութեան մէջ գերակիու տեսնել վաճառական հոգաբարձուներ այն պատճառով նախ՝ որ սխալ է այն ընդհանրացած կարծիքը թէ վաճառական հոգաբարձուները դպրոցի ապահովութեան կամ տնտեսական կառավարութեան խնդրում ամելի օգտակար կը լինէին քան լուսաւոր դասի ներկայացուցիչները. ապացուց դրան, որ 60 տարի գոյութիւն ունենալով դպրոցը, զրեթէ միշտ, ինչոքս Յիսոնամեակի տեղիկադիրն է ցոց տալիս, վաճառական դասակարդն է կառավարող եղել, մինչդեռ այժմ 60 կոպէկ չունի և ընդհակառակը պարտքերի տակ թալքած է դպրոցը. Երկրորդ՝ ի նկատի ունենալով, որ մեզանում զժբախտաբար վաճառականներից հոգաբարձու են ընտրուում «աղա», հարուստ բաց ընդհանրապէս տղէտ անձնաւորութիւններ, իսկ այդ հանգամանքը շատ վատ է աղդում դպրոցի կը թական, ուսումնական ու զբանական վրաց ընդհանրապէս, ուստի պատգամաւորը իրան բացարձակապէս հակառակ է լազնում հոգաբարձութեան մէջ վաճառական տարրին զերակշուութիւն տալու մտքին. Այդ կարծիքով պատգամաւորը երբէք միաբ և ցանկութիւն չունէր որև է մէկին անձնապէս վիրաւորել, բաց և աճնապէս տեղի ունեցաւ իրարանցում և դժգոհութիւն վաճառական պատգամաւորներից մի քանիսի մէջ. Նկատեցէք, որ մի քանի տափակագլուխներ իրանց անձնական վետին նպատակներով դիտմամբ չեղացրջեցին չետոյ պատգամաւորի լազնած կարծիքը, որի պատճառով վաճառականների տժգոհութիւնը կատարեալ եղաւ, ինչպէս և արտավագուեց ընտրողութեան օրը:

Պրեն. Ու. Զալալեանի առաջարկութիւնը մնաց առանց հետևանքի և ցանկութիւն լավուեց թողնել ընտրողների ազատ կամքին թէ որ դասա կարգից ինչ թւով հոգաբարձուներ կ'ընտրէին նրանք:

Երկրորդ հարցը, որ ժողովում յարուցւեց, տեսուչ Տ. Յովիաննիսեանի պատգամաւորութիւնն էր. սա ընտրել էր ո. Կաթուղիկէ եկեղեցում իր առաջարկութեամբ և ցանկութեամբ: Պր. Յովիաննիսեան իր ազդ վարմունքով առիթ էր տնել զանազան շրջաններում խօսակցութեան առարկայ լինելու. մինչդեռ նա տեսուչ էր՝ իրաւունք չուներ պատգամաւոր ընտրելու, թէկուզ հենց հրաժարաւած լինէր տեսչական պաշտօնից, պնդում էին ոմանք. ուրիշները հիմնելով այն հանգամանքի վրայ որ չնայելով ընտրողական կանոնադրութիւն չկար, բայց գպրոցական կեանքի պատմութեան մէջ տեսնւած և լսւած չէր, որ ուսուցիչները և տեսուչները իրանց հոգաբարձուներին ընտրէին. անլարմար էին գտնում տեսչին պատգամաւոր լինել: ինքը տեսուչը շարունակ պնդում էր որ իրաւունք ուներ պատգամաւոր ընտրելու, քանի որ արդէն գրաւոր հրաժարական էր տեսչ տեսչական պաշտօնից և թէ ոչ մի օրէնք չկար, որ իրան ազդ իրաւունքից վկէր, բայց եկեղեցական-ծխական գպրոցների համար Մակար կաթողիկոսից սահմանւած կանոնադրութիւնը, որով ուսուցիչներին և աւագ ուսուցիչներին չէ տրուում ընտրելու իրաւունք և որը իբր թէ չէ կարելի ընդունել թեմական գպրոցների հոգաբարձական ընարութիւնների համար իբր զեկավարող օրէնք: Ինկատի ունենալով, որ ազդ հարցը սուր կերպարանք կարող էր ստանալ և արդէն տեղիք էր տեղ ժողովից դուրս սուր խօսակցութիւնների, ժողովը թողաւ ալդ հարցը առկախ, ևս առաւել, որ ալդ հարցի լուծումը աւելի կախւած էր հոգեսոր իշխանութիւնից, իսկ ծխականներից ոչ մի բողոք չէր լաւունւած ընտրութեան ազօրինիութեան դէմք հայց և այնպէս չենք կարող մասնաւորապէս մեր կարծիքը չախտնել ալդ առիթով: Ուղիղ է, չկայ մեզանում ընտրողական որոշ կանոնադրութիւնն, բայց պ. Տ. Յովիաննիսեան գիտէր, որ մեր գպրոցական կեանքի պատմութեան մէջ ուսուցիչները և տեսուչները իրանց հոգաբարձու ընտրելու համար պատգամաւոր չեն ընտրել և նա պէտք է նշանակութիւն տար, պէտք է լարգէր ալդ պրակտիկան, ալդ աւանդութիւնը, ևս առաւել, երբ նա օգտակար էր. 2-րդ. թէն հրաժարական էր տեղ տեսչական պաշտօնից, զա ոչինչ չէր նշանակում, նա մնում էր մինչև մեավտեմբեր տեսուչ և ինքը պատգամաւոր լինելով կարող էր իր ջանքերով, իր ճարպիկութեամբ: (որից զուրկ չէ պ. Յովիաննիսեան) այնպիսի հոգաբարձուներ ընտրելու լաջողացնել, որոնք ով գիտէ ինչ քամիների ազղեցութեան տակ կարող էին ալ կերպ հարթել տեսչական հրաժարականի խնդիրը. և վերջապէս պ. Յովիաննիսեանի հրաժարականի վրայ շատ շատերը կասկածով էին նալում. 3-րդ. պ. Յովիաննիսեանին շատ լաւ լաւունի էր, որ իր պատգա-

մաւոր ընտրելու հանգամանքը առիթ էր տալիս մոքեր չուզելու, խայտառակ դէպքեր առաջ բերելու, ինչպէս և եղաւ ընտրութեան օրը ընտրական դահլիճում, որտեղ, ինչպէս բազարում, հանդէս եկան ագէտ աղավաճառականների կրքերը, և վաճառականները չքաջեցին իրանց պրաների հարստութեամբ և չէկերով պարծենալ:

Երրորդ հարցը պատզամաւորների ընդհանուր ժողովում միութեան մասին էր.—տասը թեկնածուների ընդհանուր ցուցակ կազմել ընտրութեան օրը քէտրկութեան գործը աւելի հեշտացնելու համար, Բայց ազդ առաջարկութիւնը երկար չզբաղեցրեց, անհամաձանութեան նշաններ երեւացին, միութեան խօսքը դատարի, անբովանդակ խօսք էր անտեղ, որտեղ տարբեր ուղղութեան, հասկացողութեան, հակեացքների, մարդիկ էին ժողոված հոգաբարձուներ ընտրելու:

Հոգաբարձական ընտրութիւնը տեղի ունեցաւ լունիսի 8 ին, Շատրանիսի ամելու ամ ընտրութեան մասին, որովհետև ընդհանրապէս անհետաքրքիր ընտրութիւն էր իր անկացող հետեանքով: Ալստեղ առողջ մտքերի փոխանակութիւն տեղի շունեցաւ պատզամաւորների մէջ: Լող եղանք միան ան սնախորժ խօսակցութեան, որ տեղի ունեցաւ պատզամաւոր-տեսուչ Տ. Յովհաննիսիսեանի և պատզամաւոր Նզոր Տէր-Սահակեանի մէջ: Մի ալ գէպք էլ տեղի ունեցաւ, որը, իբր բնորոշ, արժան է լիշտատիկել: Երբ թերթիկներով ձաներ ստացան վաճառական պատզամաւորներից ոմանք, նրանցից մի քանիսը (Զաք. Գէորգեան, Գր. Ամիրեան, Գ. Անտոնեան և ալլն) մի գլուխ պնդում էին իրանց հրաժարականների վրայ: «մի հրաժարեք, մի հրաժարեք, խնդրում ենք»—լսում էին ձաներ: և զիտէք, ուլքեր էին լսեցնում այդ «սիրալիր» ձաները: Երեանի «առաջադիմականները», իրանց մշակական անւանող ազդ հերոսները, ոս ֆակտ է, Յամառութեամբ հրաժարող վաճառականներից մէկը Գր. Ամիրեան մօտենում է սրբազն նախազահին և լալոնում: «սրբազն, ես հրաժարում եմ ան պատճառով, որ պատզամաւոր Ղարաջեանը լին անպատճել է, անւանելով տղէտ, ես մի պատւատր վաճառական եմ և ալլն: և շատերը վաճառականներից նոյն պատճառով են հրաժարում»: (Հաւանութեան ձաներ ակնարկւած վաճառականներից): Պատզամաւոր պ. Ղարաջեանը բացասեց պ. Ամիրեանի մեղադրանքը: Ահա ձեզ տղիտութեան խալտառակ մի օրինակ: մի պատզամաւոր մասնաւոր ժողովում լայտնում է թէ ինչպիսի հոգաբարձուներ պէտք էր ընտրել և շեշտում է ան հանգամանքը թէ վաճառական տարբին գերակշութիւն պէտք չէ տալ, մանաւանդ, որ վաճառականներից ընտրում են դժբախտաբար ազնապիսիները, որոնք թէն հարուստ են, լալոնի են լինում իրանց աղաճական:

գիրքով, բայց զուրկ լինելով կրթական գործին վերաբերեալ տեղեկութիւններից, բնաւ օգտակար լինել դպրոցին չեն կարող. սրանից հետեւում է արդեօք, որ վաճառական թաթոսի կամ Մաթոսի անձնաւորութիւնը կարող էր չօշափւած լինել, Վերջապէս եթէ մէկի համարձակ կարծիքը այսպէս կամ աջնպէս մի ուրիշին վիրատորական է թւացել, ինչ խորշելի քան է, անձնական վիրատորանքը կապելով իր հրաժարականի խնդրէ. հետ, գալ ժողովի մէջտեղը և չափանիր. «որավիետեն ալս ինչ պարոնը ինձ անձնապէս վիրատորել է, ես հրաժարում եմ քւէտուփս զնելու»։ Եւ նկատեցէք, որ ուրիշների վրայ «ամուննաթ» զնողը և նազ ծախող հրաժարողները գլխաւորապէս նրանք էին, որոնք հոգաբարձու էին եղած և դոցա հոգաբարձութիւնը թէ չափազանց թուլ ինամքով է վերաբերել դէպի դպրոցը և թէ ահազին պարտքի տակ դրել նրան, ինչպէս վերև լինդհակառակը, մենք շատ ուրախ էինք, որ դրանք ցանկութիւն էին չափանում ասպարէզից քաշւելու, և այդ էլ պահանջում էր զպրոցի շահը. բանից զուրս եկաւ, որ դրանց հրաժարականը կեղծ էր (զրդւած անձնական հաշիւներից) և այլ ևս շատ չպնդեցին իրանց հրաժարականի վրայի...»

Ընտրութիւնների արդիւնքը չափանի են արդէն ընթերցողներին, Մուրճի անցնալ համարի լուրերից,

ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆԵՐԸ

ՄԱԼՔՈՂՄ ՄԱԿ-ՔՈՂՀԻ 1)

(Ռիպոնի Կամսոնիկոսի)

Թէ Ի՞նչ ԿԱԲՈՂ, Է ԱՆԵԼ, ԱՆԳԼԻԱՆ

Ստիպողական միջցներ—միակ իսկական գէնքը—Գորա հետեւանքը լինում է ընդդէմ Մեծ-Բրիտանիայի խմբւիլը—Դաշնագրի զօրութեամբ մեր ունեցած իրաւունքները որեւէ պետութեան կողմից չեն կարող վիճաբանութեան նիւթ լինել—Անգլիայի դէմ պատերազմ յարուցանելը միտք չունի—Ռուսիան եւ Կ. Պոլսը—Խնդրի դիռ եւս 1867 թին առաջարկած լուծումը—Գերմանական եւ Աւստրիա-կան լրագիրները խսդում են իրենց դերը,

Այն նկատողութիւններից առաջ, որ պիտի անեմ ստորե, ես կը կամենաչի իմ համոզմունքը չակտնել թէ հայոց խնդրի վերաբերմամբ լորդ Առզբերիի ունեցած սեպհական հայեացքները և զգացումները աւելի խելացի էին ան ողբալի քաղաքականութիւնից, որին հետեւում էր նորա կառավարութիւնը, թէ ինչ մի ծածուկ ազդեցութիւն էր չաղթել նորա առաջնորդութիւնը, ինձ չաշտնի չէ Խնչու համար էր նորա կառավարութիւնը չամառութեամբ հրաժարուում ի լուր աշխարհի չալտարաբել իւր

1) Վերովիշեալ վերնադրով լստ տեսաւ կանոնիկոս Մակ-Քոլի գիրքը, իբր ժողովածունորա լոգւածների, տպւած անդլիական թերթերում, (The Sultan and the powers. London, Langams, 1896, XVI+308 էջ) և նորմա թարգմանւեց ռուսերէն (Султанъ и Державы). Մենք տալիս ենք ազդ գրքից մի գլուխ թարգմանութիւնը, թէ իբր նմուշ և թէ նորա հետաքրքրական բովանդակութեան պատճառով՝ Դա՛ գրքի երկրորդ վլուխն է, որից զուրս ենք գցել առաջին մի-երկու տողը: Ի նկատի ունենալով որ գրքի ռուսերէնը լրաց տեսնելուն պէս հակերէն թերթերը շտապեցին ընդարձակ քաղաքներ տալ թարգմանաբար, իսկ նոր-Դարբուր ամբողջ դլուխներ թարգմանաբար տւաւ, մինք ներկաչ գլուխ համար օգտական վերջինք վերջինից:

հիւպատոսների Հայաստանից ուզարկած գեկուցումները և արդպիսով եռանուցուն լրագլուղներին ստիպում հետամուտ լինել և հաղորդել հասարակութեանը այն սարսափները, որոնց վերաբերեալ գրաւոր հաղորդակցութիւնները կառավարութիւնը ֆակի տակ էր պահում արտաքին գործերի միջնարութեան դիւնատաներում: Լորդ Բիկոնսֆիլդի կառավարութիւնը հոչակում էր գոնէ ֆակտերը, նուն իսկ բուլղարական ազիտացիալի ամենածանր օրերին, ի բաց առեալ մի դէպք միան, երբ լորդ Դերբին թաքցրեց հիւպատոսների մի քանի հաղորդագրութիւնները և սըր Հենրի Ելիոտի նամակը, որը մեղադրում էր սուլթանին այն բանի համար, որ թող էր տւել Բունիալի պաշտօնեաներին սարսափներոց գործել քրիստոնեաների վրաէ և նուն իսկ ցցի վրաէ նստեցնել նոցա, որը, հիւպատոսական հաղորդագրութեան ասելով, աալդտեղ սովորական բաներ էին: Ի՞նչու լրդ Ռոպեհիրի կառավարութիւնը համարեա թէ ստիպեց սուլթանին որ թուրք է անձնաժողով նշանակի հիւպատոսների Հայաստանից ուզարկած հաղորդագրութիւնների ճշմարտութիւնը քնննելու համար: Միթէ սուլթանի կամակատարներին իւր հիւպատոսներից աւելի արժանահաւատամարդիկ էր համարում: Ինչու համար, վեց ամիս շարունակ գործը ապարդիւն կերպով քաշքշելուց լետու, նոցա դանդաղ բանդակցութիւնների հետևանքը եղաւ Հայաստանի ու եփորմների նախազիթը, որը, իսկապէս ասած, խարեւթիւն էր: Երբեկցէ իշխանութիւնը կ'անցնի նորից լիբերալ կառավարութեան ձևոքը, և շատ հնարաւոր է, որ այն ժամանակ նա ստիպւած կը լինի գործ ունենալ արիենեան խնդրի որեէ մի ալլ փոփոխութեան հետո թող վերջին լիբերալ կառավարութեան չարաբախա անկումը մի նախազդուշական դաս լինի նորան և հասկացնի, որ ներկա դէպքում միակ կանոնաւոր քաղաքականութիւնը պահանջում է անմիջապէս ստիպողական միջոցների դիմել: Ոչ մի սուլթան երբէք չէ զիջանել, չի զիջէլ և չի էլ կարող զիջանել ուրիշ որեէ պատճառաբանութեան ոչի՞ ու եփորմների վերաբերմամբ, որոնք կը խախտէին թիւրքաց կալսրութեան թէօլրատական կազմակերպութիւնը՝ նրա ոչ միւսուլման հպատակներին մուսուլմանների հետ հաւասար զծի վրաէ դնելով: Կամ ոչ մի բան մի անէք, կա թթէ չէ՝ գործադրեցէք միակ խական գործիքը—ստիպողական միջոցները թող եւրոպական պետութիւնները, կամ նոցանից որեէ մէկը, միաների, կամ գոնէ նոցա մեծամասնութեան կանխօրէն համաձանութեամբ, ձեակերպէ նախազիթը և առաջարկէ այն սուլթանին՝ պարզօրէն լաւութիւնի, որ ալլ նախազծի չընդունելը պատճառ կը լինի ստիպողական միջոցներ ձեռնարկելու: ալդպիսով գործի հետևանքը ապահովւած կը լինէր: Բայց գործ դրած հասարակ միջոցները, ինչպէս «գորդորողները», պանդիմոնունիւնները» և ամեն տեսակ կարծ ֆրազները, ինչպէս, օրինակ, «արաւու բանը, թէ չէ կը ստիպեմ քեզ ալլ անելու»—ներկայանում են քա-

մուն լանձնւած ջանքեր միայն։ Ամեն մի ռեփորտ, որի մէջ պակասում է եւրոպական կոնտրոլը, բայց հարկի խարկութիւն է հանդիսանում, և ոչ մի սուլթան, առանց ստիպողական միջոցների, չի համաձաւնիլ հնաղանդել եւրոպական կոնտրոլի։ Այս բոլորի հիման վրայ ես կրկնում եմ բանաձես, թողէք ամեն բան այն դրութեան մէջ, ինչպէս որ կաչ, կամ թէ չէ՝ դործադրեցէք միակ իսկական զէնքը։

Այժմ տեսնենք թէ կարելի է արդեօք որևէ մի էական բան անել, որպէս զի կարողանանք զիմադրել սուլթանին, որ հայերին կոտորելու ուժիմը չչարունակի։ Իմ ստացած տեղեկութիւններին համաձան, որոնց ես ստորգ եմ համարում, իշխան Լորանովը և զրաֆ Գոլուխովսկին Վեննալում ունեցած իրենց վերջին տեսակցութեան միջոցին փոխադարձաբար խոստացել են միմեանց, իրենց ովերի հնարաւորութեան չափով, պաշտպանել թիւրքաց կալվրութիւնը, այդ միենալով ժամանակ նոքա ամենին հոգ չին տարել որեէ նախազգուշական միջոցներ մշակելու սուլթանի քրիստոնեալ հպատակներին պահպանելու և նոցա իրաւունքները պաշտպանելու համար։ Կերմանիան միացաւ ազգ որոշմանը, որով միլիոնաւոր քրիստոնեաներ անորոշ ժամանակով լանձնուում էին Օսմանեան Դրան ստրկական կամայականութեանը։ Ես ենթազրում եմ, որ Ֆրանսիան դեռ ևս չէ լարած ալդ որոշմանը և թուզ եմ տալիս ինձ լուսալ, որ նա կը հրաժարի իւր պատմական դրւագի վահանի վրայ մի ազգիսի անջընջելի սկ բիծ դրոշմել։ Բայց եղբակացութեան համար Ֆրանսիան էլ հաշւենք լոգուտ Թիւրքիալի կազմւած դաշնալրութեան մէջ, իտալիան, որի բոճած դիրքը հաջական անկարգութիւնների ամբողջ ընթացքում կատարելապէս աղնաւաբարու էր, այնքան, էլ շահազրգուած չէ մի անպիսի ֆաւտավիստական քաղաքականութեան մէջ, որը թողնուում է իրերի ընթացքը կոչք բաղդի ըւրմունքին, և անկասկած նա համակրութեամբ կը վերաբերէի Անդլիալի ամին մի ձեռներէցութեանը լոգուտ հաների։ սակայն ես չեմ վստահանում առաջուց վճռել, թէ նա որքան եռանդուն մասնակցութիւն կ'ունենալ ալս դործում։

Խ՞նչ կարող է ուրեմն անել Անդլիան միայնակ, որպէս զի վերջ դնի այն չարագործների և սրիկաների խուժանին, որով Նլլըզ-Քեօշկը լցրել է իւր կալմրութիւնը։ Անդլիան մի քանի միջոցներ ունի ընտրելու, և ես կը սկսեմ Թիւրքիալին վախացնելու և թուլացնելու աւելի լարմար միջոցից, Անդլիան սուլթանի հետ մի դաշնագիր ունի կնքած, որով նա, ինչպէս ես կարծում եմ, իրաւունք ունի Թիւրքիալի ասիական նահանգների համար ստիպողական ռեփորմներ պահանջել։ Կիպրոսի դաշնագրով Անդլիան ռեփորմների վերաբերմամբ «գոհացուցիչ վարչական կարգեր պահանջելու իրաւունք» է ստացել, որը և ալդ դաշնալրութեան «էական մասն» է կազմում։ Միստեր Վաղինդասնի նամակով, (նախկին ֆրանսիական մի -

նիստը), որը նա գրել էր 1878 թւի չուլիսի 21-ին Լոնդոնի ֆրանսիական զեսպանին, ֆրանսիական կառավարութիւնը ընդունեց, որ Կիպրոսի դաշնադրութեամբ Անգլիան իրաւունք է ստացել աւսունեան իրական միջամտութիւն ունենալ թիւրքաց պետութեան հպատակ բոլոր ասիսկան գուառների վարչութեան մէջ», ինձ չափնի չէ, որ մի որ և է ուրիշ պետութիւն բողոքած կամ իրենը համարած լինի այն իրաւունքը, որը ճանաչել էր ֆրանսիան ազգայի որոշ խօսքերով. Ազդ իրաւունքը առանց ավելացութիւնների ընդունւեց Քերլինի վեհաժողովի կողմից, որին չափնաւծ էր Կիպրոսի դաշնադրութեան մասին, թէն առանց պաշտօնական տեղեւ կութեան:

Ալսպիսով անվիճելի է, որ մենք առանձին իրաւունք ունինք պատմանի զօրութեամբ պահանջել սուլթանից կատարել՝ համաձան Կիպրոսի դաշնադրութեան՝ իւր պարտաւորութիւնները. Բայի այս, Մեծ-Բրիտանիան մի այլ լաւելածական իրաւունք էլ ունի, Քերլինի դաշնադրի 61-ր չոդւածի համաձան, միա պետութիւնների հետ միասին անելու այդ բանը. 1880 թ-ի լունիսի 11 ին սունապիսի մի դիւանազիտական չափազիր ներկայացւեց սուլթանին մեծ պետութեանց զեսպանների կողմից, որով նրա ուշադրութիւնն էին Հրաւիրում այն հանգամանքի վրայ որ նա իւր պարտաւորութիւնները կատարելու համար «ոչ մի բանի» չի ձեռնարկել Բրիտանիական չափազիրը, որին ստորագրել էր Անգլիայի արտակարդ զեսպան միստեր Գոչէնը, բոլանդակում էր իւր մէջ ի միջի ազլոց և հետեւալը. «Ուստի և նորին մեծութեան (Անգլիայի թագունու) կառավարութիւնը, որպէս Քերլինի դաշնագրին ստորագրող պետութիւններից մէկը, իրաւունք ունի պահանջելու վիշեալ դաշնագրի 61-րդ չոդւածի լիակատար և անմիջապէս իրագործումը». Եւ ալսպէս վիշեալ վաւերագրով 6 պետութիւնները, միասին և բաժան-բաժան, չափնում են իրենց իրաւունքները՝ սուլթանին ստիպելու, որ իւր պարտաւորութիւններն ի կատար ածի:

Ալսպիսով Անգլիան կրկնակի իրաւունք ունի սանձաւարելու սուլթանին և այդ նպատակին համար ամեն ալնալիսի միջոցներ ձեռք առնելու, որոնք չեն շոշափում այս կամ այն պետութեան իրաւունք. Ները. Ենթադրենք թէ Անգլիան հրամաէ սուլթանին ենթարկել իւր ասիսկան գաւառներում եւրոպական պետութիւնների կողմից մի կոնտրով, որով բաւարար չափով կը պաշտպանւեն քրիստոնեաների իրաւունք. Ները. այդ դէպքում միենացն ժամանակ Ռուսիան էլ, կամ մի այլ պետութեան հետ միասին, իրաւունք պիտի ունենալ կոնտրովի բնաւորութիւնը որոշել. նա պիտի չափնի սուլթանին, որ, ի զէպս իւր անհամաձանութեան, բրիտանական նաւատորմիզը, որպէս նիւթական ապահովութիւն, գրաւելու է թիւրքաց նաւահանգիստներից մէկը. Ազդ դէպքում կարելի է կարծել, որ սուլթանը կը զիջի վերջապէս Միստեր Գոչէնը կատար չի

ունենալ այդ մասին, որովհետեւ, ազգպէս գործելով, 1880 թ-ին նա տի-
պեց սուլթանին անմիջապէս հնազանդել իրեն, չնակելով, որ Գեր-
մանիան, Աւստրիան և Ֆրանսիան հրաժարմացին այդ մասին իրենց հա-
մաձանութիւնը տալ, Կարուիլ է արդեօք մտ ածել, որ որմէ մի պետու-
թիւն պատերազմ չալտարարէ Անգլիակին աճնպիսի մի գործի համար, որից
ոչ մի նիւթական օգուտ նա չի նախատեսում և որը ակնքան եռանդուն
կերպով շարժում է իւրաքանչիւր քաղաքակիրթ մարդու խղճանարութիւնը,
այն էլ այնպիսի հանգամանքներում, երբ իրաւունքը ալչչափ որոշակի
կերպով նրան է պատկանում: Չեմ կարող ենթադրել այդ բանը: Բայց
թուլ տաճք մի բոպէ, որ հիւսիսակին երեք պետութիւնները մերժեն վա-
մերացնել Անգլիակի գործողութիւնները: (Ֆրանսիան ես հաշվի չեմ առ-
նում, որովհետեւ, ինչպէս նկատեցի վերը, նա ի լուր ամենի խոստովանել
է Ֆիւրֆիակի գործերում միմիաւն Անգլիակի միջամտութեան իրաւունքը):
Անդեօք անմիտ և աննպատակ բան չէր լինիլ այդ նոցա կողմից, Կայ
արդեօք գէթ մի փոքր հաւանականութիւն, որ հիւսիսակին երեք պետու-
թիւնները վատահանան իրենց այդ մերժումից լիտոց պատերազմ չալտա-
րարել, քանի որ Բրիտանական կառավարութիւնը նոցա կ'ապահովացնի՝
որ ոչ մի անձնական կամ շահախնդրական նպատակ չունի, այլ, լնդհա-
կառակն, ձգտում է այն նպատակին, ինչի որ ձգտում են և նոքա: Այն
ենթադրութիւնը, թէ պետութիւնները մի այսքան խելացի առաջարկու-
թիւն անվապաղ պատերազմ չալտարարելով կ'ընդունեն, — աւելի շուտ մի
երեակալութիւն է որ քաղաքական զիցարանութեան ուրականներ է
ստեղծում, քան թէ առողջ դատողութեան աէր պետական գործիչների
լուրջ առարկութիւն: Նոցա բոլորին կաշկանդողն այն է, թէ գեռ ես (նո-
ցա կարծիքով) վաղաժամ է թիւրքաց կալսրութեան բաժանումը: Անգ-
լիան կարող էր նոյն իսկ մի շարաթւան ընթացքում հիմնալառակ անել
այդ փոտած չէնքը: Այն կարող էր բայց Բնէ կը պատ ո՞էր արդեօք պետու-
թիւնների միջն: Նոցանից իւրաքանչիւրը մէկը միւսի կոկորդից կը թը-
նէր, իսկ Անգլիան հանգիստ կերպով հանդիսատես կը լինէր նոցա կուին:
Երբ որ վրաէ կը հասնի թիւրքաց կալսրութեան վախճանը, պետութիւն-
ները, որոնք այժմ հրճում են կատակներ շպրտելով Անգլիակի հասցէին
նրա միանութեան համար, հարկադրւած կը լինին ժողովնել իրենց բոլոր
զօրքերն ու նաւատորմիջները՝ միմեանց հետ ունեցած վէճները լուծելու
համար, Պալեստինում սուրբ տեղերի ձեռք ձգելը Փրանս ուսական միու-
թեան փորձնաքարը կը հանդիսանալ: Գերմանիան էլ, որ վերջին տարի-
ների ընթացքում Փոքր-Ասիակում և Զմիւնիակում մհծամեծ զրամական
շահեր է ձեռք բերել, հէնց որ սկսվի հիւանդ մարդու տատանումը, Արո-
միակի և Ֆրանսիակի կողմից հաշվի պիտի հրաւիրւի:

Բացի դժանից կաէ դեռ ես Կ. Պոլիսը, որի վրաւ աչք ունին տնկած

Ռուսիան և Աւտորիան։ Դեռ ևս ցարդ գերմանական արտաքին գործերի մինհստրութեան մէջ զերակշռում են Բիոմարիի քաղաքական իդէալները, որի քաղաքականութեան հիմնական կէտերից մէկն էլ այն է, որ, Ռուսիային հակակշռելու նպատակով, Աւտորիան մի մեծ ոլաւոնական պետութիւն դարձնեփ, որի մաքրաքաղաքը լինելու է Կ. Պոլիսը, իսկ Աւտորիայի գերմանական ժողովուրդը միացնեփ Գերմանիայի հնու Զպէտք է նմանապէս անու շաղիր թողնել Յունաստանի, Զմիւրնիայի, Շումինիայի և Բուլղարիայի ձգումները ու նոցա նշանաւոր ուժը, և այն, որ Խտալիան էլ դեռ ձեռք չէ քաշել իւր «Italia irredenta» ի մտքից։

Եւ ահա հիւսիսալին երեք պետութիւնները վստահանում են ազգ կեղափոխութիւնը առաջացնել, որը անխուսափելի հետեանք կը լինի զէնքը ձեռքին խանգարելու Անգլիային, որը, ոչ մի սեպական օգուտ չունենալով, աշխատում է, առանց տէրութիւնների status quo ին մի փոքրիկ երկիւղ անզամ պատճառելով, իւր սոսկական ուժերով սովոր թանին կատարել այն զաշնագիրը, որը նոքա բոլորը վաւերացըրել են իրենց ստորագրութեամբ։ Ահա թէ ինչ են ասում մեզ նոցա մամուլի օրգանները, Բայց այս բոլորը հնացած դատարկութիւններ են։ Մտարեցք, թէ ինչպէս, երբ լորդ Սալսբիւրին մերժեց վաւերացնել կրետէի նաւապաշարումը, փոխանակ նորա դէմ զինելու եւրոպական համաձայնութիւնը, պետութիւնները սոհիպեցան ընդունել Սալսբիւրիի քաղաքական հայեացք։ Ները, որոնք աչմէն հաճութեամբ իրենց սեպականն են համարում¹⁾)։ Միենողը կը պատահէր և Ասուական Թիւքիւալու։ Միթէ Ֆրանսիան կը համաձայնի միանալ Անգլիայի դէմ պատերազմելու, միջոց տալով Գերմանիային ընդարձակելու իւր սահմանները, կամ Գերմանիան՝ Ֆրանսիան ուժագցնելու համար և կամ Ռուսիան ու Աւտորիան իրենց մէջ Կ. Պոլսի առթիւ ծագելիք կոխւը ապացնելու։ Պետութիւններից իւրաքանչիւրը, որ աչմէն համարում է Անգլիայի դէմ զաշնագրւած, ուրախութեամբ և

¹⁾ Ակսած այն ժամանակից երբ այս խօսքերը լուս տեսան մամուլի մէջ, Ռուսաց լրազրութիւնը փոխեց իւր տոնը և նրա առաջնակարգ օրգանները խօսում էին չօգուտ ուսում-անդլիւսկան բարեկամական համաձայնութեան։ Ամենից նշանաւորը այն է, որ «Նովոստիու և «Քիրքելիա Վելումսափի լրագիրները միամանակ բատարարեցին», որ «Կրետէն իւր ինքնավարութիւնով պարտական է բացառապէս Անգլիային, այն ինչ նրա պետական գործիչների դէպի Սուլթանը բոնած զիրքը կարելի է համեմատել։ Վելչելմ հաւորի կամ կուս Գոլուխովոկու վարմանքի հնու, որոնք ցանկանում են, որ կրետէն զբկւի քաղաքական կեանքից։ Այս խօսքերը հաստատում են իմ մի այլ տեղում չափուած այն միտքը, որ ալի ծանր մեղքը ըսկնում է Աւտորիայի և Գերմանիայի զդին։ Այս խօսքերը պացանում են նմանապէս լորդ Սալսբիւրիի «առանձնացած զործելու փառաւոր հետևածքը»։

Ժանկապին վարձող կը ցանկանար գնել Անդլիափի զաշնակցութիւնը, Բայց Անդլիան կաշուքների կարիք չունի և ինքը կարող է բոլոր միւս պետութիւններից աւելին առաջարկելու Օրինակ Կ. Պոլսի գրաւումն ոչ մի նշանակութիւն չունի Մեծ-Տրիտանիափի համարու Նթէ Ռուսիան երես դարձնի Աւստրիափի խիստ քաղաքականութիւնից և վերադասնաչ «Թիւրքիափի քրիստոնեաներին» պաշտպանելու իւր նախկին դերին, ևս համողաւած են, որ հնարաւոր չէր լինիլ ոչ մի միտինդ ժողովել՝ բողոքելու Ռուսիափի դէմ Կ. Պոլիսը գրաւելու համարու Մինչև այժմ մենք արիւն և պիողեր էինք վատում, որպէս զի կրակի միջից Աւստրիափի և Գերմանիափի համար խորոված շագանակներ հանէինք, իսկ զոքա այդպիսով մեծ դիւրութեամբ դրդեցին մեզ հեռացնել Ռուսիափին Կ. Պոլսից զէպի ուղիղ մեր հնդկական սահմանները, Նթէ կան օգուտ վընտրողներ, որոնք ցանկանում են, Ռուսիափին հեռու պահել Կ. Պոլսից զոքա Գերմանիան և Աւստրիան են, բայց ոչ երբէք Անդլիան, Մի աւստրիական լրացիր, որ իսկապէս կաշուռած է թիւրքաց կառավարութիւնից, մօտ ժամանակներս փորձեց Ռուսիափին սովքի կանգնեցնել ընդդէմ Անդլիափի, մեղադրելով մեզ, որ իբր թէ, հայերի թշառութիւնների անկեղծ կարեկցութեան դիմակի տակ, ցանկանում ենք զրաւել Կ. Պոլիսը. Շատ սիրուն, Թող ազդ խնդիրը քննւի: Թող լորդ Սալսբիւրին առաջարկէ պետութիւններին մեր անշանախնդիր նախագիծը (երաշխաւորելով որ մենք ոչ մի թիզ անգամ չենք վերցնիլ թրքական հողերից), որով փոխադարձ հաւածանութիւն կալացնելով կամենում ենք ամեն տեսակ տոիպողական միջոցներ գործ դնել և ստիպել սուլթանին բարելաւել իւր քրիստոնեաց հապատակների զրութիւնը, և այն ժամանակ կ'երեւած թէ պետութիւններից իսկապէս որն է անկեղծ իւր արտալաւտութիւնների մէջ և անշահախնդիր ներկալ գործում:

Զարմանալի իրողութիւններից մէկը, որ կապ ունի այս գործի հետ, պետութիւնների համարեա անբնական կուրութիւնն է, որոնք, կարծելով թէ աշակցում են թիւրքիալի ջարատեսութեանը, ալդպիսով իրաւունք են տալիս Նլուզ Քնօչկի անխելք հերոսին այնպիսի ոճիրներ գործելու, որոնք կարող են առաւել չուտ տանել նորան դէպի այն աւերումը, որի միմիացն ստուերը, ըստ երևութիւն, խանդարել է նոցա մատածողութեան հաւասարականութիւնը. Ստքերի մի առանձին լարումն չի հարկաւոր հասկանալու համար, որ թիւրքաց կալացրութիւնը ջարատն դարձնելու միակ իրաւացի ֆիջոցը սուլթանին ստիպելն է, որ իւր հապատակների կհանքը աանելի դարձնի: Մեծ պնտութիւնները մինչև ակմա հետեւմ էին այդ քաղաքականութիւններին մէջ և անշահախնդիր ներկալ գործում:

Օրինակի համար ստորեա առաջ կը բերեմ թէ ինչպէս էին գործում թիւրքիալի լանկարծահաս խորտակման առաջն առնելու մէջ շա-

հազրուած պետութիւններից իւրաքանչիւրը՝ Աւստրիան և Ռուսիան 1867 թուրին կոմս Բէօլատը, որ ազդ ժամանակաւաէ Աւստրիակի առաջին մարդն էր, չափարարեց, որ Աւստրիան կը ցանկանար խրախուսել Թիւրքիակի քրիստոնեաչ ժողովութիւնների համար մուծել տալ «աւելի ընդարձակ արտօնութիւններով ինքնավարութեան աճնպիսի մի եղանակ, որը սահմանափակւէր միայն վասսալութիւնով. Ալսպիսի ձեռնարկութիւնը իսկական միջոց կը հանդիսանար սովորականին և իւր ռազեաններին չարատե հաշտութեան մէջ պահելուու իւր վերջին նամակով կոմս Բէօլատը առաջարկում էր մեծ պետութիւններին սրբական անդամանատութեանու ժողովւել «հիւանդ մարդու որպիսութիւնը քննելու և նորա իշխանութիւնը բաժանելու համար»: Նա ակնարկում էր, որ անհրաժեշտ է եռանդուն տեղերի գիմել՝ սկսելով կրետէ կղզին Ցունաստանի հետ միացնելու խնդրից: Ազդ թւականին իշխան Դորչակովը հետեւում էր միենոն քաղաքական հայեացքներին և արտավաճուեց իւր կարծիքը այն մասին, թէ «պետութիւնների համար ժամանակաւոր և ոչ արմատական միջոցների շրջանից դուրս գալու միակ փրկութիւնը, որը ցարդ միմիան դժւարացնում էր խնդրիը, «հանդիսանում է Թիւրքիակի քրիստոնեաչ ժողովուրդների մէջ աստիճանաբար լինքնավար միութիւններ տակդելը»:

Ֆրանսիական կառավարութիւնը անկեղծօրէն հատեսում էր կոմս Բէօլատի քաղաքականութեանը, և միմիան Անդլիան էր, որ հակառակ էր նրան: Ներկալում ալդ է Ռուսիաի և Աւստրիակի քաղաքականութիւնը, որոնք ինչպէս առում են, համաձայնել են զէնքի ուժով խանգարել Անգլիաին: Ես մտածել անդամ չեմ կարող, թէ Ռուսիան գործնական միջամոռ թիւն է ունեցել ազդ նախագիծը կազմնլիս, որը բովանդակում է իւր մէջ թէ պիտական մարդկանց, այլ խելազարների քաղաքականութիւն:

Ահա թէ որքան ապացուցներ կան լոգուտ իմ այն առաջին համոզման, թէ ճգնաժամը հասած է: Ես կարծում եմ, որ Անդլիաին թշնամիքներման և աւստրիական մամուլը բլուֆ իշղթախաղն են խաղում: Անցած տարիները Անգլիան միանակ էր կանգնած զինորւած աշխարհի դէմ, և ներկալում էլ նա ստրկանողի չի գտնւիլ և վախկոտ չի հանդիսանալ եւրոպական ինքնագով լրագրութեան առաջ, որը հէնց որ Անգլիան կամինակ նրա խօսքերից բռնել, իսկոն ուրիշ կերպ կըսկսի երգել: Ես լուսով եմ, որ լորդ Սալսբիւրին հացոց օգտին կը կարողանաէ խելքի բերել միւս պիտութիւններին էլ ինչպէս ալդ արաւ կրետէի խնդրի ժամանակ: Բայց ամեն բան կախուած է այն քաջ պաշտպանութիւնից, որը պարտաւոր է ցուց առաջ նրան իւր երկիրը: Համկական խնդրի առթիւ նորակարծիքները շատ քիչ են չափանի: Ցուսով եմ, որ ժամանակին ալդ կարծիքների մասին համառոտ հաշիւ կը ներկալացնեմ և միենոն ժամանակը ցուց կտամ էլի մի քանի միջոցներ Աբգու-Համիդին խաղերի առաջն առնելու համար:

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՅԻՑ

Խ Ա Զ Պ Ա Պ Ե Ա Ն Ի

Վառնայի ազգային վարժարանը: — Արծունեան վարժարանը ու իր պաշտօնէութիւնը: — Նոր շէնքը եւ Ռուսմուղի վարժարանը: — Ուրբերը եւ Ամիրիանեանցի հաստատութիւնները: — Քողոքական միսիոնարներուն շանքն եւ ծգտումը: — Վառնայի հայ Թերթերը:

Վառնան, որ գաղթականութեան լորդ Հոսանքին առջև բացաւ իր նաւահանգիստը, զուրկ էր կարգ մը հանգամանքներէ զոր բնականաբար պիտի փնտուէր զաղթական հալը: Քաղաքին մէջ բնիկ հակերը թէ իրենց թուզ և թէ զիրքով բաւական նկատելի տեղ մը գրաւած են, ինչպէս նաև Ռուսակի, Քուրկազի, Ֆիլիպէի և ուրիշ քանի մը քաղաքներու մէջ ալ բաց ոչ մէկ տեղ կանոնաւոր վարժարան մը կրցած էին ունենալ: Բուլղարական կառավարութիւնը, նախանձախնդիր և փափաքող ժողովրդին լառաջիմութեան ամէն միջոց և զիւրութիւններ կուտաչ վարժարաններ բացւելու մասին: Իրենք բուլղարները, երկար քնէ մը սթափողի պէս, կը ջանան թոթւել իրենց վրայէն տղիտութեան մրափը, որուն մէջ մինչև վերջին ատեններս մնացած էին, և ամէն կողմ բազմաթիւ վարժարաններ կը բանան թէ աղջիկներու թէ մանչերու համար: Քաղաքին լաւագոյն շէնքերը վարժարաններու չատկացւած են. ու միշտ ալ նոր շէնքեր կը բարձրանան ամէն դի, ընդարձակ և առողջապահիկ պալմաններով, վարժարաններ ըլլալու համար:

Գաղթական հալը շատ ցաւով տեսաւ մօտէն Վառնակի ազգակին վարժարանին ամենաողորմելի վիճակը: Զգիտամ ինչպէս կարելի է վարժարան անունը տալ ախնպիսի հաստատութեան մը ուր տղաքը խոնւած են՝ լոկ ժամանակ անցնելու համար՝ իրարու հետ թուրքերէն խօսելով հալնուելով և նորմոր լրբութիւններ սորվելով: Դաստառունները, բացի մէկէն, արդէն խեղճ բաներ մըն էին. ըսենք նաև որ տեղացի քանի մը աղաներու քմահաճուքը իր ահազին դէրն ունի Վառնակի հակերու կրթական և ուրիշ ազգային գործերուն վրաց:

Նղած վարժարանն ալ արդէն միայն մանչերու լատուկ էր. աղջիկներու վարժարան չկաչ երկու տարիէ ի վեր՝ հրդեհէն արած ըլլալով ան:

Հազարաւոր գաղթականներու հետ եկած էին պղտիկներն ալ, մատաղ սերունդը, և ատոնք բնականաբար աշակերտներ եղած են կ. Պոլի ազնալ աղղափին և օտար վարժարաններու: Բոլոր ան ծնողները որ իրենց զաւկին օգուտն ու կրթւիլը կը մտածեն՝ անիկա վարժարան զրկած ատեն, և ոչ թէ իրենց վրաէն սէֆ ընկը բնականաբար աւելի լաւ համարեցին զաւակնին առունը պահելը:

Սական գաղթականներէն քանի մը երիտասարդներ, Հ. Կիւրծեան, Յ. Գուլումճեան և Ա. Երիցանց Ընկերակցութեամբ խորհեցան վարժարան մը բանալ՝ առանց չատ լուս ունենալու որ չաջողութիւն պիտի կը ընկեան գտնել: Վարժարանը բացւեցաւ նախորդ հոկտեմբերին «Արծրունեան» անունով, Գրիգոր Արծրունիի լիչատակին լարդանք մը ընկելու համար Վարժարանը լատուկ էր աղջիկներու, բայց պիտի ընդունւէին 10—12 տարեկան մանչեր ալ: Ուրախութեամբ տեմուեցաւ որ վարժարանը կարճ ժամանակի մէջ կը ցան 100-ի չափ աշակերտ ունենալ, որոնց մնձագոյն մասը թոշակաւոր էին: Դասերը, բուզդարական դիմապիտի ծրագրի համաձայն, կանոնաւորապէս կը տրէին: Վարժարանը երեք ուսուցիչներէն դասախոս մը:

Արդէն քննութիւններն ու դպրոցական հանդէսը կատարեցան, բայց ցաւով կը ամենւի որ այդ վարժարանը ընկերաբար բանալու նախաձեռնութիւն ունեցող երեք դասասուներէն մէկը, տարիքով մեծը, Հ. Կիւրծեան, չարաչար շահագործեց իր պաշտօնակիցներուն բոլոր բարի և եռանդոս տրամադրութիւններն ու գործունէութիւնը: Շարունակական խոստումներով իսաբեց իր ընկերները, որ չարգանքով վերաբերեցան դէպինքը, և համաձայնութեամբ՝ վարժարանին բոլոր հասովթները անոր ձեռքերուն լանձնեցին՝ իբրև ազնիւ, պատաւոր և վատահելի մարդու, որու հետ նոյն իսկ աւելորդ համարեցին գրաւոր պակմանները. ընկերները բաւական ժամանակ ետքը միան հիասթափեցան և հասկցան թէ ինչքան սիսալւած են եղեր: Իր պաշտօնակիցները, համազօր իրաւունքներով կապւած, գրեթէ ձրի աշխատեցան ամերող տարեշրջան մը՝ գործին նւիրած ինքղինքնին, մինչ արդին պ. Կիւրծեան շատոնց արդէն մոռցած իր երբէմնի սկզբանքներն ու գրածները, և բոլոր բաժինը իր և իրեններուն գրապանները լեցնելով զբաղած՝ կը խնդար քթին տակէն ընկերներուն միամտութեանը վրաչ, և իր աղայական ու պատւելիական քէֆը միաչն կը նայէր: Պր. Կիւրծեան, վերջին օրը, ամէն պակման կը մոռնալ, երբ ալ ևս իր ընկերները շահագործելու կարիք չի մնար և շատ կոշտ ու վիրաւորիչ վարժունքով կը վերաբերւի դէպի անոնք. նոյն իսկ իր տեղեկագրին մէջ զոր հիմնադիր-անօրէնի (?) մը հովերովը կը կարդաչ, չի լիչեր իր ընկերներուն անունները:

կան կարդ մը անհատներ, մանաւանդ ուսուցիչներու մէջ, որ իբր թէ իրենց բոլոր ուժերը և աշխատութիւնը կը նւիրեն մատաղ մանկութեան գաստիարակութիւնը։ Շատ լաւ պատրւակ ու միջոց շահելու և ուրիշները շահագործելու... զիրենք գործին կապողը սոսկ նիւթը, միան և միան գրամն է, իրենց շահէն կամ ամսականէն պղտիկ ղեղջ մը եղածին պէս գործին օգտակարութիւնը, սրբութիւնը, իրենց (Երեակալական) զոհողութիւնները, ասոնք ամենքը, կը մոռնաչ, իրեն զործնական մարդիկ անշուշտ... ինչ չարգանք Արծրունիի լիշտակին։ Հոս տեղը չէ ըսելու. «Ո՞վ Արծրունի, անունովդ ինչ շահագործութիւններ կըլլան»։

Զիմնադրութիւնն եղաւ ամիսներ առաջ ազգային վարժարանի նոր չէնքին, որուն կը հոկէ Պոլսի վարպետ ճարտարապետներէն պ. Թորոս Թոռամաննան, Յուսալի է աշնան աւարտի շինութիւնը և յուսալի է նոյնպէս, որ նոր չէնքին մէջ նոր պաշտօնէութիւն մը մտցվի, կարող, եռանդուն և գործին ճշմարտապէս նւիրւած երիտասարդներէ բաղկացած։ Որուաճուգի աղգալին վարժարանը բաղդատարար նախորդ տարիներու լաւ վիճակ մը ունի. որովհետև ուսուցչական խումբին մէջ կը գտնին երկու Պոլսեցի կարող և եռանդուն երիտասարդներ, պ. Կարապետ Պիօնիան և պ. Վահան Մանուէլիսան։

Պր. Ամիրխաննանց, ոռուահայ բուզոքական պատելին, հայ որբերը Գերմանիա տանելու քանի մը անսաջող ջանքերէն ու փորձերէն ետքը, համաձայն զերման բարեգործական ընկերութիւններու որոշման, բոլգարական հաջախատ քաղաքները վարժարաններ բացաւ՝ գաղթական աղքատ և որք մանուկներուն համար։ Պր. Ամիրխաննանցի տրամադրութեան տակ ահազին գումար գրւած է կըսին։ Վառնաչի մէջ բացած վարժարանը արդէն 200-ի չափ աշակերտ ունի, երկու սեռէն, մեծ մասը աղջիկ։ Համաձայն մեր առած տեղեկութիւններուն, պ. Ամիրխաննանցի բոլոր ջանքը պիտի ըլլայ օտար ու խորթ կրթութիւն մը տալ նաև կարելի եղած ամէն միջոցները զործ դնել իր ճարպիկութիւնը ցուցնելու թէ կարող է հայ մատադ սերունդը օտարացնել հոյրենիքին մէջ, նոյն իսկ իրենց ծնողքին ներկայութեանը։

Բոլոր գասերը զերմաններէն պիտի տւանդւին եղեր Գերմանացի պրօքէսէօրներէ (!), հաքրէն լիզու մասին հարկ չի տեմնւելի մասնաւոր գասեր արդէն աշակերտները գիտեն եղեր (?)։ Առաջին օրէն իսկ աշակերտաւուր գործ դնել իր ճարպիկութիւնը ցուցնելու թէ կարող է հայ մատադ սերունդը օտարացնել հոյրենիքին մէջ, նոյն իսկ իրենց ծնողքին ներկայութեանը։

ներուն բողոքականի պէս աղօթել տալու և զանոնք ժողովարան տանելու փորձերը մասամբ լաջողութիւն գտան, Յաւով տեսանք արդէն որ Ամիր-խանեանցի քանի մը գաղափարներն ու միտքերը շատ շուտ փոխանցած են իր աշակերտուներուն և աշակերտներէն ալ իրենց ծնողներուն, Պ. Ամիր-խանեանցի վարժարանը գնացող աշակերտունի մը ըսած է իր ընկերուներուն. «Ի՞նչ վեաս կայ ժողովարան գնալէն, ուր պատւելին (Ամիրիխանեանց) քարոզներ կը խօսի. ինչ օգուտ հայրէն լեզէն, արդէն կը խօսինք, կը բաւէ ալսչափ գիտցածնիս. լաւ չէ գերմաներէն սորմիլ և մարդ ըլլալ...»

Այս... մարդ ըլլալ...

Ի՞նչ պարարտ հող մանկան սիրտն ու հոգին՝ հոն ամէն սերմ ցանելու համար. Եւ այս նպատակով չէ որ ամերիկացի, անգլիացի և գերման միսիոնարները միան հալութեան մատաղ սերունդովը կը հետաքըրքին, Նրկլորդական վարժարաններէ աւարտական որչափ հայ պատանիներ կան որ կը փափաքին բարձրագոյն կրթութիւն ստանալ. գերման բարեգործական ընկերութիւնները մէկ-երկու ուսանողի իսկ չեն ուզեր և չպիտի ուզեն օգնել. որովհետեւ անոնք օր մը նորէն կրնան թռիլ իրենց ձեռքէն դէպի հայրենիք:

Վառնակի մէջ կը հրատարակէն հիմա երեք թերթեր, Խրաւունք, Հայելի և Կատակի, ու Ռուսաւուզի մէջ ալ՝ Խուզակի.

Խրաւունք շաբաթաթերթը այս տարւան սկիզբէն շաբաթը երկու անգամ սկսաւ հրատարակւիլ. թերթի խմբագրութեան մէջ մտան Պոլսեցի, քանի մը զրոգներ ալ, բայց Խրաւունք իր կէս-պահպանողական ուղղութեամբը կը շարունակէ հրատարակւիլ մինչև ալսօր. շուրջը լուզւած խընդիրները շատ անգամ բնաւ նկատողութեան շառներ. և արդէն լուրջ և առողջ միտքերու կարելի չէ հանդիպել իր առաջնորդողներուն մէջ. Չորրորդ և երրեմն երրորդ էջը թուրքերէն լեզուով (հայատառ.) խմբագրաւծ լուրեր են. Ոչ մէկ ջանք կը տեսնեփի որ թերթը ըներ՝ տեղացիներուն—որ թրքախօս են—վարժեցնելու համար հայերէն խօսել. Լուրերը կարծենք, կրնակին գրւիլ հայերէն շատ պարզ լեզուվ, ի հարկին փակագլիծի մէջ դնելով տաճկերէն նշանակութիւնն ալ:

Հայելին ու Կատակը երգիծաբանական թերթեր են. Հայելիին մէջ երբեմն կարելի է պատահիլ լաջող պղափկ սրամիտ խօսակցութիւններու և երգիծանք. ներու որոնցմէ զուրկ է բոլորովին Կատակը, որ արդէն տարբեր ծրագիր մը ընդգրկած է՝ մոռցած իր հին ծրագիրը. չարձակիլ բոլոր այն անուններուն և հաստատութիւններուն վրայ, որոնք ժողովրդին լուրջ և զարգացած զասակարգը կը չարգէ և կը սիրէ. Խմբագիրը, Զաքըրեան անուն մէկը, հայ ժողովրդի անունով քարոզներ կուսակ, կը բորբոքի ու կը փրփրի, լեւ ու

Ճոր իրար կանցնէ, նոր-նոր ծրագիրներ կըստեղծագործէ՝ չանալով իր սկզբունքներուն երկրագուներ գտնել, և ահա առ միայն ամբողջ իր աշխատութիւններուն լիուլի վարձատրութիւնն է, կատակ'ի ծաւալը Մուրճի երկու էջն քիչ մեծ է:

Խուզակը (Երկարաժամկերթ, ուժը մեծադիր էշով) ընկերական և ընկերվարական նիւթերով կը զբաղի, առհասարակ թարգմանութիւններ ընելով ֆրանսերէն ազլեալ գրքուկներէ (brochure): Իր քանի մը առաջնորդողները բաւական լաւ խմբագրւած էին և լաւ տպաւորութիւն թողուցին, Բայց մենք ալս թերթին հրատարակութիւնը աւելորդ կը համարինք, քանի որ թերթին 7 էջերը թարգմանութիւնները գրաւած են, թարգմանութիւններ, որ շարունակութիւն են նախորդ թիւերէն, աւելի լաւ չպիտի ըլլար միթէ ատոնք առանձին զրգուկով հրատարակել: 15—20 օր ետքը ընթերցողը արդէն մոռցած կըլլակ նախորդ մասերը: Եղած թարգմանութիւններն ալ ընդհանրապէս անլաջող են:

Ուրիմն ալս չորս թերթերէն ոչ մէկը կրնաէ գոհացնել հետաքրքիր և ուսումնասէր գաղթական հալը. լաւ խմբագրւած քաղաքական և գրական թերթի մը պակասը շատ զգալի է Բուզարիու հակերուն մէջ: Եւ համոզւած ենք որ լաւ թերթ մը չաջողութիւն կը զտնէ և չարատեն կը հրատարակի, ու չի մարիր ան ասուպներուն պէս որ իրենց ետեէն լոյսի երկար գիծ մը ձգելով՝ կանհետանան երկնքի կապուտին մէջ՝ իրենց գուտութենէն ոչ մէկ հետք թողլով բացի միայն ազօտ վիշտակէ մը: Այս թերթերն ալ ասուպներու չեն նմանիր՝ մեր զրական հորիզոնին վրա:

ԱԶ ՈՒ ԶԱԽ

(Քըռնիկ)

Ա.

Հայ որբերը եւ բարերապ մեռք մը:—Այրի եւ լքուծ կիհները:—Կ. Պոլսի Հայոց Միացեալ ընկերութիւնը:—Երկու հիւրերը:—Բուլգարիոյ իշխանը եւ իր քաղաքականութիւնը:—Մուրատ պէյ եւ երիտասարդ Թիւրքիան:

Կան կարգ մը կարեսոր, կենսական խնդիրներ, որոնց մասին գրեթէ ամբողջ հաչ մամուլը կը զբաղի շարունակ՝ ամբողջ էջեր լեցնելով. Էջեր որ մեռած տառերու շիրիմներ կը մնան դժբախտաբար. Վերջերս չուզւող աղ կարեսոր հարցերէն մէկն է որբերու պատսպարումը:

Հայ որբերով գրեթէ ամեն թերթ զբաղեցաւ, ամեն խմբագիր բան, մը ըստ անոնց մասին, բայց արդինք, բողոքական միախոնարները, գթութեան հրեշտակներու պէս, ամենէն բարեպատճն ժամանակը կը սեպեն օգնութեան հատնիլ թշւառացած որբերուն՝ անոնց տրւած նիւթեղէն սընունդին հետ տալով նաև մտքի եւ հոդի մուռնդ ալ՝ իրենց ըմբռնած եղանակովն անշուշտ և իրենց ուզածին պէս: Հարիւրաւոր որբեր՝ շացնող խոստումներէ հրապուրւած՝ ինկան եւրոպական քանի մը քաղաքներու անկիւնները, հեռու իրենց հալրենիքն, հեռու ազգականներէ և ազգակիցներէ. և հոն, ժամանակ մը օտարներուն մէջ օտար պիտի մնան, սական քիչ-քիչ վարժւելով միջավացին ու պայմաններուն՝ համակերպութեամբ մը կարծես՝ պիտի ստիպէին մոռնալ շատ բան, ու իրենց աղջն ալ ու իրենց ծնողքին գերեզմանն ալ, եթէ կա:

Որբերու նկատմամբ անտարբեր եղողներուն զիմաց կաչ մէկը սական որ արդահատանքով շարունակ անոնց վլմակի մասին կը խորհի: Վեհափառ սուլթանն է ան որ Կ. Պոլսի Պատրիարքին բակոնած է թէ ինք ողորմածաբար կը մոռնալ հալրերուն լանցանքին համար զաւակներն ալ պատժելու աւանդական սովորութիւնը և կուզէ իր բարձր պաշտպանութեան ու հովանաւորութեան տակ առնել հայ անտէրունջ որբերը՝ ցաւ ալտնելով միանդամայն որ բաղոքական միսիոնարներ, ակնեալ թարուն

Նպատակներով, դէս ու զէն կը տանին և կօտարացնեն խեղճ պղտիկները։ Հալրերը անգթօրէն կոտորող արինաթաթախ ձեռքերը զգւանքի շփում-ներով կը մօտենան որբերուն՝ կարեկցութիւն կեղծելով, ով զիտէ մութին մէջ ինչ նոր ծրագիրներ պատրաստելով։

Այս հանդամանքներուն մէջ, մեր բազմաթիւ վաճքերը կը շարունա-կեն իրենց դուռները փակած պահել՝ խեղճուկ որբերուն առջն, և մեր վանական հայր սուրբերը կը շարունակեն ջերմուանզօրէն ազօթել՝ իրենց ժողովրդի կեանքին ու չաջողութեան համար, ձեռքերնին բաց... միշտ բարեպաշտ ժողովրդէն ստանալու համար..., Երուսաղէմի խեղճ մեր վաճքը տակաւին կը հեծէ կորաքամակ 30,000 ռոկիի (332.300 ռուբլի մօտաւորա-պէս) պարտքին տակ, փոխանակ օգնելու Երուսաղէմի, ինչ անմտութիւն անկէ բարիք սպասել։

Հալաստանի ամեն քաղաք ու գիւղ ուր կոտորածը, ժանտախտի մը-պէս իր անզորմ հունձքերն ըրաւ, որբերուն քով կը մնան ալրի կիներ, մինակ լքած, խեղճ, անկան, իրենցմէ շատերան ամուսիները իրենց աշ-քին առջն խողխողւած են և շատերունն ալ՝ պանդխոտութեան մէջ նոյն-դժխեմ ու անգութ մահը գտած են։

Արդէն ինչ միմիթարանք կաէ գաւառացի կնոջ համար, որու ամու-սինը պանդխոտութեան կը զիմէ և հինգ, եօթը, տասը երկար տարիներէ ետքն խակ չի զառնար, երեմն ոչ դրամ, ոչ լուր զրկելով իր մասին։ Ալրի կիներու վիճակը չունին ան կիները, որոնց ամուսինները պանդխոտու-թեան մէջ, չւարտ կեանքով և հիւանդոտ հաճոքներով՝ կը մոռնան կին ու զաւակ՝ իրենց ախտաւոր մարմինը քաշկոտելով գինետուններէ, հանրա-տուններէ հիւանդանոց։ Խակ անոնց կիները, տարօրինակ անվերջ համբե-րութեամբ մը, կը սպասեն ու կը սպասեն իրենց ամուսիններու դար-ձին՝ իրենց նակատագրւած ամեն զրկումներու և անբախտութեան համա-կերպելով։ Իրենց մէջ շատ քիչերը կինան գտնւիլ, որ ալ ես համբերու-թիւնը հատած, ապահարզան պահանջեն և կրկին ամուսնալ իորհին։

Եթէ որբերուն համար որբանոցներ հարկ կը տեսնւի բանակ, ալրի-ներուն համար արդեօք ինչ կը խորեւի ընել, անոնց համար ալ ալրիա-նոցներ ու մալրապետանոցներ բանալու է միթէ, և որեէ անօրինութիւն պէտք չէ ընել ան կիներու մասին, որոնց ամուսինները տամնեակ տա-րիներով իրենց դուռնութեան և պարտաճանաշութեան ոչ մէկ նշովը ցուց տւած են։ Ու իրենք, ալդ խեղճերը, ալդ տւահատները, ալրի ու թշւա-ռացած կնոջ կեանքով կապրին և իրենց պղտիկներն ալ՝ որբերու չա-տուկ ամեն զրկանքներու ենթարկւած են։

Զգիտեմ թէ կովկասի հակերուն ինչքան ծանօթ է Պոլսի Հայոց Միացեալ ընկերութիւնը որ Տաճկահաչ զաւառներու մատաղ սերունդի դաստիարակութեան գործին մէջ իր ահագին զերն ունեցած է և ունի Եղած է ժամանակ որ 30-էն մինչև 48 վարժարան կրցած է ունենալ ընկերութիւնը՝ ալ և այլ կեղրոն քաղաքներու մէջ։ Հիմա 14 վարժարան մրաշն ունի՝ վերջներս տիրող տնտեսական տագնապին պատճառով—ինչպէս կը ունի Պոլսի թերթերը—ընկերութեան հասութները զգալի կերպով խախտած և նւազած են այս տարի, երբ ամեն ատենէ աւելի հիմա պէտք կաչ գաւառներուն մէջ վարժարանները բաց պահելու օտար ձեռքերու լանձնել չստիպւելու համար հաչ մանուկներու կրթութիւնը։ Արդեօք կարելի է բաղձալ ու յուսալ որ կրնան զտնւիլ անհատներ որ փափաքին նպաստներով օգնել Միացեալ ընկերութեան, որպէս զի կարողանալ այս լառաջիկաչ տարիներ ալ իր գործը շարունակել գործ մը որ սկսւած է տասնեակ տարիներէ ի վեր և տւած է շշափելի և գոհացուցիչ արդիւնքներ։

Անա վասահելի ընկերութիւն մը որուն կրնան նպաստել—փոքր նուիրատութիւններով նունիսկ—ամէն կովկասցի հաչ, որ կը կարեկցի իրաւցընէ տաճկահաչ մատաղ սերունդին և փափաքով է անոնց կրթութեանը։

Պոլսի երկու հիւրեր ունեցաւ վերջերս, որոնք բաւական նիւթ տւին լրագրութեան, Բուլգարիու իշխանն ու Մուլրատ պէտը։

Հակառակ տարածանուած լուրերուն թէ Բուլգարիու իշխանը իր ճամբորութենէն դառնալուն պէտ՝ ինքովնքը անկախ պիտի հոչակէ, գնաց ան կազսերական պալատ համբուրելու սուլթանին ձեռքը և իր հաւատ արմակւն զգացումներն արտալարտելու։ Բոլոր տաճիկ թերթերը կը զովին իշխանին այդ իմաստուն վարմունքը։ Ալրէ իշխանը որ զիտէ արդչափ քաղաքաղէտ ըլլալ, 18 տարի առաջ բուլութեան մնչիչ լուծին տակ հեծող և արիւնոտած Բուլգարիու արուրաւ իշխանը սուլթանին ձեռքը կը քաշէ կը համբուրէ, անոր բարեկամութիւնն և գուցէ դաշնակցութիւնը խնդրելով։

Մուլթանն ալ երկու նաւ լիցուն հրավառ նիւթեր կը զրկէ իշխանին՝ անոր ընծայած քանի մը նուէրներէն զատ, որպէս զի բուլգարները շքեղութեամբ ու ցնծութեամբ տօնեն ազգային ախն տօնը, որ Բուլգարիու աղատութեան տաքեղարձին տօնն է։ Տկար մահկանացուներու խնլքէն վեր են այս տեսակ քաղաքականութեան անխմանալի գաղտնիքները։

Մուլթանը յաջողեցաւ Պոլսի բերել տալ Միզան թերթի խմբագիր Մուլրատ պէտը որ ամբողջ սարիներ սուլթանի քաղաքականութեան վրայ կը բարձակէր և անոր սիրազործութիւնները կը թւէր։ Տակաւին քանի մը ամիս առաջ Պոլսի տաճիկ թերթերը Մուլրատ պէտի համար լիմարացած է

Ըսին՝ հերքել ջանալով անոր ըսածներէն մէկ քանին։ Խգտամ թուրքերէն թերթի խմբադրապետը առանձին տեսակցութիւն մը կունենակ Սուրատ պէլի հետ որ սա միտքերը կը լազմնէ.

Ինք հայրենասկլութենէ մղւած, գնացած է եղեր Եւրոպա վերջի ատեններս Օսմանցիներու և Խալամութեան նկատմամբ, մանաւանդ հայկական խնդրի առիթով եղած բազմաթիւ սուտ հրատարակութիւնները հերքելու և ճշմարտութիւնը ձանցնելու համար։ Եւ իր երբեմնի մոլորած ընթացքին և անխոնեմ հրատարակութիւններուն նկատմամբ զղչում լավանելով՝ կը զիմէ իր վեհափառ կալսեր՝ համոզւած թէ ոճրագործն իսկ ներողութիւն կը դտնէ, երբ զղջաւ և ապաւինի սուլթանի ներողամտութեանը։ Ինք ոչ մէկ պայման դնելով ելած եկած է եղեր, որովհետեւ բնչպէս կարելի է որ վեհափետի մը և հպատակի մը մէջ պայմաններ դրսին։ Օսմանցիներուն օգոստափառ տէրը իր ուղածին և լարմար տեսածին պէս կը զործէ»։

Երկու զասակարգի կը բաժնէ Եւրոպա զտնւող տաճիկ երիտասարդութիւնը, որը չար բիրաններ «Երիտասարդ Թուրքիա» կը կոչեն։ մեծ մասը ուսանողներ են որ իրենց ուսումը աւարտելուն պէս պիտի դառնան և մէկ մասը արտաքոյ կարգի պատճառներէ (?) մղւած գնացած է, սասնք ալ նոյնպէս քիչ ատեննէն պիտի գան եղեր։

«Երկիրը քանի որ կալսեր կը պատկանի, ըսած է Սուրատ պէէ ինքը կալսը ամեննէն աւելի կը փափաքի անոր բարօրութեան, ու ևս չունիմ ուրիշ որևէ է նպատակ կամ բազանք, բայց միան հաւատարմական զգացուները դէպի իմ օգոստափառ տէրը»։

Մուշատ պէէի ահազին թոշակով պաշտօն մը լանձնւած է։ Եւրոպական անկիւններ սլքտացող թիւրք երիտասարդներուն ալ լեցուն ամսուականներ խոստացւած են իրենց ծախքերուն համար։ Ա՛լ ամէն թիւրիմացութիւն վերցաւ մէջտեղէն։ սուլթանը սիրւած վեհապետէ, և Սուրատ պէէ ու «Երիտասարդ Թիւրքիա» նախկին անդամները հաւատարիմ հպատակներ են նորէն։ Եւ և ուրատ պէէ ինք պիտի խօսի կըսեն «Երիտասարդ Թիւրքիա»-ի դամբանականը։

Ա՛լի, այն չար լեզունները...

Մ Ո Տ Ա.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՐԱՆՍՍ-ՌՈՒՍԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ:

ՆԱԽԱԳԱՀ ՖՈԲԸ ՌՈՒՍԻԱՑՈՒՄ:

Որպէս ամիսներ առաջ սպասւում էր՝ ֆրանսիական հաճրատ-պետութեան նախագահ Պր. Ֆելիքս Ֆոբը եկաւ. Պետերբուրգ, Ռուսիայի Կայսերական Զոյգին այցելելու։ Այդ փոխ-այցելութիւնը ունեցաւ ամենաբարձր քաղաքական նշանակութիւն, և այդ յայտնի կացուցւեց ճառերի մէջ գործածւած «դաշնակցութիւն» բառով, որ արտասանւեց ֆրանսիական զրահակիր նաւի վրայ, ոուսաց ջրերի մէջ, երկու ազգերի զրօշակների տակ։ Կրոնշտատ-Տուլոնը իւր շարունակութիւնն ունեցաւ Պարիզ-Պետերբուրգում։ Հաւաստի է, որ ոռւս ֆրանսիական դաշնակցութիւնը դիալոմատիական է և պատերազմական միաժամանակ և որ նորա սկիզբը—նոյն իսկ գրաւոր կերպով—գրւած է հանգուցեալ Կայսր Ալեքսանդր III և հանգուցեալ նախագահ Կարնօ՛ի ձեռքով։ Բայց այդ դաշնակցութիւնը իւր լրացումներն ունեցաւ Պարիզում և այժմ Պետերբուրգում Դաշնակցական թղթի բովանդակութիւնը դեռ ևս յայտնի չէ իւր բոլոր մանրամաներով և նաև հրատարակւած չէ. բայց ամեն մարդ, որ հետեւում է քաղաքականութեան, կարող է գուշակել նորա ընդհանուր բնաւորութիւնը։ Ընդհանուր առմամբ նա պիտի երաշխաւորում լինի փոխադարձ օգնութիւն, երբ կողմերից մէկն ու մէկը յարձակման ենթարկեի, և որոշ դէպքերում՝ եթէ երկուսից մէկն ու մէկը յարձակող լինի։ Որոնք են այդ որոշ դէպքերը—այդ է ինչը ամենաէական մասը։ Միայն թէ արժանի է ուշադրութեան, որ կողմնակի կերպով—Ֆիգարօ լրագրի միջոցով—հարկ գատւեց մի կողմից նախագուշացնել ֆրանսիական շովինիստներին և միւս կող-

մից հանգստացնել Գերմանիային, թէ ոռւա. Փրանսիական դաշնադրութիւնը բնաւ չի խրախուսում Փրանսիական վրէժինդրութեան քաղաքականութեանը էլզաս-Լոթարինդիայի նկատմամբ:

Նկատենք, որ Փրանսիական հանրապետութեան մի նախագահ առաջին անգամն է, որ ոսք էր զնում օտար հողի վրայ, և այն ձեւ, որով Ֆորը ընդունւեց Ռուսիայում, ապացոյց է, թէ քաղաքական շահները ոյժ ունին խորտակելու ամեն ուրիշ զիւրազգածութիւն և նախապաշարումներ, որ կարող էր ունենալ միապետական կառավարութիւնը՝ հանրապետականի դէմի Քաղաքական մեծ կարևորութիւնը աչքի առնելով, մենք սոորեւ զնում ենք ընդունելութեան նկարագրութիւնը գէթ այն համաւուսութեամբ, որ հեռագրական կարգով այդ գեկուցւեց Ռուսաստանի օրաթերթերին:

Փրանսիական հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր ներկայ օգոստոսին կատարեց իւր հանդիսաւոր ճանապարհորդութիւնը Ռուսիա, Ռուսաց Կալվերական Զուդին դարձնելու իւր այցելութիւնը, ի պատասխան Կալվերական Զուդի անցիալ տարի Փրանսիային արած այցելութեան: Ֆորը Պարիզից ճամբա ընկաւ օգոստոսի 6-ին (նոր տոմարով 18 ին), զէպի Դիւնկերէյէն Փրանսիական փորտը, արտաքին գործերի մինիստր Հանուսո'ի, ծովապետ Բենարի և ոռասաց գեներալ ազիւտանտ Ֆրեդերիքսի հետ Բազմաթիւ հասարակութիւն ճամբա ցցեց նորան կեցցէներով, Դիւնկերէյէնից Ֆորը ճամբա ընկաւ Պուատիկո պատերազմական չողենաւի վրա և հասաւ Կրոնշտատ օգոստոսի 11-ին: Ազդ օրը, առաւօտ, ժամ 9 $\frac{1}{2}$ ին Թագարոր Կալվրը Մեծ իշխաններ Ալեքսէ Ալեքսանդրովիչի, արտաքին գործ, մինիստրի և մերձաւոր սէլտարի անձերի և նոցա հետ, որոնք նշանակած էին Ֆորի մօտ լինելու, Պետերհովից «Ալեքսանդրիա» եախտի վրայ ուղևորւեց Կրոնշտատեան ոէջը. Կալվեր հետ էին Փրանսիական զիխաւոր շտարի պետ գեներալ Բուազէֆը և զեսպան Մոնտերելլու «Ալեքսանդրիա» եախտին ուղեկցում էին «Ստրէլա» և «Մարելու» եախտերը: Ֆորին հանդիսաւոր համար նոխայէս ընդառաջ էին զնացել ծովալին մինիստրութեան ենթ-ծովապետ Տըրտով և ծովալին զիխաւոր շտարի պետ ծովապետ Աւելան: Կրոնշտատում մեծ և փոքր ուշիցերը գեղեցիկ զարդարւած և խիս լիցւած էին հասարակութիւնով: որոստաց երաժշտութիւնը, ոէջումն էին թալթեան նաւատորմի մեծ զրահակիրները: Ժամ 9 և 37 րոպէին նկատւեց հեռւում Փրանսիական զրահակիր Պոտիւզ, որ մօտենում էր նախագահի զրոշակի տակ, այդ ժամին ոռասաց զինորական նաւերից և կրոնշտատեան:

ամլոցներից որոտաց «ողջոնը» (սալիւտ) ի պատիւ Փրանսիական ազգի 21 թնդանօթաձգութւնով. մերձաւոր մասնաւոր նաւերից հնչւեց Փրանսիական ազգային մարտելիէլ օրշներզը ամենուրեք ցնծութիւն և դոչումներ «Vive la France» (կեցցէ Ֆրանսիա), Պոտիւզօնից պատասխանեցին թնդանօթաչին ողջոններով. Նախագահը կանգնած էր կապիտանական կամուրջի վրայ իւր ամբողջ ուժաւով և գեներալակիւտան Ֆրեղերիկսի հետ.

Ֆորը հաղած ունէր մե ֆրակ սպիտակ ժիլէտով, որի վրայից ձգւած էր ս. Անդրէ Նախակոչի շքանշանը. Փրակի վրայ կպցրած ունէր Պատուաւոր Լէգիոնի շքանշանի աստղը. Ֆոր կանդնած էր զլսարաց և ամբողջ ժամանակ ողջունում էր հասարակութեան. Առաւոտեան 10 ժամ 12 րոպէին Փրանսիական «Պոտիւզ» զրահակիրը սկսեց արագութեամբ մօտենալ Փոքր նաւակալանին. Ազդ ժամանակ Պետերհոփի կողմից երեաց Կալսերական «Ալէքսանդրիա» նաւը, որը հասնելով Փոքր նաւակալանին, խարխուս զցեց ուստաց «Հտանդարտ» նաւի մօտ. Երբ «Պոտիւզ» նաւը կանգնեց «Ազիա» և «Շտանդարտ» նաւերի մէջտեղ, «Ալէքսանդրիա» նաւից գնաց նորին Մեծութեան առագաստաւոր նաւը, որի վրայ բարձրացած էր Օգոստափառ գեներալ-ծովապետի զրօշակը. Ազդ նաւով գնացին դէպի «Պոտիւզ» զրահակիրը Մեծ Խշխան Ալէքսէ Ալէքսանդրովիչ, Փրանսիական գենապան կոմս Մոնտերէլլօ, գեներալ Բուադէֆը և Փրանսիական նախագահին ուղեկցելու համար նշանակւած անձերը. Երբ առագաստաւոր նաւը մօտենում էր Փրանսիական զրահակին, Ֆոր նախագահը իջաւ կապիտանի փոքր կամուրջից և դիմաւորեց Օգոստափառ գեներալ-ծովապետին. Ազդ ժամանակ բոլոր մասնաւոր նաւերը միսեցին հաւաքւել Փրանսիական զրահակրի շուրջը. «Ալէքսէզնի» մասնաւոր շոգենաւով գնաց դիմաւորելու թանգագին հիւրերին հայր Կրօնշտատսկին. Մտնելով «Պոտիւզ» նաւը և փոխադարձ ողջուներից լետով, Օգոստափառ գեներալ-ծովապետը նախագահ Ֆորի հետ միասին անցաւ նաւի պահակախմբի առաջ. Հէնց ազդ վարկենին ամեն տեղից լուեցին սդեռուած «ուրաչի» ձաներ և մարսէլիէզի հնչւններ, «Պոտիւզի» վրայ ազդ ժամանակ ածում էին ուստաց օրհներդ. Առաւոտեան 10 ժամին, նախագահ Ֆոր, ուղեկցութեամբ Օգոստափառ գեներալ-ծովապետի, գեներալ Ֆրէդէրիկսի, առտաքին գործերի մինիստրի և ամբողջ սփոսակի, «ուրաչի» աղաղակների և Մարսելիէզի հնչիւնների ձանակցութեամբ Ֆորը իջաւ նորին Մեծութեան նաւը, որի վրայ խակոն բարձրացրեց նախագահ Ֆորի զրօշակը. Մասնելով նաւը, նախագահը վերկացաւ, հանեց զլսարկը և երկար բարեռում էր իրան ողջունող հասարակութեան. Երբ նաւը

սկսեց մօտենալ «Ալէքսանդրիա» շոգենաւին, «Նորդկուստէն» մասնաւոր շողենաւից, ուր կար Պետերբուրգի քաղաքավին ամբողջ վարչութիւնը, թնդաց Փրանսիական ազգավին օրհներգը, որ շուտով խառնւեց ուռւաց օրհներգի հետ 10 ժամ 35 րոպէին առաջասառաւոր նաւը մօտեցաւ «Ալէքսանդրիա» կալսերական նաւին, թագաւոր կալսրը մօտեցաւ նաւի սանդուխքին և իջնելով նրանից, սպասում էր նախագահ Ֆորին: Անցաւ կրկին մէկ վաճրկեան, և կալսերական սանդուղքի վրայ տեղի ունեցաւ աճնքան ցանկալի հիւրի տեսակցութիւնը, որ շատ սիրալիր բնաւորութիւն ունէր, թագաւոր կալսրը երկու անգամ համբուրեց Փրանսիական հանրապետութեան նախագահը սանդուղքի հետ և ազա տարաւ նորան դէպի «Ալէքսանդրիա» նաւի տախտակամածը, ուր ապա ներկայացան նախագահին թագաւորի սկիտատի անդամները և ծովալին վարչութիւնը, նրը նախագահը մտնում էր «Ալէքսանդրիա» նաւի տախտակամածը, ամեն նաւերից, կրոնչտատի պատից և մարտկոցներից սկսեց թնդանօթաձգութիւն ի պատիւ Փրանսիական հանրապետութեան նախագահի: 10 ժամ 40 րոպէին կալսերական «Ալէքսանդրիա» նաւը ճանապարհ ընկաւ դէպի Նոր-Պետերհոփ: 11 ժամ 14 րոպէին «Ալէքսանդրիա» նաւը երևաց Նոր-Պետերհոփի մօտ: Զինուորական նաւահանգստից դիմաւրեցին Ֆորին թնդանօթաձգութեամբ: Ալդ ժամանակ նաւահանգիւսում հաւաքւեցին բոլոր Մեծ Խշանները, զինուորական մինիստրը, և թագաւոր կալսրի ուժտան: աղտուղի էր կանդնած և պատաւոր պահակագունդը զրօշակով և երաժշտական խմբով: 11 ժամ 24 րոպէին նախագահ Ֆոր թագաւոր կալսրի հետ իջաւ «Ալէքսանդրիա» շոգենաւից: Երածշութիւնը նւազեց «գիմաւորումն» և զրօշակը խոնարհեց, ողջունելով: Մեծ Խշաններին բարելուց լետով, նախագահ Ֆոր թագաւոր կալսրի հետ անցաւ պահակագոնդի առաջ: ակդ ժամանակ երաժշտութիւնը ածեց մարսէլիէզ, և զւարդիալի նաւաստիները ողջունեցին Միապետի հիւրին «ուրախ» ողենորւած աղաղակներով: թագաւոր կալսրը նախագահ Ֆորի հետ կառք նստեցին և «ուրախ» ողենորւած աղաղակների և մարսէլիէզի հնչյունների ձախակցութեամբ զնացին Մեծ պալատը, թագաւոր կալսրը, ճանապարհ զցելով նախագահ Ֆորին մինչև նորա համար պատրաստւած բնակարանը Մեծ պալատում, վերադարձաւ «Ալէքսանդրիա»: Մի փոքր ժամանակից լետով, նախագահ Ֆոր գնաց Ալէքսանդրիա նաւը ացցելելու թագուհի կալսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնալին: Նախագահ Ֆորի՝ Մեծ պալատը վերադարձաւ աղաղակներին 2 ժամին, Սպիտակ պալատի շքեւ գաղթիճում տեղի ունեցաւ Բարձրագործն նախաճաշ 34 անձանց համար, Անդանի կենտրոնում նստեց թագաւոր կալսրը, իւր աջ կողմը

նստեցնելով նախագահին. ապա նստեցին Մեծ Խիսանները, Թագաւորի հանդեպ նստեց Կալսերական պալատի մինիստրութեան կառավարիչը, աջ կողմի ունենալով Հանուորին. Նախաճաշից լիսով, նախագահ Ֆոր գեներալ-լեյտենանտ Բիլդերլինգի հետ ացելութիւններ դորձեց Կալսերական տան անդամներին.

Հանդիսաւոր ձաշի ժամանակ, որ տեւեց պետերհովեան Մեծ պալատում, ի պատիւ Փրանսիական հանրապետութեան նախագահի, Թագաւոր Կալսերը ասաւ հետեւալ ճառը, Փրանսւորէն լեզով.

„J'éprouve un plaisir tout particulier à vous souhaiter la bienvenue, monsieur le président, et Je vous remercie de votre visite, que la Russie entière accueille avec une joie vive et uneanime. Le souvenir charmant des trop courtes journées, passées en France l'année dernière, demeure ineffaçablement gravé dans Mon coeur, comme dans celui de l'Impératrice. Nous aimons à espérer, que votre séjour parmi nous et la sincérité des sentiments, qu'il éveille, ne pourront que resserrer encore les liens d'amitié et de sympathie profonde, qui unissent la France et la Russie. Je bois à votre santé, monsieur le président, et à la prospérité de la France“.

Թագաւորի ճառից լետոյ երաժշտութիւնը մարէլիէլ ածեց, Թագաւորի ճառին նախագահ Ֆոր պատասխանեց հետեւալ ճառով:

„Votre Majesté a bien voulu rappeler les journées trop courtes, qu'avec Sa Majesté l'Impératrice Elle a passées à Paris au mois d'octobre dernier. La France entière en a gardé de son côté le souvenir le plus ému. Répondant au sentiment profond de toute la nation, le président de la république vient dans la capitale même de l'empire de Votre Majesté affirmer et resserrer encore les liens si puissantes, qui unissent nos deux pays. En touchant le sol de la Russie à un moment, où le cœur des deux peuples bat à l'unisson dans une même pensée de fidélité reciproque et de paix, je lève mon verre en l'honneur de Sa Majesté l'Empereur de toute la Russie, de Sa Majesté l'Impératrice et de la Rnssie toute entière“.

Ֆորի ճառից լետոյ երաժշտութիւնը ածեց օրհներգը, ճաշից լետով նախագահ Ֆորին ներկալացան մինիստրները, պետական խորհրդի գեպարտամէնտների նախագահները, Թարձրագոյն պալատի աւագ պաշտոնեաները, ստատուսեկրետարները, Պետերհովեան Մեծ պալատում ընդունելութիւնից լետով, տեղի ունեցաւ հանգիստում ներկալացումն Թատրոնը և նորան շրջապատող հրապարակը

շքեղ կերպով լուսաւորւած էին, Ներկայացման ժամանակ տրւեց բաշտ «Թեզե» և Ագրա օպէրավի երկրորդ գործողութիւնից և «Երազ ամառնացին գիշերին» բալէտը, Երբ նախագահ Ֆոր Թագուհի Կաչարունու, Թագաւոր Կալսորի և Մեծ իշխանունի Մարիա Պավլովնավի հետ մտաւ Կալսերական կենտրոնական օթեակը, ամբողջ հոսարակութիւնը տեղից վերկացաւ և օրքեստրը ածեց մարտէլիէզ, Թատրոնի ֆոլքում Բարձրագոյն պալատից բուփէտներ էին պատրաստւած։

Ժողովրդի անթիւ բազմութիւն համարեա թէ լուսաբացից լցւել էր այն փողոցներում, ուր պէտք է անցնէր Սիազետի և ամբողջ Ռուսաստանի բարձր հիւրը—Փրանսիական հանրապետութեան նախագահ Ֆէլիկս Ֆոր, Առաւոտեան 11 ժամ 45 րոպէին «Ալէքսանդրիա» նաւը, Փրանսիական դրոշակի տակ, հասաւ Պետերբուրգ։ Նորան ողջունում էին բոլոր նաւերից «ուրազի» ոգենորւած ազաղակներով։ Երբ նախագահը իջաւ նաւամատոցից, նրան դիմաւուեց մի մատաղահաս աղջիկ և, ողջոն տալով, մատոց կենդանի ծաղիկների մի շքեղ փունջ, ժողովրդի ուրախութիւնը կատարեալ էր։ Կառք նասելով Բիլդերլինզի հետ, նախագահը զնաց Պետրոպալովսկ ամբոցը, Ցերեկւակ 12 ժամին նախագահ Ֆոր ժամանեց Պետրոպալովսկ ամրոցը։ Մօտենալով Կալսոր Ալէքսանդր Ա. կամբարանին նախագահ Ֆոր կամաց ազօթեց և ապա դրաւ դամբարանի վրայ խաղաղութեան նշանը—մի գեղեցկաչն ոսկէ մրտենի ճիւղ։ Դրանից լետու ացելելով աշնտեղ թաղւած կալսերական տան անդամների գերեզմանները, բարձր հիւրը ցերեկւակ 12 ժամ 20 րոպէին հեռացաւ։ Պետրոպալովսկ ամրոցից, և զնաց Փրանսիական բարեգործական ընկերութեան տունը։ Աղա Ֆոր զնաց Պետրոս Մեծի տնակը, ուր հանդիպեց Թագաւոր Վալսորի և Մեծ իշխանների հետ, որից լետու Թագաւորը նախագահի, մինիստր Հանուորի, ծովագետ Փերւէի, զեներալ Բուադէֆրի և Փրանսիական դեսպանի հետ հանդիսաւոր նաւով զնաց Տրօիցի նոր կամուրջի հիմնարկութեան տեղը։ Ցերեկւակ 2 ժամին Թագաւոր Կալսոր զնաց ալդտեղից, Ֆոր զնաց Փրանսուսական ընկերութեան գործատունը։

Փրանսիական հիւրերի պատւին մալրաքաղաքի մամուլի տւած բանքէտը փառաւոր անցաւ Հուաքւեցին մօտ 250 հիւրեր։ Նատ ձառեր խօսւեցին, Ընթրիքը ուրախ անցաւ։

Կամուրջի հիմնարկութիւնից լետու նախագահ Ֆոր շքախմբի հետ ալցելեց Փրանսուսական գործարանները, ուր բանւորները աղմկալի ցոցեր արին նրանց, Բանւորներից աղ ու հաց ընդունելով, նախագահը ման եկաւ գործատան մէջ և ապա զնաց պետական արմէթզմեր պատրաստելու էկապեղիցիան, ուր բարձր հիւրին դիմաւու-

բեց Գիշանսների մինիստրը: Կառավարչական այդ հիմնարկութիւնը տևանելուց լիտով, բարձր հիւրը ալցելեց օտար պետութիւնների բոլոր գեսպաններին և ապա արդէն վերադարձաւ Զմերակին պալատ՝ ուր Գեղին հիւրը ներկանդունարանում այդ ժամանակ հաւաքւել էին բոլոր գեսպանները: Ֆրանսիական զեսպանը ներկաւացրեց նախագահին նախ՝ դեսպաններին և ապա դիպլոմատիական մարմնի ուրիշ անդամներին: Դիպլոմատիական ընդունելութիւնից լիտով, նախագահ Ֆոր իւր սիտալով անցաւ Գերբուլու զահլիճը: Այդ զահլիճում գտնում էին պատգամաւորութիւններ Պետերբուրգի և Մոսկվայի ազնւականութիւնից, Պետերբուրգի զէմստւոլից և զանազան քաղաքների վարչութիւններից: Երեկոցեան 7 ժամին ընդունելութիւնը վերջացաւ և նախագահը պալատից գնաց ֆրանսիական զեսպանատուն, ուր նորան ներկաւացան պատգամաւորութիւններ Ռուսաստանի զանազան քաղաքների ֆրանսիական կողմից կողմից: Պատգամաւորութիւնների վորմից: Ապա հանդիսաւոր ճաշ կար ֆրանսիական զեսպանատան մէջ:

Օգոստոսի 12 ին, երեկոցեան 11 ժամին, նախագահը իւր շքախմբի ուղիկցութեամբ, ֆրանսիական զեսպանատանից գնաց Բալտիկական կալարանը, Բալտիկական կալարանում քաղաքային դումանի կողմից մատուցւեց նախագահին մի շքեղ ալբոմ Պետերբուրգի տեսարաններով: Գնացքը ճանապարհ ընկատ Պետերհով 11 ժամին,

Քաղաքի կողմից ֆրանսիական նաւատորմի պատւին տած ճաշը Լընէսափ հիւրանոցում փառաւոր անցաւ: Խմեցան Թագաւոր կալսրի և նախագահի կենացները ճաշը վերջացաւ 10 ժամին:

Օգոստոսի 13-ին նախագահ Ֆոր ալցելեց Կրամնօէ Սէլօ: Առաւատեան 11 ժամին Նոցին կալսրական Մեծութիւնները հանրապետութեան նախագահի և սկսածի հետ ժամանեցին կրամնէէ Սելօ, որը գեղեցիկ դարդարւած էր դրօշակներով: Զինուրական դաշտի վրա կանգնած էին զօրքեր: Ցերեկւազ ճիշդ 11 ժամ 15 րոպէին Կրամնօէ-Սէլօի կողմից կառքեր երեացին: Առաջնի կառքով գնում էր Թագաւոր կալսրը ֆրանսիական հանրապետութեան նախագահի հետ: Երկրորդ րաց կառքում նստած էր Թագուհի Կալսրուէի Ալէքսանդրա Ֆէոդորովնա Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնաի հետ Հէնց որ կառքերը հասան զօրքերի ճակատին, երաժշտութիւնը նախ սղիմաւորում ածեց և ապա մարսէլիէզ: Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ, որպէս հրամանատար այդ զօրքի, ռասպորտներ մատուց Թագաւոր կալսրին և նախագահ Ֆորին: Թագաւոր կալսրը ճանապարհ զցելով Թագուհի կալսրունի Ալէքսանդրա Ֆէոդորովնաին և ապա իննելով ներքե, ձի նստեց: Զօրքերը հանդիսաւոր կերպով անցան Թագաւորի առաջ: Թագաւոր կալսրը չնորհակալութիւն

էր լաւանում զօրքերին մարշի ժամանակ։ Հանդիսաւոր մարշը վետով, դէպի թագաւորական բարձրադիր տեղը մօտ բերին օդասպարիկ «Vive la France» վերտառութեամբ։ Օդապարիկի զամբիւզում գոյնում էին երկու օֆիցիէր։ Թագաւորական վրանից նշան տալով, թոկերը կտրեցին և օդապարիկը բարձրացաւ ու շուտով անհետացաւ։ Մի քանի ժամանակից իւսով, Արքալական բարձրադիր տեղի առաջ հաւաքւեցին ուսումն աւարտած իւնկէրները և պատերը, Թագաւոր կալբը չնորհաւորեց նոյս օֆիցիէրի աստիճան տալով։ Ողերւած «ուրաջով» պատասխանեցին Միապետի չնորհաւորութիւններին։ Ապա թագաւորը՝ նախագահ Ֆորի հետ և թագուհին՝ Մեծ իշխանուհի Մարիա Պալլովիսի հետ, նստեցին կառքերը, ճանապարհ ընկանդէպի Կրամնօէ-Սելո, ուր մեծ սեղանատան մէջ տեղի ունեցաւ Բարձրագուն նախաճաշ, որի ժամանակ Թագաւորը բախճրացրեց բաժակը և զիմեց նախագահին ու Գրանսիական զօրքի ներկայացուցիչներին հետեւալ խօսքերով։

«Այս բարձրացնում եմ բաժակ ի պատիւ այն փառահեղ զօրքի մեր ընկերակիցների, որով ես բազզ ունէի հիանալ Շալոնում և որի արժանաւոր ներկայացուցիչներին Ես ուրախանում եմ տեսնելով ալսուելու։

Նախագահը պատասխանեց.

«Թէ Պարիզում և թէ Ալպերի վրայ, իմ վերջին ճանապարհորդութեան ժամանակ ե, վերջապէս, Դիւնկիրխէնում, երբ ես պատրաստում էի ճանապարհ ընկնել՝ Խուսաստանին և նորա Օգոստավառ թագաւորին ողջուն բերելու համար, — ամեն տեղ Գրանսիական զօրքը չափնում էր ինձ իւր միաբերան ցանկութիւնը՝ կրկին անդամ լայտնել ուսաւաց զօրքին իւր անկեղծ բարեկամութեան հաւաստիքը։ Հիացմունքով և լուզմունքով լայնում եմ Զեր Մեծութեանը ազդ հաւաստիները և խնդրում եմ լայնել Զեր Մեծութեան զօրքերին։ Նոյս պատերազմական քաջութիւնները մեղ վազուց լայտնի էին, Անմոռանալի տեսարանը, որին մենք հնչց այս րոպէիս վկատ էինք համոզեց մեզ, որ նոքա արժանաւոր են, համբերատար և զօրեղ կազմակերպութիւն ունին։ Գրանսիական զօրքը, որը Զեր Մեծութիւնը տեսաք Շալոնում, հեռւից ողջունում է ուսաւաց զօրքին և լայտնում այս հանդիսաւոր օրը փոխադարձ վստահութեան և եղբարակցութեան զգացմունքները, Ես բարձրացնում եմ իմ բաժակը ի պատիւ Զեր կալսերական Մեծութեան, Նորին Մեծութիւն թագուհի Կալմունու և ամբողջ Օգոստավառ ընտանիքի, և Գրանսիական զօրքի անոնմից խմում եմ ուսաւաց զօրքի կենացը»։

Նոցին Մեծութիւնները և նախագահ Ֆոր կէսօրից յետով ժամ 3-ին ճանապարհ լնկան դէպի Նոր-Պետերոնֆ. Նոր-Պետերոնֆում երեկոյնան, պետերհոփեան Մեծ պալատում տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ ի պատիւ քրանսիական նաւատորմի:

Ճաշի ժամանակ Թագաւորը ասեց, Քրանսերէն լեզով, հետևեալ ճառը.

«Ինձ համար չափազանց ուրախալի է խմել Քրանսիական նաւատորմի բարգաւաճման կենացը նորա ներկալացուցիչների շրջանում. Ես գոհունակութեամբ վշում եմ, որ այն վառաւոր նաւատորմը, որ ներկալացաւ Ներբուրգում, սկիզբ դրաւ միմեանց չաջորդող անմոռանալի տպաւորութիւնների շարքին Մեր՝ Թրանսիա մնալու ամբողջ ընթացքում»:

Աղդ կենացին նախագահ Ֆոր պատասխանեց հետևեալ խօսքերով.

«Ես ուրախութեամբ տեսնում եմ կրկին անգամ եղբարքապէս միացած ոռոսաց և Քրանսիական նաւատորմերի ներկալացուցիչներին. Թովլ տէք ինձ, Զերդ Մեծութիւն, միացնել նոցա միատեսակ սիրու զգացմունքի մէջ, Ես բարձրացնում եմ բաժակ ի պատիւ ոռոսաց նաւատորմի»:

Օգոստոսի 14-ին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնան, նախագահը, Մեծ Խշանները և Մեծ Խշանուհիները, առաջուածեան 11 ժամին «Ալեքսանդրիա» նաւով Պետեր. Հոգից ճանապարհ լնկան դէպի Կրոնշտատի նաւակալանը, ուր տեղի ունեցաւ Քրանսիական նաւերի նաւահանդէս և նախաճաշ «Պոտիւլո» նաւի վրայ, նախագահի մօտ. Նախաճաշից յետով Թագաւորը, Թագուհին, Մեծ Խշանուհիները և Մեծ Խշանները հրաժեշտ տեին նախագահին և բոլոր Քրանսիացի հիւրերին: Թնդանօթաձգութիւն սկսւեց բերդից, ամրութիւններից և նաւակալանում կանգնած պատերազմական նաւերից: Քրանսիական նաւատորմը զնաց դէպի ծովը. Նոցին Մեծութիւնները «Ալեքսանդրիա» չոգենաւով վերադաշտան Պետերոնֆ:

«Պօտիւլօ» նաւի մէջ նախաճաշի ժամանակ նախագահը դիմեց Նոցին Մեծութիւններին հետևեալ խօսքերով.

«Ես չորհակալութիւն եմ լաքանում Զեր Մեծութեանը և Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհուն աղքան ողորմած համաձանութեան համար՝ ալցելել մեր նաւատորմի մէկ նաւը: Ես մանաւանդ աւելի երջանիկ եմ նրանով, որ զա ինձ հնարաւորութիւն է տալիս

ասել Զեր Մեծութեառը մեր զրօշակների հովանու տակ, թէ ևս ինչպէս զգածւած եմ այն հիւրասիրութիւնից, որ Զեր Մեծութիւնը ցոյց տւաւ մեզ, և թէ որքան մենք չնորհակալ ենք ոռւս ժողովրդին հանրապետութեան նախագահին ցոյց տւած հողակապ ընդունելութեան համար, Զեր Մեծութիւնը բարեհաճեցիք ժամանել Ֆրանսիա ոռւս և ֆրանսիրացի նաւասարդների ուղեկցութեամբ. Էջնց նոցա շըրջանում, խորին կերպով զգածւած, ուղարկում եմ Ռուսաստանին հրաժեշտի ողջուն: Ֆրանսիական և ոռւսաց նաւատորմերը կարող են պարծենալ նրանով, որ առաջին օրից իսկ մասնակցում էին այն մեծ անցքերին, որոնք սկիզբ զարձան Ֆրանսիակի և Ռուսաստանի սերտ բարեկամութեան. Նոքա մօտեցրին կարկառող ձեռքերը և հնարաւորութիւն տւին երկու բարեկամ և դաշնակից ժողովուրդներին, զեկավարւելով մի իդէալով—քաղաքակրթութեան, օրինականութեան և արգարութեան իդէալով,—միանալ որպէս եղբայրներ, ամենասրտակից և անկեղծ զրկախառնութեան մէջ: Ես բարձրացնում եմ բաժակ ի պատիւ Զեր Մեծութեան և նորին Մեծութիւն թագուհի կալիպունու՝ բաժանման լուսէին և խնդրում եմ ընդունել չերմ բարեմաղթութիւններ Զեր Մեծութեան և ամբողջ Թագաւորական ընտանիքին: Ֆրանսիակի անունից խմում եմ Ռուսաստանի միծութեան կենացր:

Թագաւորը պատստիանեց.

«Այն խօսքերը, որոնցոյ դուք խոկոն զիմեցիք Խնձ, պ. նախագահ, կենդանի արձագանք են գտնում իմ սրտի մէջ և թէ կատարելապէս համապատասխանում են այն զգացմունքներին, որոնք ոգեսորում են թէ Խնձ և թէ ամբողջ Ռուսաստանը: Ես երջանիկ եմ, որ Զեր ներկալութիւնը մեր մէջ ստեղծում է նոր կապեր մեր երկու բարեկամ և դաշնակից ժողովուրդների մէջ, և միասիսակ նպաստում է իր բոլոր ոլժելով ընդհանուր խաղաղութեան պահպանման, օրինականութեան և արդարութեան հիման վրաք: Թողլ տւէք Խնձ չնորհակալութիւն չափնել Զեր Զեր ալցելութեան համար, պարոն նախագահ, և պարագել բաժակ ի պատիւ ձեր և Ֆրանսիակի բարգաւաճմանունական նախագահ Խորը Ֆրանսիա վերադառնալիս՝ Ֆրանսիացիք ընդունեցին նորան ովացիաներով՝

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽՄԲԱԳԻՍԱՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆ. Մուրճ'ի խմբագրատունը աեղափթիսիսած է Սերգիեւսկայա փողոց (Սոլոլակի թաղ) տուն № 6. Ազդ տեղափոխման պատճառով ներկաւ № 7—8 լուս է տեսնում ժամանակից մի տասնեակ օր աւելի ուշ:

ՄՈՒՐՃԻ ՆԵՐԿԱՅ ԳԻՐՔԸ, ունենալով 232 երես, ամենամեծն է երբ և իցէ հրատարակւածներից:

ԴՊՐՈՑԱԿԱՆ

Բարձրագոյն հրամակած է՝ քաղաքացիական վարչութեան բաց դպրոցներում, այն կանոնը, որով տօն օրերին պարտաւորիչ էր օտարադաւան աշակերտների համար ուղղափառ ժամերգութեան ներկայ լինելու, ամեն տեղ վերացնել, քաղաքացիական վարչութեան այն բաց դպրոցներում, ուր օտարադաւաններ մեծ թիւ են կազմում, ընդհանուր աղօթքը, որ կարդացւում էր դասերից առաջ փոխարինել առանձին աղօթներով, համաձայն իւրաքանչիւր դաւանութեան:

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցների մասին նորութիւնը սա է, որ ադ դպրոցների բացումը թողնւած է Վեհ. Կաթողիկոսին, տընտեսական կառավարութիւնը՝ ծխականների ընտրած հոգաբարձութիւններին, ուսումնական մասը՝ լուսաւորութեան մինիստրութեան, Ուսուցիչներ առաջարկելու են հոգաբարձութիւնները, բայց հաստատւելու են կովկասնեան ցչանի հոգաբարձուի կողմից. Հակերէն լեզուն ուսուցանելու է լոկ իր դպրոցական առարկաններից մէկը:

Կարենոր ենք համարում հաղորդել, որ ներկայումս, սեպտեմբերի ակտ առաջին կիսում, հալոց ոչ մի եկեղեցական-ծխական դըպրոց բացւած չկաք:

Ներսէսեան դպրանոցին ակտ տարի եղել են 560 նոր խնդիրք տւողներ, որոնցից սակայն քննութեան թողնւել են մօտ 200 հոգի միացն, ե դպրոցում ընդունել են դորանից էլ պակաս Նախապատրաստական դասաւոնները ակտմ ութ բաժանմունքներից են բաղկացած:

Քութայիսում բացւել է ոէալական դպրոց:

Բժշկական իգական կուրսերը Պետքը բացւել են ակտ տարի՝ ՏԱ.ՁԿԱ.ՀԱՅ ՈՐԲԵՐԻ մասին տես էջ 1145:

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏԱ.ՁԿԱ.ՀԱՅ ՓԱԽԱՍԱԿԱՆՆԵՐԻՒ,

Կովկասի գլխաւոր վարչութեան տպագրած վերջին հաշվից

ան գումարի երի, որ ստացել է նա լոկուտ Տաճկաստանից մեր երկիրը ապաստանած հայերի, երեսում է, որ առ. 1 ն սեպտեմբերի միացել է 47.727 ռ. 78 կոպէկ, որից օգոստոս տմուռմ հաւաքւածը եղել է 10.630 ռ. 21 կոպէկ:

Տպելով իւր հաշիւը, երկրիս զլիսաւոր վարչութիւնը չափոնում է թէ՝ Յէ տեղեւ ավագանութեան ամսուած ընթացքում զլիսաւոր վարչութիւնը դադիւթականներին օգնելու պահանջներ չեն եղել և վշիալ գումարներից ծախքեր չեն արւած):

Կարծ և ապդու!

Հաշում են որ երկրիս մէջ 50.000 հակ վախստական կաչ որոնք անշուշտ ալսքան կարծ միջոցում չեն կարող ապրուսանի միջոցներ կանել, և վերջապէս դրական ապացուցներ կան որ նոցա ամենամեծ մասը մեծ տառապանքի մէջ է: Մեր կարծիքով աւելորդ չէր լինիլ մի քննիչ մասնաժողովի լանձնել ակս վերին աստիճանի զարմանալի հանգամանքը պարզելու, թէ ինչպէս է պատահել որ մի քանի տասնեակ հազար տառապեալներից մի ամբողջ ամսուաչ ընթացքում ոչ մի խողիք չի եղել իրենց օգնելու:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՊԱՍՏ ՆԱՅԵՐԻՆ. Ֆրանսիակում, ուր, զլիսաւորապէս հայր Շարմըտանի ջանքերով, հաւաքւած է մի միլիոն ֆրանկ լողուտ տարաբխտ հայերի, նոյն Շարմըտան հրատարակել է Livre d'Or des martyrs de la charité անունով գիրքը, որի արդիւնքը չատկացրած է նոյն նպաստակին:

Քազմաթիւ նշանաւոր ֆրանսիացիք ֆրանսիական մինիստրութեան մի ուղերձ ներկալացրին, չորզորելու համար որ կանխաւ միջոցներ ձեռք առնեւն, եթէ լոյների վրայ տարած չաղթութիւններով զինովցած թիւրքերը հակական նոր կոտորածներ անելու լինին: Ուղերձին մասնակցել են պարլամենտի, ակադեմիակի, բանկի անդամներ, պրոֆեսորներ և ալլն, մինչև մատ 400 հոգի:

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԱՆԵՏ, ի տեղի իշխ. Գ. Գ. Շերւաշիձեի՝ նշանակւց Թիֆլիսի նահանգական դատարանի ցալմենան նախագահ Ֆ. Բըկով: Խշան Շերւաշիձեն նահանգապետ էր 1889 թւականից, նա, կարելի է ասել, իւր պաշտօնավարութիւնով վաստակեց ժողովրդականութիւն, նորա ամենակարևոր գործը եղաւ «գիւղատնտեսական ֆոնդ», որի զարգացման մասին Մուրճի անցեալ համարում տեղեկութիւն տվինք:

ՂԱԶԱԿԱՆ Գ.Ա.Ա.ՌԱ.ՊԵՏ նշանակւած է հանչելի, որ ցածմ Գանձակի զա-

ւառի գաւառապետն էր, Դորա վրայ լուս ունին թէ կարող է լաջո-
ղութեամբ կռւել աւազակալին խմբերի դէմ,

Ա. Վ. ՍՏԵՊԱՆՈՎԻ ՑԻՇԱՏԱԿԻՆ. Յուլիսի 9-ից Թիֆլիսի «Նովոե Արա-
գրենիե» ռուսաց թերթի խմբագրութեան կարգադրութեամբ, հոգե-
հանգիստ կատարեց ալդ թերթի հիմնադիր Ա. Վ. Ստեպանովի
մահան տասնամետակի առիթով, ներկայութեամբ Թիֆլիսի մամուլի
ներկայացուցիչների և մի քանի երդեալ հաւատարմատարների ու
դատական գործիչների. Ստեպանովը, որ մինչև մահը (3¹/₂ տա-
րի) խմբագր'ց իւր հիմնած թերթը, իւր հրապարակախօսութեան
հիմքում դրել էր լախ հաւեացքներ ազգութիւնների վերաբերմամբ,
մի հանգամանք որ այնքան կարեռսւթիւն է ներկայացնում Ռու-
սիայի պէս մի բաղմատարր երկրում, և մանաւանդ կովկասում,
ուր ոչ ռուսական տարրերը անհամեմատ մեծ տոկոս են կազմում:
Ազգ ինդրում Ստեպանովը հետեւում էր ռուսաց լառաջդիմական բա-
նակին, այս առանձին արժանիքով, որ նա հաստատ մնաց իւր ալդ
ուղղութեան, հակառակ շատերի, որոնք ազատամիտ են քանի որ
Ռուսիայում են, բայց մեր երկիրը ընկնելուն պէս՝ ամենայն հեշ-
տութեամբ թեքւում են շովինիստութեան կողմը:

ՄԻՒԽՈՆՕՐՀՆՈՒԹԻՒՆ. Սեպտեմբերի 14 ին կատարեւլու է ս. Խջմիած-
նում հարց եկեղեցու ամենամեծ կրօնական ծխակատարութիւնը—
սուրբ միւռոնի օրնութիւնը. Խնչովէս լաբտնի է, ալդ հանդէսը կար-
գաղրւած էր կատարելու անցեալ տարի, որ սական չկատարեց
անորոշ պատճառներով: Ներկալ միւռոնօրնութեան համար պաշտօ-
նական և հրապարակական հրաւերք չեղաւ համայն ազգին, և միւ-
ռոնօրնութեան մասին վճիռը լայտնի եղաւ միախ ներկալ օգոստոս
ամսին, այնպէս որ հեռաւոր տեղերից ուխտաւրներ չեն սպասում:

ԱԻԱԶԱԿՈՒԹԻՒՆԸ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ, որ մի մշտական ցաւ է և երեք
արմատախիլ չի արւած եղել, վաղուց է ինչ կառավարչական շըր-
ջանների գլխաւոր հոգսերից մէկն է կազմում և նոյն խոկ մարա-
քաղաքների ռուսաց մամուլին լուրջ լուսածների նիւթ է տևել:
Ամենքի լիշողութեան մէջ են Քեարիմի և խմբի համարձակ աւազա-
կութիւնները աւելի քան տասնեւակ տարի առաջ, Աւելի մօտ ժամա-
նակներս, երկու տարի առաջ, հոչակ հանեց նաբին և խումբը, որը
ոչ միայն հաստ-հատ անձերի վրայ էր լարձակւում, ալ և ամբողջ
գիւղական հասարակութիւններից փրկանք էր պահանջում: Խոկ աւելի
մանր աւազակալին խմբեր, որոնք իրենց շահատակութիւնները
անում են աւելի փաքք ծաւալով, բայց տարիներ շարունակ—դոքա-
գրեթէ անհաշիւ են: Հանրածանօթ է որ ալդ աւազակալին խմբերը
թրքահաջ նահանգներում կազմում են գլխաւորապէս թուրքերից,

իսկ Վրաստանում, վրացիներից, և որ աղջ ցաւը իրեն ամենից շատ զգալ է տալիս թրքահայ՝ Երևանի, Գանձակի, Բաքրայ նահանգներում և Թիֆլիսի նահանգի թրքա հայ մասում: Աւազակութիւնները արմատախիլ անելու համար մի քանի տարի առաջ երկրիս կառավարչապետին լիազօրութիւն տրեց՝ աւազակներին դատելը զինուորական կտրուկ դատարաններին լանձնելու բաց չնալած դորան, չնալած արդ խստութեան, աւազակութիւնը մեղնում ոչ միայն չնւազեց, այլ և աւելի զօրացաւ, և աւելի քան երբէք այդ չարիքի դէմ կռւելը դառել է երկրիս կառավարութեան հերթական մի ամենաակարեոր խընդիր: Տեղական ներկալիս ոստիկանութեան անզօրութիւնը աւազակների դէմ կռւելու համար դառել է մի ընդհանուր համոզունք, մասաւանդ ներկաւ չուլիսի վերջին եղած դէպքից լետով, երբ Թիֆլիսի նահանգի Ղաղախ գաւառի Շամշադին զաւառմասում պրիստաւ Արայիձէ, իւր զործավար Ասատուր Բողինեանց և փոքրաթիւ չափարներից մէկը, Ալիբէգլու գիւղի մօտ սպանւեցին Արգար օղլի և խմբի դէմ կռւելու:

Աւազակութեան խնդրին մեղանում մենք կը վերադառնանք առանձին յօդւածով:

ՆԻՔՐՆԵՐ և ԿՏԱԿՆԵՐ:

Գէորգ Քանանեանց, որի մահը ծանուցինք անցեալ անգամ, կտակով թողել է իւր ամբողջ կարողութիւնը, որի քանակը մեզ չալտնի չէ, բարեգործական նպատակների, իւր կնոջ կարզագրութեան ներքով բացի հետեւեալ չատուկ նւէրներից, իւր հարուստ գրադարանը թողել է Լազարեան ճեմարանին. 1000 ռ. Ս. Էջմիածնին, ուր ամեն տարի մի անգամ հանգուցեալի համար հոգեհանգիստ պիտի կատարւի:

Աւետիս Բալաբեան Ղուկասեանց, շոշեցի, Բաքրի նաւթագործ, Թիֆլիս մերաբնակած, մի գրութեամբ դիմել է Վեհ. Կաթողիկոսին, չալտնելով, որ չանձն է առնում: 1) Սեանի մենաստանում շինել մի շինութիւն 15.000 ռ. արժողութեամբ, վաճական զալոցի, մատենադարանի, ընթերցարանի և տպարանի համար, 2) Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու զաւթում շինութիւն 20.000 ռ. արժողութեամբ կրօնապատմական գրադարանի համար, 3) նւիրել Մալր Աթոռի մատենադարանին հայոց պարբերական հրատարակութիւնների 100-ամեալ մի հաւաքածու, որ պիտի ձեռք բերի 5.000 ռուբլով: Վեհափառ Կաթողիկոսից առ այս պ. Ղուկասեանցը ստացել է օրհնութեան կոնդակ:

Կատարինէ (Անկէլ) Թանդոյեան (Թիֆլիս) վախճանւած 13 լումիսի, իւր հաշւով նորոգել էր իւր ամուսնու շինել տւած երկար-

կանի տունը Թանդղեան կաչած Ս. Աստւածածնի եկեղեցու բագում, և որը ծառակում էր եկեղ. ծխական զպրոցի համար, ալժմ կտակով թողն. ւած է ալդ եկեղեցուն, շինութիւնը բերում է տարեկան 3—4000 ռ. ալլ և մի-երկու ալլ խաճութներ, որոնք թողած է իւր ազգականներին օգտակար, սոյց մահանից լիտոյ պիտի զառնան սեփականութիւն նուն եկեղեցու.

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԶՈՅԳԸ ՎԱՐՉԱԿՈՒՄ, Օդոստոփի 17-ին, երեկոյեան, Յագաւոր Կալսրը ու Թագուհի Կալսրուհին, մեծ իշխանուհիներ ջատեանա Նիկոլաեւնափի ու Օլգա Նիկոլաեւնափի հետ միասին Պետերհոֆից ուղևորեցին Վարշաւա, Ուգեկցում էին՝ պաջառափալլ իշխանուհի Գոլցինա, պալատական արիլիններ, կալսերական տան մինիստրը, կալսերական զլխաւոր գօրաբանակի հրամանատար գեներալ-ադիւտանտ Հեսսէ և ուրիշները: Վարշաւում ընդունելութիւնը փառաւոր եղաւ: Օգոս. 23-ին Նոյցին մեծութիւնները ուղևորեցին Վարշաւից Բելոստոկ, ուր կատարեց գօրահանդէս: Ապա նոքա գնացին Բելովիժ, ահնտեղից Ապալա:

Կալսերական զոլգի Վարշաւա ալցելելը կրում էր մի առանձին ժողովրդական բնաւորութիւն, որ մի բարի նշան է Լեհացոց համար: Օրինակ, կառավարութիւնը հաստատել է ամենաանշանաւոր լիճ բանաստեղծ Ազամ Միջկեչին արձան զնելու նախագիծը:

ԴԵՐՄԱՆԻՄՑԻ ԿԱՅՍՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ: Ներկաէ չուլիսի 28 ին Գերմանիակի կալսր Վիլհէլմ II և կալսրուհի Ալգուստա եկան Պետերբուրգ կալսերական Զոլգին ալցելութեան Յուլիսի 30-ին երեկոյեան ժամ 6-ին, բարձր հիւրերը գերմանական կալսերական Հոհկնցոլէրն նաւի վրայ, ուղեկցութեամբ Գէֆոն նաւի և գերմանական միւս նաւերի, կրոնչտատից ճանապարհ ընկան Գերմանիա: Թագաւոր Կալսրը Գերմանիակի կալսրին նշանակեց ուռւաց նաւատորմի ծովապետ:

ՆՈՐ ԲԵՐԱՆ ԷՆԴԻՄ ՀԱՅԵՐԻ: Ալժմ էլ Պետերբուրգի Միրօնի Օգոստի թերթն է, որ իւր 214-րդ համարում տպել է մի թղթակցութիւն «Էջմիածնից», ուր խօսում է էջմիածնի մասին վերին աստիճանի սանձանձակ լեզուով: Ալդ լողւածում ամեն ինչ կատկածի է նոթարեւում, և մինչեւ անզամ ակնարկած է թէ իւր էջմիածնը կեղծ թղթադրամ կտրելու մի որջ է: Լուր կաչ որ բարձր հոգեոր կառավարութիւնը դատի է կանչելու աղջ լովիր թղթակցին:

ԿՈՎԿԱՍԵՍՆ ՄԱՄՈՒԼ: Ս. Էջմիածնի օրգան Արարատ ամսագիրը, որ մինչ չե ալժմ հրատարակում է Վեհափառ կաթողիկոսի թուլտութեամբ, աբուհետե, համաձան Ս. Էջմիածնում ստացւած պաշտօնական գրութեան, ենթարկելու է ոչ կրօնական մասերի համար—ընդհանուր

զրաքննութեան, իսկ հոգեոր բաժանմունքի համար զրաքննիչ պիտի նշանակի Վեհափառ Կաթողիկոսը՝ մարմնաւոր իշխանութեան հաստատութեամբ։

ՍԻԾՆԻՑՏՆԵՐԻ ԿՈՂՆԴՐԱԾԱՅ, որի մասին անցեալ անգամները ծանուցել ենք, գումարեց Բաղել քաղաքում, և փակւեց օգոստ. 19-ին։ Սիոնիստների նպատակն է, այսպէս ասած, վերականգնել Հրէաստանը։ Պալեստինում աչժմ 20 բարեշն և բարգաւաճ հրէական գաղութներ կան՝ 6000 երկրագործ և արգեգործ բնակիչներով։ նոցա բերքերը սկսել են երեալ եւրոպական շուկաներում և ցուցահանդէսներում (անցեալ տարի Քերինում և Կէօլում)։ Սիոնիզմի զարգանալովը զարգանում է նաև նոր հրէական գրականութիւնը։ աչժմ հրէական լեզով հրատարակում են ամսագլիրներ և օրաթերթեր, գրքեր, թարգմանութիւններ եւրոպական վէպերից և բանասիրութիւններից։—Սիոնիզմը նոր ուժ ստացաւ, երբ նորա կողմն անցան զոքսոր Հերցէլ Մաքս Նորդաու, Բեռնար, Լազար, Զանգվիլի, Կելնէր և ուրիշներ։ Հերցէլի գրած «Հրէից քաղաք» (Ladenstadt) թարգմանեց շատ եւրոպական լեզուներով։ Նշանաւոր բերաններն են սիոնիզմի Քերլինի Zion և Վիեննաի Die Welt թերթերը։ առաջինը հրատարակում է գերմաներէն, ֆրանսերէն և եբրայերէն բաժանմունքներով։—Բաղելում սիոնիստները վճռել են հիմնել մի կենտրոնական գանձարան և հաւաքել 10 միլիոն ֆուն ստերլինգ (100 միլիոն ռուբլի), և ընտրել է կոմիտէ, որը պիտի մշակի նրուսադէմում հիմնելիք հրէական համալսարանի չառակագիծը և ծրագիրը։ Գալ տարի ժողովը պիտի գումարէ նրուսադէմ։

ՕՂԵ ԲԵՆՆԵԴԻԿԱՑԱԽՆ (Aage Benedictsen) երիտասարդ դանիացի ուսումնականը օդոսառոսի վերջերքից եկած է մեր երկիրը, որ ապա զնաչ Տաճկաստան։ Նորա լատուկ նպատակն է մանր ազգութիւնները ուսումնասիրել։ Առանձին սիրով նա զրադում է Հայերով, և սկսել է նոր հայերէնը ուսանել։ Թիֆլիսից պ. Բենեդիկտսէն ուղերձեց Էջմիածին, միւռունորհնութեան հանդէսին ներկայ լինելու, այլ և Նրեան, Էջմիածին, Անի, Ալէքսանդրապոլ տեսնելու համար։

Պր. Բենեդիկտսէն ուսուցիչ է Դանիալում գոլութիւն ունեցող գիւղական համալսարաններից մէկում, որոնք նոր ձեի հաստատութիւն են և որոնց հետ Մուրճի ընթերցողները կարող են ծանօթանալ կարգալով մեր ամսագրում անցեալ տարի տպւած Մալիկօ Ֆրիդրէքի լուսածեց՝ «Դիւղակ»։ համալսարաններ» (Մուրճ 1896. №№ 7-8 և 9)։

ՄՈՒՐՃԻ ԲէՅ, երիտասարդ տաճիկների զլուխը, հրատարակիչը նիզամ արտասահմանեան թերթի, ուր նա անխնազ դատավիետում էր տաճ։ կական վարչութիւնը, անսպասելի կերպով Պոլիս եկաւ, ինքնազօծար

կերպով, երբ, սուլթանի ուղարկւած Զելալ էջղին փաշան, կոնսոր քսէւիլ'ում նորա ալցելելով, չափանիկ է որ սուլթանը ցանկանում է նորա (Մուրադ բէկի) վերադարձը։ Մուրադ ըէւ օսմանեան պետական պարտքի վարչութեան մէջ տաճկական կոմիսար էր, երբ երկու տարի առաջ փախաւ արտասահման, սուլթանին մի ուղերձ մատուցանելուց չետով, որը սական ուշադրութեան չառնուեց, Մուրադ բէկը եղաւ զլսաւորապէս ֆրանսիա, Զեյցերիա և մասամբ Եգիպտոս։ Նորա վերադարձից չետով, նորա ասելով, վերադառնալու են 100 հոգի նորա գաղափարակիցների Դոքա Տաճկաստանում հաստատւած բարձրագոյն դպրոցների նախկին սաներից են (իրաւաբանական դպրոցի, բժշկական դպրոցի, զինուորական դպրոցի և երկրագործութեան ու անտառապէսին բարձրագոյն դպրոցի)։

Մի խօսակցութիւնից Ռուսակալա Վելոմոստի թերթի թըզ. թակցի հետ երեաց երիտասարդ թէւրքերի քաղաքական ձգումը հետեւեալ խօսքերի մէջ. «Մենք նորին մեծութեան սուլթանի ինքնիշխանութիւնը մեր երկրի համար ամենալաւ և մինակ հնարաւոր կառավարչական ձեզ համարելով, ցանկանում ենք որ օրէնքները և կարդագրութիւնները աւելի ճշութեամբ և խստութեամբ զործադրւեն. առանց մեր ազգալին աւանդութիւններից հրաժարելու, մենք մինենոյն ժամանակ ցանկանում ենք, որ լուսաւորութիւնը, զիտութիւնները և հրաժարակական դատը աւելի շատ ընդարձակվին մեր երկրում—Մենք դեռ շատ հեռու ենք սահմանադրական ներկայացուցչական վարչութիւն ունենալու վիճակից։ Բոլորովին օրինական ճանաչելով սուլթանի միահեծան իշխանութիւնը, մենք ձգում ենք, որ այդ իշխանութեան գործադիր մարմինները լինին հմտւա, կրթաւած և բարեխիղ անձեր, թէս մեր ազգը սուլթանին համարում է աստւածալին կառավարիչ և իւր զարգացումով ամենին անկարող է հասկանալ մեր վարչութեան և կեանքին՝ լոս, արդարութիւն և բարիք ներշնչելու գաղափարը։ Կոքա ճակաս ագրին հաւասացողներ են, և բարիքն էլ, չարն էլ, անտարբերութեամբ ընդունում են իրեն Աստծու ուղարկած չնորքներ։—Ինչ վերաբերում է բարենորդումներին, մեր ցանկութիւնն է որ նոքա իջնեն վերելից։ զա մեզ համար լառաջդիմութեան միակ ճանապարհն է»։

Մուրադ բէկ 40-42 տարեկան է, ծնւած Դաղստանում, Դարզո դաւառում, նշանաւոր ընտանիքից։ Դաղստանի նւաճումից լիտով, նա պետական ծախքով կրթւում էր նախ Թեմիրխան-Շուրափ դըպրոցում և ապա Ստաւրապոլի գիմնազում։ ապա մտաւ Մոսկվակի համալսարանը, ուր մնաց 2 տարի, և լիտով թողաւ ու զնաց Զեյցերիա, իւր կրթութիւնը վերջացնելու և լեզուներ սովորելու համար։ ճանա-

սպարհին մտաւ և. Պողիս, ուր ներկալացաւ մեծ վեզիրին, որ նորա ազգականն էր. ադտեղ աջակցութեամբ մեծ վեզիրի և կոմս խզնատիմի, որ սղ ժամանակ ոռւսաց դեսպանն էր, նա ընդունեց առանձինպատակութիւն:

ԱՆԴՐԵ ՈՒՂԵԼՈՌՈՒԹԻՒՆԾ զէպի հիւսիսալին՝ բնեռը. Ամբողջ լուսաւոր աշխարհը մեծ հաւաքրքրութեամբ հետեւց չէղ Անդրէ՛ի պատրաստութիւններին՝ օդապարիկով հասնել հիւսիսալին բնեռը. Ուղեռութիւնը կատարեց լունիսի 30-ին, ընկերակցութեամբ Սարինդրէրգի և Ֆրէնկելի, Նպիցըրեզէն կղզուց. Յովիսի վերջերքը օդապարիկի աղաւնի-սուրհանդակի միջոցով լուր եկաւ որ Անդրէն անրցիւ է 82⁰ հիւսիսալին լայնութեան, խոկ ալժմ արդէն աւելի և դրական վկացութիւններ կան որ նա ողջ և առողջ է:

XII. ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՔ կալացաւ Մոսկվակում ներկաէ օգոստոսին, մասնակցութեամբ մի քանի հազար բժիշկների, որոնք եկած էին բոլոր երկիրներից. Նոցա մէջ կալին նաև գիտութեան մեծ կորիֆէններ կոնցիսից քառու աւելի քան 100 հոգի եկան թիֆլիս ալցելելու:

ԳԵՂՈՂՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՔԻՑ, որ կալացաւ օգոստոս ամսին Մոսկվակում, մինչ 150 հոգի սեպտեմբերի 5-ից սկսած եկած են թիֆլու:

ՎԻԼՀԵԼՄ II ՈՒԽԳԱՐԻԱՅՈՒՄ: Գերմանական կալարը ներկաէ եղաւ. Ունցարիաի Տոսիս քաղաքի մօտ եղած զօրահանդէսին և մեծ ու ոըր տաղին ողջոցների մէջ ալցելից Բուզապեշտը. ունգարական ազգը մեծ ցնծութիւն լաւանեց ազդ քաղաքական ալցելութեանը, որը պիտի ամրապնդէ եռապետական դաշնագրութիւնը:

ՀՈՒՄԲԵՐՏ I ՀՈՄԲՈՒՐԴՈՒՄ: Խոտական թագաւորական գուգը եղաւ Հոմբուրգ (Գրուսիակում), ուր կատարեց զօրախաղ գերմանական զօրքերի, վիլհելմ կալսեր ներկայութեամբ:

ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ: Հնդկաստանի հիւսիս-արևմտեան կողմից մահմեդական աֆրիդիները օգոստոսի ակզրներից սպատամբել են անգլիական իշխանութեան զէմ: Հաստատ է որ Աւղանիան էմիրը խառը չէ ալդ գործում: Անգլիական զօրքերը լաջողութեամբ ճնշում են ապստամբութիւնը:

ԵԿԱՄՏԱՑԻՆ ՀԱՐԿԸ ԹՐԱՆՍԻԱՅՈՒՄ: Որպէս լաւանի է, 1896-ի առաջին ամիսներում արմատական Բուրժուալի նախկին մինիստրութիւնը պարագութիւն կրեց մինիստր Դումէլի պատրաստած եկամտավին հարկի ծրագրի քեչարկութեան միջոցին: Ակժմ, երբ մի տարուց աւելի է ինչ կառավարում է Մելլինի մինիստրութիւնը, նախկին արմատական մինիստրութեան անդամ կաւէճակ, փոփոխութիւնների

ենթարկելով Դումի ծրագիրը՝ նորից առաջարկեց եկամտալին հարկը՝ Պատգամաւորների ժողովը, նոր տոմարով 17 չուլիսի, մերժեց կաւելնակի առաջարկը 282 ձախով ընդդէմ 249-ի, մասնակցութեամբ 531 հոգու. 21 հոգի ծեռնպահ մնացին և 4-ը չկարողացան մասնակցել, զրադաշտ լինելով մասնաժողովներում կամ այլ պատճառով. բացակաչ էին 22 անդամ:

ՍԱՍՈՒԼԻ ԶՈՐՈՌԴ ԿՈՆԳՐԻՍԸ կալացաւ Ստոքոլմում, ուշական ցուցանդէսի ժամանակ, Անցեալ տարի (Յ թղ կոնգրէսը Բուզապեշտումն էր, երկու տարի առաջ՝ 2-րդ կօնգրէսը—Յորդուում): Ստոքհոլմի կոնգրէսում կարեորագոյնը լրագրական լողածների և տեղեկութիւնների սեփականութեան ինդիբն էր, որի մասին Բուզապեշտում անցեալ տարի կալացած կոնգրէսը լանձնարարել էր զեկուցումներ պատրաստելու պ. Ալբէրտ Բատայլին (Bataille) և պ. Օստեռուիթին (Osterrieth), առաջինը Պարիզից, երկրորդը Բերլինից: Նոցա զեկուցումները լուրջ աշխատութիւններ էին, լիքը Փակտերով լաւ խմբած և զառաւորած: Բայց և անպէս վիճաբանութիւնը շատ տաք եղաւ: Խօսքը լրագիրները (օրաթերթեր, շաբաթաթերթ, ամսագիր) և ժուրնալիստներին պաշտպանելու մասին էր ընդդէմ նոցա, որոնք նոցանից արտատպում են առանց թոյլուութեան: որովհետեւ կան բազմաթիւ թերթեր, որոնք հէնց արտատպութիւններով են ապրում, և մինուոն ժամանակ մրցողներ են հանդի սանում: Խնչվերաբերում է քաղաքական լողածներին—տիրապետող կարծիքը սա եղաւ կոնգրէսում, որ թէն նոքա սեփականութիւն և թերթի կամ հեղինակի, բայց քաղաքական մտքերի պրոպագանդացի զերագոյն շահերի համար վնասակար կը լինէր այդ լողածների արտատպութեան պարմանները խիստ օրէնսդրութիւնով սղմել: Ոչ քաղաքական լողածները պիտի ճանաչեն սեփականութիւն հեղինակի: Խսկինչ վերաբերում է լրագրական տեղեկութիւններին—դոցա պարզ արտատպումը պիտի արգելած լինի միմիան երբ այդ կատարուում է անազնիւ մրցման նպատակով:

ՅՈԳՈՒՏ ԽԱՉ. ԱԲՈՎԵԼԱՆԻ ԹՈՒՆԵՐԻ կատարւած է մինչև այժմ հետեւալը. 1) Գէորգեան ձեմարանի տեսչութիւնը ժողովներ է յշ. նույնի 2.986 ո. 37 կ., որով զնած են Յ հատ մի հազար ուորլիանոց 4⁰/0-արեր պետական ունտագի անւանական տուններ լանուն հանգուցեալ Գէորգ Աբովեանի հինգ որդոց: 2) Ժամանարեան եղբարները լանձնել են ալքիին 3.000 օրինակ «Վէրք Հայաստանի» նոր տպագրութեամբ, նշանակելով մի օրինակի գինը 4 ո.։ 3) Ալ. Մանթաշեան լանձն է առել իւր հաշուով բարձը ուսման զրկելու հանգուցիալ Պ. Աբովեանի անդրանիկ որդի Կոստանդինին, որը, այս տարի

աւալտելով ճեմալանի, ղպրոցական յշանը, արդէն ուղևորւեց արտասահման: Հ) Վեհս վառ կաթողիկոսի տնօրինութեամբ հանդուցեալ Արովեանի ընտանիքին նշանակւած է կենսաթոշակ տարեկան 300 ռուբլի, որ վճարւելու է Ա. Էջմիածնի սինողից: Յիշւածներից առաջինը (ժողովարարութիւնը) և չորրորդը (կենսաթոշակը) կատարւել են Գէորգեան Ճեմարանի տեսուչ պ. Կ. Կոստանեանցի կողմից Վեհս: Կաթողիկոսին մատուցած լատարարութեան համաձան:

ՈՐԲԵՐԸ:

Վարագայ որբանոցը, որի համար մենք տպեցինք վանքի առժամանակեալ վանահացը Ատեփան վարդ. Աղազատեանցի հրաւէրը, մինչև 8 լուլիսի հաւաքել է իրեղիներ և դրամ ընդհանուր արժողութեամբ 100 ռուբլի (1000 ռ.): Ս. Պատրիարքն էլ, Կենտր. Որբախնամ՝ չանձնաժողովի (Ա. Պոլսում) որոշմամբ, պիտի տաչ ամսական 10 ռուբլի: Նէրների մէջ է անգլ. նախորդ հիւպատոս միստր Ռևիլեմալից ստացած 15 ռուբլի, և ամերիկ. միսիոնար միստր Ալէնի ծնորհած 6 եզր. — Որբանոցում մինչ ազդ օրը կրթում և պահում էին 23 աշակերտ: Որբախնամ լանձնաժողովի ամսական 10 ռուբլ հաշով ևս պիտի պահեն 20 որբեր:

Կեսարիայի առաջնորդ. Տրդատ վարդապետի ջանքերով Թալասում Ս. Կարապետի վանքի մէջ մալիսից բացւած է որբանոց, ուր լունիսին 32 որբեր կալին, ուսում են ստանում, հագնւած են մաքուր Թալասում կազ նաև բողոքական միսիոնարների որբանոց, ուր կըրթութիւնը, որպէս գրում են «Քիւզանդիոն» թերթին, հակահազկական է, և կրթութիւնը վատ, մերահսկողն է մի բողոքական լուն:

Խարբերդից լունիսի 12-ին և 25-ին ուղարկեցին Ա. Պոլիս, Ս. Պատրիարքի ողածին համաձան, 40 որբ Խարբերդի գիւղերից: Սալլապանի վարձ տրւեց 3³/₄ ռուբլի: Ժողովուրդը հաւաքւած էր հիեղեցու բազը ճանապարհ զցելու: Հայ քահանայ Տէր Գարեգինի հրաւէրքով՝ Կանչւեց նաև բողոքական միսիոնարը, որը որբերին ողջերթ մաղթեց և լորտորեց որ սիրեն իրենց մակրեկեղեցին և ամեն գրքից վեր դասեն Առւրք Դիրքը: — Տէր Գարեղինը քաջակերեց որբերին, ասաւ որ ժամանակով պիտի երկիրը զան ու երկրին պիտի ծառակեն:

Մարտաշում դեռ ևս միան հայ բողոքականների որբանոցներ կան, որոնց մէջ՝ տւած կրթութիւնը հեռացնում է լուսաւորչական եկեղեցուց:

ՍԻԱՄԻ ԹԱՂԱԼԻՈՐԸ, որի լիակատար անունն է Սամդիչ-Պրա-Պարամինդր-Չուլան, ալյելում է եւրոպական մալրաքաղաքները: Չուլալուգիորն-Կլան, ալյելում է եւրոպական մալրաքաղաքները: Եղաւ նաև Պետերբուրգ և Մոսկա: Նա 44 տարեկան է և լաւնի է որպէս ոեֆորմատոր:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ.

Ակէրսանդրապոլի խորհրդարանը (զումա) պաշտօնապէս բացւեց լուլիսի 31-ին, ներկալութեամբ նահանգապ' տի, որ եկած էր նրեանից:

ՅՈՅՆ-ՏԱԶԿԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆՆԸ: Կ. Պոլսի եւրոպական ղեապանաժողովը վերջացրեց իւր զործերը սկստ. 7 ին, համաձայնութեան գալով Բ. Դրան հետ բոլոր կէտերի վերաբերմամբ, որ և վասերաց. ևց սուլթանի կողմից սկստ. 11 ին. Պատերազմական տուգանքը որոշած է և միջին ստերլինգ, որի հատուցումը պիտի կատարի Աթէնքում կազմելիք մի մասնաժողովի հակողութեամբ, ուր պիտի մոնեն բոլոր մեծ պետութիւններից մի-մի ներկայացուցիչները:

ԿՐԵՑ: Սուլթանը մի նոր վարձ վարձեց Կրետէի վրաէ իւր իրաւունքները հաստատելու. նա ուզարկեց ալճտեղ ջեադ վաշային իրը կզզու զեներ ալ նահանգապետ և ալճտեղի զօրքերի հրամանատար Բալց և փաշակի միստիան չաջողւեց բնականարար, և նա մտածում է աշմ միան վերադառնալու մասին...

† **ՔԻՆԾԻՇԵԱՆԾ:** Ստեփան Յովսիկի կան, գեներալ-էլետենանտ, վախճանեց 15 օգոստոսի. Մնւեց 1833 թ. Թիֆլիսում. սկզբում եղած է խաչ Արովեանի մամնաւոր պանսիոնում. Մոսկվայում աւարտեց իրաւաբանական բաժանմունքը, իսուու ստացաւ մամնավարական ուսում զինուրական Նիկոլուսկական ակադեմիազում. զինուրական ծառակութեան մտաւ 1850-ին, 1865—1871 նա Կովկ. զինուրական շտաբի պաշտօնեաց էր, եղաւ երկրի մէջ զինուրական տեղափոխութիւնների կառավարիչ, ապա մնաց ի կարգադրութիւն Կովկասեան զօրքերի հրամանատարի, ծառագիտով մինչև 1887 թ.՝ 1866 ին առանձին չանձնարարութիւնով ուզարկեց Թիվրքիա. 1877-ին մասնակցեց Արդանանի առմանը, որի համար ստացաւ ոսկի զէնք. Պարսի վերցնելուց չետու ստացաւ զններալ-մալորի աստիճան, իսկ 1883-ին եղաւ զեներալ-լէլտենանտ:

Հանգուցեալը միաժամանակ զինուրական պատմաբան էր. նա զրեց «1877—78 թ. պատերազմը Թիվրքաց Հայաստանում», «Նազիր-Շահի արշաւանքները Հերաթ, Լանգահար, Հնդկաստան և նորամանից իսուու պատահած անցքերը», «Վարաց թագաւորութեան վերջին օրերը», (անտիպ), «Զինուրական շտաբի օֆիցէրների լիշողութիւնները» (անտիպ):

† **ԿԱՆՈՎԱՍ ԳԵԼ ԿԱՍՏԻԼԻՕ,** իսպանական մինիստրութեան նախագահը, սպանեց անիշխանական Բարքոլի ձեռքով. նա մէկն էր ժամանակակից Խապանիակի կարեորագունչպետական անձերից, լինելով պահանողական-կղերական կուսակցութեան ղլուխ իւր երկրում. Մնւած

1828-ին, իրաւագլուտական և ֆիլոսոփակական ուսում ստանալուց և մամուլի մէջ գործելով՝ նա իւր պատմական և բելլետիստիկական դրւածների համար ընտրվեց ակադեմիավի անդամ, 1854-ին ընտրեց պարլամէնուի անդամ. 1864 ից քանիցս մինխատրեղաւ, 1868 ի լեզափոխութիւնից վետոյ, 1870 թւականից, նա եղաւ բուրգոնեան վերականգման հոգին, որպէս զլուխ Ալֆոնսիան կռւ. սակայն թեատրոնութեան և զաջողացրեց Ալֆոնսու XІІ ի գահակալութիւնը. 1874-ից, մինչև 1881 թւականը կարճ ընդհատումներով նա եղաւ մինխատրնախաղան, ապա 1884-85 ին, վետոյ պարլամէնուի (կորտէսի) նախամզան, ապա վերջերքս վերստին մինխատրնախաղան. Նա ընդդէմ էր Կուբա կղզուն ինքնավարութիւն շնորհելուն, որի համար և ահա երեք տարի է, ինչ ահեղ պատերազմ է մղւում Կուբավի ապստամբների դէմ առանց լաջողութեան:

† ԽԱԶԻԵԼՆ, Տէր Յովհաննէս աւագ քահանար, Հնդկաստանի կալկաթաքաղաքում, վախճանւեց իբր 90 տարեկան հասակում.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԻԵՐ

- 1) ՇԱՀԱԶԻԶԵԱՆ, Ա.—«Ամառավին նամակներ», Մոսկվա, տպար. Բարիուղարեան, զինն է 1 ռ. 50 կոպէկ:
- 2) ՅՈՎՆԱՆԵՍՆ, Հ. Ղետնդ վ., Մխիթ. ուխտէն.—«Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ. ուսումնասիրութիւնք և քաղւածքներու. Մասն Ա.—Ռամկօրէն մասենազրութիւն. տեսր Բ. Վիեննա, Մխիթ. տպարան. զինն է 3 ֆրանկ:
- 3) ՄԷՆՔԻՇԵՍՆ, Հ. Գարրիէլ վ.—«Պատկերազարդ բնական պատմութիւն. Գ. Հանքարանութիւն Վիեննա, Մխիթ. տպ., զինն է (կազմով) 85 կ. (2 ֆրանկ):
- 4) ԴՈՒԵ, Ալֆոնս, թարգմանութեամբ Վ. Փափագեանի.—«Ընտիր պատմածքներ»: Թիֆլիս, տպ. Շարաձէ. զինն է 40 կոպէկ:
- 5) ԼՈՒՆԿԵՍԻԹ, Վ.—«Երկրաշարժ և Հրարխացին լեռներ»: Թարգմ. Լեոն Մելք-Աղամեան: Թիֆլ., տպ. Յ. Մարտիրոսեանի. զինն է 15 կոպ.:
- 6) ՍԻՒՖՏ, Զոնաթեան, թարգմ. ուսուերէն թարգմանութիւնից Ղ. Աղայիանի.—«Գուլլիւէրի ճանապարհորդութիւնը Ալլիպուտների և Բորդզինեազցոց աշխարհում. Հրատ». Թիֆլ. Հ. Հր. Ընկ.: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի. զինն է 50 կոպէկ:
- 7) ԲԱՐԻՈՒԴԻԱՐԵԱՆՑ, Գ.—«Բանաստեղծութիւններու. Թիֆլ. տպ. Մնացական Մարտիրոսեանցի. զինն է 1 ռուբլի:
- 8) ԱՄԲԱՏԵԱՆՑ, Մեսրովք արքեպիսկ. —«Նեարապիր Շամախուղ թեմլ»: Թիֆլ. տպ. Մովսէս Վարդանեանի. զինն է 1 ռ. 25 կոպէկ:
- 9) ՑՇՈՒԿԵ (Չոկկէ?).—«Ռուկի շինողներ»: Ժողովրդուկան վէպ. Թարգմ.

- Խաչ. Մարտիրոսեանցի. Հր. Թ. Հ. Հր. Ռնկել, Թիֆլիս, տպարան
Մ. Ռոտինեանցի. գինն է 50. կոպէկ.
- 10) ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Արշակ.—Քանաստեղծութիւններ. Թիֆլիս, տպ. Յ.
Մարտիր. գինն է 40. կոպ.
- 11) ԳԱՓԱԶԵԱՆ, Վ.—Անգագը. (Փիլոսոփաւական զրոյ). Արտատպած
«Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, տ. Ռոտինեանց, գինն է 15 կոպ.
- 12) ՇԱՀԱԶԻԶ, Եր.—Միքաքէլ Ղազարեան Նալբանդեանց. Կենսագրու-
թիւն. Արտատպած «Գրական և Պատմական Հանդիսից». Մոսկա,
տպ. Ք. Բարխուդարեան. գինն է 60 կ.
- 13) ԴԵԼՑԵՔ, պրոֆ. Հ.—Համառօս պատմութիւն հաջոյ. լաւելւածովք
թարգմանչին, թարգմ. Հ. Գր. Վ. Գալէմքեարեան, Միիթ. ուխտէն:
(Աղասիին մատենադարան ԽԵ.—Վիեննա, Միիթ. տպարան. գինն է
60 կոպ. (=1 Գրանկ 50 սանտիմ)).
- 14) ԲՈՒԴԱՂԵԱՆ, բժ. Ա.—Առողջապահական զրոյցներ. Պետերբուրգ,
տպ. Կիրերմանի. գինն է 5 կոպէկ.

Ծանուցում. Մեր ընթերցողներին դիտել ենք տալիս, որ նոր
ստացւած զրքերի ցուցակագրութեան մէջ մենք ախտնեսե բաց ենք
թողնելու զրքերի լուս տեսնելու թւականը, երբ նոքա կրում են
ընթացիկ տարւակ թւականը. տարին վշելու ենք միան այն ժամա-
նակ, երբ զրքի թւականը ընթացիկ տարւանից տարբեր է:

ՄՈՒՐՃ' ՊՈՍՏԱՐԿՈՂ,

Բերլին. Գ.-ր Խոհան Լեպսիուս Հակերի վիճակին և նոցա նալաս-
տելու գործին վերաբերեալ ձեր բոլոր հրատարակութիւնների ցու-
ցակը ստացանք գրավաճառից, բայց զրքերը մինչ այժմ չհասան
մեզ. Նշանակած արժէքը ուզարկեց գրավաճառի հասցէով.

Ախտլբալաք, Պր. Գ. Վանցեան. Ստացանք.

Նիւյ Յօրկ.—Մենք ստացել ենք Նիւյ-Յօրկի C. B. Richard et
Co. Broadway 61 բանկային տան Համբուրգի գործակալութիւնից
52. ուութի, առանց նամակի, Խնդրում ենք պոմարը ուզարկողին
հաղորդել մեզ իւր անունը և թէ ինչ նպատակով է ուզարկուած
դրամը.



ՄԱՐԴԱՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ա Գ Բ Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆանկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիեւսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքներից՝
բիզ' Տիֆլիս. Յանապահություն՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“. և կամ հետեւել անձերին.

ԲԱՑՈՒ—պ.պ. Ֆրիդն Մարգանեան՝ Հ. Մելիքեանի գրասենեակ:

ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Մկրտիչ Եհրամձեան:

ԲԱԹՈՒՄ—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալեքս. Խոջամիրեան:

ԵՐԵՒԱՆ—պ. Գէորգ Ղարաջեանց:

ԿԱՐՍ—պ. Աբել Ապրեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զալալ Տէր-Գրիգորեան:

ՆՈՒԽԻ—պ. Աբրահամ Բունխաթեան:

ՂՋԱՐ—պ. Ստեփ. Սողոմոնեան:

ՆՈՐ-ՆԱԽԵԶԵԽԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:

ՄՈՍԿԻԱ—պ. Ալեքսանդր Մատուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ—պ. Քրիստ. Բաշինջաղեան:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Ռէշտ, անդլիական բանկում: